# ԱԶԴԱԳԻՐ

## «ԱՐՑԱԽ ՀԷԿ»

## բաց բաժնետիրական ընկերության կողմից թողարկվող բաժնետոմսերի վերաբերյալ

«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ

թողարկողի ֆիրմային անվանումը

Բաց բաժնետիրական ընկերություն

կազմակերպա-իրավական ձևը

Արցախի Հանրապետություն, ք. Ստեփանակերտ, Վ.Սարգսյան փողոց 25ա, հեռ.(0479) 4-28-58, ֆաքս. (0479) 7-42-14, ինտերնետային կայք www.artsakhhek.am, էլ.փոստ artsakhhek@mail.ru

գտնվելու վայրը, կապի միջոցները (հեռախոս, ֆաքս, ինտերնետային կայք, էլեկտրոնային փոստ)

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ»

Տեղաբաշխողի անվանումը

Փակ բաժնետիրական ընկերություն

Կազմակերպա-իրավական ձևը

0010 Հայաստանի հանրապետություն, ք. Երևան, Վ. Սարգսյան 10, հեռ. (37460) 757000, (37411) 757000, էլ. Փոստ՝ info@armswissbank.am, Ինտերնետային կայք՝ www.armswissbank.am

«ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից ազդագրի գրանցումը չի հավաստում ներդրման ապահովությունը, ներկայացված տեղեկատվության ճշտությունը կամ իսկությունը»:

Երևան 2019

Արժեթղթերի դասը՝ *հասարակ անվանական բաժնետոմս*

Արժեթղթերի ձևը՝ *ոչ փաստաթղթային*

Արժեթղթերի քանակը՝ *1,350,000 (մեկ միլիոն երեք հարյուր հիսուն հազար) հատ*

Արժեթղթերի անվանական արժեքը՝ *1,000 (մեկ հազար) ՀՀ դրամ*

Ընդհանուր անվանական արժեքը (արժույթը)՝ *1,350,000,000 (մեկ միլիարդ երեք հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ*

Տեղաբաշխման ձևը՝ *չերաշխավորված*

---

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

***Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն սույն փաստաթղթում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել փաստաթղթի բովանդակությունը:***

# ՍՏՈՐԱԳՐՈՂ ԱՆՁԻՆՔ

| | | | |
|---|---|---|---|
| Արայիկ Հարությունյան | Տնօրենների խորհրդի նախագահ | [signature] | 02.04.19 |
| անուն, ազգանուն | պաշտոն | ստորագրություն | ամսաթիվ |
| Արա Ղոնյան | Տնօրենների Խորհրդի անդամ | [signature] | 01.04.2019թ |
| անուն, ազգանուն | պաշտոն | ստորագրություն | ամսաթիվ |
| Կարեն Արաքյան | Տնօրենների Խորհրդի անդամ | [signature] | 03.04.2019 |
| անուն, ազգանուն | պաշտոն | ստորագրություն | ամսաթիվ |
| Հայկ Բոյաջյան | Տնօրենների Խորհրդի անդամ | [signature] | 03.04.2019 |
| անուն, ազգանուն | պաշտոն | ստորագրություն | ամսաթիվ |
| Վահրամ Բեգլարյան | Գլխավոր Տնօրեն | [signature] | 03.04.2019 |
| անուն, ազգանուն | պաշտոն | ստորագրություն | ամսաթիվ |
| Արայիկ Դավթյան | Գլխավոր հաշվապահ | [signature] | 03.04.2019 |
| անուն, ազգանուն | անուն, ազգանուն | ստորագրություն | ամսաթիվ |
| Գևորգ Մաչանյան | Տեղաբաշխողի գործադիր տնօրեն | [signature] | 03.04.2019 |
| անուն, ազգանուն | պաշտոն | ստորագրություն | ամսաթիվ |

Ստորագրությունները վավերացնում եմ

| | | | |
|---|---|---|---|
| Վահրամ Բեգլարյան | Գլխավոր Տնօրեն | [signature] | 03.04.2019 |
| անուն, ազգանուն | պաշտոն | ստորագրություն | ամսաթիվ |

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


| | |
|---|---|
| ԱՄՓՈՓԱԹԵՐԹ | |
| ԲԱԺԻՆ 1<br>Ընդհանուր դրույթներ | 6 |
| Ընկերության և նրա գործունեության վերաբերյալ համառոտ տեղեկատվություն | 6 |
| Ընկերությանը և բաժնետոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը | 9 |
| Ընկերության տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները | 11 |
| Ընկերության աուդիտն իրականացնող անձի ինքնության մասին համառոտ տեղեկություններ | 12 |
| Ընկերության կառավարման մարմինները | 12 |
| Առաջարկվող բաժնետոմսերի հիմնական վիճակագրական տվյալները | 14 |
| Արժեթղթերի առաջարկի համակողմանի նկարագիրը | 15 |
| Առևտրին թույլտվությունը և առևտրի կազմակերպումը | 15 |
| Ամփոփ ֆինանսական տվյալներ | 17 |
| ԲԱԺԻՆ 2.<br>ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 22 |
| Ռիսկային գործոններ | 22 |
| Հիմնական տեղեկատվություն | 23 |
| Տեղեկատվություն կապված առաջարկվող բաժնետոմսերի հետ | 25 |
| Առաջարկի ժամկետը և պայմանները | 29 |
| Առևտրի թույլտվությունը և առևտրի կազմակերպումը | 35 |
| Վաճառող բաժնետետերը | 36 |
| Թողարկման և առաջարկի ծախսերը | 36 |
| Լրացուցիչ տեղեկատվություն | 36 |
| ԲԱԺԻՆ 3.<br>ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ | 37 |

| | |
|---|---|
| Անկախ աուդիտորները | 37 |
| Ռիսկային գործոններ | 37 |
| Տեղեկատվություն Թողարկողի մասին | 39 |
| Բիզնեսի նկարագիրը | 44 |
| Հիմնական միջոցներ | 49 |
| Կապիտալ ռեսուրսներ /պասիվներ/ | 50 |
| Հետազոտական աշխատանքները և զարգացման ուղղությունները | 53 |
| Արտոնագրերը և լիցենզիաները | 54 |
| Շահույթի կանխատեսումը և գնահատումը | 54 |
| Թողարկողի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները | 59 |
| Վարձատրությունները և պարգևավճարները | 87 |
| Կառավարման մարմինների գործունեությունը | 87 |
| Աշխատակիցները | 88 |
| Խոշոր բաժնետերերը և հսկող անձինք | 89 |
| Փոխկապկցված անձանց հետ գործարքները | 89 |
| Տեղեկատվություն թողարկողի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի,եկամուտների և ծախսերի մասին | 89 |
| Լրացուցիչ տեղեկատվություն | 89 |
| Էական պայմանագրեր | 99 |
| Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը | 99 |
| Այլ տեղեկատվություն | 99 |
| Մասնակցություն այլ անձանց կապիտալում | 99 |
| Հավելվածներ | |

# ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

**Ընդհանուր դրույթներ**

Սույն ամփոփաթերթը դիտվում է որպես բաժնետոմսերի ազդագրի (այսուհետև՝ Ազդագիր) ներածական համառոտ նկարագրություն, և առաջարկվող բաժնետոմսերում (այսուհետև՝ Բաժնետոմսեր) ներդրում անելու վերաբերյալ ներդրողի որոշումը պետք է հիմնված լինի ամբողջական Ազդագրի վրա:

Ամփոփաթերթի կազմման համար պատասխանատու անձը ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու համար կրում է քաղաքացիական պատասխանատվություն, եթե այն ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ է Ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում: Ամփոփաթերթի կազմման համար պատասխանատու անձինք են Ընկերության Գլխավոր տնօրեն Վահրամ Բեգլարյանը և գլխավոր հաշվապահ Արայիկ Դավթյանը:

**Ընկերության և նրա գործունեության վերաբերյալ համառոտ տեղեկատվություն**

Ընկերության անվանումն է՝

| | Լրիվ ֆիրմային անվանում | Կրճատ անվանում |
|---|---|---|
| **հայերեն** | «ԱՐՑԱԽ ՀԷԿ» Բաց Բաժնետիրական Ընկերություն | «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ |
| **ռուսերեն** | Открытое Акционерное Общество “АРЦАХ ГЭК” | ОАО “АРЦАХ ГЭК” |
| **անգլերեն** | “ARTSAKH HEK” Open Joint Stock Company | “ARTSAKH HEK” OJSC |

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Արցախի Հանրապետություն (այսուհետև՝ ԱՀ), ք. Ստեփանակերտ, Վ.Սարգսյան փողոց 25ա: Կապի միջոցներն են՝ հեռ. (0479) 4-28-58, ֆաքս. (0479) 7-42-14, ինտերնետային հասցե. www.artsakhhek.am, էլ. փոստ. artsakhhek@mail.ru: Ընկերությանն առնչվող հարցերի առաջացման դեպքում կարելի է դիմել Ընկերության գլխավոր հաշվապահ Արայիկ Դավթյանին հեռ.՝ (0479) 4-28-58, ֆաքս. (0479) 7-42-14, էլ.փոստ artsakhhek@mail.ru:

Ընկերության կանոնադրական կապիտալը 10,650,000,000 (Տասը միլիարդ վեց հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ է, որը կազմված է 10,650,000 (Տասը միլիոն վեց հարյուր հիսուն հազար) հատ հասարակ անվանական ոչ փաստաթղթային բաժնետոմսերից: Մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 1,000 ՀՀ դրամ:

Ընկերությունը հիմնադրվել է ԱՀ-ի կառավարության 2007թ. նոյեմբերի 1-ի N 484 որոշմամբ

(պետական գրանցում է ստացել 2007թ-ի դեկտեմբերի 12-ին «ԱՐՑԱԽ ՀԷԿ» անվանումով և «փակ բաժնետիրական ընկերություն» կազմակերպա-իրավական ձևով), որի համաձայն Ընկերության 100% բաժնետոմսերի սեփականտեր էր ԱՀ-ը՝ ի դեմս Կառավարության:

«ԱՐՑԱԽ ՀԷԿ» փակ բաժնետիրական ընկերությունը ստեղծվել է «ԱՐՑԱԽԷՆԵՐԳՈ» ՓԲԸ-ի առանձնացման միջոցով վերակազմակերպման արդյունքում և հանդիսանում է նրա իրավահաջորդը՝ բաժանիչ (առանձնացման) հաշվեկշռին համապատասխան: ԱՀ Կառավարության 2008թ. մայիսի 13-ի «ԱՐՑԱԽ ՀԷԿ» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպելու մասին» թիվ 360 որոշման համաձայն «ԱՐՑԱԽ ՀԷԿ» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմավորման միջոցով վերակազմակերպվել է «ԱՐՑԱԽ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության: 2008թ-ի հունիսի 9-ից Ընկերությունը կրում է «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ ֆիրմային անվանումը և կազմակերպա-իրավական ձևը:

Ընկերության գործունեության հիմնական ուղղությունը էլեկտրաէներգիայի արտադրությունն է, որն էլ հանդիսանում է Ընկերության շահույթի ստացման միակ աղբյուրը:

Ընկերությունը ԱՀ տնտեսության համար ունի ռազմավարական և սոցիալ-տնտեսական նշանակություն: Ընկերության ռազմավարական նպատակը ժամանակակից սարքավորումներով հագեցած նոր հիդրոէլեկտրակայանների (այսուհետև՝ ՀԷԿ-երի) շահագործման ճանապարհով Ընկերության արտադրական հնարավորությունների ընդլայնումն է:

Ընկերության գործունեության ռազմավարական ուղղություն է արտադրվող էլեկտրաէներգիայի ծավալների ընդլայնումը ի հաշիվ նոր արտադրական պոտենցիալի ստեղծման և միավոր էլեկտրաէներգիայի արտադրության համար ջրի տեսակարար ծախսի իջեցման: 2018թ-ին Ընկերության կողմից արտադրվել է էլեկտրաէներգիայի շուրջ 191.00 մլն ԿՎտ/ժամ ծավալ, որը գերազանցել է 2017թ-ի ցուցանիշը շուրջ հինգ տոկոսով: Ըստ էության, 2018թ-ին Ընկերությունը բավարարել է ԱՀ-ի էլեկտրաէներգիայի պահանջարկի ավելի քան 54.00%-ը:

Ներկայումս էլեկտրաէներգիայի արտադրությունն Ընկերությունն իրականացնում է Սարսանգի, Թրղե-1, Թրղե-2, Թրղե-3, Թրղե-4, Մատաղիս-1, Մատաղիս-2 և Լեվ-1 ՀԷԿ-երի միջոցով:

Ընկերության հիմնական ակտիվը Սարսանգի ՀԷԿ-ն է, որը կառուցվել է 1976թ. ԱՀ հիմնական գետի՝ Թարթառի վրա և համարվում է նախկին ԽՍՀՄ լավագույն և սարքավորումներով առավելագույնս հագեցած ՀԷԿ-երից մեկը:

Սարսանգի ՀԷԿ-ը տեղակայված է Սարսանգի ջրամբարի վրա: Վերջինս ունի 500 մլն մ$^3$ արդյունավետ ծավալ: Ամբարտակի բարձրությունը և լայնությունը կազմում են համապատասխանաբար 730մ և 550մ, որը նույնիսկ եվրոպական երկրների շարքում համարվում է ամենաբարձրերից մեկը:

2010-2018թթ ընթացքում շահագործման է հանձնվել թվով 7 ՀԷԿ, որն Ընկերության դրվածքային հզորությունը 50 ՄՎՏ–ից հասցրեց 79.5 ՄՎՏ:

ՀԷԿ-երի շինարարության արժեքները /շահագործման պահին/ ներկայացված են ստորև բերված աղյուսակում.

| ՀԷԿ | Իրականացված ծախս |
|---|---|
| Մատաղիս 1 | 3.73 մլրդ ՀՀ դրամ |
| Մատաղիս 2 | 2.27 մլրդ ՀՀ դրամ |
| Թրղի 1 | 0.83 մլրդ ՀՀ դրամ |
| Թրղի 2 | 2.47 մլրդ ՀՀ դրամ |
| Թրղի 3 | 2.01 մլրդ ՀՀ դրամ |
| Թրղի 4 | 0.97 մլրդ ՀՀ դրամ |
| ԼԵՎ 1 | 5.05 մլրդ ՀՀ դրամ |

Ստորև ներկայացվում են Թրղե 1, Թրղե-2, Մատաղիս-1, և Մատաղիս-2 ՀԷԿ-երի տեխնիկական ցուցանիշները:

Աղյուսակ 2. ՀԷԿ-երի տեխնիկական ցուցանիշները

| *Բնութագրեր* | *Չափման միավոր* | *Մատաղիս ՀԷԿ-1* | *Մատաղիս ՀԷԿ-2* | *Թրղե ՀԷԿ-1* | *Թրղե ՀԷԿ-2* | *Թրղե ՀԷԿ-3* | *Թրղե ՀԷԿ-4* | *ԼԵՎ 1* |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Դրվածքայինհզորություն | ՄՎտ | 4.8 | 3 | 3 | 5.9 | 5.0 | 0.82 | 7.027 |
| Էլ. էներգիայիմիջինբազմամյ աարտադրանք | մլնԿՎտ/ժամ | 22.4 | 13.2 | 16.5 | 24.82 | 16.3 | 3.4 | 22.6 |
| Հաշվարկայինճնշում | մ | 19.5 | 11.7 | 210 | 355.5 | 320 | 231.8 | 119.7 |
| Հաշվարկայինելք | մ³/վրկ | 30 | 30 | 2 | 2 | 1.9 | 0.45 | 7.0 |
| Տարեկանջրիհոսքիծավալ | մլնմ³ | 632.4 | 632.4 | 33.99 | 31.36 | 30.0 | 6.79 | 127.4 |
| Հիդրոագրեգատներիթիվ | հատ | 3 | 3 | 3 | 2 | 2 | 2 | 2 |
| Դերիվացիոնխողովակաշ արիերկարություն | կմ | 0.24 | 0.03 | 5 | 5 | 3.8 | 8.2 | 5.8 |
| Դերիվացիոնխողովակաշ արիտրամագիծ | հատ/մմ | 3*1600/3*2520 | 3*2520 | 1/1220 | 1/1220 | 1/1020 | 1/630 | 1/600 |

Աղբյուրը՝ «ԱՐՑԱԽՀԷԿ» ԲԲԸ

Նշված ՀԷԿ-երի կառուցման նախագծա-նախահաշվային աշխատանքներն իրականացվել են «Հայհիդրոէներգանախագիծ» ՓԲԸ-ի կողմից:

Ընկերությունը նախատեսում է շահագործման հանձնել նոր ՀԷԿ՝ Քարվաճառ ՓՀԷԿ: 2019թ հունվարից արդեն իսկ սկսվել են շինարարական աշխատանքները և ծրագրվում է այն շահագործման հանձնել 2021թ սեպտեմբերին: ՓՀԷԿ-ի շինարարության արժեքը կկազմի 3.63 մլրդ ՀՀ դրամ:

Քարվաճառ ՓՀԷԿ-ի նախագծա-նախահաշվային աշխատանքներն իրականացվել է “Հիդրոէներգետիկա” ՍՊԸ-ի կողմից, շինարարական աշխատանքները կատարվում են “Հիմնաքար” ՍՊԸ-ի կողմից :

Ընկերությունը իր գործունեությունը ծավալում է ներքին շուկայում: Արտադրված էլեկտրաէներգիան Ընկերությունը ներկայումս ֆիքսված սակագնով /2015թ-ի մարտից Ընկերության արտադրանքի համար գործում է 19 դրամ/ԿՎտ/ժամ սակագինը՝ համաձայն ԱՀ Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 12/02/2015թ. N5Ա որոշման/ վաճառում է ԱՀ էլեկտրաէներգիայի շուկայի օպերատոր՝ «Արցախէներգո» ՓԲԸ-ին, որն ունի ԱՀ տարածքում էլեկտրաէներգիայի փոխանցման և բաշխման լիցենզիա: 2010թ-ի հունիսի 15-ից մինչև 2015թ. հունիս ընկած ժամանակահատվածում ընկերությունն արտադրված էլեկտրաէներգիան վաճառում էր «ԷՅ-Ի-ՋԻ» ՍՊԸ-ին, որը ևս ուներ ԱՀ տարածքում էլեկտրաէներգիայի փոխանցման և բաշխման լիցենզիա:

Վաճառքը իրականացվում է համաձայն առքուվաճառքի պայմանագրի՝ գրանցված ԱՀ Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի կողմից (այսուհետև՝ Հանձնաժողով): Վաճառքի սակագները սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

Ընկերությունը խոշորագույնն է ԱՀ էլեկտրաէներգիայի արտադրության ոլորտում:

Ընկերությունը որևէ արդյունաբերական, բանկային, ֆինանսական խմբերի և միությունների չի անդամակցում:

ԱՀ-ում և նրանից դուրս Ընկերությունը չունի մասնաճյուղեր, ներկայացուցչություններ, հիմնարկներ, ինչպես նաև դուստր ընկերություններ:

## Ընկերությանը և բաժնետոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

Գոյություն ունեն մի շարք ռիսկային գործոններ, որոնք հատուկ են Ընկերությանը և նրա գործունեության ոլորտին և ուղղակի կամ անուղղակի կերպով կարող են բացասական ազդեցություն ունենալ թողարկողի և նրա բաժնետոմսերի գնի վրա:

Ներդրողները պետք է որոշում կայացնեն՝ լիովին գիտակցելով ներդրումների բնույթը և դրանցից բխող հիմնական ռիսկերը՝ ելնելով իրենց փորձից, նպատակներից, ֆինանսական ռեսուրսներից, ռիսկի նկատմամբ հակվածության աստիճանից և այլ գործոններից:

Ներդրողները պետք է հասկանան նաև, որ Ազդագիրը չի կարող ներկայացնել Ընկերության գործունեության հետ կապված բոլոր ռիսկերը:

Ռիսկերի հիմնական տեսակներն են՝

- Քաղաքական ռիսկեր. ԱՀ քաղաքական դաշտում ցանկացած բացասական փոփոխություն, հատկապես այնպիսին, որը կարող է ազդեցություն ունենալ ԱՀ քաղաքական կայունության վրա կամ կասեցնել ընթացիկ բարեփոխումները, կարող է բացասական ազդեցություն ունենալ նաև Ընկերության գործունեության և բաժնետոմսերի շուկայական գնի վրա:
- Անցումային շուկաների ռիսկ. ԱՀ-ի նման անցումային տնտեսություններով հետաքրքրվող ներդրողները պետք է տեղյակ լինեն, որ այսպիսի շուկաները հակված են ավելի մեծ ռիսկի, քան զարգացման ավելի բարձր մակարդակում գտնվող շուկաները:
- Նորմատիվ և օրենսդրական դաշտի փոփոխությունների ռիսկ. ԱՀ իրավական դաշտում օրենսդրական բարեփոխումների գործընթացը դեռևս չի ավարտվել: Այս բարեփոխումների ճանապարհին

օրենսդրական համակարգում կարող են կատարվել այնպիսի փոփոխություններ, որոնք հետագայում կարող են բացասական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական արդյունքների վրա:

- Բնակլիմայական պայմանների ռիսկեր. Ընկերության գործունեության առանձնահատկություններով պայմանավորված՝ բնակլիմայական պայմաններն ու հատկապես գետերի ջրհոսքի ծավալները էական ազդեցություն ունեն նրա գործունեության վերջնական արդյունքների վրա: Ջրայնության նվազումը կարող է հանգեցնել Ընկերության հասույթի կրճատմանը և, հետևաբար, ֆինանսական այլ ցուցանիշների էական վատթարացմանը:
- Ռիսկեր, որոնք կապված են Ընկերության կողմից արտադրության գործընթացում օգտագործվող սարքավորումների և այլ նյութա-տեխնիկական ռեսուրսների գների բարձրացմամբ:
- Արժութային ռիսկ. Այս ռիսկի ազդեցությունը մեծանում է միայն օտարերկրյա ընկերություններից սարքավորումների ձեռք բերման շրջանակում ստանձնած պարտավորությունների կատարման և Ընկերության կողմից ստացված բանկային վարկերի ¥որոնք արտահայտված են արտարժույթով¤ սպասարկման ժամանակահատվածում:
- Գնաճի ռիսկ. գնաճի մակարդակի աճը կարող է հանգեցնել տոկոսադրույքների մակարդակի աճին՝ դրա հետ կապված ռիսկերով հանդերձ՝ վճարման ենթակա տոկոսագումարների իրական արժեքի աճ, ապրանքների, ծառայությունների և աշխատանքների ինքնարժեքի աճ (էներգակիրների արժեքի, տրանսպորտային ծախսերի, աշխատավարձերի և այլն, մեծացման հետ կապված), ներդրումային ծրագրերի իրացմանն ուղղված միջոցների իրական արժեքի նվազում և այլն:
- Անհաղթահարելի ուժի ի հայտ գալու ռիսկ (ֆորս-մաժոր). Ընկերության գործունեության վրա ուղղակի բացասական ազդեցություն կարող են ունենալ նաև ֆորս-մաժորային ռիսկերը: Այդպիսի իրավիճակներ են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները և այլն, որոնք դուրս են Ընկերության վերահսկողությունից:

Ինչ վերաբերում է առաջարկվող բաժնետոմսերում ներդրումների հետ կապված շուկայական ռիսկին, ապա առկա են տոկոսադրույքային, արժութային և բաժնետոմսերի գների փոփոխության հետ կապված ռիսկային գործոններ:

- Առաջարկվող բաժնետոմսերը, այնպես ինչպես նախկինում Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերը գնանշվելու են ՀՀ դրամով, հետևաբար, դրամի փոխարժեքի փոփոխությունները կարող են անբարենպաստ ազդեցություն ունենալ բաժնետոմսերի գների կամ նրանց ակնկալվող եկամուտների վրա:
- Շուկայական ռիսկ. բաժնետոմսերի շուկայում գների անբարենպաստ փոփոխությունների արդյունքում առաջացող կորուստների ռիսկ: Նշված ռիսկը կարող է կրել համակարգային բնույթ /երբ անկում է արձանագրվում բոլոր տեսակի ակտիվների գներում (բաժնետոմսեր, պարտատոմսեր և այլն)/, ինչպես նաև կարող է անկում արձանագրվել կոնկրետ ոլորտի ակտիվների դասում /օր՝ էներգետիկայի ոլորտի կամ թանկարժեք մետաղների ընկերությունների բաժնետոմսերում/:
- Իրացվելիության ռիսկ. Բաժնետոմսերի ցածր իրացվելիության ռիսկը պայմանավորված է կապիտալի շուկայի թերզարգացվածությամբ, որի արդյունքում բաժնետոմսերը իրացնելու դեպքում ներդրողը կարող է կրել ֆինանսական կորուստներ: Այս ռիսկի բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակով Ընկերությունը ձեռնարկելու է անհրաժեշտ միջոցառումներ: Ընկերությունը բաժնետոմսերը ցուցակելու է «Հայաստանի ֆոնդային բորսա»-ի ցուցակման B մակարդակում (ինչպես նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերը) և միաժամանակ, շուկա ստեղծողի միջոցով ապահովելու է ֆոնդային բորսայում բաժնետոմսերի պարտադիր երկկողմանի գնանշումների կազմակերպումը (Բաժնետոմսերի ցուցակումից հետո «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն (այսուհետև նաև՝ Բանկ), շարունակելու է հանդես գալ որպես Ընկերության բաժնետոմսերի շուկա ստեղծող:

- <u>Ինֆլյացիոն ռիսկ.</u> Այս ռիսկը հիմնականում պայմանավորված է բաժնետոմսերում ներդրումներից ակնկալվող եկամուտների արժեզրկման հետ՝ իրական գնողունակության տեսանկյունից:

Ընկերությունը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ նշված գործոնների բացասական ազդեցությունները նվազեցնելու համար: Այնուամենայնիվ, քանի որ շատ դեպքերում նշված ռիսկային գործոնները Ընկերության վերահսկողությունից դուրս են, այս ցուցակով չսահմանափակվող ռիսկերի բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակով ձեռնարկված միջոցառումների արդյունավետությունը չի երաշխավորվում Ընկերության կողմից:

## Ընկերության տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները

2011-2018թթ ընթացքում Ընկերության կողմից արտադրվող էլեկտրաէներգիայի ծավալներեն աճել են ավելի քան 80 տոկոսով /2011թ. 104.2 մլն կՎտ/ժ համեմատ 2018թ. արտադրված էլէկտրաէներգիայի ծավալը կազմել է 190.8 մլն կՎտ/ժ /: 2019թ Ընկերությունը նախատեսում է արտադրել մոտ 30.00 մլն ԿՎտ/ժամ-ով ավել էլեկտրաէներգիա քան 2018թ., հասցնելով այն մինչև 220.00 մլն ԿՎտ/ժամ, արդյունքում բավարարել ԱՀ-ի՝ էլեկտրաէներգիայի նկատմամբ պահանջարկի մոտ 54-55 %-ը: Ստորև ներկայացված են Ընկերության շահույթի կանխատեսումները՝ 2019-2021թթ-երի համար:

Աղյուսակ 3. Ընկերության շահույթի կանխատեսումը 2019-2021թթ-երի համար, հազար դրամ*:

| | 2019 | 2020 | 2021 | 2022 | 2023 |
|---|---|---|---|---|---|
| Հասույթ | 4,180,000 | 4,180,000 | 4,320,000 | 4,690,000 | 4,690,000 |
| Ինքնարժեք | 564,625 | 564,625 | 578,625 | 646,625 | 650,000 |
| Ամորտիզացիա | 540,000 | 540,000 | 565,000 | 640,000 | 640,000 |
| Համախառն եկամուտ | 3,075,375 | 3,075,375 | 3,176,375 | 3,403,375 | 3,400,000 |
| Վարչական ծախսեր | 428,666 | 413,140 | 415,000 | 430,000 | 435,000 |
| Գործառնական շահույթ | 2,646,709 | 2,662,235 | 2,761,375 | 2,973,375 | 2,965,000 |
| Ֆինանսական ծախսեր | 567,930 | 516,200 | 535,000 | 630,000 | 525,000 |
| Զուտ շահույթ նախքան շահութահարկի գծով ծախսերի նվազեցումը | 2,078,779 | 2,146,035 | 2,226,375 | 2,343,375 | 2,440,000 |
| Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսերի նվազեցումից հետո | 1,663,023 | 1,716,828 | 1,781,100 | 1,874,700 | 1,952,000 |
| Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով | 146.85 | 143.07 | 148.43 | 156.23 | 162.67 |

Աղբյուրը՝ «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ

*Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով արտահայտված է ՀՀ դրամով:

## Ընկերության աուդիտն իրականացնող անձի ինքնության մասին համառոտ տեղեկություններ

Ընկերության 2015թ. ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրել է «ՖԻՆ ՏԵԽ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ՝ աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզիա ԱԾ 072 տրված ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 22.01.2010թ։

Ընկերության 2016-2017թթ ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացվել է «ԱՄԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ի կողմից՝ աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզիա ԱԾ 097 տրված ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 10.01.2014թ։

Ընկերության կողմից ֆինանսական հաշվետվությունների աուդիտ իրականացնող անձի փոփոխության պատճառը պայմանավորված է 2016 թվականի ընթացքում Ընկերության կողմից իրականացրած բանակցությունների արդյունքում «ԱՄԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ կողմից առաջարկվող պայմաններով։

Ընկերության խորհրդի 29.06.2018թ. թիվ 2 որոշման համաձայն ընկերության 2018թ. ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող կազմակերպություն ընտրվել է «ԱՄԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ն։

## Ընկերության կառավարման մարմինները

Ընկերության կառավարման մարմիններն են Բաժնետերերի Ընդհանուր Ժողովը ¥այսուհետև՝ Ժողով, Տնօրենների Խորհուրդը /այսուհետև՝ Խորհուրդ/, Գլխավոր Տնօրենը և Վերստուգող հանձնաժողովը, ինչպես նաև Ընկերության Կորպորատիվ քարտուղարը։

Ընկերության Տնօրենների Խորհրդի անդամներն են՝

Արայիկ Հարությունյան՝ Տնօրենների Խորհրդի նախագահ։ Ունի բազմամյա աշխատանքային փորձ։ 2007թ.-ից 2017թ. զբաղեցրել է ԱՀ վարչապետի պաշտոնը, 2017թ.- ից 2018թ. զբաղեցրել է ԱՀ պետական նախարարի պաշտոնը։ Ներկայումս զբաղեցնում է «Ազատ Հայրենիք» կուսակցության նախագահի պաշտոնը։

Րաֆֆի Բալյոզյան՝ Տնօրենների Խորհրդի անդամ։ Ֆինանսիստ, մարքեթոլոգ, Ներկայումս զբաղեցնում է, «Ֆրանկ Մյուլեր Գրուպ» ընկերության խորհրդատվական ստորաբաժանում հանդիսացող, «Գենթոդ Գլոբալ Վելթ Մենեջմենթ» ընկերության ներդրումների գծով խորհրդատուի պաշտոնը։

Հայկ Բոյաջյան՝ Տնօրենների Խորհրդի անդամ։ Ունի 14 տարվա աշխատանքային փորձ։ 2006 թվականից մինչև օրս աշխատում է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ում։ Ներկայումս զբաղեցնում է Ներդրումային դեպարտամենտի՝ պորտֆելի ավագ կառավարիչի պաշտոնը։

Մենուա Մկրտչյան ՝ Տնօրենների Խորհրդի անդամ սկսած 2018թ։ 2010թ. միացել է Ռեսո խմբին՝ ներդրումային ծրագրերի կառավարիչի պաշտոնում։ Ներկայումս զբաղեցնում է Ռեսո խմբի գլխավոր տնօրենի տեղակալի պաշտոնը։ ։

Վլադիմիր Շեկոյան՝ Տնօրենների Խորհրդի անդամ սկսած 2017թ.: 2010թ. միացել է Ռեսո խմբին՝ ներդրումային ծրագրերի կառավարիչի պաշտոնում: Ներկայումս զբաղեցնում է «ԿԳԱԼ Նյու Ֆռոնթայրս» ՍՊԸ –ի հատուկ խորհրդատուի պաշտոնը:

Արա Ղոնյան՝ Տնօրենների Խորհրդի անդամ սկսած 2013թ: Ներկայումս զբաղեցնում է «Զանգեզուրի Պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի Իրավապայմանագրային ծառայության պետի պաշտոնը:

Կարեն Արաբյան՝ Տնօրենների Խորհրդի անդամ սկսած 2012թ: Ներկայումս զբաղեցնում է «Ամբեր Կապիտալ» ՓԲԸ –ի տնօրենի պաշտոնը:

Վահրամ Բեգլարյան՝ Ընկերության գլխավոր տնօրեն: Ունի 20 տարվա աշխատանքային փորձ, ունի փորձ բանկային համակարգում: 2009 թվականից առ այսօր աշխատում է Ընկերության գլխավոր տնօրենի պաշտոնում:

Կամո Բարսեղյան՝ Ընկերության գլխավոր տնօրենի տեղակալ սկսած 2015թ: 2010-2015թթ. ԱՀ Ազգային Ժողովի պատգամավոր:

Արմեն Գասպարյան՝ Ընկերության տեխնիկական տնօրեն՝ 2008թ.-ից մինչ օրս:

Ժան Հովհաննիսյան ՝ Ընկերության ֆինանսական տնօրեն՝ 2008թ.-ից մինչ օրս

Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամներն են՝

Արթուր Պետրոսյան՝ Վերստուգող հանձնաժողովի նախագահ: Ունի 20 տարվա աշխատանքային փորձ, նաև՝ բանկային համակարգում: Զբաղեցնում է ԱՀ վարչապետի առաջին օգնականի պաշտոնը:

Արթուր Պատվականյան՝ Վերստուգող հանձնաժողովի անդամ: Տվյալ պաշտոնում աշխատում է սկսած 2008թ::

Գեղամ Ասատրյան՝ Վերստուգող հանձնաժողովի անդամ: Տվյալ պաշտոնում աշխատում է սկսած 2018թ:

Ընկերության կորպորատիվ քարտուղարն է Սերյոժա Մնացականյանը: Ունի 15 տարվա աշխատանքային փորձ: Ընկերությունում աշխատում է սկսած 2016թ. որպես իրավաբանական և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ:

Ընկերության գլխավոր հաշվապահն է Արայիկ Դավթյանը: Տվյալ պաշտոնում աշխատում է սկսած 2008թ.:

Կառավարման մարմինների անդամների միջև ազգակցական կապը բացակայում է: Ընկերության կառավարման մարմինների մոտ կորպորատիվ և անձնական շահերի բախում չկա:

Ընկերության խոշոր բաժնետերեր են հանդիսանում.

| Բաժնետեր | Պատկանող բաժնետոմսերի քանակ / կշիռը կանոնադրական կապիտալում |
|---|---|

| | |
|---|---|
| «Մ.Էներգոինվեստ» ՓԲԸ | 3,856,834 / 36.21 % |
| «Մուլտիկոնտինենտալ Դիստրիբյուշն Լիմիթեդ» ՍՊԸ | 1,781,348 / 16.73 % |
| Ժոզեֆ Ուղուրլյան | 1,262,901 / 11.86 % |
| «ԿԳԱԼ Նյու ֆրոնթայրս» ՍՊԸ | 1,069,025 / 10.04 % |
| «Ռեսո Գարանտիա ապահովագրական» ՀԲԸ | 872,000 / 8.19 % |
| «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ | 657,933 / 6.18 % |

31.12.2018թ-ի դրությամբ Ընկերությունը ունեցել է 167 աշխատակիցներ:

## Առաջարկվող բաժնետոմսերի հիմնական վիճակագրական տվյալները

Առաջարկվող բաժնետոմսերը հասարակ անվանական բաժնետոմսեր են::

Թողարկման արժույթը ՀՀ դրամն է:

Ընկերությունն արդեն ունի նույն դասի 10,650,000 հատ տեղաբաշխված բաժնետոմսեր, որոնք ցուցակված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ԲԲԸ-ում և դրանց շնորհված է 00AHEKS10KR3 տարբերակիչ ծածկագիրը:

Բաժնետոմսերը ոչ փաստաթղթային են: Ինչպես նախկինում տեղաբաշխված, այնպես էլ լրացուցիչ տեղաբաշխվող բաժնետոմսերի սեփականատերերի ռեեստրի վարումը իրականացվում է «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ի (այսուհետև՝ ՀԿԴ) կողմից (ՀՀ, ք. Երևան 0010 , Միեր Մկրտչյանի 5բ), «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» միջնորդությամբ 18.03.2013թ. կնքված Ռեեստրի վարման պայմանագրի հիմքով:

Առաջարկվող բաժնետոմսերի քանակն է 1,350,000 /մեկ միլիոն երեք հարյուր հիսուն հազար/ հատ: Մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 1,000 ՀՀ դրամ, ընդհանուր ծավալը անվանական արժեքով 1,350,000,000 ՀՀ դրամ է:

Սույն առաջարկի /տեղաբաշխման/ շրջանակում մեկ բաժնետոմսի տեղաբաշխման գինը Ընկերության խորհրդի 14.11.2018թ. N -6-2018/01 որոշմամբ սահմանվել է՝

- ***նախապատվության իրավունքի կիրառմամբ բաժնետոմսերի ձեռք բերման դեպքում՝ 1,050 ՀՀ դրամ,***
- ***բաժնետերերի կողմից նախապատվության իրենց իրավունքի չկիրառման դեպքում՝ չտեղաբաշխված բաժնետոմսերի տեղաբաշխման գինը սահմանվում է 1,500 ՀՀ դրամ:***

Բաժնետոմսերի լրացուցիչ տեղաբաշխումից հավաքագրված միջոցները Ընկերության կողմից օգտագործվելու են կառուցվող Քարվաճառ ՓՀԷԿ-ի կապիտալ շինարարական աշխատանքների ֆինանսավորման, ինչպես նաև՝ արդեն շահագործվող ՀԷԿ-երի կառուցման համար կապիտալ

շինարարական աշխատանքների ֆինանսավորման համար Ընկերության կողմից օգտագործված փոխառու միջոցների վերաֆինանսավորման նպատակով:

## Արժեթղթերի առաջարկի համակողմանի նկարագիրը

Բաժնետոմսերի առաջարկն ամբողջությամբ իրականացվում է լրացուցիչ տեղաբաշխվող բաժնետոմսերի հաշվին՝ Ընկերության կանոնադրությամբ ամրագրված հայտարարված բաժնետոմսերի ծավալի շրջանակում: Բաժնետոմսերի տեղաբաշխումն իրականացվում է Ընկերության նախկինում թողարկված բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերի կողմից բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվության իրավունքի կիրառման միջոցով, իսկ նախապատվության իրավունքի կիրառման արդյունքում չտեղաբաշխված բաժնետոմսերը ենթակա են տեղաբաշխման ազատ բաժանորդագրության միջոցով:

***Նախապատվության իրավունքի կիրառման շրջանակներում բաժնետոմսեր ձեռք չբերելու պարագայում, գործող բաժնետերերի մասնաբաժինը ընկերության կանոնադրական կապիտալում կարող է նվազել: Նվազման հարաբերակցությունը կախված կլինի սույն ազդագրով լրացուցիչ տեղաբաշխված բաժնետոմսերի քանակից:***

***Սույն ազդագրով սահմանված կարգով, նախապատվության իրավունքի կիրառմամբ գործող բաժնետերերի կողմից ստացված հայտերի արդյունքների ամփոփումից անմիջապես հետո, բայց ոչ ուշ քան տեղաբաշխման առաջին օրվա աշխատանքային օրվա ավարտը, Ընկերությունը և Տեղաբաշխողը իրենց ինտերնետային էջերում կհրապարակեն բաց բաժանորդագրության շրջանակներում տեղաբաշխման ենթակա բաժնետոմսերի քանակի վերաբերյալ տեղեկատվություն:***

Տեղաբաշխումը կսկսվի Ազդագրի գրանցման օրվան հաջորդող 33-րդ օրը և կտևի 10 օր:

Բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվության իրավունքից կարող են օգտվել 14.11.2018թ. ժամը 24:00 դրությամբ Ընկերության բաժնետոմսերի սեփականատերերի ռեեստրում գրանցված անձինք (այսուհետև՝ Բաժնետերեր): Նախապատվության իրավունքից օգտվելու համար բաժնետերը պետք է տեղաբաշխումը սկսելու օրվանից առնվազն մեկ օր առաջ ծանուցում ուղարկի Ընկերությանը, որի օրինակելի ձևը ներկայացված է Ազդագրում: Ծանուցումը ներկայացված է համարվում, եթե այն ներկայացվել Ընկերության գրասենյակ (ԱՀ, ք. Ստեփանակերտ, Վ.Սարգսյան 25ա հասցեում) փոստի կամ այլ կապի միջոցով կամ առձեռն: Մատչելիության նկատառումներից ելնելով՝ նշված ծանուցումը կարող է ներկայացվել նաև Բանկի գրասենյակ (ք. Երևան, Վ.Սարգսյան 10 հասցեում)

Բաժնետոմսերի նախապատվության իրավունքը կիրառվում է համամասնորեն և հասանելիք բաժնետոմսերի քանակը որոշվում է ելնելով Բաժնետերերին պատականող բաժնետոմսերի քանակից: Եթե ծանուցման մեջ նշված բաժնետոմսերի քանակը գերազանցում է Բաժնետիրոջ հասանելիք քանակին, ապա այն ենթակա է բավարարման հասանելիք առավելագույն քանակով, իսկ տարբերությունը կարող է բավարարել ազատ բաժանորդագրության ենթակա բաժնետոմսերի հաշվին /այս դեպքում բաժնետերը պարտավոր է ավելացնել նախապատվության իրավունքի կիրառմամբ և բաց բաժանորդագրության համար սահմանված գների տարբերությունը /յուրաքանչյուր բաժնետոմսի հաշվարկով/, Ազդագրում սահմանված կարգով մուտքագրելով այն Բանկում բացված 2500036910046100 բանկային (տարանցիկ) հաշվին /:

Բաժնետոմսեր ցանկացող ֆիզիկական և/կամ իրավաբանական անձինք (այսուհետ՝ ներդրողներ) կարող են մասնակցել բաժնետոմսերի ազատ բաժանորդագրությանը: Բաժնետոմսերի ազատ բաժանորդագրության շրջանակում ձեռք բերվող բաժնետոմսերի քանակի նկատմամբ սահմանափակումներ չկան: Տեղաբաշխման ընթացքում Բաժնետոմսերի ձեռք բերման հաստատումը և Ընկերության տնօրենների խորհրդի որոշմամբ սահմանված պայմաններն ընդունելու համաձայնություն տալը ներդրողն իրականացնում է բաժնետոմսերի բաժանորդագրության հայտը սահմանված կարգով լրացնելու և Բանկ ներկայացնելու միջոցով: Բաժանորդագրության հայտը կարելի է ստանալ Ընկերության գրասենյակից,

Բանկի գրասենյակից (ք. Երևան, Վ.Սարգսյան 10 հասցեով) կամ համապատասխանաբար www.artsakhhek.am կամ www.armswissbank.am պաշտոնական կայքերից կամ հեռախոսով կապ հաստատել Բանկի մասնագետների հետ, որոնք կօգնեն ներդրողին ստանալ բաժանորդագրության հայտը:

Ներդրողների կողմից բաժնետոմսերի բաժանորդագրության հայտերը կարող են Բանկ ներկայացվել տեղաբաշխման ընթացքում ցանկացած աշխատանքային օրվա ընթացքում՝ ժամը 10:00-16:30-ին: Բաժնետոմսերի բաժանորդագրության հայտը Բանկ ներկայացված է համարվում, եթե այն ներկայացվել է փոստով և այլ կապի միջոցով, ինչպես նաև առձեռն եղանակով: Ներդրողը կարող է Բաժնետոմսերի բաժանորդագրության հայտը ներկայացնել նաև Ընկերության հասցեով:

Բաժանորդագրության հայտին կից պետք է ներկայացվեն հետևյալ փաստաթղթերը՝

- ներդրողի անձնագրի պատճենը (ֆիզիկական անձի դեպքում),
- ներդրողի պետական գրանցման վկայականի պատճենը (իրավաբանական անձի դեպքում)
- բաժանորդագրվող բաժնետոմսերի դիմաց վճարումը հավաստող փաստաթուղթը

Բաժնետոմսերի դիմաց վճարումը ներդրողի կողմից կարող է կատարվել անկանխիկ՝ Բանկում բացված 2500036910046100 բանկային (տարանցիկ) հաշվին: Ֆիզիկական անձ ներդրողը գումարը կարող է մուտքագրել կանխիկ եղանակով՝ հայտին կից ներկայացնելով անձնագրի պատճենը:

Նախապատվության իրավունքի կիրառման շրջանակում բաժնետոմսեր ձեռք բերելու նպատակով Բաժնետերը բաժնետոմսերի դիմաց վճարումը հիմավորող փաստաթուղթը պետք է Ընկերություն ներկայացնի բաժնետոմսերի ձեռք բերման մասին ծանուցման հետ միասին, բայց ոչ ուշ, քան տեղաբաշխումը սկսվելու օրվանից առնվազն մեկ օր առաջ:

Բաժնետոմսերի ազատ բաժանորդագրության շրջանակում ներդրողը բաժնետոմսերի դիմաց վճարումը հիմնավորող փաստաթուղթը պետք է Բանկ ներկայացնի բաժնետոմսերի բաժանորդագրության հայտի հետ միասին, բայց ոչ ուշ, քան տեղաբաշխման ավարտի օրը:

Բաժանորդագրության հայտերը ընդունվելուց հետո, մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտը, ներդրողները կարող են գրավոր կերպով հետկանչել իրենց բաժանորդագրությունները: Հետ կանչվելու դեպքում ներդրողը կարող է ներկայացնել նոր հայտ, որում նշված բաժնետոմսերի քանակը կարող է տարբեր լինել նախկինում ներկայացված հայտում նշված բաժնետոմսերի քանակից: Եթե տեղի է ունեցել բաժնետոմսերի գերբաժանորդագրություն, ապա ներկայացված հայտերը բավարարվում են ըստ ներկայացման ժամկետի առաջնահերթության:

Այն դեպքում, երբ տեղաբաշխման որևէ օրվա ընթացքում ներկայացված բաժանորդագրության հայտերում ձեռքբերվող բաժնետոմսերի ծավալը գերազանցում է չտեղաբաշխված բաժնետոմսերի ծավալին, ապա հայտերը բավարարվում են մասնակիորեն՝ ըստ ներկայացված քանակների համամասնության:

Բաժանորդագրության հայտի մերժման, բաժնետիրոջ կողմից հետկանչման, ինչպես նաև գերբաժանորդագրության դեպքում հայտի մասնակի բավարարման ժամանակ Բաժնետոմսերի ձեռք բերման համար փոխանցված դրամական միջոցները Տեղաբաշխողի կողմից ենթակա են վերադարձման երեք աշխատանքային օրվա ընթացքում անկանխիկ եղանակով՝ բաժնետոմսերի բաժանորդագրության հայտում ներդրողի կողմից նշված բանկային հաշվին փոխանցելու միջոցով:

Արժեթղթերի հաշիվ չունենալու դեպքում Բանկի աշխատակիցները կօգնեն այդ հաշիվը բացել Կենտրոնական դեպոզիտարիայում կամ մասնագիտացված այլ պահառուների մոտ:

Բաժնետոմսերի տեղաբաշխման ավարտից հետո ներդրողը կարող է Կենտրոնական դեպոզիտարիայից (եթե ներդրողը հաշիվը բացել է Կենտրոնական դեպոզիտարիայում) կամ այլ պահառուից (եթե ներդրողը հաշիվը բացել է այլ պահառուի մոտ) ստանալ քաղվածք, որում արտացոլված կլինեն իր կողմից ձեռք բերված բաժնետոմսերը:

Բաժնետոմսերի տեղաբաշխումն իրականացվելու է չերաշխավորված տեղաբաշխման միջոցով՝ լավագույն ջանքերի սկզբունքով: Որպես տեղաբաշխող հանդես է գալիս «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն, վերջինիս և Ընկերության միջև հարաբերությունները կարգավորվում են Կողմերի միջև կնքված «Բաժնետոմսերի չերաշխավորված եղանակով տեղաբաշխման մասին» պայմանագրով:

Ըստ «Բաժնետոմսերի չերաշխավորված եղանակով տեղաբաշխման մասին» պայմանագրի՝ Բանկը պարտավորվում է Ընկերությանը մատուցել Բաժնետոմսերի տեղաբաշխման հետ կապված ծառայությունները՝ չերաշխավորված տեղաբաշխման սկզբունքով:

Նախապատվության իրավունքի կիրառման արդյունքում չտեղաբաշխված բաժնետոմսերի տեղաբաշխման կազմակերպման նպատակով Բանկը կազմակերպում է Բաժնետոմսերի ազատ բաժանորդագրություն, գործադրում է լավագույն ջանքեր Բաժնետոմսերի պոտենցիալ գնորդներ բացահայտելու և Բաժնետոմսերի տեղաբաշխման նպատակով, Բաժնետոմսերի տեղաբաշխման ընթացքում Բաժնետոմսերի գնորդներին աջակցում է Բաժնետոմսերի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման գործընթացում և այդ նպատակով տրամադրում է անհրաժեշտ տեղեկատվություն, Բաժնետոմսերի տեղաբաշխման ավարտից հետո ամփոփում է տեղաբաշխման արդյունքները, նախապատրաստում է տեղաբաշխման ընթացքի և արդյունքների մասին օրենքով սահմանված հաշվետվությունները, ձեռնարկում է անհրաժեշտ գործողություններ ՀԿԴ-ում բաժնետոմսերը Ընկերության թողարկման հաշվից գնորդների համապատասխան հաշիվներին փոխանցելու նպատակով, Ընկերության հետ համատեղ կազմակերպում է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ ֆոնդային բորսայում Բաժնետոմսերի ցուցակման ապահովումը և պահանջվող տեղեկությունների (հաշվետվությունների/փաստաթղթերի) կազմումը և ֆոնդային բորսա ներկայացումը:

## Առևտրին թույլտվությունը և առևտրի կազմակերպումը

Ընկերության խորհրդի 14.11.2018թ-ին ընդունված N 6-1018/01 որոշմամբ տեղաբաշխման ենթակա բաժնետոմսերի շրջանառությունը պետք է կազմակերպվի Ընկերության նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերի հետ միասնական ընդհանուր եղանակով՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան: Առաջարկվող բաժնետոմսերի մասով հայցվելու է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ում առևտրին թույլտվություն: Հայցը կարող է մերժվել «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ կողմից:

2009 թ-ի հոկտեմբերից Ընկերությունը հանդիսանում է հաշվետու թողարկող, որի բաժնետոմսերը ցուցակվում են «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ ցուցակման B մակարդակում:

2010 թվականի ապրիլի 3-ին Բանկին շնորհվել է Ընկերության բաժնետոմսերի շուկա ստեղծողի կարգավիճակ, ըստ որի Բանկը պարտավոր է Ֆոնդային բորսայի առևտրային նստաշրջանի ընթացքում անընդհատ ապահովել Բաժնետոմսերի առքի և վաճառքի գնանշումներ՝ «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ «Շուկա ստեղծողի կանոնների» դրույթների համապատասխան:

Սույն ազդագրի միջոցով ֆիզիկական կամ իրավաբանական անձ հանդիսացող բաժնետիրոջ պատկանող բաժնետոմսերի վաճառքի առաջարկ չի նախատեսվում: Առաջարկը վերաբերվում է միայն Ընկերության կողմից լրացուցիչ տեղաբաշխվող բաժնետոմսերին:

## Ամփոփ ֆինանսական տվյալներ

Աղյուսակ 4. Ֆինանսական հաշվետվությունների մասին ամփոփ հաշվետվություն

| *Ցուցանիշի անվանումը, հազ.դրամ** | *31.12.2015* | *31.12.2016* | *31.12.2017* | *31.12.2018 Աուդիտ չանցած* |
|---|---|---|---|---|
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ | 2,612,997 | 3,644,111 | 3,446,178 | 3,625,229 |
| Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք | -766,954 | -783,007 | -849,093 | -879,858 |
| Համախառն շահույթ (վնաս) | 1,846,043 | 2,861,104 | 2,597,085 | 2,745,371 |
| Իրացման ծախսեր | -2,407 | -2,680 | -3,538 | -2,534 |
| Վարչական ծախսեր | -273,464 | -288,699 | -312,358 | -338,527 |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս) | 1,570,172 | 2,569,725 | 2,281,189 | 2,404,310 |
| Գործառնական այլ եկամուտներ | 5,451 | 19,268 | 4,947 | 763 |
| Գործառնական այլ ծախսեր | -13,074 | -4,113 | -14,711 | -9,538 |
| Գործառնական շահույթ վնաս | 1,562,549 | 2,584,880 | 2,271,425 | 2,395,535 |
| Ֆինանսական ծախսեր | -461,837 | -488,426 | -455,145 | -538,515 |
| Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների գծով շահույթ (վնաս) | 0 | 0 | 0 | 0 |
| Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս) | -35,016 | 4,865 | -9,450 | 36,978 |
| Սովորական գործունեությունից շահույթ (վնաս) | 1,065,696 | 2,101,319 | 1,806,830 | 1,893,998 |
| Արտասովոր դեպքերից շահույթ (վնաս) | -7,362 | -6,150 | -6,191 | -6,241 |
| Զուտ շահույթ նախքան շահութահարկի գծով ծախսերի նվազեցումը | 1,058,334 | 2,095,169 | 1,800,639 | 1,887,757 |
| Շահութահարկի գծով ծախս փոխհատուցում | -117,637 | -212,301 | -193,878 | 188,776 |
| Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո | 940,697 | 1,882,868 | 1,606,761 | 1,698,981 |

Աղբյուրը՝ «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ

* Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով արտահայտված է ՀՀ դրամով:

Աղյուսակ 5. Ամփոփ հաշվապահական հաշվեկշիռ

| Ցուցանիշի անվանումը, հազ.դրամ | 31.12.2015 | 31.12.2016 | 31.12.2017 | 31.12.2018 Աուդիտ չանցած |
|---|---|---|---|---|
| Հիմնական միջոցներ | 16,071,402 | 15,845,137 | 15,598,595 | 21,191,068 |
| Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ | 91,577 | 659,206 | 3,218,670 | 45,800 |
| Ոչ նյութական ակտիվներ | 18 | 0 | 0 | 0 |
| Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ | 0 | 0 | 0 | 0 |
| Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ | 0 | 0 | 0 | 0 |
| Այլ ոչ ընթացիկ ակտիվներ | 170,472 | 40,574 | 292,460 | 5,592 |
| Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ | 16,333,469 | 16,544,917 | 19,109,725 | 21,242,460 |
| Պաշարներ | 89,845 | 79,927 | 79,410 | 60,452 |
| Տրված ընթացիկ կանխավճարներ | 130,310 | 250,035 | 1,747 | 2,410 |
| Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով | 1,051,622 | 628,658 | 998,949 | 857,954 |
| Այլ դեբիտորական պարտքեր | 88,741 | 160,963 | 1,024 | 199 |
| Ընթացիկ ֆինանսական ներդրումներ | 0 | 733,940 | 0 | 0 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 535,306 | 72,454 | 1,446,773 | 147,757 |
| Այլ ընթացիկ ակտիվներ | 3,307 | 1,750 | 105,651 | 66,078 |
| Ընդամենը ընթացիկ ակտիվներ | 1,899,131 | 1,927,727 | 2,633,554 | 1,134,850 |
| Ընդամենը ակտիվներ | 18,232,600 | 18,472,644 | 21,743,279 | 22,377,310 |
| Կանոնադրական կապիտալի զուտ գումար | 10,650,000 | 10,650,000 | 10,650,000 | 10,650,000 |
| Էմիսիոն եկամուտ | 457,127 | 457,127 | 457,127 | 457,127 |
| Վերագնահատումից և վերաչափումից տարբերություններ | 0 | 0 | 0 | 0 |
| Կուտակված շահույթ | 1,520,254 | 2,509,460 | 2,957,078 | 3,699,495 |
| Պահուստային կապիտալ | 208,069 | 249,731 | 343,874 | 424,213 |
| Սեփական կապիտալի այլ տարրեր | 0 | 0 | 0 | 0 |
| Ընդամենը սեփական կապիտալ | 12,835,450 | 13,866,318 | 14,408,079 | 15,230,835 |
| Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ | 4,226,515 | 4,337,021 | 6,325,783 | 6,473,993 |
| Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ | 0 | 0 | 0 | 0 |
| Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ | 4,226,515 | 4,337,021 | 6,325,783 | 6,473,993 |
| Կարճաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ | 1,000,000 | 0 | 42,000 | 0 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Կրեդիտորական պարտքեր գնումների գծով | 18,061 | 11,808 | 634,355 | 399,229 |
| Այլ կրեդիտորական պարտքեր | 755 | 346 | 357 | 352 |
| Ստացված ընթացիկ կանխավճարներ | 0 | 0 | 0 | 0 |
| Այլ ընթացիկ պարտավորություններ | 151,819 | 257,151 | 332,705 | 272,901 |
| Ընդամենը ընթացիկ պարտավորություններ | 1,170,635 | 269,305 | 1,009,417 | 672,482 |
| Ընդամենը պարտավորություններ | 5,397,150 | 4,606,326 | 7,335,200 | 7,146,475 |
| Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ | 18,232,600 | 18,472,644 | 21,743,279 | 22,377,310 |

Աղբյուրը՝ «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ

Աղյուսակ 6. Դրամական հոսքերի մասին ամփոփ տվյալներ

| *Ցուցանիշի անվանումը, հազ. դրամ* | *31.12.2015* | *31.12.2016* | *31.12.2017* | *31.12.2018 Աուդիտ չանցած* |
|---|---|---|---|---|
| Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբին | 19,651 | 535,306 | 72,454 | 1,446,773 |
| Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր | 1,079,850 | 2,529,539 | 424,447 | 576,934 |
| Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր | -343,127 | -825,857 | 519,801 | -215,031 |
| Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր | -210,608 | -2,164,087 | 392,705 | -1,671,789 |
| Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին | 535,306 | 72,454 | 1,446,773 | 147,757 |

Աղբյուրը՝ «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ

Աղյուսակ 7. Ամփոփ ֆինանսական գործակիցներ /Աղբյուրը՝ «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ/

| *Ամփոփ ֆինանսական գործակիցներ* | *31.12.2015* | *31.12.2016* | *31.12.2017* | *31.12.2018 Աուդիտ չանցած* |
|---|---|---|---|---|
| Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով | 88.33 | 176.80 | 150.87 | 159.81 |
| Սեփական կապիտալի շահութաբերություն | 7.45 | 14.10 | 11.37 | 11.48 |
| Ակտիվների շահութաբերություն | 5.29 | 10.26 | 7.99 | 7.72 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Զուտ շահույթի մարժա | 36.00 | 51.67 | 46.62 | 46.95 |
| Կապիտալի համարժեքության գործակից | 70.40 | 75.06 | 66.26 | 68.06 |
| Ֆինանսական կախվածության գործակից | 42.05 | 33.22 | 50.91 | 46.92 |
| Բացարձակ իրացվելիության գործակից | 0.457 | 2.994 | 1.433 | 0.220 |
| Ընթացիկ իրացվելիության գործակից | 1.54 | 6.85 | 2.43 | 1.50 |
| Ընդհանուր իրացվելիության գործակից | 1.62 | 7.16 | 2.61 | 1.69 |
| Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից | 2.43 | 4.34 | 4.23 | 4.24 |
| Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով | 150.35 | 84.15 | 86.19 | 86.14 |
| Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից | 0.149 | 0.157 | 0.142 | 0.122 |
| Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով | 2452.28 | 2331.57 | 2566.65 | 3003.79 |

Ներդրողները կարող են Ազդագիրը ստանալ Բանկի և Ընկերության գրասենյակներից (համապատասխանաբար ՀՀ, ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան 10 կամ ԱՀ, ք. Ստեփանակերտ, Վ. Սարգսյան 25ա հասցեներում) կամ Բանկի և Ընկերության ինտերնետային կայքերից:

# ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

## Ռիսկային գործոններ

1. Գոյություն ունեն մի շարք ռիսկային գործոններ, որոնք հատուկ են Ազդագրի միջոցով առաջարկվող բաժնետոմսերում ներդրումներին: Ներդրողները պետք է որոշում կայացնեն՝ լիովին գիտակցելով ներդրումների բնույթը և դրանից բխող հիմնական ռիսկերը՝ ելնելով իրենց փորձից, նպատակներից, ֆինանսական ռեսուրսներից, ռիսկի նկատմամբ հակվածության աստիճանից և այլ գործոններից: Որոշում կայացնելուց առաջ ցանկացած ներդրող պետք է նախապես ծանոթանա տվյալ բաժնետոմսերում ներդրումների հետ կապված ռիսկերին:

2. Բաժնետոմսերի շուկայական ռիսկը բաժնետոմսերում ներդրած կապիտալի կորստի կամ ակնկալվող եկամուտների չստացման ռիսկն է, որի դեպքում ներդրումների իրական արժեքը կարող է նվազել որոշակի շուկայական գործոնների փոփոխության պատճառով՝ ֆինանսական գործիքների գների, տոկոսադրույքների, արժույթի փոխարժեքի և այլն: Հետևաբար, բաժնետոմսերում ներդրումների հետ կապված շուկայական ռիսկը գնահատելու համար անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ ռիսկային գործոնները՝

- <u>Արժութային ռիսկ.</u> Առաջարկվող բաժնետոմսերը, այնպես ինչպես նախկինում Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերը, գնանշվելու և վաճառվելու են ՀՀ դրամով, հետևաբար, դրամի փոխարժեքի փոփոխությունները կարող են անբարենպաստ ազդեցություն ունենալ բաժնետոմսերի գների կամ նրանց ակնկալվող եկամուտների վրա: Արժութային ռիսկերը դուրս են Ընկերության վերահսկողության դաշտից:
- <u>Տոկոսադրույքների փոփոխության ռիսկ.</u> քանի որ բաժնետոմսերի շուկայական գինը, որպես կանոն, ուղիղ համեմատական կախվածության մեջ է գտնվում Ընկերության կողմից ստացվող շահույթի, այդ թվում՝ բաժնետոմսերի դիմաց ստացվող կամ ակնկալվող շահութաբաժինների մեծությունից արդյունքում՝ շուկայում տոկոսադրույքների բարձրացումը կարող է հանգեցնել բաժնետոմսերի գների նվազմանը:
- <u>Շուկայական ռիսկ.</u> բաժնետոմսերի շուկայում գների անբարենպաստ փոփոխությունների արդյունքում առաջացող կորուստների ռիսկ: Նշված ռիսկը կարող է կրել համակարգային բնույթ /երբ անկում է արձանագրվում բոլոր տեսակի ակտիվների գներում (բաժնետոմսեր, պարտատոմսեր և այլն)/, ինչպես նաև կարող է անկում արձանագրվել կոնկրետ ոլորտի ակտիվների դասում /օր՝ էներգետիկայի ոլորտի կամ թանկարժեք մետաղների ընկերությունների բաժնետոմսերում/:

  <u>Իրացվելիության ռիսկ.</u> Բաժնետոմսերի ցածր իրացվելիության ռիսկը պայմանավորված է կապիտալի շուկայի թերզարգացվածությամբ, որի արդյունքում բաժնետոմսերը իրացնելու դեպքում ներդրողը կարող է կրել ֆինանսական կորուստներ: Այս ռիսկի բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակով Ընկերությունը ձեռնարկելու է անհրաժեշտ միջոցառումներ: Ընկերությունը լրացուցիչ տեղաբաշխված բաժնետոմսերը ցուցակելու է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ»-ի ցուցակման B մակարդակում (ինչպես նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերը) և միաժամանակ, շուկա ստեղծողի միջոցով ապահովվելու է ֆոնդային բորսայում բաժնետոմսերի պարտադիր երկկողմանի գնանշումների կազմակերպումը (նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերի շուկա ստեղծող է հանդիսանում «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն):

- <u>Ինֆլյացիոն ռիսկ.</u> Այս ռիսկը հիմնականում պայմանավորված է բաժնետոմսերում ներդրումներից ակնկալվող եկամուտների արժեզրկման հետ՝ իրական գնողունակության տեսանկյունից:

3. Ընկերությունը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ նշված գործոնների բացասական ազդեցությունները նվազեցնելու համար: Այնուամենայնիվ, քանի որ շատ դեպքերում նշված ռիսկային գործոնները Ընկերության հսկողությունից դուրս են, ապա այս ցուցակով և դրանով չսահմանափակվող ռիսկերի բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակով ձեռնարկված միջոցառումների արդյունավետությունը չի երաշխավորվում Ընկերության կողմից:

## Հիմնական տեղեկատվություն

### *1. Շրջանառու միջոցների մասին հայտարարություն*

Ընկերության կարծիքով Ընկերության շրջանառու միջոցները բավարար են Ընկերության ներկա կարիքների համար, իսկ անբավարարության դեպքում Ընկերությունը կարող է օգտվել շրջանառու միջոցների համալրման տարբեր գործիքներից /բանկային վարկ, փոխառություններ և այլն/:

31.12.2018թ-ի դրությամբ /Աուդիտ չանցած/ սեփական շրջանառու կապիտալի մեծությունը (ընթացիկ ակտիվների և ընթացիկ պարտավորությունների տարբերություն) կազմել է 462,368,000 ՀՀ դրամ, այսինքն՝ 2018թ-ի վերջի դրությամբ Ընկերության ընթացիկ ակտիվները բավարար են եղել ընթացիկ պարտավորությունները ֆինանսավորելու համար:

### *2. Կապիտալիզացիա և պարտավորություններ*

ա. Ստորև ներկայացվում է Ընկերության կապիտալիզացիայի կառուցվածքը 31.12.2018թ-ի դրությամբ:

<u>Աղյուսակ 8.</u> Ընկերության կապիտալիզացիայի կառուցվածքը 31.12.2018թ-ի դրությամբ /Աուդիտ չանցած/

| *Կապիտալիզացիա* | *Գումար, հազ.դրամ* | *Կառուցվածք,%* |
|---|---|---|
| Կանոնադրական կապիտալ | 10,650,000 | 69.9% |
| Կուտակված շահույթ | 3,699,495 | 24.3% |
| Սեփական կապիտալ | 15,230,835 | 100% |

Աղբյուրը՝ «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ

31.12.2018թ-ի դրությամբ Ընկերության սեփական կապիտալի գումարը կազմել է 15,230,835,000 ՀՀ դրամ, որի 69.9%-ը կամ 10,650,000,000 ՀՀ դրամը կազմում է կանոնադրական կապիտալը, իսկ 24.3%-ը կուտակված շահույթը:

28.12.2011թ.-ին ԱՀ արդարադատության նախարարության պետական ռեգիստրի Ստեփանակերտի տարածքային բաժնի կողմից գրանցվել են Ընկերության կանոնադրական կապիտալում փոփոխությունները, որոնց համաձայն Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 10,650,000,000 ՀՀ դրամ՝ ի հաշիվ

լրացուցիչ թողարկված թվով 3,287,926 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի ամբողջությամբ տեղաբաշխման:

բ. Ինչ վերաբերում է Ընկերության պարտավորություններին, ապա 31.12.2018թ-ի դրությամբ /Աուդիտ չանցած/ դրանք ունեցել են հետևյալ կառուցվածքը՝ պարտավորությունների 90.6%-ը կազմում են երկարաժամկետ պարտավորությունները (6,473,993,000 ՀՀ դրամ), իսկ կարճաժամկետ պարտավորությունները (672,482,000 ՀՀ դրամ)՝ 9.4%-ը:

Աղյուսակ 9. Ընկերության պարտավորությունների կառուցվածքը

| *ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ* | *Գումար /հազ. Դրամ/* | *Կառուցվածք, %* |
|---|---|---|
| Երկարաժամկետ պարտավորություններ, որոնք ենթադրում են տոկոսային ծախս<br>որից՝<br>***ապահովված***<br>***երաշխավորված***<br>***չերաշխավորված և չապահովված*** | 6,473,993<br><br>*1,867,000*<br>*1,220,743*<br>*3,386,250* | 90.6%<br><br>*26.1%*<br>*17,1%*<br>*47,4%* |
| Կարճաժամկետ պարտավորություններ, որոնք չեն ենթարում տոկոսային ծախս | 672,482 | 9.4% |
| Արտահաշվեկշռային և պայմանական պարտավորություններ | 0 | 0 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 7,146,475 | 100% |

Աղբյուրը՝ «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ

31.12.2018թ. դրությամբ Ընկերության երկաժամկետ և կարճաժամկետ պարտավորությունները (որոնք ենթադրում են տոկոսային ծախս) իրենցից ներկայացնում են բանկային վարկեր և երկարաժամկետ պարտատոմսեր:

գ. Բանկերից ստացված վարկերը կազմում են 3,087,743,000 ՀՀ դրամ

Երկարաժամկետ պարտատոմսերը կազմում են 3,386,250,000 ՀՀ դրամ

*3. Առաջարկի նպատակը և ներգրավվող միջոցների օգտագործումը*

Բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքում հավաքագրված միջոցները Ընկերության կողմից օգտագործվելու են կառուցվող նոր ՀԷԿ-ի կառուցման համար կապիտալ շինարարական աշխատանքների ֆինանսավորման նպատակով:

- Քարվաճառ ՓՀԷԿ-ի շինարարության արժեքը **ներառյալ ԱԱՀ կազմում է 3.636 մլն ՀՀ դրամ**,
- Առաջարկի հետ կապված առկա են հետևյալ ծախսերը՝

➢ Բաժնետոմսերի տեղաբաշխման կազմակերպման ծառայությունների դիմաց կատարվող ծախսերը կազմելու են բաժնետոմսերի տեղաբաշխված ծավալի 1.0%:

➢ Բաժնետոմսերի տեղաբաշխման հետ կապված տուրքերի և վճարների հետ կապված ծախսեր,

- «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով՝ բաժնետոմսերի ազդագրի պետական գրանցման ծախսերը Ազդագրի գրանցման համար՝ բազային տուրքի 50-պատիկի չափով (50,000 ՀՀ դրամ),

ՀԿԴ-ում բաժնետոմսերի փոխանցման համար ծախսերը կազմում է տեղաբաշխված բաժնետոմսերի ընդհանուր անվանական արժեքի 0.09%:

## Տեղեկատվություն՝ կապված առաջարկվող բաժնետոմսերի հետ

ա. Սույն ազդագրի միջոցով առաջարկվող բաժնետոմսերը հասարակ անվանական բաժնետոմսեր են: Ընկերությունն արդեն ունի նույն դասի 10,650,000 հատ տեղաբաշխված բաժնետոմսեր, որոնք ցուցակված են «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ում և դրանց շնորհված է 00AHEKS10KR3 տարբերակիչ ծածկագիրը:

բ. Տվյալ բաժնետոմսերը թողարկվել են «Բաժնետիրական ընկերությունների մասին» ԱՀ օրենսդրությանը համաձայն: Տվյալ բաժնետոմսերի թողարկման որոշմամբ չկարգավորվող հարաբերությունները կարգավորվում են ՀՀ գործող օրենսդրությամբ, Ընկերության այլ որոշումներով կամ նրա կողմից կնքված պայմանագրերով:

գ. Բաժնետոմսերը ոչ փաստաթղթային են: Թողարկվող բաժնետոմսերի, ինչպես նաև նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերի սեփականատերերի ռեեստրի վարումը իրականացվում է «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ի (այսուհետև՝ ՀԿԴ) կողմից (ՀՀ, 0010, Երևան, Միեր Մկրտչյանի 5բ):

դ. Թողարկվող և տեղաբաշխվող բաժնետոմսերի քանակն է՝ 1,350,000 (մեկ միլիոն երեք հարյուր հիսուն հազար) հատ: Մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 1,000 (մեկ հազար) ՀՀ դրամ:

ե. Թողարկման արժույթը ՀՀ դրամն է:

զ. Բաժնետոմսերից բխում են մի շարք իրավունքներ՝

1. Շահութաբաժնի ստացման իրավունք - յուրաքանչյուր բաժնետոմս իր սեփականատիրոջը իրավունք է տալիս որոշակի մաս ստանալ Ընկերության զուտ շահույթից՝ իր կողմից կատարված ներդրումների արժեքին համամասնորեն: Ինչպես նախկինում տեղաբաշխված, այնպես էլ տեղաբաշխվող բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինների վճարման հարցերի կանոնակարգումը իրականացվում է ԱՀ օրենսդրությամբ, Ընկերության կանոնադրությամբ և «Շահութաբաժնային քաղաքականության մասին» կանոնակարգով: Վերջինիս համաձայն, տարեկան շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է Ժողովի՝ տարեկան շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ: Միջանկյալ

շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է Խորհրդի՝ միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ, բայց ոչ շուտ, քան տվյալ որոշման ընդունման պահից 30 օր անց: Ընկերությունն իրավունք ունի կատարել շահութաբաժինների վճարման պարտականությունը շահութաբաժինների վճարման ժամանակաշրջանի ընթացքում յուրաքանչյուր օր՝ ներառյալ վերջին օրը:

Տարեկան շահութաբաժինների առաջարկվող չափը՝ որպես Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին առաջարկ, սահմանվում է Խորհրդի կողմից Ընկերության գործունեության ֆինանսական արդյունքներով, բայց, որպես կանոն, չպետք է պակաս լինի Ընկերության ստացված զուտ շահույթի 20%-ից:

2. Բաժնետոմսերը իրենց սեփականատերերին իրավունք են տալիս մասնակցել Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով: Բաժնետերը կարող է մասնակցել Ժողովին հետևյալ եղանակներով՝

- անձամբ կամ իր կողմից ընտրված ներկայացուցչի միջոցով մասնակցել Ժողովում օրակարգի հարցերի քննարկմանը և դրանց քվեարկությանը (Համատեղ ներկայությամբ բաժնետերերի ժողովի գումարման դեպքում)
- հեռակա կարգով քվեարկել անձամբ կամ քվեարկելու իրավունքը լիազորել այլ անձի:

3. Ընկերության գործող բաժնետերերը ունեն լրացուցիչ տեղաբաշխվող բաժնետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունք: Նախապատվության իրավունքը կիրառվում է համամասնորեն և հասանելիք բաժնետոմսերի քանակը որոշվում է իրենց պատականող բաժնետոմսերի քանակից:

4. Բաժնետոմսերը իրենց սեփականատերերին իրավունք են տալիս Ընկերության լուծարման դեպքում ստանալ պարտատերերի հետ կատարված հաշվարկներից հետո մնացած Ընկերության գույքի իր հասանելիք մասը կամ դրա արժեքը:

5. Բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն Ընկերությանը ներկայացնել բաժնետոմսերի հետգնման պահանջի իրավունք՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում: Սույն ազդագրի միջոցով բաժնետոմսերի տեղաբաշխումը բաժնետերերին չի տալիս բաժնետոմսերի հետգնման պահանջի իրավունք:

6. Տեղաբաշխվող բաժնետոմսերը փոխարկելի չեն:

7. Բաժնետոմսերի լրացուցիչ տեղաբաշխման մասին որոշումը Ընկերության Խորհրդի կողմից կայացվել է 14.11.2018թ. ընդունված N 6-1018/01 որոշմամբ: Որոշումն ընդունվել է ելնելով նոր **«Քարվաճառ» ՓՀԷԿ-ի** կառուցման համար անհրաժեշտ ֆինանսավորման անհրաժեշտությունից:

8. Սույն Ազդագրի միջոցով բաժնետոմսերի տեղաբաշխման շրջանակում բաժնետոմսերի հանձնելու առաջարկի հիմքեր չեն առաջանում:

9. Ընկերության կանոնադրությամբ սահմանվում են Ընկերության բաժնետերերի այլ իրավունքներ ևս՝

ա. Բաժնետերը կարող է ստանալ Ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն (բացառությամբ գաղտնի փաստաթղթերի)

բ. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում իր իրավունքները ներկայացնելու համար բաժնետերը կարող է լիազորել երրորդ անձի,

գ. Բաժնետերը կարող է առաջարկություններով հանդես գալ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում,

դ. Բաժնետերը կարող է հայցով դիմել դատարան՝ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին և այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով,

ե. Բաժնետերը կարող է օտարել կամ այլ ձևով այլ անձանց փոխանցել իր սեփականությունը հանդիսացող բաժնետոմսը

զ. Բաժնետերը կարող է օգտվել Ընկերության կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

է. Բաժնետոմսերի ազատ շրջանառության հետ կապված որևէ սահմանափակումներ չկան, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի: Բաժնետոմսերի ցուցակման դեպքում վերջիններիս շրջանառությունը կարող է իրականացվել միայն «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ԲԲԸ ֆոնդային բորսայում:

թ. Բաժնետոմսերում ներդրում կատարող անձը եկամուտ կարող է ստանալ հետևյալ դեպքերում՝

- բաժնետոմսերից ստացվող շահութաբաժիններից,

- բաժնետոմսերի վաճառքի և գնման գների դրական տարբերությունից (իրացված կապիտալի հավելաճ):

Բաժնետոմսերից ստացվող եկամտի հարկման համար ՀՀ-ում սահմանվում են հետևյալ առանձնահատկությունները:

Շահութահարկի գումարը հաշվարկվում է հարկվող շահույթի նկատմամբ՝ 10 տոկոս դրույքաչափով: Ոչ ռեզիդենտ կազմակերպությունների համար նրա հարկային գործակալը պարտավոր է գանձել շահութահարկ՝ 6 տոկոս դրույքաչափով:

- «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է հարկատուի կողմից բաժնետոմսերից ստացած շահութաբաժինների գումարի չափով, բացառությամբ ոչ ռեզիդենտի հարկվող շահույթի («Շահութահարկի մասին» ՀՀ օրենք, հոդված 54 կետ 2): Ոչ ռեզիդենտ կազմակերպությունների կողմից ստացված շահութաբաժինները հարկվում են 6% դրույքաչափով:

- Իրավաբանական անձանց համար բաժնետոմսերի իրացված կապիտալի հավելաճը հարկվում է շահութահարկի 10% դրույքաչափով (բացառությամբ՝ ֆինանսական կազմակերպությունների համար՝ 20% դրույքաչափով), իսկ ոչ ռեզիդենտ կազմակերպությունների համար՝ 6% դրույքաչափով:

*<u>Եկամտահարկ.</u>* ՀՀ-ում եկամտահարկ են վճարում ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք: Հարկվող եկամուտը հարկատուի համախառն եկամտի և «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի դրույթներին համաձայն իրականացված նվազեցումների դրական տարբերությունն է:

- Համաձայն «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի՝ 10-րդ հոդվածի՝ հարկվող եկամուտը որոշելիս, հարկատուի համախառն եկամուտը նվազեցվում է՝ բաժնետոմսերի դիմաց ստացված շահութաբաժինների

և բաժնետոմսերի օտարումից, այլ արժեթղթերի հետ փոխանակումից կամ նման այլ գործարքներից ստացված եկամտի չափով: Այսինքն՝ ֆիզիկական անձանց համար բաժնետոմսերից ստացված շահութաբաժինները և իրացված կապիտալի հավելաճը չեն հարկվում:

Քանի որ Ընկերությունը չի հանդիսանում հարկային գործակալ ԱՀ իրավաբանական և ֆիզիկական անձ չհանդիսացող ներդրողների համար, վերջիններս, Ընկերության բաժնետոմսերում ներդրում իրականացնելիս պետք է հաշվի առնեն նաև այն երկրի օրենսդրության պահանջները, որի ռեզիդենտ են հանդիսանում:

## *Առաջարկի ժամկետը և պայմանները*

1. Առաջարկի պայմանները, առաջարկի վիճակագրությունը, ակնկալվող ժամանակացույցը և այն գործողությունները, որոնք անհրաժեշտ են առաջարկից օգտվելու համար

- Թողարկման (առաջարկի) ընդհանուր ծավալը կազմում է 1,350,000,000 (մեկ միլիարդ երեք հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ՝ հաշվարկված անվանական արժեքով: Տեղաբաշխման ընթացքում հավաքագրվող գումարի մեծությունը կարող է տատանվել 1,417,500,000 (մեկ միլիարդ չորս հարյուր տասնյոթ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ և 2,025,000,000 (երկու միլիարդ քսանհինգ միլիոն) ՀՀ դրամ գումարների միջև, կախված նախապատվության իրավուքի իրականացման և բաց բաժանորդագրության շրջանակներում գործող բաժնետերերի և այլ ներդրողների կողմից ձեռք բերվող բաժնետոմսերի քանակից: Առաջարկն ամբողջությամբ իրականացվում է լրացուցիչ տեղաբաշխվող բաժնետոմսերի հաշվին՝ Ընկերության կանոնադրությամբ ամրագրված հայտարարված բաժնետոմսերի ծավալի շրջանակում:
- Բաժնետոմսերի տեղաբաշխումը սկսում է բաժնետոմսերի ազդագրի գրանցման օրվան հաջորդող 33-րդ օրը և տևում է 10 օր:
- Բաժնետոմսերի տեղաբաշխումն իրականացվում է Ընկերության նախկինում թողարկված բաժնե-տոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերի կողմից բաժնետոմսերի ձեռք բերման նախա-պատվության իրավունքի կիրառման միջոցով, իսկ նախապատվության իրավունքի կիրառման արդյունքում չտեղաբաշխված բաժնետոմսերը ենթակա են տեղաբաշխման ազատ բաժանորդագրության միջոցով:

Բաժնետոմսերի նախապատվության իրավունքի կիրառման կամ ազատ բաժանորդագրության շրջանակում ներդրողները կարող են բաժնետոմսերի ազդագիրը ստանալ Բանկի և Ընկերության գործունեության վայրերից (համապատասխանաբար ՀՀ, ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան 10 հասցեում գտնվող Բանկի գրասենյակից կամ ԱՀ, ք. Ստեփանակերտ, Վազգեն Սարգսյան 25ա հասցեում գտնվող Ընկերության գրասենյակից) կամ Բանկի և Ընկերության ինտերնետային կայքերից (համապատասխանաբար www.armswissbank.am կամ www.artsakhhek.am):

- Նախապատվության իրավունքի կիրառման գործընթացի նկարագիրը

Բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվության իրավունքից կարող են օգտվել 14.11.2018թ. ժամը 24:00 դրությամբ Ընկերության բաժնետոմսերի սեփականատերերի ռեեստրում գրանցված անձինք (այսուհետև՝ Բաժնետերեր):

Ընկերության կողմից Բաժնետերերին բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվության իրավունքի մասին ծանուցումը կներկայացվի գրավոր եղանակով ՀՀ կենտրոնական բանկի կողմից բաժնետոմսերի ազդագրի գրանցման օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում (Հավելված 1-ի ձևով):

Բաժնետերերն իրավունք ունեն ամբողջությամբ կամ մասնակի ծավալով օգտվել բաժնետոմսեր ձեռք բերելու իրենց նախապատվության իրավունքից՝ Ընկերությանը համապատասխան գրավոր ծանուցում ուղարկելու միջոցով (Հավելված 2-ի ձևով): Վերջինս պետք է Ընկերություն ներկայացվի տեղաբաշխման առաջին օրվանից առնվազն մեկ օր առաջ: Ծանուցումը ներկայացված է համարվում, եթե այն ներկայացվել է Ընկերության գրասենյակ (հասցե՝ ԱՀ, ք. Ստեփանակերտ, Վ.Սարգսյան փողոց 25ա) փոստի կամ այլ կապի միջոցով կամ առձեռն: Ծանուցումը ներկայացված է համարվում նաև, եթե այն ներկայացվել է Բանկի գրասենյակ (Հասցե ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 10):

Նախապատվության իրավունքի կիրառման շրջանակում Բաժնետերը բաժնետոմսերի դիմաց վճարումը հիմավորող փաստաթուղթը պետք է Ընկերություն ներկայացնի բաժնետոմսերի ձեռք բերման մասին ծանուցման հետ միասին, բայց ոչ ուշ, քան տեղաբաշխման սկսվելու օրվանից առնվազն մեկ օր առաջ:

***<u>Բաժնետիրոջ կողմից, նախապատվության իրավունքի կիրառման շրջանակներում, Ընկերության կամ Բանկի գրասենյակներ ազդագրում նշված ժամկետների շրջանակներում ծանուցում չներկայացնելու պարագայում համարվում է, որ բաժնետերն օգտվել է բաժնետոմսեր ձեռք բերելու նախապատվության իր իրավունքից և ապագայում չի կարող ներկայացնել որևէ պահանջ թողարկողին:</u>***

Ընկերության կողմից կարող է չընդունվել բաժնետիրոջ կողմից ներկայացված ծանուցումը և չբավարարվել նշված ծանուցմամբ նախատեսված գործարքը, եթե ծանուցումը.

- ներկայացված չէ սահմանված ձևին համապատասխան և լրացված է ոչ լիարժեք (այդ թվում՝ բացակայում է բաժնետոմսերի դիմաց վճարման մասին փաստաթուղթը),
- թույլ չի տալիս նույնականացնել բաժնետոմսերը նախապատվության իրավունքով ձեռք բերող անձին,
- ներկայացվել է նախապատվության իրավունքի կիրառման նախատեսված ժամկետի ավարտից հետո:

Ծանուցման չընդունման դեպքում Բաժնետերը կարող է ներկայացնել նոր ծանուցում՝ վերացնելով դրանում առկա թերությունները և/կամ բացթողումները (անճշտությունները), իսկ այն անհնար լինելու կամ չիրականացվելու դեպքում բաժնետոմսերի ձեռք բերման համար դրամական միջոցները նախապատվության իրավունքի կիրառման ժամկետի ավարտից ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում ենթակա են վերադարձման անկանխիկ եղանակով (հայտի մեջ նշված բանկային ռեկվիզիտներով): Նախապատվության իրավունքի կիրառման շրջանակում Բաժնետիրոջ կողմից ներկայացված ծանուցման չընդունումը և նշված ծանուցման հիման վրա գործարքի չկատարումը չի սահմանափակում Բաժնետիրոջ՝ ազատ բաժանորդագրության միջոցով բաժնետոմսեր ձեռք բերելու իրավունքը:

Բաժնետոմսերի նախապատվության իրավունքը կիրառվում է համամասնորեն և հասանելիք բաժնետոմսերի քանակը որոշվում է՝ ելնելով Բաժնետերերին պատկանող բաժնետոմսերի քանակից: Եթե նախապատվության իրավունքի կիրառման արդյունքում Բաժնետիրոջ հասանելիք բաժնետոմսերի թիվը

կոտորակային է, ապա այն կլորացվում միավորի ճշտությամբ (մինչև 0.5-ը դեպի ներքև, իսկ 0.5 և ավելին դեպի վեր), իսկ եթե մեկից փոքր է ստացվում, ապա նրան տրամադրվում է մեկ բաժնետոմս ձեռք բերելու նախապատվության իրավունք:

Եթե ծանուցման մեջ նշված բաժնետոմսերի քանակը գերազանցում է Բաժնետիրոջը հասանելիք քանակից, ապա այն ենթակա է բավարարման հասանելիք առավելագույն քանակով, իսկ տարբերությունը կարող է բավարարել ազատ բաժանորդագրության ենթակա բաժնետոմսերի հաշվին՝ ազատ բաժանորդագրության շրջանակներում տեղաբաշխման համար սահմանված գնով:

Սույն ազդագրով սահմանված կարգով, նախապատվության իրավունքի կիրառմամբ գործող բաժնետերերի կողմից ստացված հայտերի արդյունքների ամփոփումից անմիջապես հետո, բայց ոչ ուշ քան տեղաբաշխման առաջին օրվա աշխատանքային օրվա ավարտը, Ընկերությունը և Տեղաբաշխողը իրենց ինտերնետային կայք-էջերում կհրապարակեն բաց բաժանորդագրության շրջանակներում տեղաբաշխման ենթակա բաժնետոմսերի քանակի վերաբերյալ տեղեկատվություն:

- Ազատ բաժանորդագրության գործընթացի նկարագիրը

ա) Բաժնետոմսեր ձեռք բերելու ցանկացություն ունեցող ֆիզիկական և/կամ իրավաբանական անձինք (այսուհետ՝ ներդրողներ) կարող են մասնակցել բաժնետոմսերի ազատ բաժանորդագրությանը սույն բաժնի «բ» կետում նշված ժամկետում: Բաժնետոմսերի ազատ բաժանորդագրության շրջանակում ձեռք բերվող բաժնետոմսերի քանակի նկատմամբ սահմանափակումներ չկան:

բ) Տեղաբաշխման ընթացքում Բաժնետոմսերի ձեռք բերման հաստատումը և Խորհրդի որոշմամբ սահմանված պայմաններն ընդունելու համաձայնություն տալը ներդրողն իրականացնում է բաժնետոմսերի բաժանորդագրության հայտը (Հավելված 3-ի ձևով) սահմանված կարգով լրացնելու և Բանկի գրասենյակ (հասցե՝ ՀՀ, 0010, ք. Երևան, Վ. Սարգսյան 10) ներկայացնելու միջոցով: Ներդրողների կողմից բաժնետոմսերի բաժանորդագրության հայտերը կարող են Բանկ ներկայացվել տեղաբաշխման ընթացքում ցանկացած աշխատանքային օրվա ընթացքում՝ ժամը 10:00-16:30 ընկած ժամանակահատվածում: Բաժնետոմսերի բաժանորդագրության հայտը Բանկ ներկայացված է համարվում եթե այն ներկայացվել է փոստով և այլ կապի միջոցով, ինչպես նաև առձեռն եղանակով: Ներդրողը կարող է Բաժնետոմսերի բաժանորդագրության հայտը ներկայացնել նաև Ընկերության գրասենյակ (հասցե՝ ԱՀ, ք. Ստեփանակերտ, Վ.Սարգսյանյան 24ա):

գ) Ազատ բաժանորդագրության ընթացքում եթե տեղի է ունեցել բաժնետոմսերի գերբաժանորդագրություն, ապա ներկայացված հայտերը բավարարվում են ըստ ներկայացման ժամկետի առաջնահերթության: Իսկ եթե տեղաբաշխման որևէ օրվա ընթացքում, նույն ժամին ներկայացված բաժանորդագրության հայտերում ձեռքբերվող բաժնետոմսերի ծավալը գերազանցում է չտեղաբաշխված (չվաճառված) բաժնետոմսերի ծավալին, ապա հայտերը բավարարվում են մասնակիորեն՝ ըստ ներկայացված քանակների կազմված համամասնության: Ընդ որում՝ եթե առաջանում են ոչ ամբողջական բաժնետոմսեր, ապա դրանք ենթակա են կլորացման թվաբանական կլորացման եղանակով: Հայտ ներկայացնող անձը կարող է նախապես հրաժարվել բաժնետոմսերի գերբաժանորդագրության մասնակցությունից՝ այդ մասին համապատասխան նշում կատարելով բաժնետոմսերի բաժանորդագրության հայտում:

Բաժնետոմսերի բաժանորդագրության հայտերը Բանկի կողմից ընդունվելուց հետո, մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտը, ներդրողները կարող են գրավոր կերպով Բանկից հետկանչել իրենց

բաժանորդագրությունները: Երբ ներդրողի կողմից բաժանորդագրությունը հետ է կանչվում ապա նախկինում ներկայացված հայտը համարվում է անվավեր և նրա կողմից կարող է ներկայացվել նոր հայտ:

Բաժնետոմսերի բաժանորդագրության հայտի ամբողջությամբ կամ մասնակի հետկանչման դեպքում, եթե առկա է լինում ներդրողին հետ վերադարձման ենթակա գումար, նշված գումարը Բանկի կողմից ենթակա է վերադարձման երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ անկանխիկ եղանակով (Բաժնետոմսերի բաժանորդագրության հայտում ներդրողի կողմից նշված բանկային հաշվին փոխանցելու միջոցով):

Բաժնետոմսերի բաժանորդագրության հայտի ընդունումը Բանկի կողմից մերժվում է, եթե.

1) Բաժնետոմսերի բաժանորդագրության հայտը ներկայացված չէ սահմանված ձևին համապատասխան և լրացված է ոչ լիարժեք,
2) Բանկ չի ներկայացվել Բաժնետոմսերի դիմաց վճարման մասին փաստաթուղթը,
3) թույլ չի տալիս նույնականացնել Բաժնետոմսեր ձեռք բերող անձին,
4) ներկայացվել է Ազդագրի սույն ենթաբաժնի «բ» կետով նախատեսված ժամկետի ավարտից հետո:

- Բաժնետոմսերի ձեռք բերման համար վճարումը պետք է կատարվի Բանկում բացված 2500036910046100 բանկային (տարանցիկ) հաշվին Բաժնետոմսերի ձեռք բերման համար անհրաժեշտ դրամական գումարը անկանխիկ եղանակով փոխանցելու միջոցով (որը որոշվում է որպես բաժնետոմսերի ձեռք բերվող քանակի և տեղաբաշխման գնի արտադրյալ): Ֆիզիկակական անձինք իրավունք ունեն Բանկի գրասենյանկում Բաժնետոմսերի ձեռքբերման գումարները վերը նշված հաշվին մուտքագրել նաև կանխիկ եղանակով: Կանխիկ եղանակով գումարները մուտքագրելու դեպքում ներդրողը Բաժնետոմսերի բաժանորդագրության հայտին կից Բանկ է ներկայացնում նաև անձնագրի պատճենը:

Բաժնետոմսերի ազատ բաժանորդագրության շրջանակում ներդրողը բաժնետոմսերի դիմաց վճարումը հիմնավորող փաստաթուղթը պետք է Բանկ ներկայացնի բաժնետոմսերի բաժանորդագրության հայտի հետ միասին, բայց ոչ ուշ, քան տեղաբաշխման ավարտի օրը:

Բաժնետոմսերի տեղաբաշխման ընթացքում կատարված գործրաքները ՀԿԴ-ում գրանցելուց հետո բաժնետոմսեր ձեռք բերող անձինք բաժնետոմսերով կատարված գործարքների վերաբերյալ տեղեկություններ կարող են ստանալ Բանկից կամ այլ պահառուից /հաշվի օպերատորից/ (որտեղ վարվում է տվյալ անձի արժեթղթերի հաշիվը)՝ նրանց ներքին կանոններով սահմանված ժամկետներում գործարքի վերաբերյալ հաշվետվություններ (քաղվածքներ) ստանալու միջոցով: Իսկ մինչև ՀԿԴ-ում գործարքների գրանցումը բաժնետոմսեր ձեռք բերող անձն իր կողմից ձեռք բերվող բաժնետոմսերի քանակի և վճարված գումարների մասին համապատասխան գրավոր հավաստիացում կարող է ստանալ Բանկից՝ համապատասխան հարցում անելու միջոցով: Վերջինս պայմանավորված է այն հանգամանքով, որ բաժնետոմսերի տեղաբաշխման ընթացքում կատարված գործարքների գրանցումը ՀԿԴ-ում կկատարվի միայն բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքների ամփոփումից և Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման նպատակով կանոնադրության գրանցումից հետո:

- Ընկերությունը պարտավոր է ինտերնետային կայքում (www.artsakhhek.am) բաժնետոմսերի հրապարակային առաջարկի, տեղաբաշխման գնի, ժամկետների և կարգի, այդ թվում՝ նախապատվության իրավունքի կիրառման կարգի, նախապատվության իրավունքի կիրառման արդյունքների և բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքների մասին, Խորհրդի 14.11.2018թ. N 6-

1018/01 որոշմամբ սահմանված պահանջվող այլ տեղեկություններ բացահայտել: Ընկերությունն իրավունք ունի վերը նշված տեղեկատվությունը, ինչպես նաև տեղաբաշխման ընթացքում տեղաբաշխված բաժնետոմսերի քանակի մասին տեղեկությունները բացահայտել նաև այլ զանգվածային լրատվության միջոցներով, բուկլետների, ուղեցույցների, վերլուծական նյութերի պատրաստման և գովազդային հոլովակների միջոցով կամ մամուլում տրվող հայտարարությունների միջոցով:

- Ընկերությունը չի նախատեսում բաժնետոմսերի առաջարկի, ինչպես նաև տեղաբաշխման չեղյալ հայտարարելու կամ հետաձգվելու դեպքեր և հանգամանքեր: Սակայն «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքում Բանկը իր նախաձեռնությամբ կարող է կասեցնել տեղաբաշխման ընթացքը (Տեղաբաշխողի նախաձեռնությամբ տեղաբաշխման ընթացքը կարող է կասեցվել միայն Կենտրոնական Բանկի համաձայնությամբ՝ առավելագույնը 10 աշխատանքային օրով), և կասեցման ժամկետը ավարտվելու պահից՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում տեղաբաշխումը չշարունակվի, ապա Բանկը պարտավոր է դադարեցնել տեղաբաշխումը և վերադարձնել տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցները արժեթղթերը ձեռք բերած անձանց:

<u>Միաժամանակ, Կենտրոնական բանկն իր որոշմամբ կարող է կասեցնել տեղաբաշխման ընթացքը, եթե՝</u>

1) տեղաբաշխման ընթացքում խախտվել են սույն օրենքի և (կամ) հրապարակային առաջարկը կլարգավորող այլ իրավական ակտերի պահանջները,
2) տեղաբաշխման ընթացքում չեն պահպանվել Ազդագրում սահմանված հրապարակային առաջարկի պայմանները,
3) Ազդագիրը պարունակում է էական սխալներ և ապակողմնորոշիչ տեղեկություններ, կամ նրանում էական փաստ է բաց թողնված կամ խեղաթյուրված:

Տեղաբաշխումը կասեցնելու մասին որոշումը պետք է պարունակի հայտնաբերված խախտումները և բացթողումները վերացնելու հանձնարարական և դրա կատարման ժամկետները, որի կատարումից հետո Կենտրոնական բանկի թույլտվությամբ տեղաբաշխումը կարող է շարունակվել:

Տեղաբաշխումը չեղյալ ճանաչվելու դեպքում բաժնետոմսերի ձեռք բերման համար վճարված գումարները ներդրողներին ենթակա են վերադարձման տեղաբաշխման չեղյալ ճանաչելու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ անկանխիկ եղանակով (բաժնետոմսերի բաժանորդագրության հայտում կամ նախապատվության իրավունքի կիրառման նպատակով ներկայացված ծանուցման մեջ ներդրողի կողմից նշված բանկային հաշվին փոխանցելու միջոցով):

2<u>. Տեղաբաշխման պլանը</u>

ա. Առաջարկն առաջին հերթին ուղղված է Ընկերության գործող բաժնետերերին, որոնք լրացուցիչ թողարկման բաժնետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունք ունեն՝ իրենց բաժնեմասերին համամասնորեն: Բաժնետոմսերի՝ նախապատվության իրավունքի կիրառման շրջանակներում չտեղաբաշխված մասը ենթակա է ազատ վաճառքի՝ բաց բաժանորդագրության միջոցով, որի շրջանակներում ներդրողների խմբերի հետ կապված սահմանափակումներ չեն նախատեսվում: Բաժնետոմսերի հրապարակային առաջարկն արվում է ԱՀ-ում և ՀՀ-ում, սակայն այն չի սահմանափակում օտարերկրյա անձանց մասնակցության հնարավորությունը:

բ. Քանի որ բաժնետոմսերի տեղաբաշխումն իրականացվում է նախապատվության իրավունքի կիրառման միջոցով, ուստի խոշոր բաժնետերերը, որոնք տիրապետում են 5 և ավելի տոկոսի բաժնետոմսերի, իրավունք ունեն իրենց պատկանող բաժնետոմսերի ծավալին համամասնորեն ձեռք բերել սույն ազդագրի միջոցով առաջարկվող բաժնետոմսեր, որոնց քանակը կարող է գերազանցել առաջարկի ընդհանուր ծավալի 5 տոկոսը, մասնավորապես՝

«Մ.Էներգոինվեստ» ՓԲԸ՝ 36.21%-ի, «Մուլտիկոնտինենտալ Դիստրիբյուշն Լիմիթեդ» ՍՊԸ՝ 16,73%-ի, Ժոզեֆ Ուղուրլյան՝ 11.86 %, «ԿԳԱԼ Նյու ֆրոնթայրս» ՍՊԸ՝ 10.04 %, «Ռեսո Գարանտիա ապահովագրական» ՀԲԸ՝ 8.19 % և «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ՝ 6.18 % չափով:

գ. Բաժնետոմսերի նախապատվության իրավունքի կիրառման շրջանակում Բաժնետերերի կողմից ներկայացված ծանուցումը ընդունվելու կամ դրա մերժման մասին Բաժնետերը Ընկերության կողմից տեղեկացվում է բանավոր եղանակով (իսկ նրա պահանջով նաև գրավոր եղանակով): Նախապատվության իրավունքի կիրառման շրջանակում բաժնետերերի կողմից բաժնետոմսերի ձեռք բերման ծանուցման չընդունման և այդ ծանուցմամբ նախատեսված գործարքի մերժման հիմքերը ներկայացված են սույն ազդագրի «Առաջարկի ժամկետը և պայմանները» բաժնի 1-ին կետում:

Բաժնետոմսերի բաժանորդագրության ընթացքում կարող են ներդրողների ներկայացված հայտերը բավարրվել մասնակիորեն՝ սույն ազդագրի «Առաջարկի ժամկետը և պայմանները» բաժնի 1-ին կետում սահմանված դեպքերում:

Բաժնետոմսերի բաժանորդագրության հայտի ընդունման կամ դրա մերժման, ինչպես նաև հայտը մասնակիորեն բավարարվելու մասին Բանկի կողմից ներդրողը տեղակացվում է բանավոր եղանակով, իսկ նրա պահանջով նաև գրավոր եղանակով: Բաժնետոմսերի բաժանորդագրության հայտի մերժման հիմքերը ներկայացված են սույն ազդագրի «Առաջարկի ժամկետը և պայմանները» բաժնի 1-ին կետում:

Նախապատվության իրավունքի կիրառման շրջանակում բաժնետիրոջ ծանուցման չընդունման և այդ ծանուցմամբ նախատեսված գործարքի մերժման կամ բաժնետոմսերի բաժանորդագրության հայտերի մերժման դեպքում բաժնետոմսերի ձեռք բերման համար փոխանցված դրամական միջոցները Բանկի կողմից ենթակա են վերադարձման տեղաբաշման ավարտի օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ անկանխիկ եղանակով (Բաժնետոմսերի բաժանորդագրության հայտում ներդրողի կողմից նշված բանկային հաշվին փոխանցելու միջոցով):

դ. Սույն ազդագրի միջոցով բաժնետոմսերի տեղաբաշման շրջանակում Ընկերության աշխատակիցների համար բաժնետոմսերը ձեռք բերելու արտոնյալ պայմաններ չեն նախատեսված: Միաժամանակ, սույն ազդագրի միջոցով բաժնետոմսերի տեղաբաշխման (այդ թվում՝ բաժնետոմսերի ազատ բաժանորդագրության) շրջանակում ներդրողների բոլոր խմբերի համար սահմանված են հավասար պայմաններ, բաժնետոմսերի ձեռք բերման հետ կապված սահմանափակումներ չեն նախատեսված:

3. <u>Տեղաբաշխման գինը</u>

ա. Սույն առաջարկի /տեղաբաշխման/ շրջանակում մեկ բաժնետոմսի տեղաբաշխման գինը Ընկերության խորհրդի 14.11.2018թ. N -6-2018/01 որոշմամբ սահմանվել է՝

- ***նախապատվության իրավունքի կիրառմամբ բաժնետոմսերի ձեռք բերման դեպքում՝ 1,050 ՀՀ դրամ,***
- ***բաժնետերերի կողմից նախապատվության իրենց իրավունքի չկիրառման դեպքում՝ չտեղաբաշխված բաժնետոմսերի տեղաբաշխման գինը սահմանվում է 1,500 ՀՀ դրամ:***

Բացի տեղաբաշխման գնի վճարումից բաժնետոմսեր ձեռք բերող անձից այլ ծախսեր և հարկեր չեն պահանջվում:

բ. Բաժնետոմսերի տեղաբաշխման գնի սահմանման ժամանակ Ընկերության տնօրենների խորհուրդը հաշվի է առել հաշվեկշռային մեթոդով Ընկերության զուտ ակտիվների արժեքի մեծությունը 1 բաժնետոմսի հաշվով, ինչպես նաև ֆոնդային բորսայում բաժնետոմսերով իրականացված գործարքների գինը:

4. Տեղաբաշխումը

ա. Բաժնետոմսերի տեղաբաշխումն իրականացվելու է չերաշխավորված տեղաբաշխման միջոցով՝ լավագույն ջանքերի սկզբունքով: Որպես տեղաբաշխող հանդես է գալիս «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն, որի հետ հարաբերությունները կարգավորվում են կողմերի միջև կնքված «Բաժնետոմսերի չերաշխավորված եղանակով տեղաբաշխման մասին» պայմանագրով:

Բանկի գտնվելու վայրն է՝ ՀՀ, 0010, ք. Երևան, Վ. Սարգսյան 10:

բ. Ըստ «Բաժնետոմսերի չերաշխավորված տեղաբաշխման մասին» պայմանագրի՝ Բանկը պարտավորվում է Ընկերությանը մատուցել Բաժնետոմսերի տեղաբաշխման հետ կապված ծառայությունները՝ Ընկերության կողմից բաժնետոմսերի տեղաբաշխման ժամանակացույցի և պայմանների վերաբերյալ գրավոր առաջարկության մշակում և տրամադրում, Ընկերության տրամադրած տեղեկատվության հիման վրա բաժնետոմսերի ազդագրի մշակում և համագործակցություն Ընկերության հետ ՀՀ ԿԲ-ում Ազդագրի գրանցման ուղղությամբ, աջակցություն Ընկերությանը բաժնետոմսերի տեղաբաշխման հետ կապված մարքեթինգային աշխատանքներում, աջակցություն Ընկերությանը բաժնետերերի կողմից բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվության իրավունքի կիրառման, բաժնետերերի կողմից Բաժնետոմսերի ձեռք բերման արդյունքների ամփոփման և այլ հարցերում, նախապատվության իրավունքի կիրառման արդյունքում չտեղաբաշխված բաժնետոմսերի տեղաբաշխման նպատակով ազատ բաժանորդագրության կազմակերպում՝ չերաշխավորված տեղաբաշխման սկզբունքով:

Բաժնետոմսերի տեղաբաշխման կազմակերպման նպատակով Բանկը կազմակերպում է Բաժնետոմսերի ազատ բաժանորդագրություն, գործադրում է լավագույն ջանքեր Բաժնետոմսերի պոտենցիալ գնորդներ բացահայտելու և Բաժնետոմսերի տեղաբաշխման առնչությամբ, Բաժնետոմսերի տեղաբաշխման ընթացքում Բաժնետոմսերի գնորդներին աջակցում է Բաժնետոմսերի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման գործընթացում և այդ նպատակով տրամադրում է անհրաժեշտ տեղեկատվություն, Բաժնետոմսերի տեղաբաշխման ավարտից հետո ամփոփում է տեղաբաշխման արդյունքները, նախապատրաստում է տեղաբաշխման ընթացքի և արդյունքների մասին օրենքով սահմանված հաշվետվությունները, ձեռնարկում է անհրաժեշտ գործողություններ ՀԿԴ-ում բաժնետոմսերը Ընկերության թողարկման հաշվից գնորդների համապատասխան հաշիվներին փոխանցելու կապակցությամբ, Ընկերության հետ համատեղ կազմակերպում է «Հայաստանի Ֆոնդային Բորսա» ԲԲԸ ֆոնդային բորսայում

Բաժնետոմսերի ցուցակման ապահովումը և պահանջվող տեղեկությունների (հաշվետվությունների/ փաստաթղթերի) կազմումը և ֆոնդային բորսա ներկայացումը:

Բաժնետոմսերի չերաշխավորված տեղաբաշխման հետ կապված ծառայությունների դիմաց Ընկերությունը Բանկին վճարում է Բաժնետոմսերի տեղաբաշխման ընդհանուր ծավալի (հավաքագրված ընդհանուր գումարի) 1,0 (մեկ) տոկոսի չափով գումար:

գ. Բաժնետոմսերի դիմաց վճարումը կատարվում է Բաժնետոմսերի տեղաբաշխման նպատակով Բանկում Ընկերության անունով բացված 2500036910046100 բանկային (տարանցիկ) հաշվին գումարը փոխանցելու կամ կանխիկ մուտքագրելու միջոցով: Բաժնետոմսերի դիմաց վճարումը կարող է կատարվել ցանկացած բանկում վերը նշված հաշվին փոխանցելու միջոցով: Ֆիզիկական անձինք կարող են նաև Բանկի գրասենյակում վճարումը կատարել կանխիկ եղանակով:

դ. Արժեթղթերի հաշիվ կարելի է բացել, ՀԿԴ-ում /համապատասխան մասնագիտացված կազմակերպությունների միջոցով, որոնց ցանկին կարելի է ծանոթանալ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի ինտերնետային կայքի միջոցով հետևյալ հասցեով՝ www.cda.am/ և ՀՀ ԿԲ-ի կողմից լիցենզավորված ցանկացած այլ մասնագիտացված պահառուի մոտ:

## Առևտրին թույլտվությունը և առևտրի կազմակերպումը

ա. Ընկերության տնօրենների Խորհրդի 14.11.2018թ-ին ընդունված որոշմամբ նախատեսվում է լրացուցիչ տեղաբաշխված բաժնետոմսերի շրջանառությունը կազմակերպել Ընկերության նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերի հետ միասնական ընդհանուր եղանակով՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան: Առաջարկվող բաժնետոմսերի մասով հայցվելու է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ԲԲԸ-ում առևտրին թույլտվություն:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ԲԲԸ-ն կարող է չբավարարել թողարկվող բաժնետոմսերի մասով առևտրի թույլտվության հայտը:

Բաժնետոմսերը կարգավորվող շուկայում առևտրին թույլատրելու համար Ընկերությունը կդիմի տեղաբաշխման ավարտից անմիջապես հետո: Համաձայն «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ԲԲԸ-ի «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման» կանոնների՝ բաժնետոմսերի ցուցակման կամ մերժման մասին որոշումը կկայացվի ցուցակման գործընթացի սկսման պահից երեք ամսվա ընթացքում: «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ԲԲԸ-ի՝ արժեթղթերը ցուցակող մարմնի կողմից ընդունված ցուցակման մասին որոշման ուժի մեջ մտնելուն հաջորդող վեցերորդ առևտրային օրը արժեթղթերը համարվում են ցուցակված և կարող են լինել կարգավորվող շուկայում առևտրի առարկա:

բ. Ընկերությունն արդեն ունի նույն դասի 10,650,000 հատ տեղաբաշխված բաժնետոմսեր, որոնք ցուցակված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ԲԲԸ-ում և դրանց շնորհված է 00AHEKS10KR3 տարբերակիչ ծածկագիրը:

գ. 2010 թվականի ապրիլի 3-ին «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ին շնորհվել է Ընկերության բաժնետոմսերի շուկա ստեղծողի կարգավիճակ, ըստ որի Բանկը ունի հետևյալ պարտավորությունները.

2010թ-ի հոկտեմբերի 2-ին Ընկերության և Բանկի միջև կնքվել է «Բաժնետոմսերի պարտադիր գնանշումներ կազմակերպելու մասին» պայմանագիր, որն Ազդագիրը գրանցման ներկայացնելու օրվա դրությամբ ուժի մեջ է:

- յուրաքանչյուր ամսվա համար Ընկերությանը տրամադրել Բաժնետոմսերով կատարված գործարքների ծավալների և գների վերաբերյալ տեղեկատվություն,

- Բանկի կողմից կատարվող երկկողմանի պարտադիր գնանշումները պետք է նպատակաուղղված լինեն Ֆոնդային բորսայում Բաժնետոմսերի իրացվելիության ապահովմանը, ինչպես նաև Բաժնետոմսերի կայուն և հիմնավորված գների ձևավորմանը՝ հաշվի առնելով շուկայում ձևավորված իրավիճակը (Բաժնետոմսերի նկատմամբ առաջարկի և պահանջարկի հարաբերակցությունը): Կողմերը համաձայնությամբ շուկայի հավասարակշիռ իրավիճակում նախատեսվում է (երբ բացակայում է պահանջարկի կամ առաջարկի էական գերակշռություն միմյանց նկատմամբ կամ չի գրանցվել տոկոսադրույքների կամ ՀՀ դրամի փոխարժեքի էական փոփոխություն և այլ էական դեպքեր) երկկողմանի գնանշումները պահպանել կայուն մակարդակներում:

## Վաճառող բաժնետերերը

1. Սույն ազդագրի միջոցով ֆիզիկական կամ իրավաբանական անձ հանդիսացող բաժնետիրոջը պատկանող բաժնետոմսերի վաճառքի առաջարկ չի նախատեսվում: Առաջարկը վերաբերում է միայն Ընկերության կողմից լրացուցիչ տեղաբաշխվող բաժնետոմսերին:

## Թողարկման և առաջարկի ծախսերը

1. Առաջարկի արդյունքում Ընկերության կողմից ակնկալվող համախառն եկամուտը **կարող է տատանվել 1,417,500,000 (մեկ միլիարդ չորս հարյուր տասնյոթ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ և 2,025,000,000 (երկու միլիարդ քսանհինգ միլիոն) ՀՀ դրամ գումարների միջև, կախված նախապատվության իրավուքի իրականացման և բաց բաժանորդագրության շրջանակներում գործող բաժնետերերի և այլ ներդրողների կողմից ձեռք բերվող բաժնետոմսերի քանակից:**
2. Առաջարկի հետ կապված առկա են հետևյալ ծախսերը՝
   - ➢ Բաժնետոմսերի տեղաբաշխման կազմակերպման ծառայությունների դիմաց կատարվող ծախսերը կազմելու են բաժնետոմսերի տեղաբաշխված ծավալի 1.0%:
   - ➢ Բաժնետոմսերի տեղաբաշխման հետևկապված տուրքերի և վճարների հետ կապված ծախսեր,
     - «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով՝ բաժնետոմսերի ազդագրի պետական գրանցման ծախսերը Ազդագրի գրանցման համար՝ բազային տուրքի 50-պատիկի չափով (50,000 ՀՀ դրամ),
     - ՀԿԴ-ում բաժնետոմսերի փոխանցման համար ծախսերը կազմում է տեղաբաշխված բաժնետոմսերի ընդհանուր անվանական արժեքի 0.09%:

## Լրացուցիչ տեղեկատվություն

1. Ներկայացվող տեղեկատվության հետ կապված՝ որևէ խորհրդատու ներգրավված չի եղել:

2. Բանկը Ընկերությանը աջակցել է Ազդագրի կազմման հետ կապված աշխատանքներում՝ համաձայն Կողմերի միջև կնքված «Բաժնետոմսերի չերաշխավորված եղանակով տեղաբաշխման մասին» պայմանագրի:

3. Ներկայացված տեղեկատվության համար աղբյուր է հանդիսանում Ընկերությունը:

# ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

## Անկախ աուդիտորները

Ընկերության 2015թ. ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրել է «ՖԻՆ ՏԵԽ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ՝ աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզիա ԱԾ 072, տրված ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 22.01.2010թ.:

Ընկերության 2016-2017թթ ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացվել է «ԱՄԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ի կողմից՝ աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզիա ԱԾ 097 ¥տրված ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 10.01.2014թ.:

Ընկերության կողմից ֆինանսական հաշվետվությունների աուդիտ իրականացնող անձի փոփոխության պատճառը պայմանավորված է 2016 թվականի ընթացքում Ընկերության կողմից իրականացրած բանակցությունների արդյունքում «ԱՄԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ կողմից առաջարկվող պայմաններով:

Ընկերության խորհրդի 29.06.2018թ. թիվ 2 որոշման համաձայն ընկերության 2018թ. ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող կազմակերպություն ընտրվել է «ԱՄԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ն:

## Ռիսկային գործոններ

ա. Գոյություն ունեն մի շարք ռիսկային գործոններ, որոնք հատուկ են Ընկերությանը և նրա գործունեության ոլորտին, և ուղղակի կամ անուղղակի կերպով կարող են բացասական ազդեցություն ունենալ թողարկողի և նրա բաժնետոմսերի գնի վրա:

բ. Ներդրողները պետք է որոշում կայացնեն՝ լիովին գիտակցելով ներդրումների բնույթը և դրանից բխող հիմնական ռիսկերը՝ ելնելով իրենց փորձից, նպատակներից, ֆինանսական ռեսուրսներից, ռիսկի նկատմամբ հակվածության աստիճանից և այլ գործոններից: Ներդրողները պետք է հասկանան նաև, որ Ազդագիրը չի կարող ներկայացնել թողարկողի գործունեության հետ կապված բոլոր ռիսկերը:

գ. Ընկերությունը ներկայացրել է այն ռիսկերը, որոնք նա համարում է էական, սակայն Ընկերությունը ապագայում կարող է առնչվել նաև այլ ռիսկերի հետ: Լրացուցիչ ռիսկերը և անորոշությունները, ներառյալ նրանք, որոնց մասին Ընկերությունը ներկայումս տեղյակ չի կամ կարծում է, որ դրանք էական չեն, նույնպես կարող են հանգեցնել Ընկերության եկամուտների նվազմանը, ծախսերի ավելացմանը, ինչն իր հերթին կարող է հանգեցնել բաժնետոմսերի գների նվազմանը: Ռիսկերի հիմնական տեսակներն են՝

- <u>Քաղաքական ռիսկեր.</u> ԱՀ-ն անցումային երկիր է, որտեղ քաղաքական և տնտեսական գործընթացները դեռևս գտնվում են անցումային փուլում: ԱՀ քաղաքական դաշտում, այդ թվում՝ ԱՀ-ի անկախության ճանաչման գործընթացում ցանկացած բացասական փոփոխություն, հատկապես այնպիսի, որը կարող է ազդեցություն ունենալ ԱՀ քաղաքական կայունության վրա կամ կասեցնել ընթացիկ բարեփոխումները, կարող է բացասական ազդեցություն ունենալ նաև Ընկերության գործունեության և բաժնետոմսերի

շուկայական գնի վրա:

- Անցումային շուկաների ռիսկ. ԱՀ-ի նման անցումային տնտեսություններով հետաքրքրվող ներդրողները պետք է տեղյակ լինեն, որ այսպիսի շուկաները հակված են ավելի մեծ ռիսկի, քան զարգացման ավելի բարձր մակարդակում գտնվող շուկաները: Ներդրողները պետք է գիտակցեն նաև, որ ԱՀ տնտեսությունը, ինչպես և մյուս անցումային տնտեսությունները, հակված են կտրուկ փոփոխությունների և որ սույն փաստաթղթում նշված տեղեկությունները կարող են շատ արագ հնանալ: Նախքան ներդրումային որոշում կայացնելը, ներդրողները պետք է նախապես խորհրդակցեն իրենց իրավախորհրդատուների և ֆինանսական խորհրդատուների հետ, որպեսզի կարողանան պատշաճորեն գնահատել բաժնետոմսերում ներդրումների ռիսկայնության աստիճանը և դրա համապատասխանությունը իրենց ներդրումային հնարավորություններին:

- Նորմատիվ և օրենսդրական դաշտի փոփոխությունների ռիսկ. ԱՀ իրավական դաշտում օրենսդրական բարեփոխումների գործընթացը դեռևս չի ավարտվել: Այս բարեփոխումների ճանապարհին օրենսդրական համակարգում կարող են կատարվել այնպիսի փոփոխություններ, որոնք հետագայում կարող են բացասական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական արդյունքների վրա: ԱՀ օրենսդրական դաշտին վերաբերող ցանկացած անորոշություն կարող է հանգեցնել երկրում տնտեսական իրավիճակի վատթարացման և, հետևաբար, ազդել Ընկերության գործունեության վրա: Միաժամանակ, 1990-ականների սկզբին ընդունված մի շարք օրենքներ վերանայման և լրացումների կարիք ունեն, իսկ որոշները առհասարակ պետք է փոխարինվեն նորերով: Ամեն դեպքում, ԱՀ օրենսդրական դաշտի բարեփոխումները դեռևս չեն ավարտվել և անորոշ է, թե որքանով այս գործընթացը կարող է աջակցել երկրում տնտեսական գործունեության զարգացմանը:

- Բնակլիմայական պայմանների ռիսկեր. Ընկերության գործունեության առանձնահատկություններով պայմանավորված՝ բնակլիմայական պայմաններն և հատկապես գետերի ջրհոսքի ծավալները էական ազդեցություն ունեն նրա գործունեության վերջնական արդյունքների վրա: Ջրայնության նվազումը կարող է հանգեցնել Ընկերության հասույթի կրճատմանը և հետևաբար, ֆինանսական այլ ցուցանիշների էական վատթարացմանը: Այս տեսանկյունից առկա է գիտականորեն հիմնավորված կարծիք, որ գետի ջրհոսքի ծավալներն ուղղակիորեն կապված են արևի ակտիվության պարբերաշրջանների հետ1[1]: Այսպես, գետի ջրհոսքի նախկին ցուցանիշների վերլուծությունը և դրանց համադրությունը ցիկլային երևույթների հետ հնարավորություն են տալիս բավականին մեծ ճշտությամբ կատարել ապագա ջրհոսքի կանխատեսումներ: 2010թ-ից սկսվել է արևի ակտիվության անկման ժամանակաշրջանը, որը ըստ գիտնականների գնահատականների կարող է տևել 11 տարի. արևի ակտիվության անկման պարբերաշրջանները ուղեկցվում են ջրի մակարդակի բարձրացմամբ:

- Ռիսկեր, որոնք կապված են Ընկերության կողմից արտադրության գործընթացում օգտագործվող սարքավորումների և այլ նյութա-տեխնիկական ռեսուրսների գների բարձրացմամբ. այս ռիսկերը հիմնականում պայմանավորված են երկրի տնտեսությունում գնաճային երևույթների հետ և կարող են նվազագույնի հասցվել Ընկերության հավասարակշռված ֆինանսական քաղաքականության և գործառնական գործունեության արդյունավետության բարձրացման պարագայում:

- Արժութային ռիսկ. Ընկերության ֆինանսական դրության, իրացվելիության, ֆինանսավորման աղբյուրների, գործունեության արդյունքների վրա այս ռիսկի ազդեցությունը էական չէ, քանի որ Ընկերությունը իրացնում է էլեկտրաէներգիան ԱՀ ներքին շուկայում, իսկ երկրի ներքին պահանջարկը

---

1[1] ,, Временные закономерности изменчивости речного стока в условиях криолитозоны,, О.А.Поморцев (www.lib.tsu.ru), ,,Гетерохронность периодов повышенного увлажнения гумидной и аридной зон,, В.Н.Абросов (www.kulichki.ru)

չբավարարելու դեպքում՝ ներմուծում Հայաստանի Հանրապետությունից, և համապատասխանաբար բոլոր հաշվարկները թե մատակարարների, թե սպառողների հետ իրականացվում են ՀՀ ազգային արժույթով՝ ՀՀ դրամով, որը ԱՀ պաշտոնական վճարամիջոցն է: Այս ռիսկի ազդեցությունը մեծանում է միայն օտարերկրյա ընկերություններից սարքավորումների ձեռք բերման շրջանակում ստանձնած պարտավորությունների կատարման և Ընկերության կողմից ստացված բանկային վարկերի ¥արտարժույթով արտահայտված¤ սպասարկման ժամանակահատվածում:

- <u>Գնաճի ռիսկ.</u> գնաճի մակարդակը ուղղակիորեն կախված է երկրի քաղաքական և տնտեսական իրավիճակից: Հետճգնաժամային վերականգնման փուլում երկրի տնտեսությունը դեռևս բնութագրվում է գնաճի բարձր մակարդակով: Գնաճի մակարդակի աճը կարող է հանգեցնել տոկոսադրույքների մակարդակի աճին՝ դրա հետ կապված ռիսկերով հանդերձ՝ վճարման ենթակա տոկոսագումարների իրական արժեքի աճ, ապրանքների, ծառայությունների և աշխատանքների ինքնարժեքի աճ՝ էներգակիրների արժեքի, տրանսպորտային ծախսերի, աշխատավարձերի և այլն, մեծացման հետ կապված; ներդրումային ծրագրերի իրացմանն ուղղված միջոցների իրական արժեքի նվազում և այլն: Ընկերության համար այս ռիսկի էական բացասական ազդեցությունը պայմանավորված է նրանով, որ էլեկտրաէներգիայի սակագները առաջիկա 5 տարիների կտրվածքով հաստատված են և կարող են վերանայվել միայն Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի կողմից համապատասխան որոշում ընդունելու դեպքում:

- <u>Անհաղթահարելի ուժի ի հայտ գալու ռիսկ (ֆորս-մաժոր).</u> Ընկերության գործունեության վրա ուղղակի բացասական ազդեցություն կարող են ունենալ նաև ֆորս-մաժորային ռիսկերը: Այդպիսի իրավիճակներ են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները և այլն, որոնք դուրս են Ընկերության հսկողությունից:

դ. Ընկերությունը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ նշված գործոնների բացասական ազդեցությունները նվազեցնելու համար: Այնուամենայնիվ, քանի որ շատ դեպքերում նշված ռիսկային գործոնները Ընկերության հսկողությունից դուրս են, այս ցուցակով չսահմանափակվող ռիսկերի բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակով ձեռնարկված միջոցառումների արդյունավետությունը չի երաշխավորվում Ընկերության կողմից:

## Տեղեկատվություն ընկերության մասին

*1. <u>Պատմությունը և զարգացումը</u>*

ա. Ընկերության ֆիրմային անվանումն է՝

հայերեն

լրիվ՝ «ԱՐՑԱԽ ՀԷԿ» Բաց Բաժնետիրական Ընկերություն

կրճատ՝ «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ

ռուսերեն

լրիվ՝ Открытое Акционерное Общество “АРЦАХ ГЭК”

կրճատ՝    ОАО “АРЦАХ ГЭК”

անգլերեն

լրիվ՝    “ARTSAKH HEK” Open Joint Stock Company

կրճատ՝    “ARTSAKH HEK” OJSC

բ. Ընկերությունը հիմնադրվել է ԱՀ կառավարության 2007թ. նոյեմբերի 1-ի N 484 որոշմամբ (պետական գրանցում է ստացել 2007թ-ի դեկտեմբերի 12-ին «ԱՐՑԱԽ ՀԷԿ» անվանումով և «փակ բաժնետիրական ընկերություն» կազմակերպա-իրավական ձևով), որի համաձայն Ընկերության 100% բաժնետոմսերի սեփականատեր էր ԱՀ-ը՝ ի դեմս Կառավարության:

«ԱՐՑԱԽ ՀԷԿ» փակ բաժնետիրական ընկերությունը ստեղծվել է «ԱՐՑԱԽԷՆԵՐԳՈ» ՓԲԸ-ի (գրանցված՝ ԱՀ-ի արդարադատության նախարարության ռեգիստրի բաժնի կողմից 28.02.2005թ., գրանցման համար՝ 443.120.20892, վկայական՝ 001350) առանձնացման միջոցով վերակազմակերպման արդյունքում և հանդիսանում է նրա իրավահաջորդը՝ բաժանիչ (առանձնացման) հաշվեկշռին համապատասխան:

ԱՀ Կառավարության 2008թ. մայիսի 13-ի ««ԱՐՑԱԽ ՀԷԿ» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպելու մասին» թիվ 360 որոշման համաձայն «ԱՐՑԱԽ ՀԷԿ» փակ բաժնետիրական ընկերությունը (գրանցված՝ ԱՀ արդարադատության նախարարության ռեգիստրի բաժնի կողմից 12.12.2007թ., գրանցման համար՝ 443.120.11328, վկայական՝ 02 Ա 001980) վերակազմավորման միջոցով վերակազմակերպվել է «ԱՐՑԱԽ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության: 2008թ.-ի հունիսի 9-ից ընկերությունը կրում է «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ ֆիրմային անվանումը և կազմակերպա-իրավական ձևը:

գ. Ընկերությունը առաջին գրանցումը ստացել է ԱՀ արդարադատության նախարարության ռեգիստրի բաժնի կողմից 2007թ-ի դեկտեմբերի 12-ին (գրանցման համարը՝ 443.120.11328, վկայական՝ 02 Ա 001980): Պետական գրանցման պահից մինչև օրս Ընկերությունը փաստացի գործունեություն է իրականացնում:

դ. Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական հասցեն են՝ ԱՀ, ք. Ստեփանակերտ, Վ.Սարգսյան 25Ա: Կապի միջոցներն են՝ հեռ. (0479) 4-28-58, ֆաքս. (0479) 7-42-14, էլ. փոստ. artsakhhek@mail.ru:

ե. Ընկերության հիմնադրվել և փաստացի գործունեություն է ծավալում ԱՀ-ում:

զ. ԱՀ էներգետիկայի ոլորտի կարգավորումը կատարվում է 4 հիմնական օրենքներով և մի շարք ենթաօրենսդրական ակտերով: Այդ օրենքներն են՝

զ    «Էներգետիկայի մասին» ԱՀ օրենքը,

q «Էներգախնայողության և վերականգնվող էլեկտրաէներգիայի մասին» ԱՀ օրենքը,

q «Էներգետիկայի և էլեկտրաէներգիայի սպառման ոլորտում պետական տեխնիկական վերահսկողության մասին» ԱՀ օրենքը

q «Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող մարմնի մասին» ԱՀ օրենքը,

է. Հիմնական օրենքը, որը սահմանում է ԱՀ էներգետիկայի ոլորտի գործունեության և կարգավորման հիմնական սկզբունքները, «Էներգետիկայի մասին» ԱՀ օրենքն է: Այս օրենքը կարգավորում է ԱՀ-ում պետական մարմինների, էներգետիկայի ոլորտի ինստիտուտների և էլեկտրաէներգիայի, ջերմային և բնական գազի սպառողների միջև հարաբերությունները:

ը. ԱՀ էներգետիկայի ոլորտի կարգավորումն իրականացվում է ԱՀ Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը, որը գործում է «Էներգետիկայի մասին» ԱՀ օրենքով իրեն տրված իրավասությունների շրջանակներում և անկախ է այդ իրավասություններն իրականացնելիս:

թ. Որպես էլեկտրաէներգիա իրացնող օպերատորներ հանդես է գալիս «ԱՐՑԱԽԷՆԵՐԳՈ» ՓԲԸ-ն:

ժ. Ընկերության բիզնեսի զարգացման մեջ կարևոր իրադարձություն էր 2010թ-ի ապրիլին Թրղե-1 ՀԷԿ-ի բացումը և շահագործումը, որի շինարարության ծախսերը ֆինանսավորվել են հիմնականում բաժնետոմսերի առաջին հրապարակային տեղաբաշխումից հավաքագրված միջոցների հաշվին: Ընկերությունը նախատեսում է շահագործման հանձնել նոր ՀԷԿ՝ Քարվաճառ ՓՀԷԿ: 2019թ հունվարից արդեն իսկ սկսվել են շինարարական աշխատանքները և ծրագրվում է այն շահագործման հանձնել 2021թ:

**«Քարվաճառ» ՓՀԷԿ-ի տեխնիկատնտեսական ցուցանիշներ**
**տարբերակ 2**

«Քարվաճառ» ՓՀԷԿ-ը նախատեսվում է կառուցել է Շահումյանի շրջանում, Թարթառ գետի 1728 մ-ից 1569 մ գետահատվածքների միջև:

Նախատեսվում է օգտագործել 158.0 մ ճնշումը, որն առաջանում է գետի 1758.5 և 1600.5 մ նիշերի միջև:

ՓՀԷԿ-ը կազմված է լինելու հետևյալ կառուցվածքներից.

- Թարթառ գետի հունում կառուցվող 2.5 մ բարձրությամբ, 12.0 մ լայնությամբ բետոնային ջրթափային պատվար և ափային տիպի ջրառ հանգույց
- Տղմազտարան
- Պողպատե ճնշումային խողովակաշար 6000 մ երկարությամբ
- ՓՀԷԿ-ի շենք
- Հեռացնող ջրանցք

- Կրանսֆորմատորային կայան և էլեկտրահաղորդման գծեր:

ՓՀԷԿ-ը ունենալու է հետևյալ հիմնական ցուցանիշներ.

- դրվածքային հզորություն՝ 4961 ԿՎտ;
- հաշվարկային ելք՝ 4.5 մ³/վ;
- ստատիկ ճնշում՝ 158.0 մ;
- միջին տարեկան արտադրանք՝ 21.600 հազ. կվտ.ժամ:

ՓՀԷԿ-ի շինարարության արժեքը առանց ԱԱՀ-ի կկազմի 3.030 մլն ՀՀ դրամ, ԱԱՀ 606 մլն ՀՀ դրամ: **Ընդամենը ներառյալ ԱԱՀ 3.636 մլն ՀՀ դրամ**

«Քարվաճառ» ՓՀԷԿ-ում նախնական նախատեսվում է տեղադրել եվրոպական արտադրության լայնական-շիթային ագրեգատներ (Osberger կամ Cink):

«Քարվաճառ» ՓՀԷԿ-ի կառուցման ժամանակամիջոցը 24 ամիս է: Շահագործման հաշվարկային ժամկետը 30 տարի:

**ՓՀԷԿ-ի եկամուտների, ծախսերի և շահույթի տարեկան հաշվարկ**

| | Հոդված | Հազար ՀՀ դրամ |
|---|---|---|
| 1 | Հասույթ* | 508.377 |
| 2 | Աշխատավարձ | -41.000 |
| 3 | Հիմնական միջոցների մաշվածություն | -101.000 |
| 4 | Նյութական ծախսեր | -6.000 |
| 5 | Սպասարկման ծախսեր | -6.000 |
| 6 | Ուղղակի և անուղղակի արտադրական ծախսեր | -3.000 |
| 7 | Շահույթ | 351.377 |
| 8 | Շահութահարկ | -70.275 |
| 9 | Զուտ շահույթ | 281.102 |

*Այսօրվա դրությամբ բնական ջրոսքերի վրա կառուցվող ՓՀԷԿ-երի համար գործող էլեկտրաէներգիայի սակագինը սահմանված է 23.536 դրամ/կՎտ.ժ առանց ԱԱՀ-ի:

Ներդրումների հետգնման ժամկետը կկազմի մոտ 10.8 տարի:

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել բաժնետոմսերի տեղաբաշխումից ներգրավված, ինչպես նաև փոխառու միջոցներով:

*2. <u>Ներդրումները</u>*

ա. Ստորև ներկայացվում են 31.12.2016-31.12.2018 թթ. ժամանակահատվածում Ընկերության կողմից կատարված ներդրումները:

Աղյուսակ 10. 2016-2018թթ Ընկերության կողմից կատարված ներդրումները.

| *Անվանում* | *Ներդրումների ծավալները /ՀՀ դրամ/* |
|---|---|
| Շենք, շինություններ | 351,658,339 |
| Կառուցվածքներ | 3,730,569,362 |
| Փոխանցող հարմարանքներ | 7,059,542 |
| Մեքենա սարքավորումներ | 2,209,470,448 |
| Տրանսպորտային միջոցներ | 18,871,643 |
| Արտադրական, տնտեսական գույք | 32,571,143 |
| **Ընդամենը** | **6,350,200,477** |

Աղբյուրը՝ «ԱՐՑԱԽՀԷԿ» ԲԲԸ

դ. Աղյուսակ 11-ում ներկայացվում է գործող ՀԷկ-երի արժեքները /ՀՀ դրամ/ շահագործման հանձնելու պահին:

Աղյուսակ 11..

| | | |
|---|---|---|
| Մատաղիս 1 | 01/08/12 | 3,734,303,921.47 |
| Մատաղիս 2 | 01/08/12 | 2,274,181,659.60 |
| Թրղի 1 | 01/05/10 | 832,478,656.24 |
| Թրղի 2 | 01/12/11 | 2,471,919,105.06 |
| Թրղի 3 | 01/09/15 | 2,007,688,085.90 |
| Թրղի 4 | 01/11/18 | 974,247,373.61 |
| ԼԵՎ 1 | 01/11/18 | 5,052,314,770.02 |
| Ընդամենը | | 17,347,133,571.90 |

ՀԷԿ-երի շինարարության ծրագրերն իրականացվել է բաժնետոմսերի տեղաբաշխումներից ներգրավված, ինչպես նաև սեփական միջոցների հաշվին:

Աղբյուրը՝ «ԱՐՑԱԽՀԷԿ» ԲԲԸ

*Արժեքը ներառում է նաև աշխատակիցներին բնակարաններով ապահովման և ճաշարանի կառուցման ծախսերը

զ. Աղյուսակ 12-ում ներկայացվում են ՀԷԿ-երի տեխնիկական ցուցանիշները:

Աղյուսակ 12. ՀԷԿ-երի տեխնիկական և էներգետիկ բնութագրերը.

| *Բնութագրեր* | *Չափման միավոր* | *Մատաղիս ՀԷԿ-1* | *Մատաղիս ՀԷԿ-2* | *Թրղե ՀԷԿ-1* | *Թրղե ՀԷԿ-2* | *Թրղե ՀԷԿ-3* | *Թրղե ՀԷԿ-4* | *ԼԵՎ 1* |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Դրվածքայինհզորություն | ՄՎտ | 4.8 | 3 | 3 | 5.9 | 5.0 | 0.82 | 7.027 |
| Էլ. էներգիայիմիջինբազմամյ աարտադրանք | մլնԿՎտ/ ժամ | 22.4 | 13.2 | 16.5 | 24.82 | 16.3 | 3.4 | 22.6 |
| Հաշվարկայինճնշում | մ | 19.5 | 11.7 | 210 | 355.5 | 320 | 231.8 | 119.7 |
| Հաշվարկայինելք | $մ^3$/վրկ | 30 | 30 | 2 | 2 | 1.9 | 0.45 | 7.0 |
| Տարեկանջրիոսքիծավալ | $մլնմ^3$ | 632.4 | 632.4 | 33.99 | 31.36 | 30.0 | 6.79 | 127.4 |
| Հիդրոագրեգատներիթիվ | հատ | 3 | 3 | 3 | 2 | 2 | 2 | 2 |
| Դերիվացիոնխողովակաշ արիերկարություն | կմ | 0.24 | 0.03 | 5 | 5 | 3.8 | 8.2 | 5.8 |
| Դերիվացիոնխողովակաշ արիտրամագիծ | հատ/մմ | 3*1600/3*2 520 | 3*2520 | 1/1220 | 1/1220 | 1/1020 | 1/630 | 1/600 |

Աղբյուրը՝ «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ

## Բիզնեսի նկարագիրը

1. Հիմնական գործունեությունը

ա. Ընկերության գործունեության հիմնական ուղղությունը էլեկտրաէներգիայի արտադրությունն է, որն էլ հանդիսանում է շահույթի ստացման միակ աղբյուրը: Էլեկտրաէներգիայի արտադրությունն Ընկերությունն իրականացնում է Սարսանգի և Թրղե-1 հիդրոէլեկտրակայանների միջոցով:

բ. Ընկերության հիմնական ակտիվը Սարսանգի հիդրոէլեկտրակայանն է, որը կառուցվել է 1976թ. ԱՀ հիմնական գետի՝ Թարթառի վրա և համարվում է նախկին ԽՍՀՄ լավագույն և սարքավորումներով առավելագույնս հագեցած ՀԷԿ-երից մեկը: Սարսանգի ՀԷԿ-ը հագեցած է երկու հիդրոտուրբիններով՝ յուրաքանչյուրը 25 ՄՎտ դրվածքային հզորությամբ և վայրկյանում 33.2 $մ^3$ ջրի օգտագործման ծավալներով: Տուրբինները կապիտալ վերանորոգվում են յուրաքանչյուր 7 տարին մեկ, բացի դրանից ամեն 3 տարին մեկ կատարվում են պարտադիր վերականգնողական աշխատանքներ:

գ. Սարսանգի ՀԷԿ-ը տեղակայված է Սարսանգի ջրամբարի վրա: Վերջինս ունի 500 մլն. մ³ արդյունավետ ծավալ: Ամբարտակի բարձրությունը և լայնությունը կազմում են համապատասխանաբար 730մ և 550մ, որը նույնիսկ եվրոպական երկրների շարքում համարվում է ամենաբարձրերից մեկը: Սարսանգի ՀԷԿ-ն ունի էլեկտրաէներգիայի արտադրության ավելի քան երեսունամյա փորձ, սակայն ջրի հոսքի, ինչպես նաև էլեկտրաէներգիայի արտադրության վերաբերյալ ամբողջական տվյալները առկա են միայն 1994թ-ից սկսած:

Նախորդ տարիների տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ էլեկտրաէներգիայի արտադրության ծավալները տարիների ընթացքում փոփոխվում են ջրի հոսքի փոփոխությունների հետ միասին: Բացի այդ, էլեկտրաէներգիայի արտադրության ծավալները փոփոխվում են նաև ըստ ամիսների: Չնայած գարնանը ջրի հոսքն ավելանում է, էլեկտրաէներգիայի արտադրության ծավալները դրա հետ մեկտեղ չեն ավելանում: Սա բացատրվում է ՀԷԿ-ի շահագործման համապատասխան քաղաքականությամբ, որը համապատասխանում է ԱՀ էլեկտրաէներգիայի պահանջարկի կառուցվածքին: Էլեկտրաէներգիայի պահանջարկը աճում է հատկապես ուշ աշնանը և ձմռանը՝ նվազելով տաք եղանակներին: Այդ իսկ պատճառով, պահանջարկի փոփոխություններին համապատասխանելու համար, Սարսանգի ՀԷԿ-ը կուտակում է ջուրը Սարսանգի ջրամբարում՝ սահմանափակելով էլեկտրաէներգիայի արտադրությունը գարնանը և սկսում է օգտագործել այն ուշ աշնանը և ձմռանը, երբ ջրի հոսքը նվազում է, իսկ պահանջարկը՝ աճում:

ե. Սարսանգի ՀԷԿ-ի կողմից վերջին տարիներին արտադրած էլեգտրաէներգիայի ծավալները եղել են միջինում տարեկան 90-140 մլն ԿՎտ/ժամ,: Ըստ էության 2018թ-ին Ընկերությունը բավարարել է ԱՀ-ի էլեկտրաէներգիայի պահանջարկի ավելի քան 54.00%-ը: Պահանջարկի մնացած մասը բավարարվել է ՀՀ-ից ներմուծված էլեկտրաէներգիայի հաշվին:

զ. Սկսած 2009թ.-ից՝ Սարսանգի ՀԷԿ-ի էլեկտրաէներգիայի արտադրության հաշվարկներում առաջնահերթ է ընդունված 1 մլն ԿՎտ/ժամ էլեկտրաէներգիայի արտադրության համար ջրի տեսակարար ծախսի իջեցումը, այսինքն՝ ՀԷԿ-ի աշխատանքը ջրավազանի ջրի վերին մակարդակի բարձր նիշերով, ինչը հնարավորություն է տալիս ջրի նույն քանակի օգտագործման դեպքում ապահովել էլեկտրաէներգիայի ավելի շատ արտադրանք: Ստորև ներկայացվում են 2016-2018թթ-երին Սարսանգի ՀԷԿ-ի կողմից էլեկտրաէներգիայի արտադրության ծավալները՝ ըստ ամիսների:

Աղյուսակ 15. 2016-2018թթ-երին «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ-ի կողմից էլեկտրաէներգիայի արտադրության ծավալները՝ ըստ ամիսների:

| *Ամիսներ* | *2016թ.* | | *2017թ.* | | *2018թ.* | |
|---|---|---|---|---|---|---|
| | *Էլ.էներգիայի արտադրանք մլն ԿՎտ/ժամ* | *1 մլն ԿՎտ/ժամ արտադրանքի համար ջրի տեսակարար ծախս մլն մ3* | *Էլ.էներգիայի արտադրանք մլն ԿՎտ/ժամ* | *1 մլն ԿՎտ/ժամ արտադրանքի համար ջրի տեսակարար ծախս մլն մ3* | *Էլ.էներգիայի արտադրանք մլն ԿՎտ/ժամ* | *1 մլն ԿՎտ/ժամ արտադրանքի համար ջրի տեսակարար ծախս մլն մ3* |
| Հունվար | 17.7 | 4.25 | 20.4 | 4.15 | 18.2 | 4.41 |
| Փետրվար | 17.3 | 4.45 | 18.5 | 4.46 | 15.7 | 4.58 |
| Մարտ | 20.5 | 4.56 | 18.9 | 4.49 | 18.2 | 4.84 |
| Ապրիլ | 15.3 | 4.47 | 16.4 | 4.56 | 19.1 | 5.04 |
| Մայիս | 20.9 | 4.27 | 19.7 | 4.30 | 20.0 | 4.84 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Հունիս | 20.6 | 4.14 | 20.1 | 4.14 | 19.1 | 4.79 |
| Հուլիս | 4.7 | 5.52 | 5.5 | 6.22 | 4.8 | 0.00 |
| Օգոստոս | 3.7 | 4.56 | 3.5 | 7.40 | 4.4 | 0.00 |
| Սեպտեմբեր | 12.4 | 4.01 | 9.3 | 4.05 | 17.2 | 4.21 |
| Հոկտեմբեր | 17.3 | 4.06 | 14.3 | 4.08 | 17.8 | 4.13 |
| Նոյեմբեր | 21.0 | 4.01 | 15.6 | 4.14 | 16.5 | 4.18 |
| Դեկտեմբեր | 20.3 | 4.08 | 19.1 | 4.21 | 19.8 | 4.27 |
| Ընդամենը | 191.7 | 4.23 | 181.3 | 4.28 | 190.8 | 4.51 |

Աղբյուրը՝ «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ

է. Սարսանգի ՀԷԿ-ի, հետևաբար նաև Ընկերության գործունեության արդյունավետության գրավականներից մեկը հանդիսանում է Սարսանգի ջրամբարի առկայությունը, որը հնարավորություն է ընձեռում ցածր պահանջարկի և էլեկտրաէներգիայի արտադրության ծավալների կրճատման ժամանակ կուտակել հոսող ջուրը ջրամբարում և հետագայում օգտագործել՝ կտրուկ ավելացնելով էլեկտաէներգիայի արտադրության ծավալները՝ նույնիսկ գետի ջրի բնական հոսքի նվազման դեպքում: Սարսանգի ջրամբարը հնարավորություն է տալիս արդյունավետ կառավարել գետի ջրի բնական հոսքը՝ նվազեցնելով բնակլիմայական պայմանների ազդեցության ռիսկը որոշակի կարճաժամկետ ժամանակահատվածում:

ը. Ինչ վերաբերում է 1 մլն ԿՎտ/ժամ էլեկտրաէներգիայի արտադրության համար ջրի տեսակարար ծախսի նվազեցմանը, ապա 2016 և 2017թթ 2015 թ-ի համեմատ նկատվել են զգալի արդյունքներ: 2016թ-ին 2015թ-ի համեմատությամբ 1 մլն ԿՎտ/ժամ արտադրանքի համար ջրի տեսակարար ծախսը նվազել է 8%-ով, 2017թ-ին 2016թ-ի համեմատ ջրի տեսակարար ծախսը գրեթե չի փոփոխվել, իսկ 2018թ-ին 2017թ-ի համեմատ ջրի տեսակարար ծախսը ավելացել է 5,4%-ով:

թ. Բնակլիմայական պայմանների նկարագիրը՝ որպես Ընկերության հիմնական գործունեության վրա ազդող կարևորագույն գործոն: ԱՀ-ն բնորոշվում է լեռնային արագահոս գետերի առկայությամբ, որոնք ունեն հիդրոէներգետիկ բավականին մեծ պոտենցիալ: Թարթառ գետը հանդիսանում է երկրի ամենախոշոր գետը, որի ընդհանուր երկարությունը հասնում է 200կմ, իսկ ջրհավաք մակերեսը՝ ավելի քան 2650 կմ²: Թարթառ գետի և նրա վտակների աղբյուրները գտնվում են երկրի լեռնահամակարգի ամենաբարձր կետերում՝ ԱՀ սահմաններից դուրս: Այն հոսում է Մարտակերտի շրջանով, ընդունում է Թրղե վտակը և հոսում դեպի Ադրբեջանի հանրապետություն: Ռելիեֆը տիպիկ լեռնային է, խիստ կտրատված, որը պայմանավորված է երկրաբանական կառուցվածքի առանձնահատկություններով և ֆիզիկա-աշխարհագրական պայմանների բնույթով: Թարթառ գետը ԱՀ-ի համար ունի խիստ մեծ էներգետիկ պոտենցիալ: Այն պատկանում է լեռնային տիպի գետերին, որն ունի ջրի հոսքի սեզոնային տատանումներ: Թարթառն ունի խառը սնուցման համակարգ. սնուցման հիմնական աղբյուրը հանդիսանում են հալոցքային և անձրևային ջրերը, իսկ ստորգետնյա ջրային աղբյուրներն ունեն երկրորդական նշանակություն: Կլիմայական պայմանների տեսանկյունից՝ Սարսանգի և Մատաղիսի ջրամբարները ներառող հատվածը բնութագրվում է մեղմ կլիմայական պայմաններով: Օդի միջին տարեկան ջերմաստիճանը կազմում է +13.8˚C, բացարձակ

նվազագույն ջերմաստիճանը՝ -31˚C, բացարձակ առավելագույն ջերմստիճանը՝ +35˚C: Ոչ սառնամանիքային շրջանի միջին տևողությունն է 252 օր, առավելագույնը՝ 285 օր, նվազագույնը՝ 235 օր:

ժ. Ընկերությունը չի զբաղվում բնական ռեսուրսների արդյունահանմամբ կամ վերամշակմամբ:

ժա. Ընկերությունը չի նախատեսում նոր ապրանքատեսակների արտադրություն:

2. <u>Հիմնական շուկաները</u>

ա. Ընկերությունը իր գործունեությունը ծավալում է ներքին շուկայում: Արտադրված էլեկտրաէներգիան Ընկերությունը վաճառում է «Արցախէներգո» ՓԲԸ-ին և «ԷՑ-Ի-ՋԻ» ՍՊԸ-ին, որոնք ունեն ԱՀ տարածքում էլեկտրաէներգիայի փոխանցման և բաշխման լիցենզիա: Վաճառքը իրականացվում է համաձայն առքուվաճառքի համապատասխան պայմանագրերի, որոնք գրանցված են ԱՀ Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի կողմից: Վաճառքի գները որոշվում են Հանձնաժողովի կողմից սահմանված սակագների հիման վրա:

բ. Ընկերության ստեղծման պահից մինչև 2008թ-ի ապրիլ ընկած ժամանակահատվածը արտադրված էլեկտրաէներգիան վաճառվում էր «Արցախէներգո» ՓԲԸ-ին 3 դրամ/ԿՎտ/ժամ (առանց ԱԱՀ¤ ֆիքսված սակագնով: ԱՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի՝ 2008թ-ի ապրիլի 20-ի որոշման համաձայն Ընկերության համար սահմանվել է 3.5 դրամ/ԿՎտ/ժամ սակագին: Ընկերության դիմումի հիման վրա Հանձնաժողովը վերանայել է գործող սակագները և 2008թ-ի հոկտեմբերի 1-ի թիվ 51Ա որոշմամբ սահմանել է նոր սակագին՝ 9 դրամ/ԿՎտ/ժամ, որը սկսել է գործել 2008թ. նոյեմբերի 1-ից: 2010թ-ի հուլիսից սակագները վերանայվել են և սահմանվել է Սարսանգի ՀԷԿ-ի արտադրանքի համար 9 դրամ/ԿՎտ/ժամ, իսկ Թրղե-1 ՀԷԿ-ի համար՝ 18 դրամ/ԿՎտ/ժամ սակագին:

2015թ-ի մարտից Ընկերության արտադրանքի համար գործում է 19 դրամ/ԿՎտ/ժամ սակագինը՝ համաձայն ԱՀ Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 12/02/2015թ. N5Ա որոշման: 2019թ-ի համար էլեկտրաէներգիայի սակագների փոփոխություններ չեն նախատեսվում:

գ. ԱՀ էներգետիկայի համակարգը կազմված է երկու հիմնական ոլորտներից՝ գազի և էլեկտրաէներգիայի ոլորտներից: Էլեկտրաէներգիան դեռևս մնում է էներգիայի հիմնական աղբյուրը ԱՀ բնակչության և տնտեսության ¥արդյունաբերություն, գյուղատնտեսություն, շինարարություն և ծառայություններ¤ համար:

Աղյուսակ 16-ում ներկայացվում են ԱՀ էլեկտրաէներգիայի հաշվեկշիռը 2016-2018թթ-ի համար:

<u>Աղյուսակ 16.</u> ԱՀ էլեկտրաէներգիայի հաշվեկշիռը, մլն ԿՎտ/ժամ

| | | 2016 | | 2017 | | 2018 |
|---|---|---|---|---|---|---|
| Արտադրություն | | 296,4 | | 327,8 | | 388,6 |
| Ներմուծում | | 43,1 | | 67,3 | | 50,2 |
| Արտահանում | | -40,6 | | -44,0 | | -67,4 |
| Ընդամենը սպառված էլ.էներգիա | | 298,9 | | 351,1 | | 371,4 |

Աղբյուրը՝ ԱՀ Ազգային Վիճակագրական ծառայություն, «Արցախէներգո» ՓԲԸ

զ. Ընկերությունը ԱՀ-ում էլեկտրաէներգիա արտադրող խոշորագույն կազմակերպությունն է:

է. Բացի «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ-ից ԱՀ-ում կան էլեկտրաէներգիա արտադրող այլ միավորներ ևս, որոնց արտադրանքի գումարային ծավալը 2018թ-ի ընթացքում կազմել է 1.96 մլն Կվտ/ժամ: Դա կազմում է ԱՀ էլեկտրաէներգիայի արտադրության ընդհանուր ծավալի ընդամենը 1%-ը, ինչը մրցակցային դաշտ չի ձևավորում:

ը. Ընկերությունը որևէ արդյունաբերական, բանկային, ֆինանսական խմբերի և միությունների չի անդամակցում:

թ. ԱՀ-ում և նրանից դուրս Ընկերությունը չունի մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, ինչպես նաև հիմնարկներ: ԱՀ-ում և նրանից դուրս Ընկերությունը չունի դուստր ընկերություններ:

# Հիմնական միջոցները

1. Աղյուսակում 18-ում ներկայացված է Ընկերության տրամադրության տակ գտնվող հիմնական միջոցների կազմ ու կառուցվածքը /31.12.2018թ-ի դրությամբ (Աուդիտ չանցած)/.

| *Հիմնական միջոցներ* | *Նկարագիրը* | *Մնացորդը /ՀՀ դրամ/* |
|---|---|---|
| Շենքեր | հաշվեկշռային արժեք | 4,810,522,000 |
| | արժեք | 6,675,247,954 |
| | կուտակված մաշվածություն | 1,864,725,953 |
| Կառուցվածքներ | հաշվեկշռային արժեք | 6,546,361,820 |
| | արժեք | 7,107,602,406 |
| | կուտակված մաշվածություն | 561,240,585 |
| Փոխանցող հարմարանքներ | հաշվեկշռային արժեք | 895,679,721 |
| | արժեք | 932,056,704 |
| | կուտակված մաշվածություն | 36,376,983 |
| Մեքենաներ և սարքավորումներ | հաշվեկշռային արժեք | 8,911,667,703 |
| | արժեք | 11,307,996,687 |
| | կուտակված մաշվածություն | 2,396,328,984 |
| Տրանսպորտային միջոցներ | հաշվեկշռային արժեք | 16,651,913 |
| | արժեք | 103,390,863 |
| | կուտակված մաշվածություն | 86,738,950 |
| Արտադրական և տնտեսական գույք, գործիքներ | հաշվեկշռային արժեք | 31,882,078 |
| | արժեք | 59,302,932 |
| | կուտակված մաշվածություն | 27,420,855 |
| Բազմամյա տնկարկներ | հաշվեկշռային արժեք | 0 |
| | արժեք | 1,387,200 |
| | կուտակված մաշվածություն | 1,387,200 |
| Այլ հիմնական միջոցներ | հաշվեկշռային արժեք | 8,088,493 |

| | | |
|---|---|---|
| | արժեք | 8,960,043 |
| | կուտակված մաշվածություն | 871,550 |
| Հողամասեր | հաշվեկշռային արժեք | 11,488,490 |
| | արժեք | 11,488,490 |
| | կուտակված արժեզրկում | 0 |
| Ընդամենը | հաշվեկշռային արժեք | 21,236,867,931 |
| | արժեք | 26,267,776,695 |
| | կուտակված մաշվածություն | 5,030,908,765 |
| | կուտակված արժեզրկում | 0 |

Աղբյուրը՝ «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ

2. Ընկերության պլանավորվող հիմնական միջոցները հիմնականում սահմանափակվում են կառուցվող ՀԷԿ-երի կառուցման շրջանակում կատարվող կապիտալ ներդրումներով:

## Կապիտալ ռեսուրսները (պասիվները)

1. Աղյուսակ 19-ում ներկայացվում է Ընկերության սեփական կապիտալի կազմը 31.12.2016, 31.12.2017, 31.12.2018 դրությամբ:

Աղյուսակ 19. Ընկերության սեփական կապիտալի կառուցվածքը 2016-2018թթ.-երի համար, /հազար ՀՀ դրամ/:

| | *31.12.2016* | *31.12. 2017* | *31.12.2018 Աուդիտ չանցած* |
|---|---|---|---|
| | | | |
| Կանոնադրական կապիտալ | 10,650,000 | 10,650,000 | 10,650,000 |
| Էմիսիոն եկամուտ | 457,127 | 457,127 | 457,127 |
| Վերագնահատումից և վերաչափումից տարբերություններ | 0 | 0 | 0 |
| Կուտակված շահույթ | 2,509,460 | 2,957,078 | 3,699,495 |
| Պահուստային կապիտալ | 249,731 | 343,874 | 424,213 |
| Սեփական կապիտալի այլ տարրեր | 0 | 0 | 0 |
| Ընդամենը սեփական կապիտալ | 13,866,318 | 14,408,079 | 15,230,835 |

Աղբյուրը՝ «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ

2. Աղյուսակ 20.-ում ներկայացված է Ընկերության պարտավորությունների կազմը 31.12.2016, 31.12.2017, 31.12.2018 դրությամբ /հազար ՀՀ դրամ/:

Աղյուսակ 20. Ընկերության պարտավորությունների կառուցվածքը:

| | *31.12.2016* | *31.12.2017* | *31.12.2018 Աուդիտ չանցած* |
|---|---|---|---|
| **Ոչ ընթացիկ պարտավորություններ** | | | |
| Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ | 4,337,021 | 6,325,783 | 6,473,993 |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | 0 | 0 | 0 |
| Ակտիվներին վերաբերող շնորհներ | 0 | 0 | 0 |
| Ոչ ընթացիկ պահուստներ | 0 | 0 | 0 |
| Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ | 0 | 0 | 0 |
| Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ | 4,337,021 | 6,325,783 | 6,473,993 |
| **Ընթացիկ պարտավորություններ** | | | |
| Կարճաժամկետ բանկային վարկեր | 0 | 0 | 0 |
| Կարճաժամկետ փոխառություններ | 0 | 42,000 | 0 |
| Կրեդիտորական պարտքեր գնումների գծով | 11,808 | 634,355 | 399,229 |
| Ստացված ընթացիկ կանխավճարներ | 0 | 0 | 0 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին | 85,245 | 75,592 | 65,930 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով | 0 | 0 | 0 |
| Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով | 27,029 | 30,041 | 34,981 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր մասնակիցներին (հիմնադիրներին) | 102,849 | 169,686 | 107,154 |
| Այլ կրեդիտորական պարտքեր | 346 | 357 | 352 |
| Եկամուտներին վերաբերող շնորհներ | 0 | 0 | 0 |
| Ընթացիկ պահուստներ | 0 | 0 | 0 |
| Այլ ընթացիկ պարտավորություններ | 42,028 | 57,386 | 64,836 |
| Ընդամենը ընթացիկ պարտավորություններ | 269,305 | 1,009,417 | 672,482 |
| Ընդամենը պարտավորություններ | 4,606,325 | 7,335,200 | 7,146,475 |

Աղբյուրը՝ «ԱՐՑԱԽՀԷԿ» ԲԲԸ

3. Աղյուսակ 21.-ում ներկայացվում են Ընկերության դրամական հոսքերը պատմական ֆինանսական ժամանակաշրջանի համար /հազար ՀՀ դրամ/:

Աղյուսակ 21. Ընկերության դրամական հոսքերը 2016-2018թթ.-երի համար /հազար ՀՀ դրամ/:

| *Դրամական հոսքերը* | *31.12.2016* | *31.12.2017* | *31.12.2018 Աուդիտ չանցած* |
|---|---|---|---|
| Գործառնական գործունեություն | | | |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից մուտքեր | 4,795,897 | 3,770,784 | 4,640,571 |
| Գործառնական այլ գործունեությունից մուտքեր | 2,160 | 4,414 | 4,404 |
| Ընդամենը ԳԳ մուտքեր | 4,798,057 | 3,775,198 | 4,644,975 |
| Նյութերի, ապրանքների ձեռք բերման գծով | 47,490 | 65,592 | 65,686 |
| Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գծով | 850,609 | 2,082,573 | 2,679,249 |
| Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից | 385,620 | 410,305 | 436,927 |
| Վճարումներ բյուջե | 950,628 | 507,100 | 837,381 |
| Վճարումներ սոց.ապ.հիմնադրամ | 0 | 0 | 0 |
| Գործառնական այլ գործունեությունից ելքեր | 34,171 | 285,181 | 48,798 |
| Ընդամենը ԳԳ ելքեր | 2,268,518 | 3,350,751 | 4,068,041 |
| Ներդրումային գործունեություն | | | |
| Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների վաճառքից մուտքեր | 0 | 0 | 500 |
| Ֆինանսական ակտիվներով գործառնություններից մուտքեր | 40,131 | 822,122 | 4,000 |
| Շահաբաժինների և տոկոսների ստացումից մուտքեր | 165 | 282 | 412 |
| Ներդրումային այլ գործունեությունից մուտքեր | 0 | 0 | 0 |
| Ընդամենը ՆԳ մուտքեր | 40,296 | 822,404 | 4,912 |
| Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռքբերման գծով ելքեր | 126,567 | 298,580 | 213,787 |
| Ֆինանսական ակտիվների ձեռք բերումից և փոխառությունների տրամադրումից | 737,680 | 2,000 | 4,000 |
| Ներդրումային այլ գործունեությունից ելքեր | 1,906 | 2,023 | 2,156 |

| | | | |
|---|---|---|---|
| Ընդամենը՝ ՆԳ ելքեր | 866,153 | 302,603 | 219,943 |
| Ֆինանսական գործունեություն | | | |
| Սեփական կապիտալի գործիքների թողարկումից և վերավաճառքից մուտքեր | 0 | 0 | 0 |
| Ստացված վարկերից և փոխառություններից մուտքեր | 398,399 | 3,288,990 | 4,567,340 |
| Ֆինանսական այլ գործունեությունից մուտքեր | 1,868,561 | 2,835,776 | 2,576,610 |
| Ընդամենը՝ ՖԳ մուտքեր | 2,266,960 | 6,124,766 | 7,143,950 |
| Ստացված վարկերի և փոխառությունների մարումից ելքեր | 1,403,910 | 1,543,525 | 4,766,120 |
| Վճարված շահաբաժիններ և տոկոսներ | 816,089 | 1,008,531 | 1,122,120 |
| Ֆինանսական այլ գործունեությունից ելքեր | 2,211,048 | 3,180,005 | 2,927,499 |
| Ընդամենը՝ ՖԳ ելքեր | 4,431,047 | 5,732,061 | 8,815,739 |

Աղբյուրը՝ «ԱՐՑԱԽՀԷԿ» ԲԲԸ

Ընկերության դրամական մուտքերի գերակշիռ մասը բաժին է ընկնում ֆինանսական գործունեությունից մուտքերին, մասանվորապես՝ ստացված վարկերից ու փոխառություններից, ինչպես նաև ֆինանսական այլ գործունեությունից:

2018թ-ի տարեվերջի դրությամբ համախառն դրամական մուտքերի 39.4%-ը բաժին է ընկնում գործառնական գործունեությունից մուտքերին, ֆինանսական գործունեությունից մուտքերը կազմում են 60.6 %-ը, իսկ մնացած չնչին մասը բաժին է ընկնում ներդրումային գործունեությունից մուտքերին: Ֆինանսական գործունեությունից մուտքերի բարձր տեսակարար կշիռը համախառն դրամական մուտքերի կառուցվածքում պայմանավորված է նոր ՀԷԿ-երի շինարարության ուղղությամբ կատարված կապիտալ ներդրումների ծավալով:

5. Գոյություն չունեն կապիտալ ռեսուրսների օգտագործման այնպիսի սահմանափակումներ, որոնք կարող են էապես ազդել Ընկերության գործունեության վրա:

## Հետազոտական աշխատանքները և զարգացման ուղղությունները

1. Ընկերությունը հետագա զարգացումը տեսնում է արտադրվող էլեկտրաէներգիայի ծավալների ընդլայնման մեջ, որը հիմնականում հնարավոր է նոր արտադրական միավորների՝ ՀԷԿ-երի կառուցման հաշվին: Ըստ

այդմ, Ընկերության համար կարևոր նշանակություն ունի նոր ՀԷԿ-երի կառուցման նախագծա-նախահաշվային աշխատանքների կազմակերպումը::

## Արտոնագրերը և լիցենզիաները

Սարսանգի ՀԷԿ- էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիա (Լիցենզիա N0001)՝ տրված 2008թ-ի հուլիսի 28-ին: Լիցենզիան տրված է 15 տարի ժամկետով:

Թրղի-1 ՀԷԿ- էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիա (Լիցենզիա N0004)՝ տրված 2010թ-ի հունիսի 11-ին: Լիցենզիան տրված է 15 տարի ժամկետով:

Թրղի-2 ՀԷԿ- էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիա (Լիցենզիա N0005)՝ տրված 2011թ-ի դեկտեմբերի 26-ին: Լիցենզիան տրված է 15 տարի ժամկետով:

Թրղի3 ՀԷԿ- էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիա (Լիցենզիա N0005)՝ տրված 2015թ-ի հուլիսի 24-ին: Լիցենզիան տրված է 15 տարի ժամկետով:

Թրղի-4 ՀԷԿ-էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիա (Լիցենզիա N0003)՝ տրված 2018թ-ի մայիսի 18-ին: Լիցենզիան տրված է 15 տարի ժամկետով:

Մատաղիս- ՀԷԿէլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիա (Լիցենզիա N0002)՝ տրված 2012թ-ի հուլիսի17-ին: Լիցենզիան տրված է 15 տարի ժամկետով:

Մատաղիս-2 ՀԷԿ էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիա (Լիցենզիա N0003)՝ տրված 2012թ-ի հուլիսի 17-ին: Լիցենզիան տրված է 15 տարի ժամկետով:

 Եւ-1 ՀԷԿ- էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիա (Լիցենզիա N0009)՝ տրված 2017թ-ի նոյեմբերի20-ին: Լիցենզիան տրված է 15 տարի ժամկետով: :

Զարգացման վերջին միտումները

Վերջին հաշվետու ֆինանսական տարվա ավարտից մինչև Ազդագրի ներկայացման օրն (11.03.2019թ.) ընկած ժամանակահատվածում Թողարկողի գործունեության /արտադրանքի ծավալներ, ինքնարժեք, վաճառքի գներ/ վրա ազդող էական միտումներ տեղի չեն ունեցել, որոնք ողջամիտ ներդրողը կկարևորեր ներդրումային որոշում կայացնելիս:

## Շահույթի կանխատեսումը կամ գնահատումը

1. Ներկայացված կանխատեսումները հիմնված են Ընկերության ղեկավարության կողմից կատարված կանխատեսումների հիման վրա:

Թարթառ գետի փաստացի ջրհոսքի ծավալների և նախորդ տարիներին կատարված չափումների համադրման արդյունքում Ընկերությունը կազմել է 2019-2023թթ համար սպասվելիք ջրհոսքի միջին տարեկան ծավալները Թարթառ, Թրղե գետերի, ինչպես նաև Սարսանգի ՀԷԿ-Մատաղիս հատվածում կողային փոքր գետերի համար: Ելնելով ստացված տվյալներից, 2019-2023թթ Ընկերության բոլոր կայաններում էլեկտրաէներգիայի սպասվելիք արտադրանքները ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

Հաշվի առնելով 1996-2018թթ. ջրհոսքի միջին տարեկան ծավալները /479,27մլն $մ^3$/, Ընկերությունն իրականացրել է էլեկտրաէներգիայի արտադրության սպասվելիք ծավալների և հասույթի կանխատեսումներ:

Աղյուսակ 22. Հասույթի կանխատեսումը 2019-2023թթ համար

| | *Սարսանգ* | *Թրղե-1* | *Թրղե-2* | *Թրղե-3* | *Թրղե-4* | *Մատաղիս-1* | *Մատաղիս-2* | *Լև-1* | *Քարվաճառ* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Արտադրանք, մլն ԿՎտ/ժամ | | | | | | | | | | |
| **2019** | 104,85 | 12,88 | 22,48 | 18,16 | 3,48 | 22,46 | 13,06 | 22,63 | - | 220 |
| **2020** | 104,85 | 12,88 | 22,48 | 18,16 | 3,48 | 22,46 | 13,06 | 22,63 | - | 220 |
| **2021** | 104,85 | 12,88 | 22,48 | 18,16 | 3,48 | 22,46 | 13,06 | 22,63 | 5,949 | 225,949 |
| **2022** | 104,85 | 12,88 | 22,48 | 18,16 | 3,48 | 22,46 | 13,06 | 22,63 | 21,669 | 241,669 |
| **2023** | 104,85 | 12,88 | 22,48 | 18,16 | 3,48 | 22,46 | 13,06 | 22,63 | 21,669 | 241,669 |
| Սակագներ, ՀՀ դրամ | | | | | | | | | | |
| **2019** | 19 | 19 | 19 | 19 | 19 | 19 | 19 | 19 | - | - |
| **2020** | 19 | 19 | 19 | 19 | 19 | 19 | 19 | 19 | - | - |
| **2021** | 19 | 19 | 19 | 19 | 19 | 19 | 19 | 19 | 23,536 | - |
| **2022** | 19 | 19 | 19 | 19 | 19 | 19 | 19 | 19 | 23,536 | - |
| **2023** | 19 | 19 | 19 | 19 | 19 | 19 | 19 | 19 | 23,536 | - |
| Հասույթ, մլն ՀՀ դրամ | | | | | | | | | | |
| **2019** | 1 992,15 | 244,72 | 427,12 | 345,04 | 66,12 | 426,74 | 248,14 | 429,97 | - | 4 180 |
| **2020** | 1 992,15 | 244,72 | 427,12 | 345,04 | 66,12 | 426,74 | 248,14 | 429,97 | - | 4 180 |
| **2021** | 1 992,15 | 244,72 | 427,12 | 345,04 | 66,12 | 426,74 | 248,14 | 429,97 | 140 | 4 320 |
| **2022** | 1 992,15 | 244,72 | 427,12 | 345,04 | 66,12 | 426,74 | 248,14 | 429,97 | 510 | 4 690 |
| **2023** | 1 992,15 | 244,72 | 427,12 | 345,04 | 66,12 | 426,74 | 248,14 | 429,97 | 510 | 4 690 |

Աղբյուրը՝ «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ

Ընկերության կողմից կատարված ծախսերը ներկայացվում են աղյուսակ 23-ում և ներառում են արտադրված էլեկտրաէներգիայի ինքներաժեքը, վարչական ծախսերը, կապիտալ ծախսերը և այլ ծախսեր:

Աղյուսակ 23. Էլեկտրաէներգիայի ինքնարժեքը 2019-2023թթ. համար

| *Ինքնարժեք, հազար ՀՀ դրամ* |
|---|

| | 2019 | 2020 | 2021 | 2022 | 2023 |
|---|---|---|---|---|---|
| ՀԷԿ-երի աշխատողների թվաքանակ | 221 | 221 | 236 | 236 | 236 |
| Աշխատավարձի աճ % | 0 | 0 | 0 | 0 | 5% |
| Աշխատավարձ | 389 844 | 389 844 | 400 194 | 430 844 | 452 386 |
| Սոց. վճար | 600 | 600 | 700 | 700 | 700 |
| Տեղական հարկեր | 8 360 | 8 360 | 8 640 | 9 380 | 9 380 |
| Ավտոճանապարհային հարկ | 56 856 | 56 856 | 56 856 | 56 856 | 56 856 |
| Անվտանգություն | 25 000 | 25 000 | 25 620 | 27 500 | 27 500 |
| Էլ. էներգիայի ծախս | 33 600 | 33 600 | 34 440 | 40 320 | 42 336 |
| Նյութական ծախսեր | 32 487 | 32 487 | 33 350 | 35 904 | 37 699 |
| Ընդամենը ինքնարժեք | 17 878 | 17 878 | 18 825 | 45 121 | 23 143 |

Աղբյուրը՝ «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ

Ինքնարժեքի մեջ մեծ տեսակարար կշիռ են կազմում աշխատողների աշխատավարձերին և պարգևատրումներին ուղղվող ծախսումները: Աշխատավարձերիի վերանայում նախատեսվում է իրականացնել 2023թ.:

Ինքնարժեքի հաջորդ տարրերն են էլեկտրաէներգիայի և նյութերի սպառումը: Ծախսվող էլեկտրաէներգիայի հաշվարկման համար հիմք են ծառայել էլեկտրաէներգիայի սպառման սակագնի կանխատեսվող արժեքները, ինչպես նաև Սարսանգի ՀԷԿ-ի կողմից կատարվող համապատասխան ծախսումները: Ինքնարժեքի մեջ են ներառվել նաև տեղական տուրքերն ու ճանապարհային հարկը (ԱՀ հատուկ հարկ՝ համախառն հասույթի 0.4%-ի չափով):

Աղյուսակ 24. Վարչական ծախսերը 2019-2023թթ-երի համար

| *Վարչական ծախսումների կանխատեսումներ, հազար ՀՀ դրամ* | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | 2019 | 2020 | 2021 | 2022 | 2023 |
| Աշխատավարձ | 210,000 | 210,000 | 210,000 | 210,000 | 220,500 |
| Տրանսպորտ | 600 | 600 | 600 | 600 | 600 |
| Ֆինանսական ծախսեր | 4,800 | 4,800 | 4,800 | 4,800 | 4,800 |
| Կապ | 3,750 | 3,750 | 3,750 | 3,750 | 3,750 |
| Անվտանգություն | 17,000 | 17,000 | 18,100 | 18,100 | 18,100 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Աուդիտորական և խորհդատվական | 33,200 | 33,200 | 34,000 | 35,000 | 35,000 |
| Ապահովագրական | 8,000 | 8,000 | 8,500 | 10,000 | 10,000 |
| Հարկեր , տուրքե և այլ պարտադիր վճարներ | 50,000 | 50,000 | 50,000 | 51,000 | 51,000 |
| Գործուղման և ներկայացուցչական | 6,000 | 7,000 | 8,000 | 9,000 | 10,000 |
| Բարեգործություն | 14,040 | 14,040 | 14,040 | 14,040 | 14,040 |
| Գրասենյակային | 14,400 | 14,400 | 15,000 | 17,000 | 17,000 |
| Վարձակալական | 15,525 | 0 | 0 | 0 | 0 |
| Այլ ծախսեր | 3,600 | 3,600 | 3,600 | 4,000 | 4,000 |
| Ընդամենը | 2 400 | 2 400 | 3 000 | 4 000 | 4 000 |

Աղբյուրը՝ «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ

Վարչական ծախսերի կանխատեսման համար հիմք են հանդիսացել Սարսանգի ՀԷԿ-ի վարչական ծախսերի կառուցվածքը՝ ճշգրտված կառուցվող ՀԷԿ-երի չափերի և առանձնահատկությունների հիման վրա:

Աղյուսակ 25. Կանխատեսվող շահույթի հաշվարկը 2019-2023թթ-երի համար, հազար ՀՀ դրամ*:

| | *2019* | *2020* | *2021* | *2022* | *2023* |
|---|---|---|---|---|---|
| Հասույթ | 4,180,000 | 4,180,000 | 4,320,000 | 4,690,000 | 4,690,000 |
| Ինքնարժեք | 564,625 | 564,625 | 578,625 | 646,625 | 650,000 |
| Ամորտիզացիա | 540,000 | 540,000 | 565,000 | 640,000 | 640,000 |
| Համախառն եկամուտ | 3,075,375 | 3,075,375 | 3,176,375 | 3,403,375 | 3,400,000 |
| Վարչական ծախսեր | 428,666 | 413,140 | 415,000 | 430,000 | 435,000 |
| Գործառնական շահույթ | 2,646,709 | 2,662,235 | 2,761,375 | 2,973,375 | 2,965,000 |
| Ֆինանսական ծախսեր | 567,930 | 516,200 | 535,000 | 630,000 | 525,000 |
| Զուտ շահույթ նախքան շահութահարկի գծով ծախսերի նվազեցումը | 2,078,779 | 2,146,035 | 2,226,375 | 2,343,375 | 2,440,000 |
| Զուտ շահույթ շահութահարկի գծով | 1,663,023 | 1,716,828 | 1,781,100 | 1,874,700 | 1,952,000 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| ծախսերի նվազեցումից հետո | | | | | |
| Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով | 146.85 | 143.07 | 148.43 | 156.23 | 162.67 |

Աղբյուրը՝ «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ

*Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով արտահայտված է ՀՀ դրամով:

Ընկերության զուտ շահույթի և, առհասարակ, ֆինանսական հոսքերի կանխատեսումներում Ընկերության ղեկավարությունը հիմնվել է էլեկտրաէներգիայի գործող սակագների վրա:

Ընկերության ֆինանսա-տնտեսական արդյունքների վրա ազդում են Ընկերության կողմից արտադրվող էլեկտրաէներգիայի ծավալները, սակագները և Ընկերության կողմից կատարված ծախսերը:

Էլեկտրաէներգիայի սակագները սահմանվում են Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի կողմից և Ընկերության կառավարման մարմինների վերահսկողության դաշտից դուրս են:

Ընկերության գործունեության առանձնահատկություններից ելնելով՝ էլեկտրաէներգիայի արտադրության ծավալների վրա ուղղակի ազդեցություն ունեն բնակլիմայական պայմանները և գետերի ջրայնությունը, որոնք նույնպես դուրս են Ընկերության և վերջինիս կառավարման մարմինների վերահսկողությունից:

Ընկերության գործունեության արդյունքների վրա կառավարման մարմինները կարող են ազդել ծավալային ցուցանիշների վրա ներգործություն ունենալու շնորհիվ՝ Ընկերության գործունեությունն ուղղելով զարգացման էքստենսիվ կամ ինտենսիվ ճանապարհով: Այդ տեսանկյունից Ընկերության արտադրա-տնտեսական գործունեության արդյունավետության բարձրացումը հնարավոր է նոր արտադրական հզորությունների շահագործման, գործող հզորությունների արդյունավետության բարձրացման միջոցով:

Գործունեության ծախսատարության նվազեցմանն է ուղղված արդյունավետ պլանավորումը և բյուջետավորումը, ինչը գտնվում է կառավարման մարմինների վերահսկողության ներքո: Այսպես, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ԱՀ օրենքով, Ընկերության կանոնադրությամբ և ներքին կանոնակարգերով Խորհուրդն իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը, որոշում է Ընկերության գործունեության հիմնական ուղղությունները և սահմանում երկարաժամկետ ռազմավարությունը, հաստատում է ամենամյա ծախսերի նախահաշիվը և դրա կատարողականը, ինչը կազմում է արտադրա-տնտեսական գործունեության պլանավորման և կառավարման անբաժանելի մասը, իսկ Գլխավոր տնօրենի՝ որպես Ընկերության միանձնյա գործադիր մարմնի գործունեությունն ուղղված է բաժնետերերի ժողովի և տնօրենների խորհրդի որոշումների պատշաճ կատարմանը:

# Թողարկողի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները

1. Ընկերության կառավարման մարմինների սխեմատիկ կառուցվածքը.




2. Ընկերության կառավարման մարմիններն են Բաժնետերերի Ընդհանուր Ժողովը(այսուհետև՝ Ժողով, Տնօրենների Խորհուրդը ¥այսուհետև՝ Խորհուրդ¤, Գլխավոր Տնօրենը և Վերստուգող հանձնաժողովը: Սույն մասում որպես կառարման մարմնի օղակ ներկայացված է նաև Ընկերության կորպորատիվ քարտուղարի մասին տեղեկությունները: Կառավարման մարմինների իրավասություններն ու պարտականությունները սահմանվում են Ընկերության Կանոնադրությամբ, ինչպես նաև առանձին կանոնակարգերով՝ «Բաժնետերերի ընդհանուր ժողովի մասին», «Տնօրենների Խորհրդի մասին», «Գլխավոր Տնօրենի մասին», «Վերստուգող հանձնաժողովի մասին», «Կորպորատիվ քարտուղարի մասին»:

<u>Բաժնետերերի ընդհանուր ժողով</u>

Բաժնետերերի ընդհանուր ժողովը Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է:

Ժողովները գումարվում են համատեղ ներկայությամբ կամ հեռակա կարգով, Ստեփանակերտ քաղաքում, իսկ Խորհրդի որոշմամբ կարող է սահմանվել Ժողովի գումարման այլ վայր:

Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել տարեկան Ժողով: Ընկերության կանոնադրության համաձայն՝ Ընկերության տարեկան Ժողովը գումարվում է հերթական ֆինանսական տարվա ավարտից երկու ամիս հետո՝ չորս ամսվա ընթացքում: Ժողովները գումարվում են Խորհրդի կողմից սեփական նախաձեռնությամբ և գրավոր որոշմամբ: Արտահերթ ընդհանուր ժողովը կարող է գումարվել նաև Գլխավոր Տնօրենի, Վերստուգող հանձնաժողովի, Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ Ընկերության՝ առնվազն 10% ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ ¥բաժնետերերի¤ պահանջով:

Ժողովի գումարման մասին ծանուցման ձևը սահմանվում է ժողովի գումարման մասին որոշմամբ և կարող է իրականացվել պատվիրված նամակներ ուղղարկելու, ծանուցումն անձամբ հանձնելու, էլեկտրոնային

փոստով առաքելու կամ Ընկերության ինտերնետային կայքում տեղադրելու միջոցով: Ընկերությունը պարտավոր է Ժողովի գումարման մասին Կանոնադրությամբ սահմանված կարգով ծանուցել ժողովի գումարման օրվանից առնվազն 30 օր առաջ:

Ժողովն իրավունք ունի Ժողովին մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների առնվազն երեք քառորդով ընդունել որոշումներ հետևյալ հարցերի վերաբերյալ`

ա) Ընկերության կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, Ընկերության կանոնադրության նոր խմբագրությամբ հաստատումը,

բ) Ընկերության վերակազմակերպումը,

գ) Ընկերության լուծարումը,

դ) Ընկերության լուծարման հանձնաժողովի նշանակումը, ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը,

ե) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը,

զ) բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև Ընկերության կողմից ձեռք բերված կամ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցումը,

է) Ընկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը:

Սույն կետի «գ» և «զ» ենթակետերով սահմանված դեպքերում կողմ քվեարկված ձայների քանակը չպետք է պակաս լինի քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների երկու երրորդից:

Ժողովն իրավունք ունի ժողովին մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասությամբ ընդունել որոշումներ հետևյալ հարցերի վերաբերյալ`

ա) Խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

բ) Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների ընտրությունը և նրանց ¥նրա¤ լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

գ) հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը և հաշվիչ հանձնաժողովի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

դ) Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը,

ե) Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը,

զ) տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը,

է) Ժողովի վարման կարգի հաստատումը,

ը) բաժնետոմսերի համախմբումը (կոնսոլիդացիան) և բաժանումը,

թ) բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման ճանապարհով Ընկերության կանոնադրական կապիտալի չափի ավելացումը, որի ծավալը գերազանցում է Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի 25 տոկոսը,

ժ) բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև Ընկերության կողմից ձեռք բերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը,

ժա) Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՍՀ օրենքով (այսուհետև՝ Օրենք) նախատեսված դեպքերում,

ժբ) գործարքների կնքման մասին, որում առկա է շահագրգռվածություն, որոշման ընդունումը՝ Օրենքով նախատեսված դեպքերում,

ժգ) Ընկերության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ՝ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության ձևով,

ժդ¤)Ընկերության մարմինների գործունեությունը կարգավորող կանոնակարգերի հաստատումը, մասնավորապես՝

- q Ժողովի մասին կանոնակարգը,
- q Խորհրդի մասին կանոնակարգը,
- q Վերստուգող հանձնաժողովի մասին կանոնակարգը,
- q Հաշվիչ հանձնաժողովի մասին կանոնակարգը:

ժե) Խորհրդի անդամներին իրենց պարտականությունների կատարման հետ կապված պարգևավճարների և/կամ ծախսերի փոխհատուցման սահմանում և դրանց չափերի որոշում,

ժզ) Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամներին իրենց ¥իր¤ պարտականությունների կատարման հետ կապված պարգևավճարների և/կամ ծախսերի փոխհատուցման սահմանում և դրանց չափերի որոշում,

ժէ) բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով նախաձեռնող անձի կամ մարմնի կողմից տվյալ ժողովի նախապատրաստման և անցկացման հետ կապված ծախսերի փոխհատուցման որոշում:

<u>Տնօրենների Խորհուրդ</u>

Խորհուրդն իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը՝ ի շահ բոլոր բաժնետերերի:

Խորհրդի անդամներն ընտրվում են Ժողովի կողմից և նրանց լիազորությունների ժամկետը սահմանվում է մինչև հաջորդ տարեկան Ժողովի գումարումը: Խորհրդի անդամ կարող է լինել Ընկերության բաժնետեր չհանդիսացող անձը: Խորհրդի անդամ կարող են լինել միայն ֆիզիկական անձինք:

Խորհուրդը ընտրվում է կումուլյատիվ ¥գումարային¤ քվեարկությամբ` բաղկացած առնվազն 5 ¥հինգ¤ անդամից:

- Ընկերության գործունեության ղեկավարումն իրականացնելիս Խորհուրդը.

ա) որոշում է Ընկերության գործունեության հիմնական ուղղությունները և սահմանում է Ընկերության երկարաժամկետ ռազմավարությունը,

բ) հաստատում է ամենամյա ծախսերի նախահաշիվը և դրա կատարողականը ¥այդ թվում նաև` ֆինանսատնտեսական գործունեության պլանը¤,

գ) հաստատում է Ընկերության հաստիքացուցակը և վարչակազմակերպական կառուցվածքը,

դ) ընդունում է այլ կազմակերպություններում մասնակցություն ունենալու կամ այն դադարեցնելու մասին որոշումներ, եթե այդ որոշումներն իրենից խոշոր գործարք չեն ներկայացնում,

ե) նախնական հաստատում է Ընկերության տարեկան հաշվետվությունները,

զ) սահմանում է Ընկերության աուդիտն իրականացնող անձի վճարման չափը,

է) ընդունում է որոշումներ Ընկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործման մասին,

ը) ստեղծում է Ընկերության առանձնացված ստորաբաժանումներ և հիմնարկներ, դադարեցնում է դրանց գործունեությունը, հաստատում է դրանց կանոնադրությունները,

թ) ստեղծում է Խորհրդին կից հանձնաժողովներ և սահմանում է նրանց խնդիրները և գործառույթները,

ժա) ընդունում է որոշում Ընկերության վերստուգող հանձնաժողովի կողմից Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգում անցկացնելու մասին,

ժբ) հավանության է արժանացնում Խորհրդի անդամներին վճարվող պարգևավճարների չափի սահմանման հիմնական չափանիշները,

ժբ) հաստատում է Ընկերության սոցիալական ծրագրերը,

ժգ) որոշում է Ընկերության գույքի շուկայական արժեքը,

ժդ)սահմանում է Ընկերության բաժնետոմսերով միջանկյալ (եռամսյակային կամ կիսամյակային) շահութաբաժինների չափը և վճարման կարգը,

ժգ) սահմանում է Ընկերությունում պարտադիր պահպանվող փաստաթղթերի ցանկը,

ժդ)Ընկերության կողմից հոլդինգային ընկերություններում, առևտրային կազմակերպություններում այլ միություններում մասնակցությունը:

- Խորհուրդը ձևավորում է Ընկերության գործադիր մարմինը, այդ թվում` նշանակում է Ընկերության Գլխավոր տնօրենին և ընդունում է նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցնելու մասին որոշում:

- Խորհուրդը լուծում է Ժողովի նախապատրաստման և գումարման հետ կապված հարցերը, այդ թվում`

  ա) ընդունում է Ժողովի գումարման մասին որոշումը,

  բ) հաստատում է Ժողովի օրակարգը,

  գ) հաստատում է Ժողովին մանակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակի կազմման ամսաթիվը,

  դ) ընդունում է Ժողովի նախապատրաստման և անցկացման հետ կապված այլ հարցերի վերաբերյալ որոշումներ:

- Խորհուրդն օժտված է Ընկերության բաժնետոմսերի և այլ ներդրումային արժեթղթերի տեղաբաշխման և ձեռքբերման ¥հետ գնման¤ հետ կապված իրավասություններով, այդ թվում` որոշումներ է ընդունում հետևյալ հարցերի վերաբերյալ`

  ա) Ընկերության բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի ավելացում, որի ծավալը չի գերազանցում Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի 25 տոկոսը,

  բ) տեղաբաշխել պարտատոմսեր և այլ ներդրումային արժեթղթեր, այն ծավալով, որը չի սահմանափակվում գործող օրենսդրությամբ,

  գ) հաստատում է արժեթղթերի թողարկման մասին որոշումը, արժեթղթերի ազդագիրը և կատարում է դրանցում փոփոխություններ և լրացումներ,

  դ) Օրենքով սահմանված դեպքերում սահմանում է արժեթղթերի տեղաբաշխման և ձեռքբերման ¥հետ գնման¤ գները,

  ե) ձեռք բերել Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերը մինչև Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ընդհանուր քանակի 10 տոկոսի չափով,

  զ) Օրենքով սահմանված դեպքերում ձեռք բերել Ընկերության տեղաբաշխված պարտատոմսերը և այլ արժեթղթերը,

  է) հաստատում է մարման նպատակով բաժնետոմսերի ձեռք բերման արդյունքների հաշվետվությունը և բաժնետոմսերի մարման արդյունքների հաշվետվությունը:

- Խորհուրդը ընդունում է որոշումներ հետևյալ գործարքների ¥կամ մի քանի փոխկապակցված գործարքների¤ կնքման, փոփոխման և լուծման վերաբերյալ`

  ա) Ընկերության ոչ ստանդարտ գործառնություններ ¥որոնք նախատեսված չեն ֆինանսատնտեսական պլանով¤ կամ այն գործարքները, որոնք կհանգեցնեն կամ կարող են հանգեցնել Ընկերության ֆինանսատնտեսական պլանի ճշգրտմանը,

բ) Ընկերության հաշվեկշռում հաշվառվող Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի տնօրինման հետ կապված գործարքները,

գ) այլ կազմակերպությունների բաժնետոմսերով ¥բաժնեմասերով, փայերով¤ կատարվող գործարքները,

դ) ռազմավարական գործընկերոջ հետ համագործակցության, այդ թվում` ցանկացած նախագծում և գործարքում համատեղ մասնակցության վերաբերյալ պայմանագրի, հուշագրի կամ այլ համաձայնագրի կնքումը,

ե) տասը միլիոն ՀՀ դրամ և ավելի ծավալի Ընկերության անհատույց գործարքները ¥այդ թվում` բարեգործություն, նվիրատվություն¤ կամ Ընկերության ոչ առևտրային կազմակերպություններում անդամակցելու նպատակով անդամավճարները ¥և այլ ծախսերը¤:

- Խորհուրդը Ժողովին տալիս է առաջարկություն հետևյալ հարցերի վերաբերյալ`

ա) Ընկերության ֆինանսական տարվա արդյունքներով շահույթի և վնասների բաշխման կարգի վերաբերյալ,

բ) վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և դրա վճարման կարգի վերաբերյալ,

գ) Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամներին վճարվող պարգևավճարների և փոխհատուցումների չափերի վերաբերյալ:

- Խորհուրդը նշանակում է Կորպորատիվ քարտուղարին և Խորհրդի քարտուղարին:

- Խորհուրդն Խորհրդի անդամներից ընտրում է Խորհրդի նախագահին` Խորհրդի բոլոր անդամների ձայների մեծամասնությամբ` հաշվի չառնելով Խորհրդից դուրս եկած անդամների ձայները: Խորհուրդն իրավունք ունի ցանկացած ժամանակ վերընտրել Խորհրդի նախագահ:

- Խորհուրդն ընդունում է որոշումներ այլ հարցերի վերաբերյալ, որոնք համաձայն Օրենքի կամ Ընկերության կանոնադրության պատկանում են Խոհրդի իրավասությանը: Խորհրդին պատկանող հարցերը չեն կարող փոխանցվել Ընկերության Գլխավոր տնօրենի լուծմանը:

<u>Գլխավոր տնօրենը</u>

Գլխավոր տնօրենն իրականացնում է միանձնյա գործադիր մարմնի լիազորությունները և գործում է Ընկերության կանոնադրության և Խորհրդի կողմից հաստատված Գլխավոր տնօրենի մասին կանոնակարգի հիման վրա:

Գլխավոր տնօրենը հաշվետու է Ժողովին և Խորհրդին:

Գլխավոր տնօրենը նշանակվում է Խորհրդի կողմից 3 ¥երեք¤ տարի ժամկետով:

Գլխավոր տնօրենը`

ա) Ընկերության անունից գործում է առանց լիազորագրի,

բ) ներկայացնում է Ընկերության շահերը ՀՀ-ում և արտասահմանում,

դ) Ընկերության անունից կնքում է գործարքներ՝ Օրենքով և Ընկերության կանոնադրությամբ սահմանված լիազորությունների շրջանակում,

դ) իր իրավասությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ և տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

ե) Ընկերության շահերը ներկայացնելու համար տալիս է լիազորագրեր,

զ) բանկերում բացում է Ընկերության հաշվարկային և այլ հաշիվներ,

է) կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային,

ը) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին,

թ) աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:

Գլխավոր տնօրենը ապահովում է Ժողովի և Խորհրդի որոշումների կատարումը:

Գլխավոր տնօրենի իրավասություններին պատկանում են հետևյալ հարցերը՝

ա) Ժողովի և Խորհրդի որոշումներին համապատասխան Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումը,

բ) տարեկան հաշվետվությունների, տարեկան ֆինանսական հաշվետվությունների, այդ թվում՝ շահույթի ¥վնասի¤ բաշխման և շահութաբաժինների վճարման հաշվետվությունների կազմման ղեկավարումը՝ Խորհրդին ներկայացնելու համար,

գ) գործարքների ¥կամ մի քանի փոխկապակցված գործարքների¤ կնքման, փոփոխման և լուծման վերաբերյալ որոշումների ընդունումը ¥այդ թվում՝ բնականոն գործունեության ընթացքում կատարվող գործարքների¤, բացառությամբ այն գործարքների, որոնք կնքելու որոշումն ընդունելն Օրենքով և Ընկերության կանոնադրությամբ վերապահված է Ժողովին կամ Խորհրդին,

դ) Ընկերության առևտրային գաղտնիք կազմող կամ ծառայողական տեղեկությունների ցանկի սահմանումը,

ե) ներքին հսկողության գործընթացի կազմակերպումը և իրականացումը,

զ) Ընկերության անունից բոլոր փաստաթղթերի ստորագրումը, բացառությամբ այն փաստաթղթերի որոնց ստորագրման իրավասությունը Ընկերության կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով վերապահված է Ընկերության պաշտոնատար այլ անձանց,

է) Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության պլանների մշակումը՝ Խորհրդի հաստատմանը ներկայացնելու համար,

ը) Ընկերության Ժողովի և Խորհրդի իրավասությանը չվերապահված Ընկերության ներքին փաստաթղթերի հաստատումը,

թ) Օրենքով և Ընկերության կանոնադրությամբ Ընկերության Ժողովի և Խորհրդի իրավասությանը չվերապահված այլ հարցերը:

Գլխավոր տնօրենը պարտավոր է Խորհրդին տեղեկացնել ցանկացած իրադարձության մասին, որն առաջացրել է կամ կարող է առաջացնել.

ա) Ընկերության կողմից հաստատված զարգացման ռազմավարության փոփոխություն,

բ) Ընկերության ֆինանսատնտեսական պլանի կամ ամենամյա ծախսերի նախահաշվի փոփոխություն,

գ) Ընկերության արտադրական ցուցանիշների էական փոփոխություն,

դ) կազմակերպչական էական փոփոխություններ,

ե) Ժողովի կամ Խորհրդի որոշումներից էական շեղումներ:

Գլխավոր տնօրենը պարտավոր է մասնակցել Խորհրդի նիստերին և Խորհրդի անդամների հարցումներին ներկայացնել Ընկերության գործունեության բոլոր ոլորտների վերաբերյալ տեղեկություններ:

Վերստուգող հանձնաժողովը

Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկողությունն իրականացնում է Ընկերության վերստուգող հանձնաժողովը:

Ընկերության վերստուգող հանձնաժողովը բաղկացած է 3 (երեք) անդամից, որոնք ընտրվում են Ընկերության Ժողովի կողմից 3 տարի ժամկետով:

Այն դեպքում, երբ Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների թիվը նվազում է երեքից Խորհուրդը պարտավոր է գումարել արտահերթ Ժողով՝ վերստուգող հանձնաժողովի ընտրության համար: Վերստուգող հանձնաժողովի մնացած անդամներն իրականացնում են իրենց գործառույթները մինչև Վերստուգող հանձնաժողովի նոր կազմի ընտրությունը:

Վերստուգող հանձնաժողովի անդամ կարող են լինել ինչպես Ընկերությանբաժնետերերը, այնպես էլ բաժնետերերի կողմից առաջադրված ցանկացած գործունակ ֆիզիկական անձ: Ընկերության Վերստուգող հանձնաժողովի անդամը չի կարող միաժամանակ լինել Խորհրդի անդամ, ինչպես նաև Ընկերության կառավարման մարմիններում զբաղեցնել այլ պաշտոն:

Վերստուգող հանձնաժողովի իրավասությունների մեջ մտնում են.

ա) Ընկերության ֆինանսական հաշվետվությունների, հաշվապահական փաստաթղթերի, գույքագրման ակտերի ¥եզրակացությունների¤ ստուգումը, ինչպես նաև վերը նշված փաստաթղթերի համեմատությունը հաշվապահական հաշվառման առաջնային տվյալների հետ,

բ) հաշվապահական, հարկային, կառավարչական և վիճակագրական հաշվառման վարման ճշգրտության և ամբողջականության վերլուծությունը,

գ) Խորհրդի կողմից հաստատված ֆինանսատնտեսական պլանների կատարման համապա-տասխանության ստուգումը,

դ) Ընկերության Ժողովի կողմից հաստատման ենթակա հաշվետու ֆինանսական տարվա համար Ընկերության շահույթի բաշխման կարգի համապատասխանության ստուգումը,

ե) մատակարարներին, պետական բյուջե և արտաբյուջետային հիմնադրամների վճարումների, շահութաբաժինների, պարտատոմսերի տոկոսների և այլ պարտավորությունների մարման ուղղությամբ հաշվարկների և վճարումների ժամանակին կատարման և համապատասխանության ստուգումը,

զ) տարեկան հաշվետվություններում, տարեկան ֆինանսական հաշվետվություններում, հարկային, վիճակագրության և այլ պետական մարմիններին ներկայացվող փաստաթղթերում արտացոլված տեղեկությունների արժանահավատության հաստատումը,

է) Գլխավոր տնօրենի կողմից կքված պայմանագրերի համապատասխանության ստուգումը,

ը) Խորհրդի, Գլխավոր տնօրենի կողմից ընդունված որոշումների՝ Ընկերության կանոնադրությանը և Ժողովի որոշումներին համապատասխանության ստուգումը,

թ) Ժողովի կողմից ընդունված որոշումների՝ Օրենքին և Ընկերության կանոնադրությանը համապատասխանության վերլուծությունը:

Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգումն իրականացվում է Ընկերության տարեկան գործունեության արդյունքներով, ինչպես նաև Ընկերության վերստուգող հանձնաժողովի նախաձեռնությամբ, Ժողովի և Խորհրդի որոշմամբ կամ Ընկերության քվեարկող բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսի սեփականատեր բաժնետերերի /բաժնետիրոջ/ պահանջով:

Ընկերության վերստուգող հանձանժողովն իրավունք ունի պահանջել Ընկերության արտահերթ Ժողովի կամ Խորհրդի նիստի գումարում:

<u>Կորպորատիվ քարտուղարը</u>

Կորպորատիվ քարտուղարը նշանակվում է Խորհրդի կողմից:

Կորպորատիվ քարտուղարն ապահովում է Ժողովի նախապատրաստումն ու անցկացումը, Խորհրդի, Խորհրդի հանձնաժողովների աշխատանքը, իրականացնում է Ընկերության վերաբերյալ տեղեկությունների պահպանումը և բացահայտումը, կազմակերպում է Ընկերության և Բաժնետերերի, կառավարման այլ մարմինների և Ընկերության պաշտոնատար անձանց միջև օպերատիվ համագործակցություն, ինչպես նաև իրականացնում է այլ գործառույթներ Կորպորատիվ քարտուղարի մասին կանոնակարգին համապատասխան:

3. Կառավարման մարմինների իրավունքներին, պարտականություններին, կազմավորման և գործունեության իրականացման կարգի և այլ սկզբունքային հարցերի վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկատվություն կարելի է ստանալ Ընկերության կանոնադրության, ինչպես նաև Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կարգավորող ներքին կանոնակարգերից:

4. Ստորև ներկայացվում են կառավարման մարմինների անդամների վերաբերյալ տեղեկություններ, ներառյալ՝ անունը, ազգանունը, բնակության վայրը, զբաղեցրած պաշտոնը, իրավասություններն ու պարտականությունները, նրանցից յուրաքանչյուրի ծավալած գործունեությունը Ընկերության կազմից դուրս և այլն:

Խորհրդի նախագահն է Արայիկ Հարությունյանը:

| *Տեղեկատվություն կառավարման մարմիններում ընդգրկված անձանց վերաբերյալ* | |
|---|---|
| Տնօրենների Խորհուրդ | |
| **Անուն, ազգանուն** | Արայիկ Վլադիմիրի Հարությունյան |
| **Բնակության վայրը** | ԱՀ, ք. Ստեփանակերտ, |
| **Զբաղեցրած պաշտոնը** | Խորհրդի նախագահ Ընկերության տնօրենների խորհրդի նախագահ՝ 2018թ.-ից մինչ օրս |
| **Պաշտոնավարման սկիզբը և ավարտը** | Որպես՝<br>1.Ընկերության տնօրենների խորհրդի նախագահ՝ 09.07.2018թ.-ից մինչօրս<br><br>Խորհրդի նախագահը ընտրվում է Խորհրդի անդամներից վերջիններիս ձայների մեծամասնությամբ: Խորհրդի անդամի պաշտոնավարման ավարտի հստակ ժամկետ սահմանված չէ. Խորհուրդը ցանկացած ժամանակ իրավունք ունի վերընտրել Խորհրդի նախագահի: |
| **Իրավասություններն ու պարտականությունները** | Խորհրդի նախագահի իրավասությունները և պարտականությունները սահմանվում են Ընկերության կանոնադրությամբ և «Տնօրենների խորհրդի մասին» կանոնակարգով:<br>Խորհրդի նախագահը.<br>ա) կազմակերպում է Խորհրդի աշխատանքները, գումարում և նախագահում է Խորհրդի նիստերը, ապահովում է նիստերի ընթացքում արձանագրության վարումը,<br>բ) պատասխանատու է Խորհրդի նիստերի օրակարգերի ձևավորման համար,<br>գ) Խորհրդի նիստերը կազմակերպում է այնպես, որ քննարկումները կրեն բաց, բազմակողմանի բնույթ և նպաստեն համաձայնեցված որոշումների ընդունմանը, |

| | |
|---|---|
| | Դ) կազմակերպում է օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ առավել արդյունավետ որոշումների մշակումը և անհրաժեշտության դեպքում այդ հարցերի ազատ քննարկում,<br>Ե) ձեռնարկում է անհրաժեշտ գործողություններ, որոնք կապահովեն Խորհրդի անդամներին օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունների ժամանակին տրամադրումը,<br>զ) Խորհրդի նիստերում խրախուսում է Խորհրդի անդամներին՝ օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ իրենց կարծիքն ազատ արտահայտելու համար,<br>Է) նախաձեռնում է Խորհրդի նիստում քննարկվող հարցի վերաբերյալ որոշման նախագծի կազմումը,<br>ը) ապահովում է Խորհրդի անդամին Խորհրդի նիստում արտահայտել քննարկվող հարցի վերաբերյալ իր տեսակետը և նպաստել Ընկերության շահերից բխող համաձայնեցված որոշման կայացմանը,<br>թ) ապահովում է մշտական կապեր Ընկերության այլ մարմինների և պաշտոնատար անձանց հետ ոչ միայն Խորհրդի կողմից որոշումների ընդունման համար ժամանակին, առավել ամբողջական և արժանահավատ տեղեկություններ ստանալու նպատակով, այլ նաև այդ մարմինների և պաշտոնատար անձանց միջև կամ երրորդ անձանց հետ արդյունավետ փոխարաբերություններ ձևավորելու նպատակով,<br>ժ) ապահովում է Խորհրդին կից հանձնաժողովների արդյունավետ աշխատանքները և ելնելով Խորհրդի անդամի մասնագիտական և անձնական որակներից՝ առաջարկություններ է ներկայացնում Խորհրդի անդամներին ընդգրկվել այս կամ այն հանձնաժողովում:<br>ժա) նախագահում է Ժողովում և իրականացնում է Ընկերության ներքին իրավական ակտերով այլ լիազորություններ: |
| **Ծավալած գործունեությունը՝ Ընկերության կազմից դուրս** | Ներկայումս զբաղեցնում է «Ազատ Հայրենիք» կուսակցության նախագահի պաշտոնը: |
| **Մասնագիտությունը** | Տնտեսագետ |
| **Նախորդ 5 տարիների ընթացքում այլ կազմակերպու-թյուններում զբաղեցրած պաշտոնները** | 2007թ.-ից 2017թ. զբաղեցրել է ԱՀ վարչապետի պաշտոնը :<br>2017թ.- ից 2018թ. զբաղեցրել է ԱՀ պետական նախարարի պաշտոնը: |

**Նախորդ 5 տարիների ընթացքում խարդախության համար դատվածություն չունի**

| |
|---|
| Նախորդ 5 տարիների ընթացքում սնանկության, լուծարման կամ սնանկ ճանաչված անձի ակտիվների կառավարման գործընթացների հետ առնչություն չի ունեցել<br><br>Նախորդ 5 տարիների ընթացքում պետական մարմնի կամ կարգավորող /վերահսկող/ մարմնի կողմից պատասխանատվության չի ենթարկվել և դատարանի կողմից որևէ թողարկողի կառավարման մարմնի անդամի պաշտոն զբաղեցնելու իրավունքից չի զրկվել |

Խորհրդի անդամ է Րաֆֆի Բալյոզյանը

| *Տեղեկատվություն կառավարման մարմիններում ընդգրկված անձանց վերաբերյալ* | |
|---|---|
| Տնօրենների Խորհուրդ | |
| Անուն, ազգանուն | Րաֆֆի Բալյոզյան |
| Բնակության վայրը | Ֆրանսիա |
| Զբաղեցրած պաշտոնը | Խորհրդի անդամ |
| Պաշտոնավարման սկիզբը և ավարտը | Ընկերության տնօրենների խորհրդի անդամ՝ 2012թ.-ից մինչ օրս<br><br>Խորհրդի անդամների լիազորությունները դադարում են Խորհրդի հաջորդ կազմի ընտրվելուց հետո, սակայն Խորհրդի անդամների լիազորությունների ընդհանուր տևողությունը չի սահմանափակվում: |
| Իրավասություններն ու պարտականությունները | Խորհրդի անդամի իրավասությունները և պարտականությունները սահմանվում են Ընկերության կանոնադրությամբ և «Տնօրենների խորհրդի մասին» կանոնակարգով:<br><br>Խորհրդի անդամն իրավունք ունի.<br><br>ա) Ընկերության պաշտոնատար անձանցից և աշխատակիցներից պահաջել Ընկերության գործունեությանը վերաբերվող ցանկացած տեղեկատվություն ¥փաստաթղթեր և նյութեր¤,<br><br>բ) իր պարտականությունների իրականացման համար ստանալ պարգևատրում և/կամ Խորհրդի անդամի գործառույթների իրականացման հետ կապված ծախսերի փոխհատուցում՝ բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ սահմանված դեպքում և չափով,<br><br>գ) ծանոթանալ Խորհրդի և Ընկերության այլ կոլեգիալ մարմնի նիստերի արձանագրություններին և ստանալ դրանց պատճենները,<br><br>դ) պահանջել Խորհրդի օրակարգում ընդգրկված հարցերի և ընդունված որոշումների վերաբերյալ իր հատուկ կարծիքի ներառումը Խորհդի նիստի արձանագրության մեջ,<br><br>ե) մասնակցել Ընկերության կոլեգիալ գործադիր մարմինների նիստերին:<br><br>Խորհրդի անդամը պարտավոր է. |

ա) գործել Խորհրդի նպատակներից և խնդիրներից բխող իր իրավունքների սահմաններում,

բ) գործել խելամտորեն և բարեխղճորեն՝ ելնել Ընկերության շահերից, այսինքն՝ ցուցաբերել հոգատարություն և շրջահայացություն, որոնք կարելի է սպասել լավագույն ղեկավարից, և իր պարտականությունների պատշաճ կատարման նպատակով ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ

գ) չհրապարակել Ընկերության գործունեության մասին իրեն հայտնի դարձած գաղտնի տեղեկությունները,

դ) անհետաձգելի հարցերի լուծման համար նախաձեռնել Խորհրդի նիստի գումարում,

ե) ներկա գտնվել Խորհրդի նիստերին,

զ) մասնակցել Խորհրդի կողմից որոշումների ընդունմանը՝ օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ քվեարկելու միջոցով,

է) ընդունել հիմնավորված որոշումներ, որի համար պարտավոր է ուսումնասիրել բոլոր անհրաժեշտ տեղեկությունները ¥նյութերը¤, ընդունվող որոշմանն առնչվող տեղեկությունների քննություն անցկացնել և իրազեկել Խորհրդի մյուս անդամներին,

ը) որոշումների ընդունման ժամանակ գնահատել ռիսկերը և բացասական հետևանքները,

թ) ժամանակին հաղորդել Ընկերությանն իր հետ փոխկապված անձանց և նրանց կազմում տեղի ունեցած փոփոխությունների մասին,

ժ) Խորհրդին, Ընկերության վերստուգող հանձնաժողովին և աուդիտորին տեղեկություններ տրամադրել այն իրավաբանական անձանց մասին, որտեղ նա ինքնուրույն կամ իր փոխկապակցված անձանց հետ համատեղ տիրապետում է քվեարկող բաժնետոմսերի ¥բաժնեմասերի, փայերի¤ 10 և ավելի տոկոսին,

ժա) Խորհրդին, Ընկերության վերստուգող հանձնաժողովին և աուդիտորին տեղեկություններ տրամադրել այն իրավաբանական անձանց մասին, որոնց կառավարման մարմիններում նա զբաղեցնում է պաշտոններ,

ժբ) Խորհրդին, Ընկերության վերստուգող հանձնաժողովին և աուդիտորին տեղեկություններ տրամադրել այն գործարքների մասին, որոնցում նա կարող է ճանաչվել որպես շահագրգիռ անձ,

ժգ) ձեռնպահ մնալ այն որոշումների ընդունման ժամանակ անցկացվող քվեարկություններից, որոնցում նա ունի անձնական շահագրգռվածություն,

ժդ) Խորհրդի քարտուղարի միջոցով Խորհրդին անմիջապես բացահայտել իր շահագրգռվածության փաստի և դրա առաջացման հիմքերի մասին,

ժե) գրավոր ծանուցել Խորհրդին Ընկերության արժեթղթերով ¥բաժնետոմսերով¤ գործարքներ կատարելու իր մտադրությունների մասին, ինչպես նաև բացահայտել այդ արժեթղթերով կատարված գործարքների մասին տեղեկություններ,

ժզ) մասնակցել Խորհրդի կողմից առաջարկվող ծրագրերի և նախագծերի փորձաքննության անցկացմանը,

ժէ) Խորհրդի հանձնարարությամբ պատրաստել Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության բարելավման առաջարկներ,

ժը) Խորհրդի անդամներին իրազեկել իրեն հայտնի դարձած Ընկերության աշխատակիցների, այդ թվում՝ պաշտոնատար անձանց կողմից օրենսդրության, Ընկերության կանոնադրության և ներքին այլ իրավական ակտերի պահանջների խախտումների փաստերի մասին,

ժթ) պատրաստել իր իրավասությանը պատկանող հարցեր և ներկայացնել Խորհրդի քննարկմանը,

ի) ձևավորել իր կածիքը Ընկերության տարեկան հաշվետվությունների, այդ թվում՝ տարեկան ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ,

իա) ներկա գտնվել բաժնետերերի ընդհանուր ժողովին և պատասխանել ժողովի մասնակիցների հարցերին:

| | |
|---|---|
| Ծավալած գործունեությունը՝ Ընկերության կազմից դուրս | Ներկայումս զբաղեցնում է «Ֆրանկ Մյուլեր Գրուպ» ընկերության խորհրդատվական ստորաբաժանում հանդիսացող, «Գենթոդ Գլոբալ Վելթ Մենեջմենթ» ընկերության ներդրումների գծով խորհրդատուի պաշտոնը: |
| Մասնագիտությունը | Ֆինանսիստ,մարքեթոլոգ |
| Նախորդ 5 տարիների ընթացքում այլ կազմակերպու-թյուններում զբաղեցրած պաշտոնները | |

Նախորդ 5 տարիների ընթացքում խարդախության համար դատվածություն չունի

Նախորդ 5 տարիների ընթացքում սնանկության, լուծարման կամ սնանկ ճանաչված անձի ակտիվների կառավարման գործընթացների հետ առնչություն չի ունեցել

Նախորդ 5 տարիների ընթացքում պետական մարմնի կամ կարգավորող ¥վերահսկող¤ մարմնի կողմից պատասխանատվության չի ենթարկվել և դատարանի կողմից որևէ թողարկողի կառավարման մարմնի անդամի պաշտոն զբաղեցնելու իրավունքից չի զրկվել

Խորհրդի անդամ է Կարեն Արաբյան

| *Տեղեկատվություն կառավարման մարմիններում ընդգրկված անձանց վերաբերյալ* | |
|---|---|
| **Տնօրենների Խորհուրդ** | |
| **Անուն, ազգանուն** | Կարեն Արաբյան |
| **Բնակության վայրը** | ՀՀ, ք. Երևան |
| **Զբաղեցրած պաշտոնը** | Խորհրդի անդամ, |
| **Պաշտոնավարման սկիզբը և ավարտը** | Ընկերության տնօրենների խորհրդի անդամ՝ 2012թ.-ից մինչ օրս: |
| | Խորհրդի անդամների լիազորությունները դադարում են Խորհրդի հաջորդ կազմի ընտրվելուց հետո, սակայն Խորհրդի անդամների լիազորությունների ընդհանուր տևողությունը չի սահմանափակվում: |
| **Իրավասություններն ու պարտականությունները** | Խորհրդի անդամի իրավասություններն ու պարտականությունները մանրամասն ներկայացված են Խորհրդի անդամ Րաֆֆի Բալըոզյանի իրավասություններ և պարտականություններ բաժնում:<br><br>Գլխավոր տնօրենի իրավասություններն ու պարտկանություններն ներկայացված են «Կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները» բաժնի 2-րդ կետի Գլխավոր տնօրենի վերաբերյալ մասում մասում: |
| **Ծավալած գործունեությունը՝ Ընկերության կազմից դուրս** | Ներկայումս զբաղեցնում է «Ամբեր Կապիտալ» ՓԲԸ –ի տնօրենի պաշտոնը |
| **Մասնագիտությունը** | Ճարտարագետ |
| **Նախորդ 5 տարիների ընթացքում այլ կազմակեր-պություններում զբաղեցրած պաշտոնները** | «Ամբեր Կապիտալ» ՓԲԸ տնօրեն: |
| **Նախորդ 5 տարիների ընթացքում խարդախության համար դատվածություն չունի** | |
| **Նախորդ 5 տարիների ընթացքում սնանկության, լուծարման կամ սնանկ ճանաչված անձի ակտիվների կառավարման գործընթացների հետ առնչություն չի ունեցել** | |
| **Նախորդ 5 տարիների ընթացքում պետական մարմնի կամ կարգավորող ¥վերահսկող¤ մարմնի կողմից պատասխանատվության չի ենթարկվել և դատարանի կողմից որևէ թողարկողի կառավարման մարմնի անդամի պաշտոն զբաղեցնելու իրավունքից չի զրկվել** | |

Խորհրդի անդամ է Արա Ղոնյանը

| *Տեղեկատվություն կառավարման մարմիններում ընդգրկված անձանց վերաբերյալ* | |
|---|---|
| Տնօրենների Խորհուրդ | |
| **Անուն, ազգանուն** | Արա Ղոնյան |
| **Բնակության վայրը** | ՀՀ, ք. Կապան |
| **Զբաղեցրած պաշտոնը** | Խորհրդի անդամ |
| **Պաշտոնավարման սկիզբը և ավարտը** | Ընկերության տնօրենների խորհրդի անդամ՝ 2013թ.-ից մինչ օրս:<br><br>Խորհրդի անդամների լիազորությունների ընդհանուր տևողությունը չի սահմանափակվում: Խորհրդի անդամների լիազորությունները դադարում են Խորհրդի հաջորդ կազմի ընտրվելուց հետո: |
| **Իրավասություններն ու պարտականությունները** | Խորհրդի անդամի իրավունքներն ու պարտականությունները մանրամասն ներկայացված են Խորհրդի անդամ Րաֆֆի Բալյոզյանի իրավասություններ և պարտականություններ բաժնում: |
| **Ծավալած գործունեությունը՝ Ընկերության կազմից դուրս** | Ներկայումս զբաղեցնում է «Զանգեզուրի Պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի Իրավապայմանագրային ծառայության պետի պաշտոնը |
| **Մասնագիտությունը** | Իրավաբան |
| **Նախորդ 5 տարիների ընթացքում այլ կազմակերպու-թյուններում զբաղեցրած պաշտոնները** | «Զանգեզուրի Պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի Իրավապայմանագրային ծառայության պետ: |
| **Նախորդ 5 տարիների ընթացքում խարդախության համար դատվածություն չունի** | |
| **Նախորդ 5 տարիների ընթացքում սնանկության, լուծարման կամ սնանկ ճանաչված անձի ակտիվների կառավարման գործընթացների հետ առնչություն չի ունեցել** | |
| **Նախորդ 5 տարիների ընթացքում պետական մարմնի կամ կարգավորող ¥վերահսկող¤ մարմնի կողմից պատասխանատվության չի ենթարկվել և դատարանի կողմից որևէ թողարկողի կառավարման մարմնի անդամի պաշտոն զբաղեցնելու իրավունքից չի զրկվել** | |

Խորհրդի անդամ է Վլադիմիր Շեկոյանը

| *Տեղեկատվություն կառավարման մարմիններում ընդգրկված անձանց վերաբերյալ* | |
|---|---|
| Տնօրենների Խորհուրդ | |
| **Անուն, ազգանուն** | Վլադիմիր Շեկոյան |

| | |
|---|---|
| **Բնակության վայրը** | ԱՄՆ |
| **Զբաղեցրած պաշտոնը** | Խորհրդի անդամ |
| **Պաշտոնավարման սկիզբը և ավարտը** | Ընկերության տնօրենների խորհրդի անդամ` 2017թ.-ից մինչ օրս<br>Խորհրդի անդամների լիազորությունները դադարում են Խորհրդի հաջորդ կազմի ընտրվելուց հետո, սակայն Խորհրդի անդամների լիազորությունների ընդհանուր տևողությունը չի սահմանափակվում: |
| **Իրավասություններն ու պարտականությունները** | Խորհրդի անդամի իրավունքներն ու պարտականությունները մանրամասն ներկայացված են Խորհրդի անդամ Կառլեն Պետրոսյանի իրավասություններ և պարտականություններ բաժնում: |
| **Ծավալած գործունեությունը` Ընկերության կազմից դուրս** | Ներկայումս զբաղեցնում է «ԿԳԱԼ Նյու Ֆռոնթայրս» ՍՊԸ –ի հատուկ խորհրդատուի պաշտոնը |
| **Մասնագիտությունը** | Տնտեսագետ |
| **Նախորդ 5 տարիների ընթացքում այլ կազմակերպու-թյուններում զբաղեցրած պաշտոնները** | «ԿԳԱԼ Բեթեիլիգունգսվերվալթունգս» ՍՊԸ հատուկ խորհրդատու: |
| **Նախորդ 5 տարիների ընթացքում խարդախության համար դատվածություն չունի** | |
| **Նախորդ 5 տարիների ընթացքում սնանկության, լուծարման կամ սնանկ ճանաչված անձի ակտիվների կառավարման գործընթացների հետ առնչություն չի ունեցել** | |
| **Նախորդ 5 տարիների ընթացքում պետական մարմնի կամ կարգավորող ¥վերահսկող¤ մարմնի կողմից պատասխանատվության չի ենթարկվել և դատարանի կողմից որևէ թողարկողի կառավարման մարմնի անդամի պաշտոն զբաղեցնելու իրավունքից չի զրկվել** | |

Խորհրդի անդամ է Մենուա Մկրտչյանը

| *Տեղեկատվություն կառավարման մարմիններում ընդգրկված անձանց վերաբերյալ* | |
|---|---|
| **Տնօրենների Խորհուրդ** | |
| **Անուն, ազգանուն** | Մենուա Մկրտչյան |
| **Բնակության վայրը** | ՌԴ |
| **Զբաղեցրած պաշտոնը** | Խորհրդի անդամ |
| **Պաշտոնավարման սկիզբը և ավարտը** | Ընկերության տնօրենների խորհրդի անդամ` 2018թ.-ից մինչ օրս |

| | |
|---|---|
| | Խորհրդի անդամների լիազորությունները դադարում են Խորհրդի հաջորդ կազմի ընտրվելուց հետո, սակայն Խորհրդի անդամների լիազորությունների ընդհանուր տևողությունը չի սահմանափակվում: |
| **Իրավասություններն ու պարտականությունները** | Խորհրդի անդամի իրավություններն ու պարտականությունները մանրամասն ներկայացված են Խորհրդի անդամ Րաֆֆի Բալյոզյանի իրավասություններ և պարտականություններ բաժնում: |
| **Ծավալած գործունեությունը՝ Ընկերության կազմից դուրս** | Ներկայումս զբաղեցնում է Ռեսո խմբի գլխավոր տնօրենի տեղակալի պաշտոնը |
| **Մասնագիտությունը** | Ֆինանսիստ |
| **Նախորդ 5 տարիների ընթացքում այլ կազմակերպու-թյուններում զբաղեցրած պաշտոնները** | 2010թ. միացել է Ռեսո խմբին՝ ներդրումային ծրագրերի կառավարիչի պաշտոնում: Ռեսո խմբի գլխավոր տնօրենի տեղակալ: |
| **Նախորդ 5 տարիների ընթացքում խարդախության համար դատվածություն չունի** | |
| **Նախորդ 5 տարիների ընթացքում սնանկության, լուծարման կամ սնանկ ճանաչված անձի ակտիվների կառավարման գործընթացների հետ առնչություն չի ունեցել** | |
| **Նախորդ 5 տարիների ընթացքում պետական մարմնի կամ կարգավորող ¥վերահսկող¤ մարմնի կողմից պատասխանատվության չի ենթարկվել և դատարանի կողմից որևէ թողարկողի կառավարման մարմնի անդամի պաշտոն զբաղեցնելու իրավունքից չի զրկվել** | |

Խորհրդի անդամ է Հայկ Բոյաջյանը

| *Տեղեկատվություն կառավարման մարմիններում ընդգրկված անձանց վերաբերյալ* | |
|---|---|
| **Տնօրենների Խորհուրդ** | |
| **Անուն, ազգանուն** | Հայկ Բոյաջյան |
| **Բնակության վայրը** | ՀՀ, ք. Երևան |
| **Զբաղեցրած պաշտոնը** | Խորհրդի անդամ |
| **Պաշտոնավարման սկիզբը և ավարտը** | Ընկերության տնօրենների խորհրդի անդամ՝ 2013թ.-ից մինչ օրս<br>Խորհրդի անդամների լիազորությունները դադարում են Խորհրդի հաջորդ կազմի ընտրվելուց հետո, սակայն Խորհրդի անդամների լիազորությունների ընդհանուր տևողությունը չի սահմանափակվում: |
| **Իրավասություններն ու պարտականությունները** | Խորհրդի անդամի իրավություններն ու պարտականությունները մանրամասն ներկայացված են Խորհրդի անդամ Րաֆֆի Բալյոզյանի իրավասություններ և պարտականություններ բաժնում: |

| | |
|---|---|
| **Ծավալած գործունեությունը՝ Ընկերության կազմից դուրս** | Ներկայումս զբաղեցնում է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ պորտֆելի ավագ կառավարչի պաշտոնը |
| **Մասնագիտությունը** | Տնտեսագետ |
| **Նախորդ 5 տարիների ընթացքում այլ կազմակերպու-թյուններում զբաղեցրած պաշտոնները** | Սկսած 2006թ. աշխատում է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ում: |
| **Նախորդ 5 տարիների ընթացքում խարդախության համար դատվածություն չունի** | |
| **Նախորդ 5 տարիների ընթացքում սնանկության, լուծարման կամ սնանկ ճանաչված անձի ակտիվների կառավարման գործընթացների հետ առնչություն չի ունեցել** | |
| **Նախորդ 5 տարիների ընթացքում պետական մարմնի կամ կարգավորող ¥վերահսկող¤ մարմնի կողմից պատասխանատվության չի ենթարկվել և դատարանի կողմից որևէ թողարկողի կառավարման մարմնի անդամի պաշտոն զբաղեցնելու իրավունքից չի զրկվել** | |

Ընկերության գլխավոր տնօրենն է Վահրամ Բեգլարյանը

| *Տեղեկատվություն կառավարման մարմիններում ընդգրկված անձանց վերաբերյալ* | |
|---|---|
| Գլխավոր տնօրեն | |
| **Անուն, ազգանուն** | Վահրամ Բեգլարյան |
| **Բնակության վայրը** | ԱՀ, ք. Ստեփանակերտ |
| **Զբաղեցրած պաշտոնը** | Գլխավոր տնօրեն |
| **Պաշտոնավարման սկիզբը և ավարտը** | Ընկերության Գլխավոր տնօրեն՝ 2009թ.-ից մինչ օրս |
| | Գլխավոր տնօրենը նշանակվում է Խորհրդի կողմից 3 տարի ժամկետով: |
| **Իրավասություններն ու պարտականությունները** | Գլխավոր տնօրենի իրավասություններն ու պարտականություններն ներկայացված են «Կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները» բաժնի 2-րդ կետի Գլխավոր տնօրենի վերաբերյալ մասում մասում: |
| **Ծավալած գործունեությունը՝ Ընկերության կազմից դուրս** | |

| | |
|---|---|
| Մասնագիտությունը | Ֆինանսիստ |
| Նախորդ 5 տարիների ընթացքում այլ կազմակերպու-թյուններում զբաղեցրած պաշտոնները | 2009թ.-ից մինչ օրս. աշխատում է «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ Գլխավոր տնօրեն: |
| Նախորդ 5 տարիների ընթացքում խարդախության համար դատվածություն չունի | |
| Նախորդ 5 տարիների ընթացքում սնանկության, լուծարման կամ սնանկ ճանաչված անձի ակտիվների կառավարման գործընթացների հետ առնչություն չի ունեցել | |
| Նախորդ 5 տարիների ընթացքում պետական մարմնի կամ կարգավորող ¥վերահսկող¤ մարմնի կողմից պատասխանատվության չի ենթարկվել և դատարանի կողմից որևէ թողարկողի կառավարման մարմնի անդամի պաշտոն զբաղեցնելու իրավունքից չի զրկվել | |

Վերստուգող հանձնաժողովի նախագահն է Արթուր Պետրոսյանը

| *Տեղեկատվություն կառավարման մարմիններում ընդգրկված անձանց վերաբերյալ* | |
|---|---|
| Վերստուգող հանձնաժողով | |
| Անուն, ազգանուն | Արթուր Շահենի Պետրոսյան |
| Բնակության վայրը | ԱՀ, ք. Ստեփանակերտ, Մաշտոցի փողոց 4, բն. 46 |
| Զբաղեցրած պաշտոնը | Վերստուգող հանձնաժողովի նախագահ |
| Պաշտոնավարման սկիզբը և ավարտը | 27.04.2010թ.-ից մինչևօրս:<br><br>Վերստուգող հանձնաժողովի անդամներին ընտրում է Ժողովը 3 տարի ժամկետով. Վերստուգող հանձնաժողովի նախագահն ընտրվում է հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: |
| Իրավասություններն ու պարտականությունները | Վերստուգող հանձնաժողովի նախագահը.<br>- ձևավորում է վերտուգող հանձնաժողով նիստի օրակարգը,<br>- գումարում և անցկացնում է վերտուգող հանձնաժողով նիստը,<br>- կազմակերպում է ընթացիկ աշխատանքները,<br>- Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում, Ընկերության տնօրենների խորհրդի նիստերին և գլխավոր տնօրենին ներկայացնում է Վերստուգող հանձնաժողովը,<br>- ստորագրում է Վերստուգող հանձնաժողովի ¥վերստուգողի¤ փաստաթղթերը,<br>- ստուգումների ընթացքում Ընկերության մարմիններից, կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարներից պահանջել |

| | |
|---|---|
| | ստուգման իրականացման համար անհրաժեշտ տեղեկություններ /նյութեր, փաստաթղթեր/,<br>- պահանջել Ընկերության տնօրենների խորհրդի անդամներից, գլխավոր տնօրենից, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներից, պաշտոնատար այլ անձանցից, նյութական պատասխանատվություն կրող անձանցից, աշխատակիցներից ստուգումների ընթացքում առաջացող հարցերի վերաբերյալ բանավոր և գրավոր բացատրություններ<br>- ստուգման ընթացքում իրեն հայտնի դարձած ծառայողական տեղեկությունները չբացահայտել և պահպանել առևտրային գաղտնիքը<br>- կատարել Ընկերության պաշտոնատար անձանց և աշխատակիցների կողմից թույլ տրված խախտումների արձանագրում,<br>- ներկա գտնվել բաժնետերերի ընդհանուր ժողովին և պատասխանել բաժնետերերի հարցերին,<br>- Վերստուգող հանձնաժողովի գործառույթներից բխող այլ իրավունքներ և պարտականություններ: |
| **Ծավալած գործունեությունը՝ Ընկերության կազմից դուրս** | ԱՀ վարչապետի օգնական |
| **Մասնագիտությունը** | Տնտեսագետ-իրավաբան |
| **Նախորդ 5 տարիների ընթացքում այլ կազմակերպու-թյուններում զբաղեցրած պաշտոնները** | 2007թ. մինչև օրս աշխատում է ԱՀ վարչապետի 1-ին օգնականի պաշտոնում |
| **Նախորդ 5 տարիների ընթացքում խարդախության համար դատվածություն չունի** | |
| **Նախորդ 5 տարիների ընթացքում սնանկության, լուծարման կամ սնանկ ճանաչված անձի ակտիվների կառավարման գործընթացների հետ առնչություն չի ունեցել** | |
| **Նախորդ 5 տարիների ընթացքում պետական մարմնի կամ կարգավորող ¥վերահսկող¤ մարմնի կողմից պատասխանատվության չի ենթարկվել և դատարանի կողմից որևէ թողարկողի կառավարման մարմնի անդամի պաշտոն զբաղեցնելու իրավունքից չի զրկվել** | |

Վերստուգող հանձնաժողովի անդամ է Արթուր Պատվականյանը

***Տեղեկատվություն կառավարման մարմիններում ընդգրկված անձանց վերաբերյալ***

| Վերստուգող հանձնաժողով | |
|---|---|
| Անուն, ազգանուն | Արթուր Պատվականյան |
| Բնակության վայրը | ԱՀ, ք. Ստեփանակերտ, |
| Զբաղեցրած պաշտոնը | Վերստուգող հանձնաժողովի անդամ |
| Պաշտոնավարման սկիզբը և ավարտը | 27.04.2008թ.-ից մինչև օրս:<br>Վերստուգող հանձնաժողովի անդամներին ընտրում է Ժողովը 3 տարի ժամկետով: |
| Իրավասություններն ու պարտականությունները | Վերստուգող հանձնաժողովի գործառույթներն իրականացնելու համար Վերստուգող հանձնաժողովի անդամն լիազորված է հետևյալ իրավասություններով և պարտականություններով՝<br><br>- ստուգումների ընթացքում Ընկերության մարմիններից, կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարներից պահանջել ստուգման իրականացման համար անհրաժեշտ տեղեկություններ /նյութեր, փաստաթղթեր/,<br><br>- պահանջել Ընկերության տնօրենների խորհրդի անդամներից, գլխավոր տնօրենից, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներից, պաշտոնատար այլ անձանցից, նյութական պատասխանատվություն կրող անձանցից, աշխատակիցներից ստուգումների ընթացքում առաջացող հարցերի վերաբերյալ բանավոր և գրավոր բացատրություններ<br><br>- ստուգման ընթացքում իրեն հայտնի դարձած ծառայողական տեղեկությունները չբացահայտել և պահպանել առևտրային գաղտնիքը<br><br>- կատարել Ընկերության պաշտոնատար անձանց և աշխատակիցների կողմից թույլ տրված խախտումների արձանագրում,<br><br>- ներկա գտնվել բաժնետերերի ընդհանուր ժողովին և պատասխանել բաժնետերերի հարցերին,<br><br>- Վերստուգող հանձնաժողովի գործառույթներից բխող այլ իրավունքներ և պարտակոնություններ: |
| Ծավալած գործունեությունը՝ Ընկերության կազմից դուրս | |
| Մասնագիտությունը | Տնտեսագետ |
| Նախորդ 5 տարիների ընթացքում այլ | 2008 թվականից աշխատում է «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ-ում,: |

| | |
|---|---|
| կազմակերպու-<br>թյուններում զբաղեցրած<br>պաշտոնները | |
| **Նախորդ 5 տարիների ընթացքում խարդախության համար դատվածություն չունի** | |
| **Նախորդ 5 տարիների ընթացքում սնանկության, լուծարման կամ սնանկ ճանաչված անձի ակտիվների կառավարման գործընթացների հետ առնչություն չի ունեցել** | |
| **Նախորդ 5 տարիների ընթացքում պետական մարմնի կամ կարգավորող ¥վերահսկող¤ մարմնի կողմից պատասխանատվության չի ենթարկվել և դատարանի կողմից որևէ թողարկողի կառավարման մարմնի անդամի պաշտոն զբաղեցնելու իրավունքից չի զրկվել** | |

Վերստուգող հանձնաժողովի անդամ է Գեղամ Ասատրյանը

| *Տեղեկատվություն կառավարման մարմիններում ընդգրկված անձանց վերաբերյալ* | |
|---|---|
| Վերստուգող հանձնաժողով | |
| **Անուն, ազգանուն** | Գեղամ Ասատրյան |
| **Բնակության վայրը** | ԱՀ, ք. Ստեփանակերտ, |
| **Զբաղեցրած պաշտոնը** | Վերստուգող հանձնաժողովի անդամ |
| **Պաշտոնավարման սկիզբը և ավարտը** | 27.04.207թ.-ից մինչօրս<br><br>Վերստուգող հանձնաժողովի անդամներին ընտրում է Ժողովը 3 տարի ժամկետով: |
| **Իրավասություններն ու պարտականությունները** | Վերստուգող հանձնաժողովի գործառույթներն իրականացնելու համար Վերստուգող հանձնաժողովի անդամը լիազորված է հետևյալ իրավասություններով և պարտականություններով՝<br><br>- ստուգումների ընթացքում Ընկերության կառավարման մարմիններից, կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարներից պահանջել ստուգման իրականացման համար անհրաժեշտ տեղեկություններ /նյութեր, փաստաթղթեր/,<br><br>- պահանջել Ընկերության տնօրենների խորհրդի անդամներից, գլխավոր տնօրենից, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներից, պաշտոնատար այլ անձանցից, նյութական պատասխանատվություն կրող անձանցից, աշխատակիցներից ստուգումների ընթացքում առաջացող հարցերի վերաբերյալ բանավոր և գրավոր բացատրություններ |

| | |
|---|---|
| | - ստուգման ընթացքում իրեն հայտնի դարձած ծառայողական տեղեկությունները չբացահայտել և պահպանել առևտրային գաղտնիքը<br><br>- կատարել Ընկերության պաշտոնատար անձանց և աշխատակիցների կողմից թույլ տրված խախտումների արձանագրում,<br><br>- ներկա գտնվել բաժնետերերի ընդհանուր ժողովին և պատասխանել բաժնետերերի հարցերին,<br><br>- Վերստուգող հանձնաժողովի գործառույթներից բխող այլ իրավուքներ և պարտակնություններ: |
| **Ծավալած գործունեությունը՝ Ընկերության կազմից դուրս** | 2018թ. սկսած աշխատում է ԱՀ Ֆինանսների նախարարության Պետական գնումների գործընթացի կարգավորման բաժնում՝ որպես բաժնի պետ վերահսկող |
| **Մասնագիտությունը** | Ֆինանսներ և վարկ |
| **Նախորդ 5 տարիների ընթացքում այլ կազմակերպու-թյուններում զբաղեցրած պաշտոնները** | 2014-2018թթ. աշխատել է ԱՀ Ֆինանսների նախարարության Պետական գնումների գործընթացի կարգավորման բաժնում՝ որպես վերահսկող: |
| **Նախորդ 5 տարիների ընթացքում խարդախության համար դատվածություն չունի** | |
| **Նախորդ 5 տարիների ընթացքում սնանկության, լուծարման կամ սնանկ ճանաչված անձի ակտիվների կառավարման գործընթացների հետ առնչություն չի ունեցել** | |
| **Նախորդ 5 տարիների ընթացքում պետական մարմնի կամ կարգավորող ¥վերահսկող¤ մարմնի կողմից պատասխանատվության չի ենթարկվել և դատարանի կողմից որևէ թողարկողի կառավարման մարմնի անդամի պաշտոն զբաղեցնելու իրավունքից չի զրկվել** | |

Կորպորատիվ քարտուղարն է Սերյոժա Մնացականյանը

| Տեղեկատվություն կառավարման մարմիններում ընդգրկված անձանց վերաբերյալ | |
|---|---|
| Կորպորատիվ քարտուղար | |
| **Անուն, ազգանուն** | Սերյոժա Մնացականյան |
| **Բնակության վայրը** | ԱՀ, ք. Ստեփանակերտ, |
| **Զբաղեցրած պաշտոնը** | Կորպորատիվ քարտուղար |
| **Պաշտոնավարման սկիզբը և ավարտը** | 27.12.2016թ.-ից մինչև օրս<br><br>Կորպորատիվ քատրուղարին նշանակում և ազատում է Խորհուրդը: Վերջինիս գործունեության ժամկետը չի սահմանափակվում: |

| | |
|---|---|
| **Իրավասություններն ու պարտականությունները** | - Կորպորատիվ քարտուղարն ապահովում է.<br>- Ընկերության Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակի կազմումը,<br>- շահաբաժին ստանալու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակի կազմումը,<br>- «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում, բաժնետոմսերի հետ գնման պահանջի իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակի կազմումը,<br>- լրացուցիչ բաժնետոմսերի կամ բաժնետոմսերի փոխարկվող այլ արժեթղթերի ձեռքբերման նախապատվության իրավունք ունեցող անձանց ցուցակի կազմումը,<br>- Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերին տրամադրման ենթակա տեղեկությունների (նյութերի) նախապատրաստումը և դրանց բաժնետերերին հասու դարձնելը,<br>- Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակից քաղվածքի և տեղեկանքի տրամադրումը,<br>- Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակում ընդգրկված բաժնետերերին քվեաթերթիկների ուղարկումը,<br>- լրացված քվեաթերթիկների հավաքումը և փոխանցումը հաշվիչ հանձնաժողովին,<br>- Ժողովի քվեարկության արդյունքների և ընդունված որոշումների մասին տեղեկացումը բաժնետերերին,<br>- Խորհրդի նիստերի նախապատրաստումը և անցկացումը համաձայն օրենսդրության, Ընկերության կանոնադրության և այլ ներքին իրավական ակտերի պահանջների,<br>- Խորհրդի նիստի նախապատրաստման և անցկացման հետ կապցված բոլոր կազմակերպչական հարցերի որոշումը,<br>- Խորհրդի բոլոր անդամներին Խորհրդի նիստի անցկացման մասին ծանուցումը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նրանց քվեարկելու համար քվեաթերթիկների ուղարկումը (հանձնումը), լրացված քվեաթերթիկների հավաքումը և փոխանցումը Խորհրդի նախագահին,<br>- Կորպորատիվ քարտուղարն իրականացնում է հետևյալ փաստաթղթերի պահպանությունը՝ Ընկերության կանոնադրությունը, Ընկերության կանոնադրության փոփոխություններ և լրացումները, Ընկերության հիմնադրման և պետական գրանցման հետ կապված փաստաթղթերը, Ընկերության մարմինների վերաբերյալ կանոնակարգեր, որոնք հաստատված են Ժողովի որոշմամբ, Խորհրդի որոշմամբ հաստատված փաստաթղթեր, Ընկերության մասնաճյուղերի և |

ներկայացուցչությունների հիմնադիր փաստաթղթերը, Ժողովի, Խորհրդի նիստեր արձանագրությունները, Խորհրդին կից գործող հանձնաժողովների արձանագրություններն ու գրավոր կարծիքները, Ընկերության վերստուգող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, քվեաթերթիկները, Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի լիազորված ներկայացուցիչների լիազորությունները հավաստող փաստաթղթերը (փաստաթղթերի պատճենները), Ընկերության հետ փոխկապակցված անձանց ցուցակը, Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը, շահաբաժիններ ստանալու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը, ինչպես նաև օրենսդրության պահանջներին համապատասխան բաժնետերերի իրավունքների իրականացման համար Ընկերության կողմից կազմված այլ ցուցակներ, Անկախ գնահատողների հաշվետվությունները, Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգող), Ընկերության աուդիտորի, ֆինանսական վերահսկողության պետական մարմինների եզրակացությունները, Ընկերության եռամսյակային և տարեկան հաշվետվությունները, Արժեթղթերի ազդագրերը, Ներդրումային արժեթղթերի թողարկման (լրացուցիչ թողարկման), արժեթղթերի թողարկման (լրացուցիչ թողարկման) արդյունքների միջանկյալ և վերջնական հաշվետվությունները, այլ փաստաթղթեր, որոնք պարունակում են այնպիսի տեղեկություններ, որոնք օրենսդրությամբ ենթակա են հրապարակման կամ այլ կերպ բացահայտման:

Կորպորատիվ քարտուղարն Ընկերության և նրա բաժնետերերի միջև համագործակցության պահովման ուղղությամբ իրականացնում է հետևյալ գործառույթները.

- հաշվառում է բաժնետերերից ստացված նամակները, պահանջները և այլ դիմումները,
- տալիս է նախնական գնահատական բաժնետերերից ստացված նամակներին, պահանջներին և այլ դիմումներին, անհրաժեշտության դեպքում ապահովում է դրանց իրավական փորձաքննությունը և Ընկերության իրավասու մարմնին հասցեագրումը,
- իր իրավասությունների շրջանակներում ապահովում է Ընկերությունում բաժնետերերի դիմումների և բաժնետերերի իրավունքների խախտման հետ կապված շահերի բախումների դեպքերի ուսումնասիրությունը,
- ապահովում է բաժնետերերին իրենց իրավունքների հետ կապված խորհրդատվության տրամադրում,

| | |
|---|---|
| | - ապահովում է արժեթղթերի գծով շահաբաժիններ և այլ եկամուտներ ստանալու իրավունք ունեցող բաժնետերերի եկամուտների վճարման կազմակերպչական վերահսկողությունը:<br><br>Ընկերության կանոնադրությամբ և «Կորպորատիվ քարտուղարի մասին» կանոնակարգով սահմանված այլ իրավասություններ և պարտականություններ: |
| **Ծավալած գործունեությունը՝ Ընկերության կազմից դուրս** | - |
| **Մասնագիտությունը** | Իրավաբան |
| **Նախորդ 5 տարիների ընթացքում այլ կազմակերպու-թյուններում զբաղեցրած պաշտոնները** | |
| **Նախորդ 5 տարիների ընթացքում խարդախության համար դատվածություն չունի** | |
| **Նախորդ 5 տարիների ընթացքում սնանկության, լուծարման կամ սնանկ ճանաչված անձի ակտիվների կառավարման գործընթացների հետ առնչություն չի ունեցել** | |
| **Նախորդ 5 տարիների ընթացքում պետական մարմնի կամ կարգավորող ¥վերահսկող¤ մարմնի կողմից պատասխանատվության չի ենթարկվել և դատարանի կողմից որևէ թողարկողի կառավարման մարմնի անդամի պաշտոն զբաղեցնելու իրավունքից չի զրկվել** | |

Գլխավոր հաշվապահն է Արայիկ Դավթյանը

| *Տեղեկատվություն կառավարման մարմիններում ընդգրկված անձանց վերաբերյալ* | |
|---|---|
| **Գլխավոր հաշվապահ** | |
| **Անուն, ազգանուն** | Արայիկ Յաշայի Դավթյան |
| **Բնակության վայրը** | ԱՀ ք. Ստեփանակերտ Ալ. Մանուկյան փողոց շենք 120 բն.69 |
| **Զբաղեցրած պաշտոնը** | Գլխավոր հաշվապահ |
| **Պաշտոնավարման սկիզբը և ավարտը** | 01.11.07թ-ից մինչօրս:<br><br>Գլխավոր հաշվապահին նշանակում և ազատում է պաշտոնից Գլխավոր տնօրենը: Գործունեության ժամկետը չի սահմանափակվում: |

| | |
|---|---|
| **Իրավասություններն ու պարտականությունները** | Գլխավոր հաշվապահը գտնվում է Ընկերության գլխավոր տնօրենի ենթակայության տակ և պատասխանատու է՝<br><br>- Ընկերությունում հաշվապահական հաշվառում պատշաճ վարելու համար,<br><br>- ֆինանսական հաշվետվությունները ժամանակին կազմելու և ներկայացնելու համար,<br><br>- ՀՀ օրենսդրական դաշտին համապատասխան հաշվապահական փաստաթղթերի ձևակերպման համար,<br><br>- ապահովում է կազմակերպության ակտիվների և պարտավորությունների վերահսկողությունը: |
| **Ծավալած գործունեությունը՝ Ընկերության կազմից դուրս** | - |
| **Մասնագիտությունը** | Հաշվապահ |
| **Նախորդ 5 տարիների ընթացքում այլ կազմակերպու-թյուններում զբաղեցրած պաշտոնները** | 2007թ-ի նոյեմբերի 1-ից աշխատում է Ընկերությունում որպես գլխավոր հաշվապահ: |
| **Նախորդ 5 տարիների ընթացքում խարդախության համար դատվածություն չունի** | |
| **Նախորդ 5 տարիների ընթացքում սնանկության, լուծարման կամ սնանկ ճանաչված անձի ակտիվների կառավարման գործընթացների հետ առնչություն չի ունեցել** | |
| **Նախորդ 5 տարիների ընթացքում պետական մարմնի կամ կարգավորող ¥վերահսկող¤ մարմնի կողմից պատասխանատվության չի ենթարկվել և դատարանի կողմից որևէ թողարկողի կառավարման մարմնի անդամի պաշտոն զբաղեցնելու իրավունքից չի զրկվել** | |

5. Կառավարման մարմինների անդամների միջև ազգակցական կապը բացակայում է:

6. Ընկերության կառավարման մարմինների անդամների գործնական և անձնական շահերի բախում չկա:

7. Ընկերությունը խոշոր բաժնետերերի, հաճախորդների, մատակարարների կամ այլ անձանց հետ չունի կառավարման մարմնի անդամ նշանակելու մասին որևէ պայմանավորվածություն, բացառություն:

## Վարձատրությունները և պարգևավճարները

Ընկերության կառավարման մարմինների անդամները, բացառությամբ Գլխավոր տնօրենի և Գլխավոր հաշվապահի, Ընկերության կառավարման մարմիններում իրենց պարտականությունները կատարում են հասարակական հիմունքով՝ առանց վարձատրության: Միաժամանակ, Ընկերության կառավարման մարմինների անդամներին 31.12.2018թ. դրությամբ չեն վճարվել պարգևավճարներ և նրանց օգտին չեն կատարվել փոխհատուցումներ:

2018 թվականի ընթացքում Ընկերության Գլխավոր տնօրենը և Գլխավոր հաշվապահն Ընկերությունից ստացել են 20,736,952 ՀՀ դրամի չափով աշխատավարձ.

Գլխավոր տնօրեն՝ 13,120,952 ՀՀ դրամ

Գլխավոր հաշվապահ՝ 7,616,000 ՀՀ դրամ

Ընկերության կողմից Ընկերության կառավարման մարմինների անդամների օգտին չեն կատարվել կենսաթոշակային վճարումներ, սակայն Ընկերության Գլխավոր տնօրենին և Գլխավոր հաշվապահին տրվող աշխատավարձերի գծով Ընկերությունը կատարել է 4,354,760 ՀՀ դրամ գումարի եկամտային հարկի վճարում:

## Կառավարման մարմինների գործունեությունը

1. Լրավճարների կամ պարգևավճարների վճարման մասին պայմանագրեր Թողարկողի և կառավարման մարմինների միջև առկա չեն:

2. Ընկերությունը չունի ձևավորված աշխատավարձերի և աուդիտի կոմիտեներ, թեպետ Ընկերության կանոնադրությամբ և «Խորհրդի մասին» կանոնակարգով նախատեսված են Խորհրդին կից նման կոմիտեների ձևավորման հնարավորությունները:

3. Հաշվի առնելով, որ Ընկերությունը հիմնադրվել է ԱՀ-ում, իսկ ԱՀ-ում ընդունված կորպորատիվ կառավարման սկզբունքները հիմնականում սահմանվում են «Բաժնետիրական ընկերությունների մասին» ԱՀ օրենքով և այլ օրենքներով, ուստի Ընկերության կառավարման համակարգը կառուցված է օրենսդրության պահանջների շրջանակում և բավարարում է ԱՀ-ում ընդունված կորպորատիվ կառավարման սկզբունքներին: Ավելին, Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կարգավորվում է Ընկերության կողմից հաստատված առանձին կանոնակարգերով, որի մշակման հիմքում հաշվի են առնվել ոչ միայն ԱՀ-ում և ՀՀ-ում սահմանված կորպորատիվ կառավարման սկզբունքները, այլ նաև զարգացած արժեթղթերի շուկա ունեցող երկրներում ձևավորված կորպորատիվ կառավարման սկզբունքները և էներգետիկ ոլորտում գործող օտարերկրյա հայտնի ընկերությունների փորձը:

## Աշխատակիցները

1. Աղյուսակ 26-ում ներկայացվում է տեղեկատվություն պատմական ֆինանսական ժամանակաշրջանում ընդգրկված յուրաքանչյուր ֆինանսական տարվա կտրվածքով Ընկերության աշխատակիցների միջին տարեկան թվաքանակի վերաբերյալ, ինչպես նաև ներկայացված է դրանց գործառութային դասակարգումը:

Աղյուսակ 26. Ընկերության աշխատակիցները

| *Ընկերության աշխատակիցները* | | | |
|---|---|---|---|
| **Ցուցանիշներ** | 31.12.2016 | 31.12.2017 | 31.12.2018 |
| **Աշխատակիցների միջին թվաքանակը** | 195 | 195 | 221 |
| **Վարչական աշխատակիցներ** | 49 | 48 | 54 |
| **Արտադրական և սպասարկման ոլորտի աշխատակիցներ** | 146 | 147 | 167 |

Աղբյուրը՝ «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ

Ընկերությունը ժամկետային աշխատակիցներ չունի:

2. Ընկերության կառավարման մարմիններում ընդգրկված անձանցից Գլխավոր տնօրեն Վահրամ Բեգլարյանն ունի Ընկերության 3,000 հատ բաժնետոմսեր, որոնց ընթացիկ շուկայական արժեքը կազմում է 3,360,000 ՀՀ դրամ /հաշվարկը կատարված է Ընկերության բաժնետոմսերով կատարված վերջին գործարքի՝ 1,120 ՀՀ դրամ գնով/:

3. Ներկայումս Ընկերությունը չունի ծրագրեր՝ կապված աշխատակիցներին Ընկերության կապիտալում մասնակցության հնարավորություն ընձեռելու հետ. Ընկերության աշխատակիցները ցանկության դեպքում կարող են ձեռք բերել Ընկերության բաժնետոմսերը ֆոնդային բորսայից կամ մասնակցել բաժնետոմսերի ազատ բաժանորդագրությանը՝ ընդհանուր պայմաններով:

## Խոշոր բաժնետերերը և հսկող անձինք

**Ընկերության խոշոր բաժնետերեր են հանդիսանում՝**

| Բաժնետեր | Պատկանող բաժնետոմսերի քանակ / կշիռը կանոնադրական կապիտալում |
|---|---|
| «Մ.Էներգոինվեստ» ՓԲԸ | 3,856,834 / 36.21 % |
| «Մուլտիկոնտինենտալ Դիսթրիբյուշն Լիմիթեդ» ՍՊԸ | 1,781,348 / 16.73 % |
| Ժոզեֆ Ուղուրլյան | 1,262,901 / 11.86 % |
| «ԿԳԱԼ Նյու ֆրոնթայրս» ՍՊԸ | 1,069,025 / 10.04 % |
| «Ռեսո Գարանտիա ապահովագրական» ՀԲԸ | 872,000 / 8.19 % |
| «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ | 657,933 / 6.18 % |

## Փոխկապված անձանց հետ գործարքները

1. Ընկերությունը չունի փոխկապակցված անձանց հետ գործող պայմանագրեր:

## Տեղեկատվություն թողարկողի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի մասին

1. Ընկերության 2015-2017թթ. ֆինանսական հաշվետվությունները և նույն ժամանակահատվածի անկախ առուդիտի եզրակացությունները ներկայացված են հավելված 1-ում:

2. Ընկերության 2018 թվականի չորրորդ եռամսյակի ֆինանսական հաշվետությունները /Աուդիտ չանցած/ ներկայացված են հավելված 2-ում:

3. Ընկերության ստեղծման պահից Ընկերության նկատմամբ դատարանի, ինչպես նաև պետական մարմինների կողմից պատասխանատվության միջոցներ (վարչական, քաղաքացիաիրավական) չեն կիրառվել: Ընկերության դեմ սնանկության (անվճարունակության) կամ լուծարային վարույթի նախաձեռնություններ չեն կիրառվել:

4. Ընկերությունը աշխատում է ընդհանուր հարկային դաշտում. չի օգտվում ՀՀ հարկային օրենսդրությամբ նախատեսված որևէ հարկային արտոնությունից:

## Լրացուցիչ տեղեկատվություն

Կանոնադրական կապիտալը
ա. Համաձայն Ընկերության 31.12.2018թ. հաշվապահական հաշվեկշռի՝ կանոնադրական կապիտալը կազմում է 10,650,000,000 /տասը միլիարդ վեց հարյուր հիսուն միլիոն / ՀՀ դրամ, ինչը պայմանավորված է Ընկերության թվով 10,650,000 հատ լրացուցիչ բաժնետոմսերի լրիվ տեղաբաշխմամբ:
բ. Ընկերության հայտարարված բաժնետոմսերի թիվը կազմում է 4,450,000 (չորս միլիոն չորս հարյուր հիսուն) հատ հասարակ անվանական բաժնետոմս,
Ընկերությունը չունի ոչ լրիվ վճարված բաժնետոմսեր,

դ. մեկ բաժնետոմսի անվանական արժեքը 1,000 /մեկ հազար/ ՀՀ դրամ է,
ե. թողարկողը սեփականության իրավունքով չի տիրապետում իր կողմից թողարկած բաժնետոմսեր:

Կանոնադրությունը
Ա. Համաձայն Ընկերության կանոնադրության 3-րդ բաժնի պահանջների՝ Ընկերության գործունեության առարկան և նպատակը հետևյալն են.
- Ընկերության ստեղծման նպատակն է տնտեսական գործունեություն իրականացնելու միջոցով շահույթի ստացումը:
- Ընկերության գործունության հիմնական տեսակներն են.
  ա¤ Էլեկտրական էներգիայի արտադրություն,
  բ¤ Ընկերության հիմնական միջոցների շահագործման, ընթացիկ նորոգման և կարգաբերման աշխատանքների կատարում,
  գ¤ Ընկերության տեխնիկական վերազինման, վերակառուցման, հիմնանորոգման աշխատանքների կատարում, նոր կառուցվող օբյեկտների պատվիրատուի գործառույթների իրականացում,
  դ¤ Նոր էներգաօբյեկտների (հիդրոէլեկտրակայանների) շինարարության իրականացում:
- Ընկերությունը կարող է իրականացնել օրենքով չարգելված ցանկացած տնտեսական գործունեություն: Օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակներով Ընկերությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի (հատուկ թույլտվություն) առկայության դեպքում՝ լիցենզիա ստանալու պահից նրանում նշված ժամկետում:

Բ. «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 66-93 հոդվածները և Ընկերության կանոնադրության 10-16 բաժինները կարգավորում են Ընկերության կառավարման մարմինների գործառույթները: Ընկերության կառավարման մարմինների գործառույթների մանրամասն վերլուծությունը ներկայացված է Ազդագրի «Թողարկողի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները» բաժնում:

Գ. Կանոնադրության 8-րդ բաժինը նվիրված է Ընկերության բաժնետոմսերի սեփականատերերի իրավունքներին և պարտականություններին, մասնավորապես՝ 8.1. կետով սահմանվում է, որ Ընկերության յուրաքանչյուր հասարակ (սովորական) բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքները:
Հասարակ (սովորական) բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերն Օրենքի և Ընկերության կանոնադրության համաձայն իրավունք ունի.
ա¤ մասնակցել Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով,
բ¤ ֆինանսական տարվա ավարտից հետո 60 օրվա ընթացքում ներկայացնել երկուսից ոչ ավելի առաջարկություններ բաժնետերերի ընդհանուր ժողովի օրակարգի վերաբերյալ, ինչպես նաև առաջարկել Խորհրդի և վերստուգող հանձնաժողովի անդամության թեկնածուներ, եթե նա հանդիսանում է ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսերի առնվազն 2 տոկոսի սեփականատեր,
գ¤ մասնակցել Ընկերության կառավարմանը,
դ¤ ստանալ շահութաբաժիններ Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից,
ե¤ առաջնահերթ կարգով ձեռք բերել Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը, եթե Օրենքով և Ընկերության կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ,
զ¤ ստանալ Ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն (բացառությամբ գաղտնի փաստաթղթերի)՝ այդ թվում՝ կանոնադրությամբ սահմանված կարգով ծանոթանալ հաշվապահական հաշվեկշռին, հաշվետվություններին, հաշվապահական գրքերին, Ընկերության արտադրատնտեսական գործունեությանը (Ընկերության կանոնադրական կապիտալի առնվազն 5

տոկոսը կազմող ձայնի իրավունք տվող բաժնետոմսերին տիրող բաժնետերերը կարող են պահանջել փորձագետ կամ փորձագետների խումբ՝ Ընկերության գործունեությանը վերաբերող հաշվետվությունները ստուգելու նպատակով: Ստուգման հետ կապված ծախսերը փոխհատուցում են ստուգումը պահանջող բաժնետերերը),

ը¤ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի,

թ¤ առաջարկություններով հանդես գալ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում,

ժ¤ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով,

ժա¤ հայցով դիմել դատարան՝ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին և այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով,

ժբ¤ Ընկերության լուծարման դեպքում ստանալ պարտատերերի հետ կատարված հաշվարկներից հետո մնացած Ընկերության գույքի իր հասանելիք մասը կամ դրա արժեքը,

ժգ¤ օտարել կամ այլ ձևով այլ անձանց փոխանցել իր սեփականությունը հանդիսացող բաժնետոմսը,

ժդ¤ օգտվել Ընկերության կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

Ընկերության կանոնադրության 8.2. կետով սահմանվում է, որ հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատերերին չի կարող տրամադրվել նրանց պատկանող հասարակ (սովորական) բաժնետոմսերի անվանական արժեքից և քանակից չբխող լրացուցիչ ձայնի իրավունք:

Կանոնադրության 8.3. կետով սահմանվում է, որ հասարակ (սովորական) բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինների վճարումներն Ընկերության կողմից չեն երաշխավորվում:

Կանոնադրության 8.4. կետով սահմանվում է արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի իրավունքները մասնավորապես՝

ա¤ մասնակցել Ընկերության կառավարմանը,

բ¤ Ընկերության ընդհանուր ժողովում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի,

գ¤ Ընկերության լուծարման դեպքում ստանալ Ընկերության գույքի իրենց հասանելիք մասը,

դ¤ հանդես գալ առաջարկություններով Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում,

ե¤ ձայնի իրավունքով մասնակցել ընդհանուր ժողովի աշխատանքներին,

զ¤ ստանալ շահութաբաժիններ Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից,

է¤ առաջնահերթ կարգով ձեռք բերել Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը:

Իրենց իրավունքներից արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերն օգտվում են Օրենքով, Ընկերության կանոնադրությամբ և Ընկերության ներքին իրավական ակտերով սահմանված վերապահումներով:

Կանոնադրության 8.5. կետով սահմանվում է, որ Բաժնետերերը պարտավոր են չհրապարակել Ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնի տեղեկություններ:

Ընկերության կանոնադրությամբ սահմանված են բաժնետոմսերի վերաբերյալ հետևյալ սահմանափակումները.
- Ընկերությունն իրավունք ունի տեղաբաշխել հասարակ (սովորական), ինչպես նաև մեկ կամ մի քանի տեսակի արտոնյալ բաժնետոմսեր: Ընկերության կողմից տեղաբաշխված արտոնյալ բաժնետոմսերի անվանական արժեքը չպետք է գերազանցի Ընկերության կանոնադրական կապիտալի ընդհանուր ծավալի 25 տոկոսը:

Դ. Բաժնետոմսերից բխող իրավունքների ցանկացած փոփոխություն կարող է տեղի ունենալ միայն բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից, որի հրավիրման և մասնակցելու կարգը ներկայացված է Ե.կետում:

Ե. Բաժնետերերի ժողովի հրավիրման կարգը և դրա մասնակցելու կարգը սահմանվում է Ընկերության կանոնադրության և «Բաժնետերերի ընդհանուր ժողովի մասին» կանոնակարգով:

Բաժնետերերի ժողովի գումարում

Բաժնետերերի ժողովը գումարվում է Խորհրդի կողմից: Մասնավորապես՝ Տարեկան ժողովի գումարման, ինչպես նաև, Ընկերության գլխավոր տնօրենի, վեստուգող հանձնաժողովի ¥վերստուգողի¤, Ընկերության աուդիտորի Ընկերության քվեարկվող բաժնետոմսերի առնվազն 10 տոկոս սեփականատեր բաժնետերերի կողմից Արտահերթ ժողովի գումարման պահանջի ներկայացման դեպքում Խորհուրդը մերժման հիմքերի բացակայության պարագայում պարտավոր է՝
- Օրենքով սահմանված ժամկետում Բաժնետերերի ժողովի գումարման մասին որոշում ընդունել,
- Ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով ապահովել Բաժնետերերի ժողովի գումարման մասին ծանուցումը բաժնետերերին,
- որոշել «Բաժնետերերի ընդհանուր ժողովի մասին» կանոնակարգի 11 հոդվածով նախատեսված տեղեկությունները,
- կազմել բաժնետերերի ցուցակը,
- պատրաստել բաժնետերերին տրամադրման ենթական տեղեկությունները ¥նյութերը¤ և ապահովել տվյալ տեղեկությունների /նյութերի/ ներկայացումը բաժնետերերին «Բաժնետերերի ընդհանուր ժողովի մասին» կանոնակարգի 15 հոդվածով սահմանված կարգով:

Բաժնետերերի ժողովի նախապատրաստում

Համատեղ ներկայությամբ բաժնետերերի ժողովի նախապատրաստման ընթացքում Խորհուրդը որոշում է՝

- ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամն ու վայրը,
- բաժնետերերի գրանցվելու ժամն ու վայրը,
- բաժնետերերի ցուցակը կազմելու տարին ամիսը և ամսաթիվը,
- ժողովի օրակարգը,
- ժողովի գումարման մասին բաժնետերերին ծանուցելու կարգը,
- ժողովի նախապատրաստման ընթացքում բաժնետերերին տրամադրվող տեղեկությունների ¥նյութերի¤ ցուցակը և դրանց տրամադրման կարգը,
- քվեաթերթիկի ձևը և բովանդակությունը,
- փոստային հասցեն, որտեղ բաժնետերերը կարող են ուղարկել լրացված քվարթերթիկները:

Հեռակա կարգով քվեարկությամբ բաժնետերերի ժողովի նախապատրաստման ընթացքում Խորհուրդը որոշում է՝

- ժողովի անցկացման տարին, ամիսը և ամսաթիվը /քվեաթերթիկների ընդունման ավարտի տարին, ամիսը և ամսաթիվը/,
- ժողովի անցկացման վայրը /փոստային հասցեն, որտեղ բաժնետերը կարող է ուղարկել (ներկայացնել) լրացված քվաթերթիկները/,
- բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը և ամսաթիվը,
- ժողովի օրակարգը,
- ժողովի գումարման մասին բաժնետերերին ծանուցելու կարգը,
- ժողովի նախապատրաստման ընթացքում բաժնետերերին տրամադրվող տեղեկությունների ¥նյութերի¤ ցուցակը և դրանց տրամադրման կարգը,
- քվեաթերթիկի ձևը և բովանդակությունը:

<u>Բաժնետերերի ժողովի գումարման մասին ծանուցում</u>

Համատեղ ներկայությամբ բաժնետերերի ժողովի գումարման դեպքում Բաժնետերերի ժողովի գումարման մասին ծանուցման մեջ պետք է նշվի.

- Ընկերության ֆիրմային անվանումը և գտնվելու վայրը,
- ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը,
- բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը,
- ժողովի օրակարգում ընդգրկված հարցերը.
- ժողովում քննարկվող հարցերին վերաբերող տեղեկություններին և նյութերին բաժնետերերի կողմից ծանոթանալու կարգը,
- ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի գրանցման սկզբի և ավարտի ժամն ու վայրը,
- ժողովի գումարման նախաձեռնողի մասին նշում,
- լրացված քվաթերթիկն ուղղարկելու վայրի փոստային հասցեն,
- նշում ժողովին մասնակցելու համար անձը հաստատող փաստաթուղթ ¥բաժնետիրոջ ներկայացուցչի համար նաև այլ անհրաժեշտ փաստաթղթեր¤ ներկայացնելու անհրաժեշտության մասին,
- ժողովի անցկացման եղանակը,
- այլ տեղեկություններ:

Հեռակա կարգով քվերակությամբ բաժնետերերի ժողովի գումարման դեպքում Բաժնետերերի ժողովի գումարման մասին ծանուցման մեջ պետք է նշվի՝

- Ընկերության ֆիրմային անվանումը և գտնվելու վայրը,
- ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը ¥քվաթերթիկների ընդունման ավարտի տարին, ամիսը, ամսաթիվը¤,
- բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը,
- ժողովի օրակարգում ընդգրկված հարցերը.
- ժողովում քննարկվող հարցերին վերաբերող տեղեկություններին և նյութերին բաժնետերերի կողմից ծանոթանալու կարգը,
- ժողովի գումարման նախաձեռնողի մասին նշում,
- ժողովի գումարման վայրը ¥լրացված քվաթերթիկն ուղարկելու (տրամադրելու) վայրի փոստային հասցեն¤,
- Բաժնետերերի ժողովի անցկացման եղանակը,
- այլ տեղեկություններ:

Ընկերության կանոնադրության 11.14. կետով սահմանվում է բաժնետերերի ժողովի գումարման մասին ծանուցման միջոցները, մասնավորապես՝ Ժողովի գումարման մասին ծանուցման ձևը սահմանվում է Ժողովի գումարման մասին որոշմամբ և կարող է իրականացվել պատվիրված նամակներ ուղարկելու, ծանուցումն անձամբ հանձնելու, էլեկտրոնային փոստով առաքելու կամ Ընկերության ինտերնետային էջում տեղադրելու միջոցով: Վերստուգող հանձնաժողովի անդամներին և Ընկերության աուդիտն իրականացնող անձին (եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող ժողովի նյութերում), ինչպես նաև Օրենքով և Ընկերության կանոնադրությամբ նախատեսված Ժողովին հրավիրված այլ անձանց Ժողովի գումարման մասին ծանուցումն ուղարկվում է պատվիրված նամակներ ուղարկելու կամ էլեկտրոնային փոստով առաքելու միջոցով: Ընկերությունը իրավունք ունի բաժնետերերին լրացուցիչ տեղեկացնել Ժողով գումարելու մասին ԶԼՄ-ների միջոցով (հեռուստատեսություն, ռադիո, մամուլ), այդ թվում՝ էլեկտրոնային և այլ թույլատրելի միջոցներով, որոնք սահմանվում են Ընկերության կանոնադրությամբ:

<u>Բաժնետերերին ներկայացվող տեղեկությունները ¥նյութերը¤.</u>

Ժողովի նախապատրաստման ընթացքում բաժնետերերին ներկայացվում են օրենով, Ընկերության կանոնադրությամբ, Ժողովի մասին կանոնակարգով և Խորհրդի որոշմամբ սահմանված տեղեկությունները ¥նյութերը¤:

Ժողովի նախապատրաստման ընթացքում, որի օրակարգում ընդգրկված են Խորհրդի և վերստուգող հանձնաժողովի անդամների ընտրության վերաբերյալ հարցեր, Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերին պետք է լրացուցիչ տեղեկություններ տրամադրվի համապատասխան մարմնում առաջադր-վող թեքնածուների գրավոր համաձայնության առկայության կամ բացակայության վերաբերյալ:

Ժողովի նախապատրաստման ժամանակ, որի օրակարգում ընդգրկված են հարցեր, որոնց վերաբերյալ քվեարկությունը կարող է հանգեցնել Ընկերության կողմից բաժնետոմսերի հետգնման պահանջի, Ժողովում մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերին պետք է լրացուցիչ ներկայացվեն ¥տրամադրվեն¤ հետևյալ տեղեկությունները ¥նյութերը¤.

- Ընկերության բաժնետոմսերի շուկայական արժեքի վերաբերյալ անկախ գնահատողի հաշվետվությունը,
- Ընկերության Խորհրդի այն նիստի արձանագրությունը ¥քաղվածք արձանագրությունից¤, որի ժամանակ բաժնետոմսերի հետ գնման գնի սահմանման մասին որոշում է ընդունվել,
- Օրենքով սահմանված տեղեկությունները:

Ժողովի նախապատրաստման ընթացքում, որի օրակարգում ընգրկված են Ընկերության վերակազմակերպման վերաբերյալ հարցեր, Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերին պետք է լրացուցիչ ներկայացվեն ¥տրամադրվեն¤ հետևյալ տեղեկությունները ¥նյութերը¤.

- Ընկերության լիազոր մարմնի կողմից հաստատված բաժանման, առանձնացման, վերակազմավորման մասին որոշմամբ կամ միաձուլման, միավորման մասին պայմանագրում ներկայացված Ընկերության վերակազմակերպման պայմանների և կարգի հիմնավորումը,
- Ժողովի գումարման ամսաթվին նախորդող երեք ավարտված ֆինանսական տարիների վերակազմակերպմանը մասնակցող բոլոր ընկերությունների տարեկան հաշվետվությունները և տարեկան ֆինանսական հաշվետվությունը ¥եթե կազմակերպությունը գործունեություն է ծավալում երեք տարուց պակաս ժամանակահատվածի ընթացքում, նրա ձևավորման պահից յուրաքանչյուր ավարտված ֆինանսական տարվա համար¤,
- վերակազմակերպմանը մասնակցող բոլոր ընկերությունների Ժողովի գումարման ամսաթվին նախորդող վերջին եռամսյակի եռամսյակային ֆինանսական հաշվետվությունները:

Ընկերության կորպորատիվ քարտուղարը պարտավոր է բաժնետերերին տրամադրել բաժնետերերին ներկայացման ենթակա տեղեկությունների /նյութերի/ պատճենները համապատասխան պահանջը ստանալու պահից 5 օրվա ընթացքում:

Բաժնետերն իրավունք ունի տեղեկությունների ¥նյութերի¤ պատճենները ստանալ իր կողմից ներկայացված պահանջում նշված հասցեում ¥այդ թվում՝ էլեկտրոնային փոստի միջոցով¤, իսկ դրա բացակայության դեպքում՝ Ընկերության գործունեության վայրում առձեռն եղանակով:

Ժողովի նախապատրաստման ընթացքում տեղեկությունների ¥նյութերի¤ ներկայացման ձևը սահմանվում է Ժողովի գումարման մասին Խորհրդի որոշմամբ: Անկախ Խորհրդի որոշմամբ սահմանված՝ տեղեկությունների ¥նյութերի¤ ներկայացման ձևից Ընկերությունը պարտավոր է բաժնետերերին ներկայացվող տեղեկությունները ¥նյութերը¤ տեղադրել Ընկերության ինտերնետային կայքում:

Ժողովի օրակարգի վերաբերյալ առաջարկությունները.

Ընկերության քվեարկող բաժնետոմսերի առնվազն 2 տոկոսի սեփականատեր բաժնետերն (բաժնետերերը) իրավունք ունի ¥ունեն¤ երկուսից ոչ ավելի առաջարկություններ ներկայացնել տարեկան Ժողովի օրակարգի վերաբերյալ, ինչպես նաև առաջադրել Խորհրդի և վերստուգող հանձնաժողովի անդամության թեկնածուներ:

Տարեկան Ժողովի օրակարգում հարցերի ընդգրկման, Խորհրդի և վերստուգող հանձնաժողովի անդամության թեկնածուների առաջադրման վերաբերյալ առաջարկություններն Ընկերություն պետք է ներկայացվեն ֆինանսական տարվա ավարտից հետո 60 օրվա ընթացքում:

Եթե արտահերթ Ժողովի օրակարգում ընդգրկված է Խորհրդի  անդամի ընտրության հարց, Խորհրդի անդամության թեկնածուների առաջադրման վերաբերյալ առաջարկությունը Ընկերություն պետք է ներկայացվեն արտահերթ Ժողովի գումարման օրվանից առնվազն 30 օր առաջ:

Ժողովի օրակարգում հարցի /հարցերի/ ընդգրկման, Խորհրդի և վերստուգող հանձնաժողովի անդամության թեկնածուների առաջադրման վերաբերյալ առաջարկություններին ներկայացվող պահանջները սահմանվում են Բաժնետերերի ընդհանուր ժողովի մասին կանոնակարգով:

Խորհուրդը պարտավոր է ուսումնասիրել Ընկերություն ներկայացված առաջարկությունները և որոշում ընդունել  առաջարկությունները բավարարերելու կամ մերժելու մասին՝ Ժողովի օրակարգում հարցի /հարցերի/ ընդգրկման և Խորհրդի կամ վերստուգող հանձնաժողովի անդամության թեկնածուների առաջադրման վերաբերյալ առաջարկություն ներկայացնելու համար Ընկերության կանոնադրությամբ սահմանված ժամկետի ավարտից 5 օրվա ընթացքում:

Բաժնետիրոջ ¥բաժնետերերի¤ կողմից առաջարկված հարցերն ընդգրկվում են Ժողովի օրակարգ, ինչպես նաև առաջադրված անդամության թեկնածուներն ընդգրկվում են անդամության թեկնածուների ցուցակում, բացառությամբ կանոնադրությամբ նախատեսված դեպքերի:

Ժողովի օրակարգում հարցի ¥հարցերի¤ կամ համապատասխան մարմնում ընտրվելու համար անդամության թեկնածուների ցուցակում առաջադրված անդամության թեկնածուների ընդգրկման առաջարկությունները մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում Խորհուրդը պարտավոր է նման որոշման ընդունման պահից 3 օրվա ընթացքում այդ մասին տեղեկացնել առաջարկություն ներկայացրած բաժնետիրոջը ¥բաժնետերերին¤:

<u>Բաժնետերերի ժողովին մասնակցող անձինք</u>

Բաժնետերերի ժողովին կարող են ներկա գտնվել՝

- բաժնետերերի ցուցակում ընդգրկված բաժնետերերը կամ նրանց ներկայացուցիչները,
- Ընկերության բաժնետոմսերի ռեեստրավարի ներկայացուցիչները,
- Ընկերության աուդիտորի ներկայացուցիչները,
- Ընկերության կառավարման մարմինների անդամները,
- Ընկերության կառավարման մարմիններում ընտրվելու նպատակով քվաթերթիկներում ընդգրկված թեկնածուները,
- Խորհրդի կամ Բաժնետերերի ժողովի գումարման նախաձեռնող անձանց կողմից հրավիրված այլ անձինք:

Խորհրդի, Ընկերության գործադիր մամնի և վերստուգող հանձնաժողովի անդամները պարտավոր են ներկա գտնվել բաժնետերերի ընդհանուր ժողովին: Նրանք պարտավոր են Բաժնետերերի ժողովի մասնակիցների հարցերին տալ հիմնավորված պատասխաներ:

Բաժնետերը կարող է մասնակցել ժողովին հետևյալ եղանակներով`

- անձամբ կամ իր կողմից ներկայացուցչի միջոցով մասնակցել ժողովում օրակարգի հարցերի քննարկմանը և դրանց քվեարկությանը ¥Համատեղ ներկայությամբ բաժնետերերի ժողովի գումարման դեպքում¤,
- հեռակա կարգով քվեարկել անձամբ կամ քվեարկելու իրավունքը լիազորել այլ անձի:

<u>Համատեղ ներկայությամբ Բաժնետերերի ժողովի մասնակիցների գրանցումը</u>

Հաշվիչ հանձնաժողովը ստուգում է Բաժնետերերի ժողովի մասնակցի անձն ու նրա լիազորությունը և գրան-ցում նրան:

Բաժնետերերի ժողովի մասնակիցների գրանցումը պետք է իրականացվի Բաժնետերերի ժողովի գումարման վայրում:

Գրանցման իրականացման ընթացքում հաշվիչ հանձնաժողովը պետք է վարի հետևյալ մատյանները`

- մասնակիցների գրանցման մատյան,
- լիազորագրերի և այլ փաստաթղթերի հաշվառման մատյան:

Մասնակիցների գրանցումը սկսվում է Բաժնետերերի ժողովի գումարման օրը:

Բաժնետերերի ժողովի մասնակիցների գրանցումը պետք է իրականացվի մասնակցի նույնականացման միջոցով, այսինքն` համեմատվում են բաժնետերերի ցուցակում ընդգրկված տվյալները մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի տվյալներ հետ:

Բաժնետերերի ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերը ¥նրանց ներկայացուցիչները¤ պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը`

- ֆիզիկական անձ հանդիսացող բաժնետերը` անձը հաստատող փաստաթուղթ,
- ֆիզիկական անձ հանդիսացող բաժնետիրոջ ներկայացուցիչը` բաժնետիրոջ կողմից տրված լիազորագիրը և անձը հաստատող փաստաթուղթը,
- իրավաբանական անձ հանդիսացող բաժնետիրոջ անունից առանց լիազորագրի գործող ներկայացուցիչը` նրա լիազորությունը հաստատող փաստաթուղթը ¥այդ պաշտոնին նշանակելու կամ ընտրելու որոշման պատճենը¤ և անձը հաստատող փաստաթուղթը,
- իրավաբանական անձ հանդիսացող բաժնետիրոջ անունից լիազորագրի հիման վրա գործող ներկայացուցիչը` բաժնետիրոջ անունից տրված լիազորագիրը և անձը հաստատող փաստաթուղթը,
- պետական և տեղական ինքնակառավարման մարմին հանդիսացող բաժնետիրոջ անունից առանց լիազորագրի գործող ներկայացուցիչը` համապատասխան լիազորությունների առկայությունը

հաստատող փաստաթուղթը ¥ծառայողական վկայական և այլ փաստաթղթեր¤ և անձը հաստատող փաստաթուղթը,

- պետական և տեղական ինքնակառավարման մարմին հանդիսացող բաժնետիրոջ լիազորագրի հիման գործող ներկայացուցիչը՝ բաժնետիրոջ անունից տրված լիազորագիրը և անձը հաստատող փաստաթուղթը:

Բաժնետերերի ժողովին մասնակցող բաժնետիրոջ ներկայացուցչի՝ բաժնետիրոջ անունից գործելու լիազորագիրը և այլ փաստաթղթերը գրանցման ժամանակ հանձնվում են Ընկերությանը:

Բաժնետերերի ժողովի մասնակիցների գրանցումն ավարտվում է Բաժնետերերի ժողովի օրակարգի վերջին հարցի քննարկման ավարտի պահին:

Բաժնետերերի ժողովի բացման ժամանակ հաշվիչ հանձնաժողովը հայտարարում է Բաժնետերերի ժողովի բացման պահին գրանցված մասնակիցների թվի, ժողովի օրակարգի յուրաքանչյուր հարցի վերաբերյալ նրանց պատկանող ընդհանուր ձայների թվի և ժողովի բացման պահին օրակարգի յուրաքանչյուր հարցի քվորում ապահովելու մասին տեղեկություններ:

Բաժնետերերի ժողովի մասնակիցների գրանցման արդյունքում հաշվիչ հանձնաժողովը կազմում է արձանագրություն: Արձանագրությանը կցվում են գրանցման ընթացակարգի վերաբերյալ ստացված բողոքներն ու հայտարարությունները:

Հեռակա կարգով քվեարկությամբ բաժնետերերի ժողովի անցկացումը

Հեռակա կարգով քվեարկությամբ բաժնետերերի ժողովի անցկացման դեպքում քվեաթերթիկները պետք է ուղարկվեն /տրամադրվեն/ բաժնետերերի ցուցակում նշված անձանց օրենսդրությամբ և սույն կանոնակարգով սահմանված ժամկետում:

Լրացված քվեաթերթիկն ուղարկվում է Բաժնետերերի ժողովի գումարման մասին ծանուցման մեջ նշված հասցեով:

գ. օրենքի, ենթաօրենսդրական ակտերի և /կամ/ կանոնադրության այն հոդվածները, որոնց հիման վրա պահանջվում է թողարկողի մոտ մասնակցություն ձեռք բերելիս բացահայտել դրա մասին տեղեկատվություն,
«Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 154 հոդվածի համաձայն, յուրաքանչյուր անձ, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն, անձամբ կամ փոխկապակցված անձանց միջոցով ձեռք է բերում Ընկերությունում այնպիսի մասնակցություն, որի արդյունքում Ընկերության կանոնադրական կապիտալում նրա ձայնի իրավունք տվող մասնակցությունը կազմում է 5, 10, 20, 50 կամ 75 և ավելի տոկոս, պարտավոր է այդ մասին անմիջապես, սակայն 4 աշխատանքային օրվանից ոչ ուշ, տեղեկացնել Ընկերությանը և Կենտրոնական բանկին՝ Կենտրոնական բանկի սահմանած ձևով և կարգով:

է. կանոնադրության այն դրույթների նկարագիրը, որոնցով ավելի խիստ պահանջներ են սահմանվում, քան սահմանված է համապատասխան օրենքներով կամ այլ նորմատիվ իրավական ակտերով:

Ընկերության կանոնադրությամբ սահմանված դրույթները ելնում են օրենքների և այլ նորմատիվ ակտերի դրույթներից և, ըստ էության, ավելի խիստ դրույթներ չեն սահմանում:

## Էական պայմանագրեր

1. Աղյուսակ 27-ում ներկայացված են Ընկերության կողմից Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 2 տարվա ընթացքում բնականոն գործունեության շրջանակներից դուրս կնքված և գործողության մեջ գտնվող այն պայմանագրերի էական պայմանները, որոնց գինը գերազանցում է Ընկերության վերջին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում նշված սեփական կապիտալի արժեքի 5 տոկոսը:

Աղյուսակ 27. Ընկերության կողմից կնքված էական պայմանագրերը

| *Պայմանագրի կողմը* | *Առարկան* | *Գինը* | *Գործողության ժամկետը* |
|---|---|---|---|
| **«Հիմնաքար»** ՓԲԸ | **«Քարվաճառ» ՀԷԿ-ի շինարարություն** | 2,502,000,000 ՀՀ դրամ | 15.01.2019-30.09.2021 |
| **«Արցախբանկ» ՓԲԸ** | Վարկային պայմանագիր | 950,000,000 ՀՀ դրամ | 24.07.2017-04.07.2022 |
| **«Արցախբանկ» ՓԲԸ** | Վարկային պայմանագիր | 1,200,000,000 ՀՀ դրամ | 18.01.2019-18.01.2024 |

Աղբյուրը՝ «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ

## Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը

1. Ազդագրում չի օգտագործվել հաշվապահի, գնահատողի, խորհրդատուի կամ ցանկացած այլ փորձագետի մասնագիտական կարծիք /եզրակացություն, հաշվետվություն, գնահատման ակտ և այլն/:

## Այլ տեղեկատվություն

1. Սույն ազդագրի կիրառման ողջ ժամկետում շահագրգիռ անձինք Ընկերության կանոնադրությանը, Ընկերության ներքին իրավական ակտերին, ինչպես նաև Ընկերության պատվերով պատրաստված փորձագիտական եզրակացություններին կամ հաշվետվություններին, անկախ գնահատումներին և վերլուծական նյութերին ¥առկայության դեպքում¤ կարող են ծանոթանալ Ընկերության ինտերնետային կայքից՝ www.artsakhhek.am իսկ թղթային ձևով դրանք կարող են ձեռք բերել այցելելով Ընկերության գրասենյակ:

## Մասնակցություն այլ անձանց կապիտալում

1. Ընկերությունն այլ անձանց կապիտալում ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցություն չունի:

# ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

**Սույն ազդագրին կից ներկայացվող հավելվածները**

**Հավելված 1՝** Բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվության իրավունքի մասին ծանուցում

**Հավելված 2՝** Բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվության իրավունքից օգտվելու մասին ծանուցում

**Հավելված 3՝** Բաժանորդագրության հայտ (իրավաբանական և ֆիզիկական անձանց համար)

**Հավելված 4՝** 2016-2017թթ. տարեկան ֆինանսական հաշվետվությունները և անկախ աուդիտի եզրակացությունները:

**Հավելված 5՝** Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ:

# «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

## ՈՐՈՇՈՒՄ

«14» նոյեմբերի 2018թ. N 6-2018/01

ք.Ստեփանակերտ

Հիմք ընդունելով << Բաժնետիրական ընկորությունների մասին>> Արցախի Հանրապետության օրենքի 84-րդ հոդվածի առաջին մասի <<գ>> ենթակետը, <<Արցախ ՀԷԿ>> ԲԲԸ-ի կանոնադրության 12.5 կետի ա) ենթակետը և <<Արցախ ՀԷԿ>> բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի 14.11.2018թ. նիստի 06-2018թ. արձանագրությունը, ինչպես նաև ելնելով <<Արցախ ՀԷԿ>> ԲԲԸ գործունեության զարգացման անհրաժեշտությունից՝ <<Արցախ ՀԷԿ>> ԲԲԸ Տնօրենների խորհուրդը որոշում է՝

1.Լրացուցիչ տեղաբաշխել 1 350 000 000 (մեկ միլիարդ երեք հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ ընդհանուր ծավալով, 1 350 000 (մեկ միլիոն երեքհարյուր հիսուն հազար ) հատ,1000 (հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով ոչ փաստաթղթային հասարակ անվանական բաժնետոմսեր:

2.Հաստատել <<Արցախ ՀԷԿ>> ԲԲԸ-ի անվանական արժեքով ոչ փաստաթղթային հասարակ անվանական բաժնետոմսերի տեղաբաշխման պայմանները ՝ համաձայն հավելվածի (կցվում է):

3.Բաժնետոմսերի տեղաբաշխման ընթացքում ապահովել բաժնետոմսերի սեփականատերերի նախապատվության իրավունքի կիրառումը՝ Հավելվածով սահմանված պայմաններին համապատասխան:

4. Հանձնարարել <<Արցախ ՀԷԿ>> ԲԲԸ գլխավոր տնօրենին ապահովել բաժնետոմսերը տեղաբաշխման նախապատրաստական աշխատանքների իրականացումը, այդ թվում՝ ներդրումային ծառայություններ մատուցող անձի (Արմսվիսբանկ ՓԲԸ) հետ <<Արցախ ՀԷԿ>> ԲԲԸ-ի լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման կազմակերպման նպատակով համապատասխան պայմանագրի կնքումը, բաժնետոմսերի ազդագրի մշակումը և ՀՀ կենտրոնական բանկում օրենքով սահմանված կարգով գրանցումը, տեղաբաշխման ենթակա բաժնետոմսերի տեղաբաշխմանն առնչվող այլ գործողությունների իրականացումը:

5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2018 թվականի նոյեմբերի 14-ից:

Տնօրենների խորհրդի նախագահ՝ Ա.Հարությունյան

*ՀԱՎԵԼՎԱԾ*

# «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ

***1 350 000 000 ՀՀ դրամ անվանական արժեքով 1 350 000 հատ ոչ փաստաթղթային հասարակ անվանական բաժնետոմսերի տեղաբաշխման պայմաններ***

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ-ն (այսուհետև նաև` Ընկերություն) սույնով՝

1.1.1.սահմանում է իր կողմից թողարկվող 1,350,000,000 ՀՀ դրամ անվանական արժեքով 1 350 000 հատ ոչ փաստաթղթային հասարակ անվանական բաժնետոմսերի (այսուհետև՝ Բաժնետոմսեր) տեղաբաշխման պայմանները՝ հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ԱՀ օրենքի և Ընկերության կանոնադրության պահանջները,

1.1.2.կանոնակարգում է նշված բաժնետոմսերի տեղաբաշխման առնչությամբ առկա փոխհարաբերությունները:

## 2. ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերի տեղաբաշխման հիմնական պայմաններն են՝

| | | |
|---|---|---|
| 2.1.1. | **Բաժնետոմսերի դասը** | Հասարակ անվանական բաժնետոմսեր |
| 2.1.2. | **Բաժնետոմսի ձևը** | Ոչ փաստաթղթային |

| | | |
|---|---|---|
| 2.1.3. | Տեղաբաշխման ենթակա բաժնետոմսերի ընդհանուր ծավալը | 1 350 000 000 ՀՀ դրամ |
| 2.1.4. | Անվանական արժեքը | 1 000 ՀՀ դրամ |
| 2.1.5. | Քանակը | 1 350 000 հատ |
| 2.1.6. | Շրջանառության ձևը | ազատ շրջանառության իրավունքով |
| 2.1.7. | Տեղաբաշխողի մասին | «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ<br><br>Տեղաբաշխման ուղղված հարաբերությունները կկարգավորվեն «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի և Ընկերության միջև կնքվող պայմանագրով: |
| 2.1.8. | Վճարման պայմանները (միջոցը և ժամկետները) և կարգը | Տեղաբաշխվող բաժնետոմսերի դիմաց վճարումն իրականացվում է միայն դրամական եղանակով:<br><br>Բաժնետոմսերի դիմաց վճարումները կատարվում են ՀՀ դրամով՝ մինչև տեղաբաշխման ավարտի օրը:<br><br>Վճարումներն ընդունվելու են անկանխիկ ձևով՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ում բացված 2500036910046100 բանկային հաշվին միանվագ կերպով փոխանցումների միջոցով: Ֆիզիկական անձինք Բաժնետոմսերի ձեռք բերման համար անհրաժեշտ գումարները Բանկ կարող |

| | | |
|---|---|---|
| | | են միանվագ կերպով մուտքագրել նաև կանխիկ եղանակով: Կանխիկ եղանակով գումարները մուտքագրելու դեպքում ներդրողը բաժնետոմսերի ձեռք բերման հայտին կից Բանկ է ներկայացնում նաև անձնագրի պատճենը: |
| 2.1.9. | **Բաժնետոմսերի տեղաբաշխման սահմանափակումները** | Տեղաբաշխման ենթակա բաժնետոմսերը նախատեսվում է տեղաբաշխել Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի սեփականատերերի կողմից նախապատվության իրավունքի կիրառմամբ: Բաժնետերերի կողմից նախապատվության իրավունքի կիրառման արդյունքում չտեղաբաշխված բաժնետոմսերի նկատմամբ սահմանափակումներ չկան: |
| 2.1.10. | **Միջոցների օգտագործման նպատակը** | Ընկերության կողմից կառուցվող նոր Քարվաճառ ՓՀԷԿ-ի կառուցման համար կապիտալ շինարարական աշխատանքների ֆինանսավորման, ինչպես նաև Ընկերության կողմից օգտագործված փոխառու միջոցների վերաֆինանսավորման նպատակով: |
| 2.1.11. | **Բաժնետոմսերի հաշվառման համակարգը** | Բաժնետոմսերի սեփականատերերի ռեեստրի վարումը կիրականացվի Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ԲԲԸ կողմից՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի միջոցով՝ իր կանոններով սահմանված կարգով: |

2.2. Ընկերությունը բաժնետոմսերի տեղաբաշխման կազմակերպման նպատակով նախատեսում է որպես տեղաբաշխող «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի հետ կնքել բաժնետոմսերի տեղաբաշխման կազմակերպման մասին պայմանագիր: Տեղաբաշխողի վարձատրության չափը կսահմանվի վերջինիս հետ կնքված պայմանագրում և կարող է կախված լինել բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքներից. նախնական համաձայնությամբ այն կկազմի տեղաբաշխման ծավալի _1_%-ը:

2.3. Ընկերությունը բաժնետոմսերի տեղաբաշխման կազմակերպման նպատակով պետք է կազմակերպի «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ում բաժնետոմսերի թողարկման հաշվի բացման և այդ հաշվին բաժնետոմսերի փոխանցման աշխատանքները:

## 3. ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԿԱՐԳԸ

*Ընդհանուր դրույթներ*

3.1. Բաժնետոմսերը տեղաբաշխվում են նախապատվության իրավունքի կիրառման միջոցով, իսկ բաժնետերերի կողմից նախապատվության իրավունքի կիրառումից

հրաժարվելու դեպքում տվյալ բաժնետոմսերը տեղաբաշխվում են ազատ բաժանորդագրության եղանակով:

*Բաժնետիրոջ կողմից, նախապատվության իրավունքի կիրառման շրջանակներում, Ընկերության կամ Բանկի գրասենյակներ ազդագրում նշված ժամկետների շրջանակներում ծանուցում չներկայացնելու պարագայում համարվում է, որ բաժնետերն օգտվել է բաժնետոմսեր ձեռք բերելու նախապատվության իր իրավունքից և ապագայում չի կարող ներկայացնել որևէ պահանջ թողարկողին:*

3.2. Բաժնետոմսերի տեղաբաշխումը սկսում է բաժնետոմսերի ազդագրի գրանցման օրվան հաջորդող 33-րդ օրը և տևում է 10 օր: Բաժնետոմսերի ազդագրի գրանցման պահից սկսած՝ Ընկերությունը և/կամ տեղաբաշխողը պարտավոր են բաժնետոմսերի տեղաբաշխման, այդ թվում՝ նախապատվության իրավունքի կիրառման ժամկետների մասին տեղեկատվությունը բացահայտել ամսաթվերի նշագրմամբ:

3.3. Տեղաբաշխողը պարտավորություն չի կրում ձեռք բերել տեղաբաշխման ժամկետի ավարտի դրությամբ չտեղաբաշխված արժեթղթերը:

3.4. Տեղաբաշխումն օրենքով սահմանված հիմքերով չեղյալ ճանաչվելու դեպքում բաժնետոմսերի ձեռք բերման համար վճարված գումարները ներդրողներին ենթակա են վերադարձման տեղաբաշխման չեղյալ ճանաչելու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում /հայտում ներկայացված բանկային ռեկվիզիտներով անկանխիկ եղանակով/:

3.5. Բաժնետոմսերի տեղաբաշխման ընթացքում բաժնետոմսեր ձեռք բերող անձը բաժնետոմսերի ձեռք բերմամբ (պայմանագրի կնքմամբ կամ ձեռք բերման հայտի ներկայացմամբ) տալիս է սույն պայմաններն ընդունելու իր համաձայնությունը:

3.6. Տեղաբաշխման ընթացքում բաժնետոմսերի փաստացի օտարման կարգը սահմանվում է Ընկերության և Տեղաբաշխողի միջև կնքվող պայմանագրով:

*Բաժնետոմսերի տեղաբաշխման գինը*

3.7. Սույն որոշման հիման վրա տեղաբաշխման ենթակա բաժնետոմսերի տեղաբաշխման գինը Խորհուրդը սահմանում է՝

- նախապատվության իրավունքի կիրառմամբ բաժնետոմսերի ձեռք բերման դեպքում՝ 1,050 ՀՀ դրամ,
- բաժնետերերի կողմից նախապատվության իրենց իրավունքի չկիրառման դեպքում՝ չտեղաբաշխված բաժնետոմսերի տեղաբաշխման գինը սահմանվում է 1,500 ՀՀ դրամ:

3.8. Տեղաբաշխման գնի մասին տեղեկություններ պետք է ներկայացվեն բաժնետոմսերի ազդագրում և բաժնետոմսերի ազդագրի գրանցումից հետո Ընկերության և/կամ տեղաբաշխողի կողմից հրապարակվող հաղորդագրություններում (բուկլետներում, գովազդային ակցիաներում և այլն), ինչպես նաև ոչ ուշ, քան բաժնետոմսերի տեղաբաշխման սկզբի ամսաթիվը գնի վերաբերյալ տեղեկություններ պետք է ընդգծված կերպով տեղադրված լինեն Ընկերության ինտերնետային կայքի տնային էջում:

*Բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվության իրավունքի կիրառման պայմաններ*

3.9. Բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվության իրավունքից կարող են օգտվել 14.11.2018թ. ժամը 24:00 դրությամբ Ընկերության բաժնետոմսերի սեփականատերերի ռեեստրում գրանցված անձինք:

3.10. Ընկերության կողմից բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվության իրավունքի մասին ծանուցումը սույն պայմանների 3.9. կետում նշված անձանց գրավոր եղանակով կներկայացվի ՀՀ կենտրոնական բանկի կողմից բաժնետոմսերի ազդագրի գրանցման օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում:

3.11. Ծանուցումը պետք է տեղեկություններ պարունակի՝

ա) բաժնետոմսերի քանակի մասին.

բ) բաժնետոմսերի տեղաբաշխման գնի (այդ թվում՝ բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունք ունեցող Ընկերության բաժնետերերի համար տեղաբաշխման գնի) մասին.

գ) Ընկերության բաժնետերերի կողմից նախապատվության իրավունքով ձեռքբերվող բաժնետոմսերի քանակի որոշման կարգի, ինչպես նաև այդ իրավունքի իրականացման կարգի և ժամկետների մասին:

3.12. Բաժնետերն իրավունք ունի ամբողջությամբ կամ մասանակի ծավալով կիրառել բաժնետոմսեր ձեռք բերելու իր նախապատվության իրավունքը Ընկերությանը գրավոր ծանուցում ուղարկելու միջոցով, որը պետք է բովանդակի՝

ա) բաժնետիրոջ լրիվ ֆիրմային անվանումը (ֆիզիկական անձի համար՝ անունը), պետական գրանցման տվյալները (անձնագրային տվյալները), գտնվելու (բնակության) վայրը.

բ) ձեռք բերվող բաժնետոմսերի քանակը.

գ) բաժնետոմսերի դիմաց վճարման մասին փաստաթուղթը:

3.13. Սույն պայմանների 3.12. կետով նախատեսված ծանուցումը պետք է Ընկերություն ներկայացվի սույն պայմանների 3.2. կետով սահմանված բաժնետոմսերի

տեղաբաշխումն սկսելու օրվանից առնվազն մեկ օր առաջ: Ծանուցումը նարկայացված է համարվում, եթե այն ներկայացվել է տեղաբաշխողին:

3.14. Ընկերության կողմից կարող են սահմանվել սույն պայմանների 3.11. և 3.12. կետերով սահմանված ծանուցումների օրինակելի ձևեր, որոնք պետք է ընդգրկվեն բաժնետոմսերի ազդագրում:

3.15. Ընկերության կողմից կարող է չընդունվել սույն պայմանների 3.10. կետով սահմանված ծանուցումը և չբավարարվել նշված ծանուցմամբ գործարքը, եթե ծանուցումը.

- ներկայացված չէ սահմանված ձևին համապատասխան և լրացված է ոչ լիարժեք /այդ թվում՝ բացակայում է բաժնետոմսերի դիմաց վճարման մասին փաստաթուղթը/,
- թույլ չի տալիս նույնականացնել բաժնետոմսերը նախապատվության իրավունքով ձեռք բերող անձին,
- ներկայացվել է սույն պայմանների 3.13. կետով նախատեսված նախապատվության իրավունքի կիրառման ժամկետի ավարտից հետո:

3.16. Ծանուցման չընդունման դեպքում բաժնետոմսերը նախապատվության իրավունքով ձեռք բերող անձի կողմից կարող է ներկայացնել նոր ծանուցում՝ վերացնելով դրանում առկա թերությունները և/կամ բացթողումները /անճշտությունները/, իսկ այն անհնար լինելու կամ չիրականացվելու դեպքում բաժնետոմսերի ձեռք բերման համար դրամական միջոցները նախապատվության իրավունքի կիրառման ժամկետի ավարտից ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում ենթակա են վերադարձման անկանխիկ եղանակով /հայտի մեջ նշված բանկային ռեկվիզիտներով/:

3.17. Նախապատվության իրավունքը կիրառվում է համամասնորեն և հասանելիք բաժնետոմսերի քանակը որոշվում է յուրաքանչյուր բաժնետիրոջ պատկանող բաժնետոմսերի քանակից: Եթե նախապատվության իրավունքի կիրառման արդյունքում որևէ բաժնետիրոջ հասանելիք բաժնետոմսերի թիվը ստացվում է կոտորակային թիվ, ապա այն կլորացվում է միավորի ճշտությամբ /մինչև 0.5-ը դեպի ներքև, իսկ 0.5 և ավելին դեպի վեր/, իսկ եթե մեկից փոքր է ստացվում, ապա նրան տրամադրվում է մեկ բաժնետոմս ձեռք բերելու նախապատվության իրավունք: Ընկերության բաժնետերի կողմից նախապատվության իրավունքից հրաժարվելու մասին բավարար հիմնավորումներ ունենալու դեպքում Ընկերությունը կարող է բոլոր հասանելիք բաժնետոմսերի կոտորակային մասերը կլորացնել ի օգուտ բաժնետիրոջը /այսինքն ցանկացած կոտորակային մասի դիմաց կարող է տրվել մեկ բաժնետոմս/:

3.18. Երբ ծանուցման մեջ նշված բաժնետոմսերի քանակը գերազանցում է բաժնետոմսերը նախապատվության իրավունքով ձեռք բերող անձին նախապատվության իրավունքի կիրառման շրջանակում հասանելիք բաժնետոմսերի առավելագույն քանակից, ապա այն ենթակա է բավարարման տվյալ բաժնետիրոջ հասանելիք առավելագույն քանակով, ապա այդ տարբերությունը կարող է բավարարել ազատ բաժանորդագրության ենթակա բաժնետոմսերի հաշվին:

3.19. Ընկերությունը պետք է իր ինտերնետային կայքում տեղեկատվություն բացահայտի նախապատվության իրավունքի իրականացման արդյունքների մասին նախապատվության իրավունքի կիրառման ժամկետի ավարտից հետո 3 օրվա ընթացքում:

*Բաժնետոմսերի բաժանորդագրության պայմաններ*

3.20. Բաժնետոմսերի ազատ բաժանորդագրության ընթացքում բաժնետոմսերի փաստացի օտարման (բաժնետոմսերի փոխանցման) իրականացման հիմք են հանդիսանում բաժնետոմսեր ձեռք բերող անձի կողմից տեղաբաշխողին ներկայացված բաժնետոմսերի բաժանորդագրության հայտը և հայտում նախատեսված քանակի բաժնետոմսերի ձեռք բերման համար համապատասխան վճարումը հավաստող փաստաթուղթը:

3.21. Բաժնետոմսերի ազատ բաժանորդագրության, բաժանորդագրության հայտերի ձևը, դրանց ընդունման և բավարարման կարգը սահմանվում է տեղաբաշխողի կողմից:

## 4. ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

4.1. Ընկերությունը պարտավոր է ինտերնետային կայքում (www.artsakhhek.am) բաժնետոմսերի հրապարակային առաջարկի, տեղաբաշխման գնի, ժամկետների և կարգի, այդ թվում՝ նախապատվության իրավունքի կիրառման կարգի, նախապատվության իրավունքի կիրառման արդյունքների և բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքների մասին, ինչպես նաև սույն պայմաններով սահմանված պահանջվող այլ տեղեկատվություններ բացահայտել:

4.2. Ընկերությունը պարտավոր է բաժնետոմսերի ազդագրի գրանցումից հետո եռօրյա ժամկետում իր ինտերնետային կայքում հրապարակել բաժնետոմսերի ազդագիրը և կից փաստաթղթերը՝ ապահովելով արտաքին օգտագործողներին այն բեռնավորելու հնարավորություն:

4.3. Ընկերությունը իրավունք ունի սույն պայմանների 4.1. և 4.2. կետերով նախատեսված, ինչպես նաև տեղաբաշխման ընթացքում տեղաբաշխված բաժնետոմսերի քանակի մասին տեղեկությունները բացահայտել այլ զանգվածային լրատվության միջոցներով, բուկլետների, ուղեցույցների, վերլուծական նյութերի պատրաստման և գովազդային հոլովակների միջոցով կամ մամուլում տրվող հայտարարությունների միջոցով:

## 5. ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

5.1. Սույն պայմաններով տեղաբաշխման ենթակա բաժնետոմսերի շրջանառությունը պետք կազմակերպվի Ընկերության նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերի հետ միասնական ընդհանուր եղանակով՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

5.2. Երկրորդային շուկայում բաժնետոմսերի շրջանառությունը (գործարքների կատարումը) կազմակերպվում է «Հայաստանի Ֆոնդային Բորսա» ԲԲԸ-ում՝ վերջինիս կանոններով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.3. Ընկերությունը բաժնետոմսերի իրացվելիության (գնանշումների կատարման) ապահովման նպատակով օգտվելու է շուկա ստեղծողի (մարքեթ մեյքեր) ծառայություններից:

## 6. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

6.1. Սույն պայմաններով չկարգավորվող հարաբերությունները կարգավորվում են ՀՀ գործող օրենսդրությամբ, Ընկերության այլ որոշումներով կամ նրա կողմից կնքված պայմանագրերով (որոնց վերաբերյալ տեղեկությունները կներկայացվեն բաժնետոմսերի ազդագրում այնպես, որ ցանկացած ներդրող հնարավորություն կունենա ծանոթանալ և դրանք հաշվի առնել իր ներդրումային որոշման հիմքում):

6.2. Սույն պայմանների ընդունման պահից հետո տեղի ունեցող էական հանգամանքներ կամ փաստեր ի հայտ գալու դեպքում կարող են սույն պայմանների դրույթները կիրառվել մասնակի կամ կիրառվել որոշակի փոփոխություններով, որի մասին բաժնետոմսերի ազդագրում կներառվի այդ էական փաստի կամ հանգամանքի, ինչպես նաև դրույթների կիրառման առանձնահատկությունների մասին մանրամասն տեղեկություններ, եթե այդ դրույթի փոփոխությունը կամ մասնակի կիրառումը չի հանգեցնում օրենքի և այլ իրավական ակտերի, ինչպես նաև Ընկերության կանոնադրության պահանջների խախտմանը:

**«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ**
**Բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվության իրավունքի մասին ծանուցում**

Հարգելի բաժնետեր,

Դուք իրավունք ունեք նախապատվության իրավունքով ձեռք բերել «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի կողմից լրացուցիչ տեղաբաշխվող բաժնետոմսերից՝ Ձեր բաժնեմասին համամասնորեն:

Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերի քանակը կազմում է 1,350,000 (մեկ միլիոն երեք հարյուր հիսուն հազար) հատ: Մեկ բաժնետոմսի տեղաբաշխման գինը նախապատվության իրավունքով ձեռք բերելու պարագայում կազմում է 1,050 (մեկ հազար հիսուն) ՀՀ դրամ:

Նախապատվության իրավունքի կիրառման շրջանակում Ձեր կողմից ձեռք բերվող բաժնետոմսերի քանակը որոշվում է, որպես Ձեզ պատկանող բաժնետոմսերի քանակ*(1,350,000/10,650,000) արտադրյալ:

- Եթե ստացված թվի կոտորակային մասը <0.5-ից, ապա Ձեզ հասանելիք բաժնետոմսերի քանակը կկազմի ստացված թվի ամբողջ մասը,
- Եթե ստացված թվի կոտորակային մասը >0.5-ից, ապա Ձեզ հասանելիք բաժնետոմսերի քանակը կկազմի ստացված թվի ամբողջ մասը + մեկ բաժնետոմս,
- Եթե ստացված թիվը փոքր է 1-ից, ապա Ձեզ հասանելիք բաժնետոմսերի թիվը կկազմի 1:

Բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվության իրավունքից օգտվելու համար անհրաժեշտ է լրացնել և մինչև բաժնետոմսերի <u>տեղաբաշխման առաջին օրվան նախորդող աշխատանքային օրը</u> «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ (ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Վ.Սարգսյան 25ա) ներկայացնել նախապատվության իրավունքի կիրառմամբ բաժնետոմսերի ձեռք բերման ծանուցում (որի ձևը կցվում է): Ձեր գրությունը կարող եք ներկայացնել նաև «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի գրասենյակ ՀՀ, 0010, ք. Երևան, Վ.Սարգսյան 10): Բաժնետոմսերի ձեռք բերման ծանուցմանը կից, սակայն ոչ ուշ քան մինչև <u>տեղաբաշխման առաջին օրվան նախորդող աշխատանքային օրը</u>, պետք է ներկայացնել բաժնետոմսերի դիմաց վճարումը հավաստող փաստաթուղթը:

***<u>Հ Ի Շ Ե Ց Ո Ւ Մ</u>***

***<u>Ցանկանում ենք տեղեկացնել Ձեզ, որ նախապատվության իրավունքի կիրառման շրջանակներում բաժնետոմսեր ձեռք չբերելու պարագայում, Ձեր մասնաբաժինը ընկերության կանոնադրական կապիտալում կարող է նվազել: Նվազման հարաբերակցությունը կախված կլինի փաստացի տեղաբաշխված բաժնետոմսերի քանակից:</u>***

***<u>Միաժամանակ տեղեկացնում ենք Ձեզ, որ նախապատվության իրավունքից օգտվելու ժամկետի ավարտից հետո, բաց բաժանորդագրության շրջանակներում, մեկ բաժնետոմսերի առաջարկի գինը «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ խորհրդի որոշմամբ սահմանվել է 1,500 ՀՀ դրամ:</u>***

Բաժնետոմսերի դիմաց վճարումը պետք է կատարվի «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ»-ում Ընկերության անունով բացված 2500036910046100 բանկային (տարանցիկ) հաշվին՝ անկանխիկ եղանակով: Բաժնետոմսերի դիմաց վճարումը կարող է կատարվել ցանկացած բանկում վերը նշված հաշվին փոխանցելու միջոցով: Ֆիզիկական անձինք կարող են նաև Բանկի գրասենյակում վճարումը կատարել կանխիկ եղանակով:

Բաժնետոմսերի ձեռք բերման և Ընկերության վերաբերյալ մանրամասն տեղեկությունները ներառված են Բաժնետոմսերի ազդագրում, որը կարող եք ստանալ «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ-ի կամ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի գրասենյակներից կամ այցելել վերջիններիս ինտերնետային կայքերը, համապատասխանաբար՝ www.artsakhhpp.com և www.armswissbank.am:

Հարգանքներով՝

«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ
Գլխավոր տնօրեն Վ. Բեգլարյան

Ծանուցում

**Բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվության իրավունքից օգտվելու մասին**

Սույնով տեղեկացնում եմ, որ ցանկանում եմ նախապատվության իրավունքի շրջանակում ձեռք բերել «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ՓԲԸ-ի բաժնետոմսեր:

Անուն Ազգանուն---------------------------------

Հասցե՝ ----------------------------------------------
------------------------------------------------------

Հեռ. ------------------, էլ. փոստ------------------

Անձնագրային տվյալներ ------------------,

Ձեռք բերվող բաժնետոմսերի քանակ

՝

---------------- հատ

| | |
|---|---|
| Վճարման փաստաթուղթը կցված է | |

| | |
|---|---|
| Արժեթղթերի հաշվի համարը | ------------------------------------ |
| Արժեթղթերի հաշիվը վարող անձի անվանումը | ------------------------------------ |
| Դրամական հաշվի համարը | ------------------------------------ |
| Դրամական հաշիվը վարող Բանկի անվանումը | ------------------------------------ |

Ծանոթություն

- Ընկերության կողմից ծանուցումը կարող է չընդունվել, եթե ներկայացված չէ սահմանված ձևին համապատասխան և լրացված է ոչ լիարժեք, բացակայում է բաժնետոմսերի դիմաց վճարման մասին փաստաթուղթը, թույլ չի տալիս նույնականացնել բաժնետոմսերը նախապատվության իրավունքով ձեռք բերող անձին, ներկայացվել է նախապատվության իրավունքի կիրառման ժամկետի ավարտից հետո:
- Ծանուցման չընդունման դեպքում կարող է ներկայացնել նոր ծանուցում՝ վերացնելով դրանում առկա թերությունները և/կամ բացթողումները, իսկ այն անհնար լինելու կամ չիրականացվելու դեպքում բաժնետոմսերի ձեռք բերման համար դրամական միջոցները նախապատվության իրավունքի կիրառման ժամկետի ավարտից ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում ենթակա են վերադարձման անկանխիկ եղանակով՝ սույն ծանուցման մեջ նշված բանկային հաշվին փոխանցելու միջոցով կամ բաժնետիրոջ գրավոր դիմումի հիման վրա կանխիկ եղանակով՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի գրասենյակից:
- Երբ ծանուցման մեջ նշված բաժնետոմսերի քանակը գերազանցում է բաժնետոմսերը նախապատվության իրավունքով ձեռք բերող անձին նախապատվության իրավունքի կիրառման շրջանակում հասանելիք բաժնետոմսերի առավելագույն քանակին, ապա այն կարող է բավարարվել տվյալ բաժնետիրոջը հասանելիք առավելագույն քանակով, իսկ այդ տարբերությունը կարող է բավարարվել ազատ բաժանորդագրության ենթակա բաժնետոմսերի հաշվին /այս դեպքում բաժնետերը պարտավոր է ավելացնել նախապատվության իրավունքի կիրառմամբ և բաց բաժանորդագրության համար սահմանված գների տարբերությունը /յուրաքանչյուր բաժնետոմսի հաշվարկով/, Ազդագրում սահմանված կարգով մուտքագրելով այն Բանկում բացված 2500036910046100 բանկային (տարանցիկ) հաշվին /:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ
Ֆիզիկական անձանց համար

SUBSCRIPTION FORM
For individuals

Ֆիզիկական անձի վերաբերյալ տեղեկություններ
Information about The Individual

| | |
|---|---|
| Անուն, ազգանուն<br>Name, Surname | |
| Անձնագրային տվյալներ<br>Passport details | |
| Բնակության վայրը<br>Residence address | |
| Կապի միջոցները (Հեռ., Ֆաքս, Էլ. փոստ)<br>Contact details (Tel., Fax, E-mail) | |
| Արժեթղթերի հաշվի համարը (առկայության դեպքում)<br>Details of securities account (if available) | |
| Արժեթղթերի հաշիվը վարող անձի անվանումը<br>The name of custodian organization | |
| Դրամական հաշվի համարը<br>Details of money account (if available) | |
| Դրամական հաշիվը վարող բանկի անվանումը<br>The name of beneficiary bank | |

Բաժանորդագրության վերաբերյալ տեղեկություններ
Information about subscription

| | |
|---|---|
| Բաժնետոմսերի քանակ<br>Number of shares | |
| Բաժնետոմսերի ընդհանուր անվանական արժեքը<br>Total nominal value of shares | |
| Գործարքի ծավալը (ՀՀ դրամ)<br>Transaction volume (AMD) | |

| |
|---|
| Բաժանորդագրության ձևը |

| Type of subscription | | |
|---|---|---|
| | | All or none |
| | | Partial |

Ես, ստորագրելով սույն փաստաթուղթը, տեղեկացնում եմ, որ.

By signing this document I verify, that.

1. Ծանոթացել եմ «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ բաժնետոմսերի ազդագրին
   I have read the entire Prospectus of "Artsakh HEK" OJSC
2. Գիտակցում եմ սույն բաժնետոմսերում ներդրումների հետ կապված ռիսկերը:
   I realize the risks related to the investment in the offered shares.

**Ներդրողի լիազոր անձ**
**Authorized person of the Investor** ----------------------------------------------- --------------------------------------
---

Անուն Ազգանուն, Name Surname

Ստորագրություն (կնիք) Signature

(Seal)

---

**Լրացվում է Բանկի լիազորված աշխատակցի կողմից**
**For the Bank use only**

Հայտի ներկայացման ամսաթիվ
Submission date ______________________________ ______________________________

օր, ամիս, տարեթիվ, day, month, year ժամ, րոպե, hour, minute

Վճարման ամսաթիվ
Payment date ______________________________

օր, ամիս, տարեթիվ, day, month, year

Նշում բաժանորդագրության հայտի ընդունված լինելու մասին
Note on the acceptance of the subscription form ______________________________

ARMSWISSBANK
Private & Investment Banking

Բաժանորդագրված բաժնետոմսեր
Subscribed shares

______________________ ______________________
քանակ, quantity  գումար, volume

Լիազորված աշխատակից
Authorized employee

______________________ ______________________
Անուն, Ազգանուն, Name Surname  Ստորագրություն, signature

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ
Ֆիզիկական անձանց համար

SUBSCRIPTION FORM
For individuals

Ֆիզիկական անձի վերաբերյալ տեղեկություններ
Information about The Individual

| | |
|---|---|
| Անվանումը<br>Name | |
| Գրանցման տվյալներ<br>Registration details | |
| Գտնվելու վայրը<br>Legal address | |
| Կապի միջոցները (Հեռ., Ֆաքս, Էլ. փոստ)<br>Contact details (Tel., Fax, E-mail) | |
| Արժեթղթերի հաշվի համարը (առկայության դեպքում)<br>Details of securities account (if available) | |
| Արժեթղթերի հաշիվը վարող անձի անվանումը<br>The name of custodian organization | |
| Դրամական հաշվի համարը<br>Details of money account (if available) | |
| Դրամական հաշիվը վարող բանկի անվանումը<br>The name of beneficiary bank | |

Բաժանորդագրության վերաբերյալ տեղեկություններ
Information about subscription

| | |
|---|---|
| Բաժնետոմսերի քանակ<br>Number of shares | |
| Բաժնետոմսերի ընդհանուր անվանական արժեքը<br>Total nominal value of shares | |
| Գործարքի ծավալը (ՀՀ դրամ)<br>Transaction volume (AMD) | |

Բաժանորդագրության ձևը

| Type of subscription | | |
|---|---|---|
| | | All or none |
| | | Partial |

Ես, ստորագրելով սույն փաստաթուղթը, տեղեկացնում եմ, որ.

By signing this document I verify, that.

1. Ծանոթացել եմ «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ բաժնետոմսերի ազդագրին
   I have read the entire Prospectus of “Artsakh HEK” OJSC
2. Գիտակցում եմ սույն բաժնետոմսերում ներդրումների հետ կապված ռիսկերը:
   I realize the risks related to the investment in the offered shares.

**Ներդրողի լիազոր անձ**
**Authorized person of the Investor** ------------------------------------------------ ----------------------------------------
---

Անուն Ազգանուն, Name Surname — Ստորագրություն (կնիք) Signature

(Seal)

---

**Լրացվում է Բանկի լիազորված աշխատակցի կողմից**
**For the Bank use only**

Հայտի ներկայացման ամսաթիվ
Submission date ______________________________

______________________________

օր, ամիս, տարեթիվ, day, month, year — ժամ, րոպե, hour, minute

Վճարման ամսաթիվ
Payment date ______________________________

օր, ամիս, տարեթիվ, day, month, year

Նշում բաժանորդագրության հայտի ընդունված լինելու մասին
Note on the acceptance of the subscribtion form ______________________________

Բաժանորդագրված բաժնետոմսեր
Subscribed shares

| | |
|---|---|
| ________________________ | ________________________ |
| քանակ, quantity | գումար, volume |

Լիազորված աշխատակից
Authorized employee

| | |
|---|---|
| ________________________ | ________________________ |
| Անուն, Ազգանուն, Name Surname | Ստորագրություն, signature |

| | | |
|---|---|---|
| **ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԳԻՐ N** ABA069<br>"20" փետրվարի 2019թ. | | 0401002 |
| Վճարող` "Արցախ ՀԷԿ" ԲԲԸ<br>ՀՎՀՀ - 90025315 | **ԴԵԲԵՏ**<br>հշ.N<br>22300408116000 | **ԳՈՒՄԱՐ (AMD)**<br>50,000.00 |
| Վճարողի բանկը`<br>ԱՐՑԱԽԲԱՆԿ ՓԲԸ Բանկի կոդ 22300 | | |
| Ստացող` ՀՀ Կենտրոնական Գանձապետարան<br>ՀՎՀՀ - | **ԿՐԵԴԻՏ**<br>հշ.N<br>900005016119 | օրվա տույժ |
| Ստացողի բանկը`<br>Կենտրոնական գանձապետարան Բանկի կոդ 90000 | հշ.N | գումարը տույժով<br>%-ից |
| Փոստով-հեռագրով (ընդգծել)<br><br>Գումարը բառերով`<br>*Հիսուն հազար դրամ* | | Գործ.տեսակ<br>Վճար.նշան.<br>Վճար.ժամկ.<br>Հերթ.վճար.<br>Քղ.բանկի N |
| Ապրանքի ստացման,կատարված ծառայության Ա/Թ | | |

Վճարման նպատակը,կատարված ծառայությունների,աշխատանքների, ապրանքի անվանումը, ապրանքային փաստաթղթերի գումարները և NN.
Պետտուրք ազդագրի գրանցման համար

Կ.Տ. Հաճախորդի ստորագրություններ`

______________ թ.

______________ Բանկի ստորագր.` *[signature]*

Անցկացված է բանկով
« *20* » *02* 20*19*

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԹԻՎ -----
ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՉԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

ք.Երևան «28» դեկտեմբերի 2018թ.

«ԱՐՑԱԽ ՀԵԿ» ԲԲԸ-ն (այսուհետև՝ «Թողարկող»), ի դեմս Գլխավոր տնօրեն Վահրամ Բեգլարյանի, որը գործում է Թողարկողի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն (այսուհետև՝ «Բանկ»), ի դեմս Գործադիր տնօրեն Գնորգ Մաչանյանի, որը գործում է Բանկի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, միասին անվանվելով նաև «Կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1.1. Հիմք ընդունելով Թողարկողի Տնօրենների խորհրդի 14.11.2018թ. թիվ 6-2018/01 որոշումը Թողարկողը նախատեսում է տեղաբաշխել 1,350,000,000 (մեկ միլիարդ երեք հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ ընդհանուր անվանական ծավալի բաժնետոմսեր (այսուհետև՝ «Բաժնետոմսեր») հետևյալ պայմաններով.

| | | |
|---|---|---|
| 1.1.1. | **Բաժնետոմսի դասը** | Հասարակ անվանական բաժնետոմս, |
| 1.1.2. | **Բաժնետոմսի ձևը** | Ոչ փաստաթղթային, |
| 1.1.3. | **Շրջանառության ձևը** | Ազատ շրջանառության իրավունքով, |
| 1.1.4. | **Քանակը** | 1.350.000 (մեկ միլիոն երեք հարյուր հիսուն հազար) հատ, |
| 1.1.5. | **Անվանական արժեք** | 1,000 (մեկ հազար) ՀՀ դրամ, |
| 1.1.6. | **Տեղաբաշխման եղանակը** | Չերաշխավորված: |

## 2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

2.1. Սույն պայմանագրով Բանկը պարտավորվում է Թողարկողին մատուցել Բաժնետոմսերի տեղաբաշխման հետ կապված սույն պայմանագրի 2.2. կետում նշված ծառայությունները, իսկ Թողարկողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով վճարել մատուցված ծառայությունների համար:

2.2. Բանկը Թողարկողին մատուցում է հետևյալ ծառայությունները՝

2.2.1. մշակում է Թողարկողի կողմից տրամադրված տեղեկությունների հիման վրա Բաժնետոմսերի ազդագիրը (այսուհետև՝ «Ազդագիր») և համագործակցում է Թողարկողի հետ ՀՀ կենտրոնական բանկում Ազդագրի գրանցման ուղղությամբ,

2.2.2. աջակցում է Թողարկողին Բաժնետոմսերի տեղաբաշխման հետ կապված մարքեթինգային աշխատանքներում (կազմակերպում է պոտենցիալ ներդրողների հետ հանդիպումներ), որոնց հետ կապված ֆինանսական ծախսերը չեն մտնում սույն պայմանագրով նախատեսված պայմանագրի գումարի մեջ,

2.2.3. աջակցում է Թողարկողին բաժնետերերի կողմից Բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվության իրավունքի կիրառման, բաժնետերերի կողմից Բաժնետոմսերի ձեռքբերման արդյունքների ամփոփման և նախապատվության իրավունքի կիրառմանն առնչվող այլ հարցերում,

2.2.4. կազմակերպում է բաժնետերերի կողմից Բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվության իրավունքի կիրառման արդյունքում չտեղաբաշխված Բաժնետոմսերի տեղաբաշխման նպատակով Բաժնետոմսերի ազատ բաժանորդագրություն՝ չերաշխավորելով Բաժնետոմսերի տեղաբաշխման ավարտի դրությամբ չօտարված Բաժնետոմսերի տեղաբաշխումը: Բաժնետոմսերի տեղաբաշխման կազմակերպման նպատակով Բանկը՝

ա) կազմակերպում է Բաժնետոմսերի ազատ բաժանորդագրություն՝ պահպանելով Բաժնետոմսերի տեղաբաշխման մասին Թողարկողի որոշման և սույն պայմանագրի պահանջները,

բ) գործադրում է լավագույն ջանքեր Բաժնետոմսերի պոտենցիալ գնորդներ բացահայտելու և Բաժնետոմսերի տեղաբաշխման առնչությամբ,

2.2.5. ձեռնարկում է անհրաժեշտ գործողություններ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ում (այսուհետև՝ «ՀԿԴ») Բաժնետոմսերը Թողարկողի թողարկման հաշվից գնորդների համապատասխան հաշիվներին փոխանցելու կապակցությամբ: Բաժնետոմսերի տեղաբաշխման ընթացքում Բաժնետոմսերի գնորդներին աջակցում է Բաժնետոմսերի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման գործընթացում և այդ նպատակով տրամադրում է անհրաժեշտ տեղեկատվություն,

2.2.6. Բաժնետոմսերի տեղաբաշխման ավարտից հետո ամփոփում է տեղաբաշխման արդյունքները, նախապատրաստում է տեղաբաշխման ընթացքի և արդյունքների մասին օրենքով սահմանված հաշվետվությունները,

2.2.7. Թողարկողի հետ համատեղ կազմակերպում է «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ ֆոնդային բորսայում Բաժնետոմսերի ցուցակման ապահովումը և պահանջվող տեղեկությունների (հաշվետվությունների/փաստաթղթերի) կազմումը և ֆոնդային բորսա ներկայացումը:

## 3. ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ (ՕՏԱՐՄԱՆ) ԿԱՐԳԸ ԵՎ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՄԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Բաժնետերերի կողմից Բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվության կիրառման շրջանակում Թողարկողին ներկայացված փաստաթղթերը (ծանուցումները) և Բաժնետոմսերի դիմաց վճարումները (սույն պայմանագրի 3.6. կետում նշված բանկային հաշվին փոխանցումները) հիմնավորող փաստաթղթերը Թողարկողի կողմից դրանք ստանալու պահից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում է Բանկ: Ներկայացված փաստաթղթերի հիման վրա Բանկը նախապատվության իրավունքի կիրառման ժամկետի ավարտից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում ամփոփում է նախապատվության իրավունքի կիրառման արդյունքները և համապատասխան հաշվետվություն է ներկայացնում Թողարկողին:

3.2. Նախապատվության իրավունքի կիրառմամբ տեղաբաշխված բաժնետոմսերի փոխանցումը դրանց սեփականատերերի հաշիվներին կատարվում է բաժնետոմսերի ազատ բաժանորդագրության արդյունքների ամփոփումից հետո՝ սույն պայմանագրով սահմանված կարգով:

3.3. Բաժնետերերի կողմից Բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվության իրավունքի կիրառման շրջանակում չտեղաբաշխված Բաժնետոմսերի տեղաբաշխման նպատակով Բանկը կազմակերպում է Բաժնետոմսերի ազատ բաժանորդագրություն՝ պահպանելով Բաժնետոմսերի տեղաբաշխման մասին Թողարկողի որոշման և սույն պայմանագրի պահանջները:

3.4. Բաժնետոմսերի ազատ բաժանորդագրության ընթացքում Բաժնետոմսերի ձեռք բերումն իրականացվում է Բանկին Բաժնետոմսեր ձեռք բերող անձի կողմից բաժանորդագրության հայտ ներկայացնելու հիման վրա, որի ձևը սահմանում է Բանկը:

3.5. Հայտի ներկայացման հետ մեկտեղ Բաժնետոմսեր ձեռք բերող անձը պետք է կատարի նաև ձեռք բերման ենթակա Բաժնետոմսերի դիմաց վճարումը:

3.6. Բաժնետոմսերի դիմաց վճարումը կատարվում է Բաժնետոմսերի տեղաբաշխման նպատակով Բանկում Թողարկողի անունով բացված 2500036910046100 բանկային (տարանցիկ) հաշվին գումարը փոխանցելու կամ կանխիկ մուտքագրելու միջոցով:

3.7. Բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքների ամփոփումից և Թողարկողի կանոնադրական կապիտալի ավելացման նպատակով կանոնադրության գրանցումից հետո Թողարկողը Բանկի միջնորդությամբ ՀԿԴ ներկայացնում է արժեթղթերի լրացուցիչ տեղաբաշխման հանձնարարական՝ ՀԿԴ-ի կանոններով սահմանված կարգով:

3.8. 3.7. կետում նշված գործողությունների՝ ՀԿԴ-ում պատշաճ կերպով գրանցվելուց հետո երկու օրվա ընթացքում Բանկը Բաժնետոմսերի ձեռք բերման համապատասխան գումարները փոխանցում է Թողարկողի՝ Բանկում բացված 2500010015780100 բանկային հաշվին, որից միջոցները

կարող են ազատ տնօրինվել Թողարկողի կողմից: Բանկը միաժամանակ Թողարկողին տրամադրում է փոխանցված գումարների մասին համապատասխան տեղեկատվություն:

3.9. Բաժնետոմսերի գրանցման և տեղաբաշխման հետ կապված ծախսերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարումները կատարվում են Թողարկողի կողմից:

## 4. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Թողարկողն իրավունք ունի`

4.1.1. Բանկից պահանջել սույն պայմանագրով վերջինիս ստանձնած պարտավորությունների ամբողջովին կատարում,

4.1.2. ցանկացած ժամանակ ստուգել Բանկի կողմից սույն պայմանագրով մատուցվող ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Բանկի գործունեությանը,

4.1.3. ողջամիտ և օրենքին չհակասող ցուցումներ տալ Բանկին` ծառայության մատուցման /փաստաթղթերի կազմման և դրանց բովանդակության/ վերաբերյալ,

4.1.4. ծառայության մատուցման ընթացքի վերաբերյալ հաշվետվություն պահանջել Բանկից:

4.2. Թողարկողը պարտավոր է`

4.2.1. տեղաբաշխման գործընթացի շրջանակներում կատարել ՀՀ և ԼՂՀ օրենսդրությամբ, ինչպես նաև սույն պայմանագրով սահմանված իր պարտականությունները,

4.2.2. Բանկի պահանջով ողջամիտ ժամկետներում տրամադրել նրա կողմից մատուցվող ծառայությունների համար անհրաժեշտ տեղեկատվություն, ինչպես նաև Բանկի պահանջով Բանկին ներկայացնել անհրաժեշտ փաստեր և հիմնավորումներ Թողարկողի կողմից Ազդագրում բացահայտման ենթակա տեղեկատվության արժանահավատության և լիարժեքության վերաբերյալ,

4.2.3. փոխհատուցել Բանկին ներկայացված անարժանահավատ և խեղաթյուրված (բաց թողնված) տեղեկատվության բացահայտման հետևանքով Բանկի կրած այն վնասները, որոնք առաջացել են պետական լիազորված մարմինների կամ Բաժնետոմսեր ձեռքբերող ներդրողների պահանջով,

4.2.4. սույն պայմանագրով սահմանված ծառայությունների համար Բանկին վճարել սույն պայմանագրով սահմանված վճարները` սույն պայմանագրով սահմանված կարգով և պայմաններով,

4.2.5. Բանկին տալ լիազորագրեր սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար,

4.2.6. Բանկի պահանջով կատարել սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ այլ գործողություններ,

4.2.7. սույն պայմանագրի գործողության ընթացքում չփոփոխել Բաժնետոմսերի տեղաբաշխման պայմանները և չկատարել այնպիսի գործողություններ, որոնք կսահմանափակեն տեղաբաշխման ընթացքը կամ կվատթարացնեն Բաժնետոմսերի տեղաբաշխման և շրջանառության պայմանները,

4.2.8. Թողարկողի թողարկման հաշվից Բաժնետոմսերի փոխանցման նպատակով Բանկին տրամադրել Թողարկողի բաժնետերերի կողմից Բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվության իրավունքի կիրառման վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը (տեղեկությունները),

4.2.9. Բանկին ներկայացնել տեղեկատվություն ՀՀ կենտրոնական բանկ և ֆոնդային բորսա ներկայացվող տեղեկությունների և/կամ փաստաթղթերի լրացումների և փոփոխությունների (ընթացիկ, եռամսյակային և տարեկան հաշվետվությունների) և դրանց բովանդակության վերաբերյալ,

4.2.10. սույն պայմանագրով իր ստանձնած պարտավորությունների կատարմանը խոչընդոտող անհաղթահարելի ուժի ազդեցության ի հայտ գալու դեպքում անհապաղ տեղեկացնել այդ մասին Բանկին:

4.3. Բանկն իրավունք ունի`

4.3.1. Թողարկողից պահանջել սույն պայմանագրով վերջինիս ստանձնած պարտավորությունների ամբողջովին կատարումը,

4.3.2. Թողարկողից ստանալ և օգտագործել սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար Թողարկողի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ,

ինչպես նաև այդ տեղեկությունների արժանահավատության և լիարժեքության (ամբողջականության) վերաբերյալ լրացուցիչ հիմնավորումներ և փաստարկներ,

4.3.3. սույն պայմանագրի 2.2. կետով սահմանված ծառայությունների մատուցման ընթացքում Թողարկողի հետ կազմակերպել աշխատանքային հանդիպումներ և քննարկել այնպիսի հարցեր, որոնք պահանջում են հրատապ լուծումներ,

4.3.4. իր կողմից մատուցված ծառայությունների դիմաց ստանալ վարձատրություն՝ սույն պայմանագրով սահմանված կարգով, ժամկետներում և չափով:

4.4. Բանկը պարտավոր է՝

4.4.1. Տեղաբաշխման գործընթացի շրջանակներում կատարել սույն պայմանագրով, ՀՀ օրենսդրությամբ սահմանված իր կողմից ստանձնած պարտականությունները,

4.4.2. սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն սկսել ոչ ուշ, քան սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու և Թողարկողի կողմից անհրաժեշտ փաստաթղթերը Բանկին տրամադրելու հաջորդ օրվանից,

4.4.3. պատշաճ որակով մատուցել սույն պայմանագրով նախատեսված ծառայությունները,

4.4.4. ծառայությունները մատուցել ամբողջ ծավալով և ողջամիտ ժամկետներում,

4.4.5. պոտենցիալ գնորդների պահանջով նրանց անվճար տրամադրել Բաժնետոմսերի Ազդագրի տպագիր կամ էլեկտրոնային տարբերակը,

4.4.6. Թողարկողին տրամադրել հաշվետվություն կատարված աշխատանքների վերաբերյալ հետևյալ կարգով՝

- նախապատվության իրավունքի կիրառման արդյունքների վերաբերյալ հաշվետվություն (տրամադրվում է նախապատվության իրավունքի կիրառման համար նախատեսված ժամկետի ավարտից հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային տարբերակով),
- ընթացիկ (յուրաքանչյուր օրվա կտրվածքով կամ ըստ Թողարկողի պահանջի) հաշվետվություն Բաժնետոմսերի տեղաբաշխման վերաբերյալ (էլեկտրոնային տարբերակով),
- տեղաբաշխման արդյունքների մասին հաշվետվություն (տրամադրվում է Բաժնետոմսերի տեղաբաշխման ավարտից հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային տարբերակով):

## 5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների դիմաց Թողարկողը Բանկին վճարում է Բաժնետոմսերի տեղաբաշխված ընդհանուր ծավալի (հավաքագրված ընդհանուր գումարի) 1,00 (մեկ) տոկոսի չափով գումար /առանց ԱԱՀ/:

5.2. Թողարկողը 5.1. կետում նշված գումարը վճարում է հետևյալ փուլերով՝

ա) 1,500,000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը միանվագ վճարվում է որպես նախավճար՝ սույն պայմանագրի կնքման պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում,

բ) 5.1 կետում և 5.2 կետի ա) ենթակետում նշված գումարի տարբերությունը վճարվում է 2.2. կետով սահմանված ծառայությունները մատուցելուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում,

5.3. 2.2 կետում նշված ծառայությունների մատուցումը հավաստվում է Կողմերի միջև կնքվող ծառայությունների մատուցման հանձնման-ընդունման ակտով:

5.4. Սույն պայմանագրի 5.1. և 5.2 կետերով սահմանված գումարները Թողարկողը Բանկին վճարում է Բանկի կողմից ներկայացված հաշիվ-ապրանքագրերի հիման վրա: Բանկն այդ գումարները կարող է նաև անակցեպտ կարգով գանձել Բանկում բացված Թողարկողի բանկային հաշվից:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Կողմերը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով նախատեսված իրենց պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

6.2. Կողմը պատասխանատվություն չի կրում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար, եթե դա ծագել է մյուս կողմի՝ սույն պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու հետևանքով:

6.3. Պետական լիազոր մարմնի կողմից Բաժնետոմսերի Ազդագրի չգրանցման կամ «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ ֆոնդային բորսայում Բաժնետոմսերը չցուցակելու համար Բանկը պատասխանատվություն չի կրում, եթե դա եղել է Բանկից անկախ պատճառներով:

6.4. Սույն պայմանագրով սահմանված ժամկետներում ծառայությունների դիմաց վճարումը չկատարելու դեպքում Թողարկողը Բանկին վճարում է տույժ՝ յուրաքանչյուր ուշացրած օրվա համար ժամկետանց գումարի 0,2 (զրո ամբողջ երկու տասնորդական) տոկոսի չափով: Տույժի վճարումը Թողարկողին չի ազատում իր վրա դրված պարտավորությունները կատարելուց և խախտումները վերացնելու պարտականության կատարումից:

6.5. Սույն պայմանագրի 2.2. կետերով սահմանված ծառայությունների մատուցումից հրաժարվելու դեպքում Բանկը Թողարկողին վերադարձնում է ծառայությունների մատուցման դիմաց Թողարկողի կողմից վճարված նախավճարն ամբողջությամբ և վճարում է սույն պայմանագրի 5.2. կետի ա) ենթակետում նշված գումարի 10 (տասը) տոկոսի չափով տուգանք:

6.6. Սույն պայմանագիրը Թողարկողի նախաձեռնությամբ վաղաժամկետ լուծվելու դեպքում Թողարկողը Բանկին վճարում է սույն պայմանագրի 5.2. կետի ա) ենթակետում նշված գումարի 10 (տասը) տոկոսի չափով գումար և փաստացի մատուցված ծառայության/ների դիմաց՝ համաձայն երկկողմանի ստորագրված փաստացի մատուցված ծառայության/ների հանձնման-ընդունման ակտի:

6.7. Սույն պայմանագրի որևէ դրույթի անվավերությունը չի հանգեցնում այլ դրույթի (դրույթների) անվավերության: Կողմերը պարտավորվում են չվիճարկել պայմանագրի լրիվ կամ մասնակի անվավերությունը կամ իրավաբանական ուժը՝ պայմանագրով սահմանված իրենց պարտավորությունները չկատարելու համար, և միաժամանակ պարտավորվում են ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցներն ու գործողությունները պայմանագրի նպատակը և պայմանները գործող օրենսդրության համաձայն իրականացնելու ուղղությամբ:

6.8. Կողմերը պարտավորվում են ապահովել Բաժնետոմսերի տեղաբաշխման գործընթացի հրապարակայնությունը՝ օրենքով սահմանված կարգով և պայմաններով:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1. Սույն պայմանագրի կապակցությամբ Կողմերի միջև առաջացած տարաձայնություններն ու վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, համաձայնության չգալու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

## 9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Սույնով Թողարկողը հաստատում է, որ Բանկն իրեն ծանոթացրել է ՀՀ-ում ներդրումային ծառայությունների մատուցումը կարգավորող իրավական ակտերին:

9.2. Սույնով Թողարկողը հաստատում է, որ Բանկն իրեն տրամադրել է ՀՀ ԿԲ-ի կողմից ընդունված կանոնակարգ 4/07-ով սահմանված բոլոր տեղեկությունները:

9.3. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրելու պահից և գործում է մինչև սույն պայմանագրով նախատեսված Կողմերի պարտավորությունների լրիվ և պատշաճ կատարումը:

9.4. Սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերի նախաձեռնությամբ՝ այդ մասին մյուս Կողմին նախապես մեկ ամիս առաջ պատշաճ ծանուցելով:

9.5. Սույն պայմանագրում Կողմերի համաձայնությամբ կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք օրինական են միայն այն դեպքում, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.6. Կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում է ապահովել մյուս կողմից ստացված ֆինանսական, առևտրային և այլ տեղեկատվության խիստ գաղտնիությունը: Նման տեղեկատվության փոխանցումը երրորդ անձանց հնարավոր է միայն Կողմերի գրավոր համաձայնությամբ, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում:

9.7. Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Թողարկող**

«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ
Հասցե՝ ԼՂՀ, ք. Ստեփանակերտ,
Վ.Սարգսյան 25ա.
ՀՎՀՀ 90025315
h/h 2500010015780100
հեռ. Հեռ. (0479) 4-28-58
ֆաքս. (0479) 7-42-14

Գլխավոր տնօրեն
________________ Վահրամ Բեգլարյան

**Բանկ**

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վ.Սարգսյան 10
ՀՎՀՀ 02574955
h/h 103002102509,
ՀՀ կենտրոնական բանկ
հեռ. 060 757 000,
ֆաքս. 010 540 627
Գործադիր տնօրեն
________________ Գնորգ Մաչանյան

# «ԱՐՑԱԽ ՀԷԿ»ԲԲԸ
# 2018Թ. ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
# (ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿ)

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ 2019

## Կառավարման մարմինների տարեկան զեկույց

1)Թողարկողի բիզնեսի արդյունքների և զարգացման իրական պատկերի նկարագիրը՝ ներառյալ այն հիմնական ռիսկերի կամ անորոշությունների նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է թողարկողը: Այս նկարագիրը պետք է հավասարակշռված և համակողմանի վերլուծության ենթարկի թողարկողի ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը: Վերլուծությունները պետք է հնարավորություն տան պատկերացում կազմել թողարկողի ընդհանուր վիճակի, բիզնեսի արդյունքների և զարգացման մասին՝ ներառելով թողարկողի բիզնեսին յուրահատուկ ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների վերլուծությունը:

Ընկերության գործունեության հիմնական տեսակը էլեկտրաէներգիայի արտադրությունն է:

Ընկերությունը հիմնականում առնչվում է հետևյալ ռիսկերի և անորոշությունների հետ.

**Արժույթային ռիսկեր.** Այդ ռիսկերը ներառում են ՀՀ դրամի և այլ արժույթների փոխարժեքի զգալի փոփոխությունների հնարավորությունը,ինչպես նաև ՀՀ և ԼՂՀ դրամային կառույցների կողմից միջամտության կամ փոփոխությունների հնարավորությունը:

**Բնակլիմայական պայմանների ռիսկեր.** Բնակլիմայական պայմաններն ունեն էական ազդեցություն ընկերության գործունեության վրա: Ընկերության հասույթը էականորեն պայմանավորված է ջրի հոսքի ծավալներով: Չնայած նրան,որ նախկին մի քանի տարիների ջրի հոսքի ցուցանիշների վերլուծությունը թույլ է տալիս բավականին մեծ ճշտությամբ կատարել կանխատեսումներ, այնուամենայնիվ, բնակլիմայական գործոնով է պայմանավորված ընկերության հասույթի ծավալը և հետևաբար ֆինանսական ցուցանիշները:

Նշված ռիսկերն ու անորոշություններն էապես կազդեն նաև հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի վրա:

Հաշվետու ժամանակաշրջանում ընկերության արտադրանքը կազմել է 54 145 170 կվտ/ժ էլեկտրաէներգիա, որը մոտ 10%-ով գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արտադրված էլեկտրաէներգիային: Նշված էլեկտրաէներգիայից 32 174 800 կվտ/ժամն արտադրվել է «Սարսանգ»ՀԷԿ-ի միջոցով, 9 660 170 կվտ/ժամը՝«Թրղի կասկադ» ՀԷԿ-ի միջոցով, 10 434 480 կվտ/ժամը՝ «Մատաղիս կասկադ» ՀԷԿ-ի միջոցով, իսկ 1 875 720 կվտ/ժամը՝ «Լև-1» ՀԷԿ-ի միջոցով:

Ընկերության վերցրած և մարված վարկերի ծավալները բերված են թիվ 1 աղյուսակում:

«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ վարկերի ծավալը 2018թ.4-րդ եռ. Աղյուսակ1

| Վարկի կամ փոխառության աղբյուրը | Նոր վարկեր | Մարումներ |
|---|---|---|
| ՓԲԸ «Արցախբանկ» | 2 000 000 USD | 62 500 000 AMD<br>2 000 000 USD |
| *Ընդամենը* | *2 000 000 USD* | *62 500 000 AMD<br>2 000 000 USD* |

Ընկերության ամփոփ ֆինանսական ցուցանիշները և գործակիցները բերված են թիվ 2 և թիվ 3 աղյուսակներում.

ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ 2018թ.IV եռ. Աղյուսակ 2

| Ցուցանիշ | Հազ.դրամ |
|---|---|
| Արտադրանքի իրացումից հասույթ | 3 625 229 |
| Իրացված արտադրանքի ինքնարժեք | -879 858 |
| Իրացման ծախսեր | -2 534 |
| Վարչական ծախսեր | -338 527 |
| Գործառնական գործունեությունից շահույթ | 2 395 535 |
| 2018թ. 4-րդ եռամսյակ շահույթ | 1 887 757 |
| Դեբիտորական պարտք | 860 563 |
| Կրեդիտորական պարտք | 7 146 475 |

## ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ 2018թ. IV եռ.

Աղյուսակ 3

| Ցուցանիշի անվանումը | 31.12.2018թ. |
|---|---|
| Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով(EPS) | 177.25 |
| Սեփական կապիտալի շահութաբերություն(ROE) | 12.74% |
| Ակտիվների շահութաբերություն(ROA) | 8.56% |
| Զուտ շահույթի մարժա(NPM) | 52.07% |
| Կապիտալի համարժեքության գործակից | 68.06% |
| Ֆինանսական կախվածության գործակից | 46.92% |
| Բացարձակ իրացվելության գործակից | 0.220 |
| Ընթացիկ իրացվելության գործակից | 1.50 |
| Ընդհանուր իրացվելության գործակից | 1.69 |
| Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից | 4.24 |
| Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով | 86.14 |
| Պաշարների շրջանառելիության գործակից | 12.58 |
| Պաշարների շրջապտույտի տևողությունն օրերով | 29.01 |
| Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից | 0.122 |
| Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով | 3003.79 |

2)Այն կարևոր դեպքերի նկարագիրը, որոնք տեղի են ունեցել հաշվետու ժամանակաշրջանի սկզբից մինչև զեկույցը պատրաստելու օրը: Կարևոր դեպքերը բոլոր այն դեպքերն են, որոնք էական ազդեցություն են ունեցել թողարկողի ֆինանսական վիճակի վրա, ինչպես նաև այն դեպքերը, որոնք թողարկողի կարծիքով կարևոր են և (կամ) ողջամիտ ներդրողը կկարևորեր ներդրումային որոշումներ կայացնելիս:

Հաշվետու եռամսյակի համար Ընկերությունը կառանձնացներ հետևյալ իրադարձությունները:

- 2018թ. հոկտեմբերի 12-ին, տնօրենների խորհրդի անդամների հեռակա քվեարկությամբ տեղի ունեցավ «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի նիստը: Ընդունվեցին հետևյալ որոշումները.

-Հաստատել «Թրղի» ՀԷԿ-երի կասկադի հաստիքացուցակի փոփոխությունը:

- 2018թ. հոկտեմբերի 18-ին շահագործվել է «Լև-1» ՀԷԿ-ը:

- 2018թ. նոյեմբերի 11-ին, տնօրենների խորհրդի անդամների հեռակա քվեարկությամբ տեղի ունեցավ «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի նիստը: Ընդունվեցին հետևյալ որոշումները.

  -«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ կողմից իրականացնել սովորական անվանական բաժնետոմսերի լրացուցիչ թողարկում:

  -«Քարվաճառ» ՀԷԿ-ի շինարարական աշխատանքների ֆինանսավորման համար «Արցախբանկ» ՓԲԸ-ից ստանալ վարկային գիծ և որպես ապահովման միջոց գրավադրել «Լև-1» ՀԷԿ-ի հիմնական միջոցները:

  -1 Մվտ հզորությամբ արևային կայանի կառուցման ծրագրով նախագծի և սարքավորումների պատվիրման համար կնքել պայմանագիր: Ծրագրի ֆինանսավորման համար «Արցախբանկ» ՓԲԸ-ից ստանալ վարկային գիծ և որպես ապահովման միջոց գրավադրել «Լև-1» ՀԷԿ-ի հիմնական միջոցները:

  - 2018 թ. բյուջեի ծախսային մասում կատարել փոփոխություն:

- 2018թ. դեկտեմբերի 05-ին, տնօրենների խորհրդի անդամների հեռակա քվեարկությամբ տեղի ունեցավ «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի նիստը: Ընդունվեցին հետևյալ որոշումները.

  - 06.12.2018 թ-ին մինչև 7.00.000 ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով, մինչև 70.000 հատ, 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 9.5 տարեկան տոկոսադրույքով ոչ փաստաթղթային անվանական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկում:

- 2019թ. փետրվարի 05-ին, տնօրենների խորհրդի անդամների հեռակա քվեարկությամբ տեղի ունեցավ «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի նիստը: Ընդունվեցին հետևյալ որոշումները.

-Ընկերության 2019 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնող անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության համար ստեղծել մրցութային հանձնաժողով հետևյալ կազմով՝

1. Ա. Հարությունյան - Ընկերության Տնօրենների խորհրդի նախագահ
2. Հ. Բոյաջյան - Ընկերության Տնօրենների խորհրդի անդամ
3. Ա. Պետրոսյան - Ընկերության վերստուգող հանձնաժողովի նախագահ

-Հաստատել Ընկերության 2019 թվականի էլեկտրաէներգիայի արտադրության կանխատեսումները:

-Հաստատել Ընկերության 2019 թվականի եկամուտների և ծախսերի կանխատեսումները:

**3)Թողարկողի հետագա հնարավոր զարգացման նկարագիրը հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար:**

Ընկերության կանխատեսումները 2019թ.-ի 1-ին եռամսյակի արտադրվելիք էլեկտրաէներգիայի ծավալների համար հետևյալն է.

.«Սարսանգ » ՀԷԿ-ի արտադրանքի կանխատեսումներ՝ 28 550 000 կվտ/ժամ
.«Թրղի կասկադ» ՀԷԿ-ի արտադրանքի կանխատեսումներ՝ 9 090 000 կվտ/ժամ
.«Մատաղիս կասկադ» ՀԷԿ-ի արտադրանքի կանխատեսումներ՝ 10 250 000 կվտ/ժամ
.«Լև-1» ՀԷԿ-ի արտադրանքի կանխատեսումներ՝ 2 400 000 կվտ/ժամ

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մենք՝ պատասխանատու անձինք, հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Ընկերության ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների միջանկյալ զեկույցում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են:

## ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

| Անուն, Ազգանուն | Պաշտոն | Պատասխանատվության շրջանակ |
|---|---|---|
| Վահրամ Բեգլարյան | Գլխավոր տնօրեն | Որպես գլխավոր տնօրեն՝<br>✓ տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կատարում Ընկերության անունից,<br>✓ ներկայացնում է Ընկերությունը ԼՂՀ-ում և արտասահմանում,<br>✓ գործում է առանց լիազորագրի,<br>✓ տալիս է լիազորագրեր,<br>✓ սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային,<br>✓ բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ տարադրամային) և այլ հաշիվներ,<br>✓ Ընկերության Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության աշխատանքային կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների կանոնադրությունները, Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը,<br>✓ իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,<br>✓ սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին,<br>✓ աշխատակցի նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ: |

| | | |
|---|---|---|
| | | |
| Արայիկ Հարությունյան | Տնօրենների խորհրդի նախագահ | Որպես Խորհրդի նախագահ՝<br>մասնակցել Խորհրդի նիստերին,<br>✓ մասնակցել Խորհրդի որոշումների քվեարկությանը:<br>✓ կազմակերպում է Խորհրդի աշխատանքները,<br>✓ գումարում է Խորհրդի նիստերն ու նախագահում է դրանք,<br>✓ կազմակերպում է Խորհրդի նիստերի արձանագրության վարումը,<br>✓ նախագահում է ԲԸԺ-ներում: |
| Արմեն Գասպարյան | Տեխնիկական տնօրեն | ✓ կատարում է Ընկերության էլեկտրահիդրոկայանների էլեկտրաէներգիայի արտադրության պլանավորում և աշխատանքի ռեժիմների մշակում |
| Ժան Հովհաննիսյան | Ֆինանսական տնօրեն | ✓ Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության կառավարում |
| Արայիկ Դավթյան | Գլխավոր հաշվապահ | ✓ իրականացնում է հաշվապահական հաշվառման վարումը, ֆինանսական հաշվետվությունների ժամանակին կազմումն ու ներկայացումը,<br>✓ աջակցում է Ընկերության սեփականության պահպանման, նյութական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսների խնայողաբար օգտագործման նկատմամբ վերահսկողությանը,<br>✓ կազմակերպում է հաշվապահական հաշվառման քաղաքականությունը,<br>✓ գլխավորում է նախահաշիվների կազմման սկզբնական հաշվառման փաստաթղթերի օրինակելի ձևերի նախապատրաստման աշխատանքները: |

ՁԵՎ № 1

# ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ

առ 31.12.2018
(ամսաթիվ, ամիս, տարի)

| | | | ծածկագիրը |
|---|---|---|---|
| Ընկերության անվանումը | «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ | | 50046 |
| Փաստացի գործունեությունը | էլ. էներգիայի արտադրություն | | |
| Հարկ վճարողի հաշվառման համարը | | | 90025315 |
| Պետական ռեգիստրում գրանցման համարը | | | 44313011407 |
| Չափի միավորը | | | հազ. դրամ |
| Գտնվելու վայրը | ԱՀ, ք. Ստեփանակերտ, Վ. Սարգսյան 25 ա. | հեռախոսը | 954235 |
| Փաստացի գործունեության իրականացման վայրը | ԱՀ, ք. Ստեփանակերտ, Վ. Սարգսյան 25 ա. | հեռախոսը | 954235 |

| ԱԿՏԻՎ | տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| **I. Ոչ ընթացիկ ակտիվներ** | | | |
| Հիմնական միջոցներ | 010 | 15,598,595 | 21,191,068 |
| Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ | 020 | 3,218,670 | 45,800 |
| Ոչ նյութական ակտիվներ | 030 | | |
| Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ | 040 | | |
| Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ | 050 | | |
| Հետաձգված հարկային ակտիվներ | 060 | 2,093 | 2,092 |
| Այլ ոչ ընթացիկ ակտիվներ, այդ թվում` | 070 | 290,367 | 3,500 |
| | 071 | 290,367 | 3,500 |
| | 072 | | |
| | 073 | | |
| | 074 | | |
| **Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ** | **080** | **19,109,725** | **21,242,460** |
| **II. Ընթացիկ ակտիվներ** | | | |
| Նյութեր | 090 | 77,770 | 58,562 |
| Աճեցվող և բտվող կենդանիներ | 100 | | |
| Արագամաշ առարկաներ | 110 | 1,640 | 1,890 |
| Անավարտ արտադրություն | 120 | | |
| Արտադրանք | 130 | | |
| Ապրանքներ | 140 | | |
| Տրված ընթացիկ կանխավճարներ | 150 | 1,747 | 2,410 |
| Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով | 160 | 998,949 | 712,156 |
| Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով | 170 | | 145,798 |
| Այլ դեբիտորական պարտքեր | 180 | 1,024 | 199 |
| Ընթացիկ ֆինանսական ներդրումներ | 190 | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 200 | 1,446,773 | 147,757 |
| Այլ ընթացիկ ակտիվներ, այդ թվում` | 210 | 105,651 | 66,078 |
| | 211 | | |
| | 212 | 105,651 | 66,078 |
| | 213 | | |
| **Ընդամենը ընթացիկ ակտիվներ** | **220** | **2,633,554** | **1,134,850** |
| **Հ Ա Շ Վ Ե Կ Շ Ի Ռ** | **230** | **21,743,279** | **22,377,310** |

Ղեկավար — Վահրամ Բեգլարյան
անուն ,ազգանուն

Կ.
Տ.

Գլխավոր հաշվապահ — Արայիկ Դավթյան
անուն ,ազգանուն

| ՊԱՍԻՎ | տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| **III. Սեփական կապիտալ** | | | |
| Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար | 240 | 10,650,000 | 10,650,000 |
| Էմիսիոն եկամուտ | 250 | 457,127 | 457,127 |
| Վերագնահատումից և վերաչափումից տարբերություններ | 260 | | |
| Կուտակված շահույթ | 270 | 2,957,078 | 3,699,495 |
| Պահուստային կապիտալ | 280 | 343,874 | 424,213 |
| Սեփական կապիտալի այլ տարրեր, այդ թվում` | 290 | 0 | 0 |
| | 291 | | |
| | 292 | | |
| | 293 | | |
| **Ընդամենը սեփական կապիտալ** | **300** | **14,408,079** | **15,230,835** |
| **IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ** | | | |
| Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ | 310 | 6,325,783 | 6,473,993 |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | 320 | | |
| Ակտիվներին վերաբերող շնորհներ | 330 | | |
| Ոչ ընթացիկ պահուստներ | 340 | | |
| Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ, այդ թվում` | 350 | 0 | 0 |
| | 351 | | |
| | 352 | | |
| | 353 | | |
| **Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ** | **360** | **6,325,783** | **6,473,993** |
| **V. Ընթացիկ պարտավորություններ** | | | |
| Կարճաժամկետ բանկային վարկեր | 370 | | |
| Կարճաժամկետ փոխառություններ | 380 | 42,000 | |
| Կրեդիտորական պարտքեր գնումների գծով | 390 | 634,355 | 399,229 |
| Ստացված ընթացիկ կանխավճարներ | 400 | | |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին | 410 | 75,592 | 65,930 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով | 420 | | |
| Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով | 430 | 30,041 | 34,981 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր մասնակիցներին (հիմնադիրներին) | 440 | 169,686 | 107,154 |
| Այլ կրեդիտորական պարտքեր | 450 | 357 | 352 |
| Եկամուտներին վերաբերող շնորհներ | 460 | | |
| Ընթացիկ պահուստներ | 470 | | |
| Այլ ընթացիկ պարտավորություններ, այդ թվում` | 480 | 57,386 | 64,836 |
| | 481 | 36,464 | 38,515 |
| | 482 | 20,922 | 26,321 |
| | 483 | | |
| **Ընդամենը ընթացիկ պարտավորություններ** | 490 | 1,009,417 | 672,482 |
| **ՀԱՇՎԵԿՇԻՌ** | 500 | 21,743,279 | 22,377,310 |

Ղեկավար — Վահրամ Բեգլարյան
անուն ,ազգանուն

Կ. Տ.

Գլխավոր հաշվապահ — Արայիկ Դավթյան
անուն ,ազգանուն

ՁԵՎ № 2

# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

31.12.2018
(հաշվետու տարին (ժամանակաշրջանը))

| | | | ծածկագիրը |
|---|---|---|---|
| Ընկերության անվանումը | «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ | | 50046 |
| Փաստացի գործունեությունը | էլ. էներգիայի արտադրություն | | |
| Հարկ վճարողի հաշվառման համարը | | | 90025315 |
| Պետական ռեգիստրում գրանցման համարը | | | 44313011407 |
| Չափի միավորը | | | հազ. դրամ |
| Գտնվելու վայրը | ԱՀ, ք. Ստեփանակերտ, Վ. Սարգսյան 25 ա. | հեռախոսը | 954235 |
| Փաստացի գործունեության իրականացման վայրը | ԱՀ, ք. Ստեփանակերտ, Վ. Սարգսյան 25 ա. | հեռախոսը | 954235 |

| Ցուցանիշի անվանումը | տող | Նախորդ տարի (միջանկյալ ժա-մանակաշրջան` աճողական) | Հաշվետու տարի (միջանկյալ ժա-մանակաշրջան` աճողական) | Նախորդ տարվա միջանկյալ ժամանակաշրջան | Հաշվետու տարվա միջանկյալ ժամանակաշրջան |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ | 010 | 3,446,178 | 3,625,229 | 930,807 | 1,028,758 |
| Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք | 020 | -849,097 | -879,858 | -238,845 | -293,081 |
| Համախառն շահույթ (վնաս) | 030 | 2,597,081 | 2,745,371 | 691,962 | 735,677 |
| Իրացման ծախսեր | 040 | -3,538 | -2,534 | -1,523 | -2,040 |
| Վարչական ծախսեր | 050 | -312,392 | -338,527 | -85,803 | -101,774 |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս) | 060 | 2,281,151 | 2,404,310 | 604,636 | 631,863 |
| Գործառնական այլ եկամուտներ, այդ թվում` | 070 | **4,947** | **763** | **4,533** | **447** |
| | 071 | 4,947 | 763 | 4,533 | 447 |
| | 072 | | | | |
| | 073 | | | | |
| Գործառնական այլ ծախսեր, այդ թվում` | 080 | **-14,711** | **-9,538** | **-5,847** | **-6,665** |
| | 081 | -14,711 | -9,538 | -5,847 | -6,665 |
| | 082 | | | | |
| | 083 | | | | |
| Գործառնական շահույթ (վնաս) | 090 | **2,271,387** | **2,395,535** | **603,322** | **625,645** |
| Ֆինանսական ծախսեր | 100 | -455,145 | -538,515 | -119,614 | -186,457 |
| Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների գծով շահույթ (վնաս) | 110 | | | | |
| Ընդհատվող գործառնությանը վերագրելի ակտիվների վաճառքներից և պարտավորությունների մարումներից շահույթ (վնաս) | 120 | | | | |
| Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս), այդ թվում` | 130 | -9,442 | 36,978 | -51,733 | 3,607 |
| | 131 | -9,442 | 36,978 | -51,733 | 3,607 |
| | 132 | | | | |
| | 133 | | | | |
| Սովորական գործունեությունից շահույթ (վնաս) | 140 | 1,806,800 | 1,893,998 | 431,975 | 442,795 |
| Արտասովոր դեպքերից շահույթ (վնաս) | 150 | -6,191 | -6,241 | -1,602 | -1,552 |
| Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը | 160 | 1,800,609 | 1,887,757 | 430,373 | 441,243 |
| Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում) | 170 | | | | |
| Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո | 180 | 1,800,609 | 1,887,757 | 430,373 | 441,243 |
| Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ (վնաս)* | 190 | 169 | 177 | 40 | 41 |
| Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթ (վնաս)* | 200 | | | | |

* Սույն հոդվածների լրացումը պարտադիր է այն բաժնետիրական ընկերությունների կողմից, որոնց սովորական բաժնետոմսերը կամ պոտենցիալ սովորական բաժնետոմսերը հրապարակայնորեն վաճառվում են, կամ որոնք գտնվում են արժեթղթերի բաց (կանոնակարգվող) շուկայում սովորական բաժնետոմսեր կամ պոտենցիալ սովորական բաժնետոմսեր թողարկելու գործընթացում: Սույն հոդվածների գումարը ցույց է տրվում դրամներով (ոչ թե հազար դրամներով):

| | | |
|---|---|---|
| Ղեկավար՝ | | Վահրամ Բեգլարյան |
| | | (անուն, ազգանուն) |
| | Կ.Տ. | |
| Գլխավոր հաշվապահ՝ | | Արայիկ Դավթյան |
| | | (անուն, ազգանուն) |

ՁԵՎ № 3

# ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

31.12.2018
(հաշվետու տարին (ժամանակաշրջանը))

| | | | ծածկագիրը |
|---|---|---|---|
| Ընկերության անվանումը | «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ | | 50046 |
| Փաստացի գործունեությունը | Էլ. էներգիայի արտադրություն | | |
| Հարկ վճարողի հաշվառման համարը | | | 90025315 |
| Պետական ռեգիստրում գրանցման համարը | | | 44313011407 |
| Չափի միավորը | | | հազ. դրամ |
| Գտնվելու վայրը | ԱՀ, ք. Ստեփանակերտ, Վ. Սարգսյան 25 ա. | հեռախոսը | 954232 |
| Փաստացի գործունեության իրականացման վայրը | ԱՀ, ք. Ստեփանակերտ, Վ. Սարգսյան 25 ա. | հեռախոսը | 954232 |

| Սեփական կապիտալի տարրերի անվանումը / Հոդվածներ | տող | Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ: Կանոնադրական կապիտալ | Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ: Չվճարված կապիտալ | Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ: Հետ գնված կապիտալ | Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ: Զուտ գումարը | Էմիսիոն եկամուտ (վնաս) | Վերագնահատումից տարբերություններ | Վերաչափումից տարբերություններ | Կուտակված շահույթ (վնաս) | Պահուստային կապիտալ | Միջանկյալ շահաբաժիններ | Սեփական կապիտալի այլ տարրեր | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | **I. Նախորդ տարի (ժամանակաշրջան)** | | | | | | | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| Մնացորդը առ 01 հունվար 2017թ. | 010 | 10,650,000 | | | 10,650,000 | 457,127 | | | 2,509,460 | 249,731 | | | 13,866,318 |
| Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը | 020 | | | | | | | | | | | | 0 |
| Վերահաշվարկված մնացորդը | 030 | 10,650,000 | 0 | 0 | 10,650,000 | 457,127 | 0 | 0 | 2,509,460 | 249,731 | 0 | 0 | 13,866,318 |
| Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված եկամուտներ և ծախսեր | 040 | | | | | | | | | | | | 0 |
| Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում` | 050 | | | | 0 | | | | | | | | 0 |
| | 051 | | | | 0 | | | | | | | | 0 |
| | 052 | | | | 0 | | | | | | | | 0 |
| Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) զուտ շահույթ (վնաս) | 060 | | | | | | | | 1,800,609 | | | | 1,800,609 |
| Շահաբաժիններ | 070 | | | | | | | | -1,065,000 | | | | -1,065,000 |
| Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում` | 080 | | | | | | | | | | | | 0 |
| | 081 | | | | | | | | | | | | 0 |
| Ներքին շարժեր, այդ թվում` | 090 | | | | | | | | | | | | 0 |
| | 091 | | | | | | | | -94,143 | 94,143 | | | 0 |
| Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2017թ. | 100 | 10,650,000 | | | 10,650,000 | 457,127 | | | 3,150,926 | 343,874 | | | 14,601,927 |

| Սեփական կապիտալի տարրերի անվանումը / Հոդվածներ | տող | Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ: Կանոնադրական կապիտալ | Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ: Չվճարված կապիտալ | Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ: Հետ գնված կապիտալ | Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ: Զուտ գումարը | Էմիսիոն եկամուտ (վնաս) | Վերագնահատումից տարբերություններ | Վերաչափումից տարբերություններ | Կուտակված շահույթ (վնաս) | Պահուստային կապիտալ | Միջանկյալ շահաբաժիններ | Սեփական կապիտալի այլ տարրեր | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | **II. Հաշվետու տարի (ժամանակաշրջան)** | | | | | | | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| Մնացորդը առ 01 հունվար 2018թ. | 010 | 10,650,000 | | | 10,650,000 | 457,127 | | | 2,957,077 | 343,874 | | | 14,408,078 |
| Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը | 020 | | | | | | | | | | | | 0 |
| Վերահաշվարկված մնացորդը | 030 | 10,650,000 | 0 | 0 | 10,650,000 | 457,127 | 0 | 0 | 2,957,077 | 343,874 | 0 | 0 | 14,408,078 |
| Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված եկամուտներ և ծախսեր | 040 | | | | | | | | | | | | 0 |
| Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում` | 050 | | | | 0 | | | | | | | | 0 |
| | 051 | | | | 0 | | | | | | | | 0 |
| | 052 | | | | 0 | | | | | | | | 0 |
| Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) զուտ շահույթ (վնաս) | 060 | | | | | | | | 1,887,757 | | | | 1,887,757 |
| Շահաբաժիններ | 070 | | | | | | | | -1,065,000 | | | | -1,065,000 |
| Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում` | 080 | | | | | | | | | | | | 0 |
| | 081 | | | | | | | | | | | | 0 |
| Ներքին շարժեր, այդ թվում` | 090 | | | | | | | | | | | | 0 |
| | 091 | | | | | | | | -80,339 | 80,339 | | | 0 |
| Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2018թ. | 100 | 10,650,000 | | | 10,650,000 | 457,127 | | | 3,699,495 | 424,213 | | | 15,230,835 |

Ղեկավար` ______________________ Վահրամ Բեգլարյան
Կ.Տ. (անուն, ազգանուն)

Գլխավոր հաշվապահ` ______________________ Արայիկ Դավթյան
(անուն, ազգանուն)

ՁԵՎ № 4

# ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

31.12.2018
(հաշվետու տարին (ժամանակաշրջանը))

| | | | |
|---|---|---|---|
| | | | ծածկագիրը |
| Ընկերության անվանումը | «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ | | 50046 |
| Փաստացի գործունեությունը | Էլ. էներգիայի արտադրություն | | |
| Հարկ վճարողի հաշվառման համարը | | | 90025315 |
| Պետական ռեգիստրում գրանցման համարը | | | 44313011407 |
| Չափի միավորը | | | հազ. դրամ |
| Գտնվելու վայրը | ԱՀ, ք. Ստեփանակերտ, Վ. Սարգսյան 25 ա. | հեռախոսը | 954235 |
| Փաստացի գործունեության իրականացման վայրը | ԱՀ, ք. Ստեփանակերտ, Վ. Սարգսյան 25 ա. | հեռախոսը | 954235 |

| Ցուցանիշի անվանումը | տող | Նախորդ ժամանակաշրջան | | | | | | Հաշվետու ժամանակաշրջան | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Գումար | դրամարկղ | | բանկային հաշիվներ | | ԴՄՀ* | Գումար | դրամարկղ | | բանկային հաշիվներ | | ԴՄՀ* |
| | | | դրամ | արտարժույթ | դրամ | արտարժույթ | | | դրամ | արտարժույթ | դրամ | արտարժույթ | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| **Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը** | **010** | 72,454 | 721 | | 71,689 | 44 | | 1,446,773 | 599 | | 167,059 | 1,279,115 | |
| **Գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր** | | | | | | | | | | | | | |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից | **020** | 3,770,784 | 300 | | 3,770,484 | | | 4,640,571 | 3,045 | | 4,637,526 | | |
| Գործառնական այլ գործունեությունից, այդ թվում` | **030** | 4,414 | 4,414 | 0 | 0 | 0 | 0 | 4,404 | 0 | 0 | 4,404 | 0 | 0 |
| | 031 | 4,414 | 4,414 | | | | | 4,404 | | | 4,404 | | |
| | 032 | 0 | | | | | | 0 | | | | | |
| | 033 | 0 | | | | | | 0 | | | | | |
| **Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր** | **040** | 3,775,198 | 4,714 | 0 | 3,770,484 | 0 | 0 | 4,644,975 | 3,045 | 0 | 4,641,930 | 0 | 0 |
| **Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր** | | | | | | | | | | | | | |
| Նյութերի, ապրանքների ձեռք բերման գծով | **050** | 65,592 | 495 | | 65,097 | | | 65,686 | 231 | | 64,856 | 599 | |
| Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գծով | **060** | 2,082,573 | 3,741 | | 2,063,412 | 15,420 | | 2,679,249 | 2,688 | | 1,360,849 | 1,315,712 | |
| Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից | **070** | 410,305 | 3,433 | | 406,872 | | | 436,927 | 2,605 | | 434,322 | | |
| Վճարումներ բյուջե | **080** | 507,100 | 6 | | 507,094 | | | 837,381 | | | 837,381 | | |
| Վճարումներ սոցիալական ապահովագրության հիմնադրամ | **090** | 0 | | | | | | 0 | | | | | |
| Գործառնական այլ գործունեությունից ելքեր, այդ թվում` | **100** | 285,181 | 1,953 | 0 | 283,228 | 0 | 0 | 48,798 | 3,805 | 0 | 44,993 | | 0 |
| | 101 | 285,181 | 1,953 | | 283,228 | | | 48,798 | 3,805 | | 44,993 | | |
| | 102 | 0 | | | | | | 0 | | | | | |
| | 103 | 0 | | | | | | 0 | | | | | |
| **Ընդամենը գործառնական գործունեությունից ելքեր** | **110** | 3,350,751 | 9,628 | 0 | 3,325,703 | 15,420 | 0 | 4,068,041 | 9,329 | 0 | 2,742,401 | 1,316,311 | 0 |
| **Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր** | **120** | 424,447 | -4,914 | 0 | 444,781 | -15,420 | 0 | 576,934 | -6,284 | 0 | 1,899,529 | -1,316,311 | 0 |
| **Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների մուտքեր** | | | | | | | | | | | | | |
| Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների վաճառքից | **130** | 0 | | | | | | 500 | 500 | | | | |
| Ֆինանսական ակտիվներով գործառնություններից | **140** | 822,122 | | | 822,122 | | | 4,000 | | | 4,000 | | |
| Շահաբաժինների և տոկոսների ստացումից | **150** | 282 | | | 282 | | | 412 | | | 412 | | |
| Ներդրումային այլ գործունեությունից մուտքեր, այդ թվում` | **160** | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| | 161 | 0 | | | | | | 0 | | | | | |
| | 162 | 0 | | | | | | 0 | | | | | |
| | 163 | 0 | | | | | | 0 | | | | | |
| **Ընդամենը ներդրումային գործունեությունից մուտքեր** | **170** | 822,404 | 0 | 0 | 822,404 | 0 | 0 | 4,912 | 500 | 0 | 4,412 | 0 | 0 |
| **Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների ելքեր** | | | | | | | | | | | | | |
| Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռք բերման գծով | **180** | 298,580 | 189 | | 278,256 | 20,135 | | 213,787 | 6,889 | | 151,683 | 55,215 | |
| Ֆինանսական ակտիվների ձեռք բերումից և փոխառությունների տրամադրումից | **190** | 2,000 | | | 2,000 | | | 4,000 | | | 4,000 | | |
| Ներդրումային այլ գործունեությունից ելքեր, այդ թվում` | **200** | 2,023 | 0 | 0 | 2,023 | 0 | 0 | 2,156 | 0 | 0 | 2,156 | 0 | 0 |
| | 201 | 2,023 | | | 2,023 | | | 2,156 | | | 2,156 | | |
| | 202 | 0 | | | | | | 0 | | | | | |
| | 203 | 0 | | | | | | 0 | | | | | |
| **Ընդամենը ներդրումային գործունեությունից ելքեր** | **210** | 302,603 | 189 | 0 | 282,279 | 20,135 | 0 | 219,943 | 6,889 | 0 | 157,839 | 55,215 | 0 |
| **Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր** | **220** | 519,801 | -189 | 0 | 540,125 | -20,135 | 0 | -215,031 | -6,389 | 0 | -153,427 | -55,215 | 0 |
| **Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր** | | | | | | | | | | | | | |
| Սեփական կապիտալի գործիքների թողարկումից և վերավաճառքից | **230** | 0 | | | | | | 0 | | | | | |
| Ստացված վարկերից և փոխառություններից | **240** | 3,288,990 | 42,000 | | 1,750,000 | 1,496,990 | | 4,567,340 | | 82,494 | 200,000 | 4,284,846 | |
| Ֆինանսական այլ գործունեությունից մուտքեր, այդ թվում` | **250** | 2,835,776 | 0 | 0 | 1,573,048 | 1,262,728 | 0 | 2,576,610 | 0 | 0 | 2,495,253 | 81,357 | 0 |
| | 251 | 2,835,776 | | | 1,573,048 | 1,262,728 | | 2,576,610 | | | 2,495,253 | 81,357 | |
| | 252 | 0 | | | | | | 0 | | | | | |
| | 253 | 0 | | | | | | 0 | | | | | |
| **Ընդամենը ֆինանսական գործունեությունից մուտքեր** | **260** | 6,124,766 | 42,000 | 0 | 3,323,048 | 2,759,718 | 0 | 7,143,950 | 0 | 82,494 | 2,695,253 | 4,366,203 | 0 |
| **Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների ելքեր** | | | | | | | | | | | | | |
| Ստացված վարկերի և փոխառությունների մարումից | **270** | 1,543,525 | 3,000 | | 314,493 | 1,226,032 | | 4,766,120 | 6,000 | 94,626 | 484,979 | 4,180,515 | |
| Վճարված շահաբաժիններ և տոկոսներ | **280** | 1,008,531 | 32,994 | | 975,537 | | | 1,122,120 | 38,919 | | 1,083,201 | | |
| Ֆինանսական այլ գործունեությունից ելքեր, այդ թվում` | **290** | 3,180,005 | 0 | 0 | 2,923,579 | 256,426 | 0 | 2,927,499 | 0 | 0 | 2,883,896 | 43,603 | 0 |
| | 291 | 3,180,005 | | | 2,923,579 | 256,426 | | 2,927,499 | | | 2,883,896 | 43,603 | |
| | 292 | 0 | | | | | | 0 | | | | | |
| | 293 | 0 | | | | | | 0 | | | | | |
| **Ընդամենը ֆինանսական գործունեությունից ելքեր** | **300** | 5,732,061 | 35,994 | 0 | 4,213,609 | 1,482,458 | 0 | 8,815,739 | 44,919 | 94,626 | 4,452,076 | 4,224,118 | 0 |
| **Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր** | **310** | 392,705 | 6,006 | 0 | -890,561 | 1,277,260 | 0 | -1,671,789 | -44,919 | -12,132 | -1,756,823 | 142,085 | 0 |
| **Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր** | **320** | 1,336,953 | 903 | 0 | 94,345 | 1,241,705 | 0 | -1,309,886 | -57,592 | -12,132 | -10,721 | -1,229,441 | 0 |
| Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ ** | **330** | 37,366 | | | | 37,366 | | 10,870 | | | | 10,870 | |
| Ներքին շարժեր ** | **340** | | -1,025 | | 1,025 | | | | 59,000 | 12,132 | -59,000 | -12,132 | |
| **Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակշրջանի վերջին** | **350** | 1,446,773 | 599 | 0 | 167,059 | 1,279,115 | 0 | 147,757 | 2,007 | 0 | 97,338 | 48,412 | 0 |

* Դրամական միջոցների համարժեքներ:

** Սույն տողերում արտացոլված գումարները չեն հանդիսանում դրամական միջոցների հոսքեր:

Ղեկավար` _ __ Վահրամ Բեգլարյան

Կ.Տ. (անուն, ազգանուն)

Գլխավոր հաշվապահ` _ __ Արայիկ Դավթյան

(անուն, ազգանուն)

ՁԵՎ № 5

# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

31.12.2018
(հաշվետու տարին (ժամանակաշրջանը))

| | | | ծածկագիրը |
|---|---|---|---|
| Ընկերության անվանումը | «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ | | 50046 |
| Փաստացի գործունեությունը | էլ. էներգիայի արտադրություն | | |
| Հարկ վճարողի հաշվառման համարը | | | 90025315 |
| Պետական ռեգիստրում գրանցման համարը | | | 44313011407 |
| Չափի միավորը | | | հազ. դրամ |
| Գտնվելու վայրը | ԱՀ, ք. Ստեփանակերտ, Վ. Սարգսյան 25 ա. | հեռախոսը | 954235 |
| Փաստացի գործունեության իրականացման վայրը | ԱՀ, ք. Ստեփանակերտ, Վ. Սարգսյան 25 ա. | հեռախոսը | 954235 |

## 5.3.5. Այլ բացահայտումներ

Սույն կետում պահանջվող բացահայտումները լրացնելիս ավելացվում են լրացուցիչ բերթիկներ՝ համապատասխան էջակա-լելով:

5.1. Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխանության մասին հայտարարությունì հաշվետվությունները կազմված են ՀՀ հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխան

5.2. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը

5.2.1. Հաշվապահական հաշվառման քաղաքականության մոտեցումները

Սույն կետում պահանջվող բացահայտումները լրացնելիս ավելացվում են լրացուցիչ թերթիկներ` համապատասխան էջակալելով:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության մոտեցումները

Աղյուսակ 1

| Հոդվածների անվանումները | Ընտրված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը |
|---|---|
| 1. Պաշարների ինքնարժեքի որոշման բանաձևր<br>Պաշարների ինքնարժեքը որոշվում է Առաջին մուտք առաջին ելք<br>ԱՄԱԵ (ՖԻՖՈ) Վերջին մուտք առաջին ելք ՎՄԱԵ (ԼԻՖՈ) կամ<br>միջին կշռված արժեքի բանաձևով: | Առաջին մուտք առաջին ելք: |
| 2. Հիմնական միջոցների հետագա չափման մոտեցումը<br>Հիմնական միջոցի միավորը որպես ակտիվ սկզբնական ճանաչումից<br>հետո պետք է հաշվառվի իր սկզբնական արժեքով հանած<br>կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: | Տարբեր դասերի համար կիրառվում է չափման տարբեր մոտեցում: Հետագա չափումը կլինի սկզբնական արժեք հանած կուտակված մաշվածություն: |
| 3. Ոչ նյութական ակտիվների հետագա չափման մոտեցումը | Սկզբնական արժեք հանած կուտակված մաշվածություն: |
| 4. Ներդրումային գույքի հետագա չափման մոտեցումը | Իրական արժեք հանած կուտակված մաշվածություն: |
| 5. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների` իրական արժեքով վերաչափումից շահույթների (վնասների) ճանաչման մոտեցումը | Որպես եկամուտ կամ ծախս: |
| 6. Դուստր ընկերություններում, ասոցիացված կազմակերպություններում, համատեղ վերահսկվող միավորումներում ներդրումների հաշվառման մոտեցումը | Բաժնեմասնակցության մեթոդ: |
| 7. Էական սխալների ուղղման և հաշվապահական հաշվառման քաղաքականությունում փոփոխությունների ազդեցության արտացոլման մոտեցումը | Չբաշխված շահույթի մնացորդի ճշգրտում: |
| 8. Կառուցման և ծառայությունների մատուցման պայմանագրերի գծով հասույթի ճանաչման համար գործարքի ավարտվածության աստիճանի որոշման մոտեցումը | Յանկացած խմբի համար տարբեր մոտեցում: |
| 9. Արտարժույթի փոխարժեքային տարբերությունների ճանաչման մոտեցումը | Ճանաչել որպես եկամուտ կամ ծախս առաջացման ժամանակաշրջանում: |
| 10. Փոխառության ծախսումների հաշվառման մոտեցումը | Հաշվեկշռային արժեքում որպես ակտիվ, ակտիվներ ձեռք բերելիս իսկ մնացած ծախսումները որպես ծախս: |
| 11. | |

5.2.2.Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար կիրառված չափման հիմունքները

Ակտիվները և պարտավորությունները չափվում են սկզբնական արեքով: Արտարժույթով դրամային հոդվածները հաշվեկշռի ամսաթվի դրությամբ վերահաշվարկվում են` կիրառելով փակման փոխարժեքը:

**5.3. Այլ բացահայտումներ**

5.3.1. Ընդհանուր բնույթի բացահայտումներ

Սույն կետում պահանջվող բացահայտումները լրացնելիս ավելացվում են լրացուցիչ թերթիկներ` համապատասխան էջակալելով:

Ընկերությունը ստեղծվել է 2007թ.: Գործունեության հիմնական տեսակն է` էլեկտրաէներգիայի արտադրությունը: Ընկերության աշխատակիցների միջին թվաքանակը հարյուր իննսունՆն է: Գործունեության հասցեն է ԱՀ, ք. Ստեփանակերտ, Վ. Սարգսյան 25ա:

5.3.2. Հաշվապահական հաշվեկշռին կից ծանոթագրություններ

Հիմնական միջոցներ

Աղյուսակ 2

| Դասի անվանումը | տող | Մաշվածության դրույքը | Նախորդ տարվա վերջին մնացորդը | Ավելացում | | Նվազեցում | | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջի մնացորդը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ընդամենը | այդ թվում՝ վերագնահատումից | ընդամենը | այդ թվում՝ վերագնահատումից | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| **Շահագործման մեջ գտնվող մաշվող հիմնական միջոցներ** | | | | | | | | |
| **Շենքեր** | | | | | | | | |
| հաշվեկշռային արժեք | 010 | | 4,652,331 | 251,044 | | 138,654 | | **4,764,721** |
| արժեք | 011 | | 6,407,537 | 251,044 | | 29,133 | | **6,629,448** |
| կուտակված մաշվածություն | 012 | | 1,755,206 | 109,521 | | | | **1,864,727** |
| կուտակված արժեզրկում | 013 | | | | | | | **0** |
| **Կառուցվածքներ** | | | | | | | | **0** |
| հաշվեկշռային արժեք | 020 | | 3,634,363 | 3,614,774 | | 106,727 | | **7,142,410** |
| արժեք | 021 | | 4,090,869 | 3,614,774 | | | | **7,705,643** |
| կուտակված մաշվածություն | 022 | | 456,506 | 106,727 | | | | **563,233** |
| կուտակված արժեզրկում | 023 | | | | | | | **0** |
| **Փոխանցող հարմարանքներ** | | | | | | | | **0** |
| հաշվեկշռային արժեք | 030 | | 300,026 | 7,060 | | 7,452 | | **299,634** |
| արժեք | 031 | | 327,854 | 7,060 | | | | **334,914** |
| կուտակված մաշվածություն | 032 | | 27,828 | 7,452 | | | | **35,280** |
| կուտակված արժեզրկում | 033 | | | | | | | **0** |
| **Մեքենաներ և սարքավորումներ** | | | | | | | | **0** |
| հաշվեկշռային արժեք | 040 | | 6,972,046 | 2,113,024 | | 169,920 | | **8,915,150** |
| արժեք | 041 | | 9,251,915 | 2,113,024 | | 5,756 | | **11,359,183** |
| կուտակված մաշվածություն | 042 | | 2,279,869 | 166,837 | | 2,673 | | **2,444,033** |
| կուտակված արժեզրկում | 043 | | | | | | | **0** |
| **Տրանսպորտային միջոցներ** | | | | | | | | **0** |
| հաշվեկշռային արժեք | 050 | | 15,305 | 8,779 | | 7,430 | | **16,654** |
| արժեք | 051 | | 94,613 | 8,779 | | | | **103,392** |
| կուտակված մաշվածություն | 052 | | 79,308 | 7,430 | | | | **86,738** |
| կուտակված արժեզրկում | 053 | | | | | | | **0** |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Արտադրական գույք, տնտեսական գույք, գործիքներ | | | | | | | | 0 |
| հաշվեկշռային արժեք | 060 | | 12,489 | 23,423 | | 3,722 | | **32,190** |
| արժեք | 061 | | 37,159 | 23,423 | | 961 | | **59,621** |
| կուտակված մաշվածություն | 062 | | 24,670 | 3,576 | | 815 | | **27,431** |
| կուտակված արժեզրկում | 063 | | | | | | | **0** |
| **Բազմամյա տնկարկներ** | | | | | | | | **0** |
| հաշվեկշռային արժեք | 070 | | | | | | | **0** |
| արժեք | 071 | | 1,387 | | | | | **1,387** |
| կուտակված մաշվածություն | 072 | | 1,387 | | | | | **1,387** |
| կուտակված արժեզրկում | 073 | | | | | | | **0** |
| **Բանող և մթերատու անասուններ** | | | | | | | | **0** |
| հաշվեկշռային արժեք | 080 | | | | | | | **0** |
| արժեք | 081 | | | | | | | **0** |
| կուտակված մաշվածություն | 082 | | | | | | | **0** |
| կուտակված արժեզրկում | 083 | | | | | | | **0** |
| **Այլ հիմնական միջոցներ** | | | | | | | | **0** |
| հաշվեկշռային արժեք | 090 | | 546 | 9,520 | | 1,246 | | **8,820** |
| արժեք | 091 | | 7,473 | 9,520 | | 58 | | **16,935** |
| կուտակված մաշվածություն | 092 | | 6,927 | 1,246 | | 58 | | **8,115** |
| կուտակված արժեզրկում | 093 | | | | | | | **0** |
| **Ընդամենը շահագործման մեջ գտնվող մաշվող հիմնական միջոցներ** | | | | | | | | |
| հաշվեկշռային արժեք | 100 | | 15,587,106 | 6,027,624 | 0 | 435,151 | 0 | 21,179,579 |
| արժեք | 101 | | 20,218,807 | 6,027,624 | 0 | 35,908 | 0 | 26,210,523 |
| կուտակված մաշվածություն | 102 | | 4,631,701 | 402,789 | 0 | 3,546 | 0 | 5,030,944 |
| կուտակված արժեզրկում | 103 | | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Շահագործման մեջ չգտնվող հիմնական միջոցներ** | | | | | | | | |
| Շահագործման չհանձնված հիմնական միջոցներ | | | | | | | | |
| հաշվեկշռային արժեք | 110 | | | | | | | |
| արժեք | 111 | | | | | | | |
| կուտակված արժեզրկում | 113 | | | | | | | |
| Ժամականավորապես շահագործումից հանված հիմնական միջոցներ | | | | | | | | |
| հաշվեկշռային արժեք | 120 | | | | | | | |
| արժեք | 121 | | | | | | | |
| կուտակված մաշվածություն | 122 | | | | | | | |
| կուտակված արժեզրկում | 123 | | | | | | | |
| Շահագործումից հանված և օտարման նպատակով պահվող հիմնական միջոցներ | | | | | | | | |
| հաշվեկշռային արժեք | 130 | | | | | | | |
| արժեք | 131 | | | | | | | |
| կուտակված արժեզրկում | 133 | | | | | | | |
| **Ընդամենը շահագործման մեջ չգտնվող հիմնական միջոցներ** | | | | | | | | |
| հաշվեկշռային արժեք | 140 | | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| արժեք | 141 | | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| կուտակված մաշվածություն | 142 | | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| կուտակված արժեզրկում | 143 | | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| **Հողամասեր** | | | | | | | | |
| հաշվեկշռային արժեք | 150 | | 11,489 | | | | | 11,489 |
| արժեք | 151 | | 11,489 | | | | | 11,489 |
| կուտակված արժեզրկում | 153 | | | | | | | |
| **Ընդամենը հիմնական միջոցներ** | | | | | | | | |
| հաշվեկշռային արժեք | 160 | | 15,598,595 | 6,027,624 | 0 | 435,151 | 0 | 21,191,068 |
| արժեք | 161 | | 20,230,296 | 6,027,624 | 0 | 35,908 | 0 | 26,222,012 |
| կուտակված մաշվածություն | 162 | | 4,631,701 | 402,789 | 0 | 3,546 | 0 | 5,030,944 |
| կուտակված արժեզրկում | 163 | | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |

Ներդրումային գույք (սկզբնական արժեքի մոդել) Աղյուսակ 3

| Դասի անվանումը | տող | Մաշվածությ ան դրույքը | Նախորդ տարվա վերջի մնացորդը | Ավելացում | | | Նվազեցում | | Հաշվետու տարվա (ժամանակա-շրջանի) վերջի մնացորդը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ընդամենը | այդ թվում՝ | | ընդամենը | այդ թվում՝ օտարումից | |
| | | | | | ձեռքբերումից | հետագա ծախսումների կապիտալացումից | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| ***Հող*** | | | | | | | | | 0 |
| հաշվեկշռային արժեք | 010 | | | | | | | | 0 |
| արժեք | 011 | | | | | | | | 0 |
| կուտակված արժեզրկում | 012 | | | | | | | | 0 |
| ***Շինություն*** | | | | | | | | | 0 |
| հաշվեկշռային արժեք | 020 | | | | | | | | 0 |
| արժեք | 021 | | | | | | | | 0 |
| կուտակված մաշվածություն | 022 | | | | | | | | 0 |
| կուտակված արժեզրկում | 023 | | | | | | | | 0 |

Ներդրումային գույք (իրական արժեքի մոդել) Աղյուսակ 4

| **Դասի անվանումը** | տեղ | Նախորդ տարվա վերջի մնացորդը | **Ավելացում** | | | | **Նվազեցում** | | | Հաշվետու տարվա (ժամանակա-շրջանի) վերջի մնացորդը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ընդամենը | այդ թվում՝ | | | ընդամենը | այդ թվում | | |
| | | | | ձեռքբե-րումից | հետագա ծախսումների կապիտալացումից | իրական արժեքով վերաչափումից | | օտարումից | իրական արժեքով վերաչափումով | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| ***Հող*** | | | | | | | | | | 0 |
| հաշվեկշռային արժեք | 010 | | | | | | | | | 0 |
| արժեք | 011 | | | | | | | | | 0 |
| կուտակված արժեզրկում | 012 | | | | | | | | | 0 |
| ***Շինություն*** | | | | | | | | | | 0 |
| հաշվեկշռային արժեք | 020 | | | | | | | | | 0 |
| արժեք | 021 | | | | | | | | | 0 |
| կուտակված արժեզրկում | 022 | | | | | | | | | 0 |

## Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ

Աղյուսակ 5

| Դասի անվանումը | տող | Նախորդ տարվա վերջի մնացորդը | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջի մնացորդը |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| *Շենքեր* | | | |
| - հաշվեկշռային արժեք | 010 | | |
| - արժեք | 011 | | |
| - կուտակված մաշվածություն | 012 | | |
| - կուտակված արժեզրկում | 013 | | |
| *Մեքենաներ և սարքավորումներ* | | | |
| - հաշվեկշռային արժեք | 020 | | |
| - արժեք | 021 | | |
| - կուտակված մաշվածություն | 022 | | |
| - կուտակված արժեզրկում | 023 | | |
| *Տրանսպորտային միջոցներ* | | | |
| - հաշվեկշռային արժեք | 030 | | |
| - արժեք | 031 | | |
| - կուտակված մաշվածություն | 032 | | |
| - կուտակված արժեզրկում | 033 | | |
| *Այլ հիմնական միջոցներ* | | | |
| - հաշվեկշռային արժեք | 040 | | |
| - արժեք | 041 | | |
| - կուտակված մաշվածություն | 042 | | |
| - կուտակված արժեզրկում | 043 | | |
| **Ընդամենը ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ** | | | |
| - հաշվեկշռային արժեք | 050 | 0 | 0 |
| - արժեք | 051 | 0 | 0 |
| - կուտակված մաշվածություն | 052 | 0 | 0 |
| - կուտակված արժեզրկում | 053 | 0 | 0 |

## Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ

Աղյուսակ 6

| Դասի անվանումը | տող | Նախորդ տարվա վերջի մնացորդը | Ավելացում | Նվազեցում | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջի մնացորդը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցներ | 010 | 2,474,227 | 712,726 | 3,141,153 | 45,800 |
| Տեղակայման ենթակա սարքավորումներ | 020 | 744,443 | 1,879,982 | 2,624,425 | 0 |
| Հիմնական միջոցների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ | 030 | | | | 0 |
| Կապալառուի կողմից կառուցվող հիմնական միջոցներ | 040 | | | | 0 |
| **Ընդամենը անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ** | 050 | 3,218,670 | 2,592,708 | 5,765,578 | 45,800 |

Ոչ նյութական ակտիվներ

Աղյուսակ 7

| Դասի անվանումը | տող | Ամորտիզաց հայի դրույքը | Նախորդ տարվա վերջի մնացորդը | Ավելացում | | | Նվազեցում | | | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջի մնացորդը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ընդամենը | այդ թվում՝ | | ընդամենը | այդ թվում՝ | | |
| | | | | | ներստեղծում ից | վերագնահա տումից | | դուրսգրու-մ ից | վերագնա-հ ատումից | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| ***Ֆիրմային անուններ*** | | | | | | | | | | |
| հաշվեկշռային արժեք | 010 | | | | | | | | | |
| արժեք | 011 | | | | | | | | | |
| կուտակված մաշվածություն | 012 | | | | | | | | | |
| կուտակված արժեզրկում | 013 | | | | | | | | | |
| ***Հրապարակումների անուններ*** | | | | | | | | | | |
| հաշվեկշռային արժեք | 020 | | | | | | | | | |
| արժեք | 021 | | | | | | | | | |
| կուտակված մաշվածություն | 022 | | | | | | | | | |
| կուտակված արժեզրկում | 023 | | | | | | | | | |
| ***Համակարգչային ծրագրեր*** | | | | | | | | | | |
| հաշվեկշռային արժեք | 030 | | | | | | | | | |
| արժեք | 031 | | 863 | | | | | | | 863 |
| կուտակված մաշվածություն | 032 | | 863 | | | | | | | 863 |
| կուտակված արժեզրկում | 033 | | | | | | | | | |
| ***Լիցենզիաներ և վստահագրեր*** | | | | | | | | | | |
| հաշվեկշռային արժեք | 040 | | | | | | | | | |
| արժեք | 041 | | | | | | | | | |
| կուտակված մաշվածություն | 042 | | | | | | | | | |
| կուտակված արժեզրկում | 043 | | | | | | | | | |
| ***Հեղինակային իրավունքներ*** | | | | | | | | | | |
| հաշվեկշռային արժեք | 050 | | | | | | | | | |
| արժեք | 051 | | | | | | | | | |
| կուտակված մաշվածություն | 052 | | | | | | | | | |
| կուտակված արժեզրկում | 053 | | | | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| *Արտոնագրեր* | | | | | | | | | | |
| հաշվեկշռային արժեք | 060 | | | | | | | | | |
| արժեք | 061 | | | | | | | | | |
| կուտակված մաշվածություն | 062 | | | | | | | | | |
| կուտակված արժեզրկում | 063 | | | | | | | | | |
| *Ծառայությունների մատուցման և շահագործման իրավունքներ* | | | | | | | | | | |
| հաշվեկշռային արժեք | 070 | | | | | | | | | |
| արժեք | 071 | | | | | | | | | |
| կուտակված մաշվածություն | 072 | | | | | | | | | |
| կուտակված արժեզրկում | 073 | | | | | | | | | |
| *Բանաձևեր, մոդելներ, նախագծեր, բաղադրատոմսեր և փորձանշումներ* | | | | | | | | | | |
| հաշվեկշռային արժեք | 080 | | | | | | | | | |
| արժեք | 081 | | | | | | | | | |
| կուտակված մաշվածություն | 082 | | | | | | | | | |
| կուտակված արժեզրկում | 083 | | | | | | | | | |
| *Այլ ոչ նյութական ակտիվներ* | | | | | | | | | | |
| հաշվեկշռային արժեք | 090 | | | | | | | | | |
| արժեք | 091 | | | | | | | | | |
| կուտակված մաշվածություն | 092 | | | | | | | | | |
| կուտակված արժեզրկում | 093 | | | | | | | | | |
| Ընդամենը | | | | | | | | | | |
| հաշվեկշռային արժեք | 100 | | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| արժեք | 101 | | 863 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 863 |
| կուտակված մաշվածություն | 102 | | 863 | 0 | | 0 | 0 | 0 | 0 | 863 |
| կուտակված արժեզրկում | 103 | | 0 | 0 | | | 0 | 0 | | 0 |

Գուդվիլ

| Ցուցանիշը | տող | Ամորտիզացիայի դրույքը | Նախորդ տարվա վերջի մնացորդը | Ավելացում | | | Նվազեցում | | | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջի մնացորդը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ընդամենը | այդ թվում՝ | | ընդամենը | այդ թվում՝ | | |
| | | | | | ճանաչված լրացուցիչ գուդվիլ | ակտիվների և պարտավորությունների արժեքի ճշգրտումից աճ | | ապաճանաչված գուդվիլ | ակտիվների և պարտավորությունների արժեքի ճշգրտումից նվազում | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| - հաշվեկշռային արժեք | 010 | | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| - արժեք | 011 | | | | | | | | | |
| - կուտակված ամորտիզացիա | 012 | | | | | | | | | |
| - կուտակված արժեզրկում | 013 | | | | | | | | | |

Բացասական գուդվիլ

| Ցուցանիշը | տող | Ամորտիզացիայի ժամանակաշրջանը | Նախորդ տարվա վերջի մնացորդը | Ավելացում | | | Նվազեցում | | | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջի մնացորդը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ընդամենը | այդ թվում՝ | | ընդամենը | այդ թվում՝ | | |
| | | | | | ճանաչված լրացուցիչ բացասական գուդվիլ | ակտիվների և պարտավորությունների արժեքի ճշգրտումից աճ | | ապաճանաչված բացասական գուդվիլ | ակտիվների և պարտավորությունների արժեքի ճշգրտումից նվազում | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| - հաշվեկշռային արժեք | 010 | | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| - արժեք | 011 | | | | | | | | | |
| - կուտակված ամորտիզացիա | 012 | | | | | | | | | |

## Անավարտ ոչ նյութական ակտիվներ

Աղյուսակ 10

| Ցուցանիշը | տող | Նախորդ տարվա վերջի մնացորդ | Ավելացում | Նվազեցում | Հաշվետու տարվա (ժամանակա-շրջանի) վերջի մնացորդը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| Մշակման ընթացքում գտնվող ոչ նյութական ակտիվներ | 010 | | | | 0 |
| Ոչ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ | 020 | | | | 0 |
| **Ընդամենը** | 030 | | | | 0 |

## Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ

Աղյուսակ 11

| Ներդրման տեսակը | տող | Նախորդ տարվա վերջի մնացորդը | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջի մնացորդը |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| Դուստր ընկերություններում | 010 | | |
| Ասոցիացված կազմակերպություններում | 020 | | |
| Համատեղ վերահսկվող միավորումներում | 030 | | |
| Ընդամենը | 040 | 0 | 0 |

## Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ

Աղյուսակ 12

| Ցուցանիշի անվանումը | տող | Նախորդ տարվա վերջի մնացորդ | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջի մնացորդը |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| **երկարաժամկետ բանկային վարկեր** | | | |
| զուտ գումար | 010 | 3,029,063 | 3,045,743 |
| համախառն գումար | 011 | 4,131,159 | 3,838,510 |
| չկրած տոկոսային ծախսեր | 012 | 1,102,096 | 792,767 |
| **երկարաժամկետ փախառություններ** | | | |
| զուտ գումար | 020 | 3,296,720 | 3,386,250 |
| համախառն գումար | 021 | 3,658,335 | 4,973,396 |
| չկրած տոկոսային ծախսեր | 022 | 361,615 | 1,587,146 |
| **երկարաժամկետ պարտավորություններ ֆինանսական վարձակալության գծով** | | | |
| զուտ գումար | 030 | | 42,000 |
| համախառն գումար | 031 | | 47,790 |
| չկրած տոկոսային ծախսեր | 032 | | 5,790 |
| **Ընդամենը** | | | |
| հաշվեկշռային արժեք | 040 | 6,325,783 | 6,473,993 |
| համախառն գումար | 041 | 7,789,494 | 8,859,696 |
| չկրած տոկոսային ծախսեր | 042 | 1,463,711 | 2,385,703 |

## Կարճաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ

Աղյուսակ 13

| Ցուցանիշի անվանումը | տող | Նախորդ տարվա վերջի մնացորդ | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջի մնացորդը |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| **Կարճաժամկետ բանկային վարկեր** | | | |
| զուտ գումար | 010 | | |
| համախառն գումար | 011 | | |
| չկրած տոկոսային ծախսեր | 012 | | |
| **Կարճաժամկետ փոխառություններ** | | | |
| զուտ գումար | 020 | 42,000 | |
| համախառն գումար | 021 | 45,158 | |
| չկրած տոկոսային ծախսեր | 022 | 3,158 | |
| **Երկարաժամկետ բանկային վարկերի կարճաժամկետ մաս** | | | |
| զուտ գումար | 030 | | |
| համախառն գումար | 031 | | |
| չկրած տոկոսային ծախսեր | 032 | | |
| **Երկարաժամկետ փոխառությունների կարճաժամկետ մաս** | | | |
| զուտ գումար | 040 | | |
| համախառն գումար | 041 | | |
| չկրած տոկոսային ծախսեր | 042 | | |
| **Ընդամենը** | | | |
| զուտ գումար | 050 | 42,000 | 0 |
| համախառն գումար | 051 | 45,158 | 0 |
| չկրած տոկոսային ծախսեր | 052 | 3,158 | 0 |

Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին

Աղյուսակ 14

| Հարկատեսակի անվանումը | տող | Նախորդ տարվա վերջի մնացորդը | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջի մնացորդը |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| Շահութահարկ | 010 | 35,159 | 8,878 |
| Եկամտահարկ | 020 | 15,017 | 18,172 |
| Ավելացված արժեքի հարկ | 030 | 24,498 | 37,641 |
| Ակցիզային հարկ | 040 | | |
| Գույքահարկ | 050 | 167 | 221 |
| Հողի հարկ | 060 | | |
| Մաքսատուրք | 070 | | |
| Հաստատագրված վճարներ | 080 | | |
| Տույժեր | 090 | | |
| Տուգանքներ | 100 | | |
| Բնապահպանման վճարներ | 110 | | |
| Բնօգտագործման վժարներ | 120 | | |
| Այլ պարտադիր վճարներ | 130 | 751 | 1,018 |
| **Ընդամենը** | **140** | **75,592** | **65,930** |

Պահուստներ

| Դասի անվանումը | տող | Նախորդ տարվա վերջին մնացորդը | Ավելացում | | Նվազեցում | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | Կատարված պահուստա- վորումներ | գեղչման ազդեցության ճշգրտում | պահուստ-ների օգտագոր-ծումներ | պահուստ- ների հակադար- ձումներ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| Երաշխիքային վաճառքների գծով պահուստներ | 010 | | | | | |
| Անբարենպաստ պայմանագրերի գծով պահուստներ | 020 | | | | | |
| Տրամադրված երաշխավորություն-ների և երաշխիքների գծով պահուստներ | 030 | | | | | |
| Այլ պահուստներ, այդ թվում | 040 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| | 041 | | | | | |
| | 042 | | | | | |
| **Ընդամենը պահուստներ** | **050** | **0** | **0** | **0** | **0** | **0** |

Աղյուսակ 15

| Հաշվետու տարվա (ժամանա-կաշրջանի) |
|---|
| 8 |
| |
| |
| |
| 0 |
| |
| |
| 0 |

Հաշվեկշիռ հոդվածների մարման (փոխհատուցման) ժամկետների դասակարգմամբ

Աղյուսակ 16

| | տող | Կարճաժամկետ գումարներ | Երկարաժամկետ գումարներ |
|---|---|---|---|
| **ԱԿՏԻՎ** | | | |
| 1 | 2 | 3 | 4 |
| I, Ոչ ընթացիկ ակտիվներ | | | |
| Հիմնական միջոցներ | 010 | 5,030,944 | 16,160,124 |
| Ոչ նյութական ակտիվներ | 020 | 863 | -863 |
| Հետաձգված հարկային ակտիվներ | 030 | | 2,092 |
| Այլ ոչ ընթացիկ ակտիվներ, այդ թվում | 040 | 0 | 49,300 |
| | 041 | | 49,300 |
| | 042 | | |
| Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ | 050 | 5,031,807 | 16,210,653 |
| II. Ընթացիկ ակտիվներ | | | |
| Նյութեր | 060 | 58,562 | |
| Աճեցվող և բտվող կենդանիներ | 070 | | |
| Արագամաշ առարկաներ | 080 | 1,890 | |
| Անավարտ արտադրություն | 090 | | |
| Արտադրանք | 100 | | |
| Այլ ընթացիկ ակտիվներ, այդ թվում | 110 | 1,074,398 | 0 |
| | 111 | 147,757 | 0 |
| | 112 | 926,641 | |
| Ընդամենը ընթացիկ ակտիվներ | 120 | 1,134,850 | 0 |
| Ընդամենը ակտիվներ | 130 | 6,166,657 | 16,210,653 |
| | | | |
| **ՊԱՍԻՎ** | | | |
| **III. Սեփական կապիտալ** | | | |
| Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար | 140 | | 10,650,000 |
| Սեփական կապիտալի այլ տարրեր, այդ թվում | 150 | 0 | 4,580,835 |
| | 151 | | 4,580,835 |
| Ընդամենը սեփական կապիտալ | 160 | 0 | 15,230,835 |
| **IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ** | | | |
| Ակտիվներին վերաբերող շնորհներ | 170 | | |
| Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ, այդ թվում | 180 | 0 | 6,473,993 |
| | 181 | | 6,473,993 |
| Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ | 190 | 0 | 6,473,993 |
| **V. Ընթացիկ պարտավորություններ** | | | |
| Ընթացիկ պարտավորություններ, այդ թվում | 200 | 672,482 | 0 |
| | 201 | 672,482 | |
| | 202 | | |
| Ընդամենը ընթացիկ պարտավորություններ | 210 | 672,482 | 0 |
| Ընդամենը պասիվներ | 220 | 672,482 | 21,704,828 |

## Արտահաշվեկշռային հաշիվներ

Աղյուսակ 17

| Ցուցանիշի անվանումը | տող | Նախորդ տարվա վերջի մնացորդը | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջի մնացորդը |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| Գործառնական վարձակալությամբ ընդունված հիմնական միջոցներ | 010 | | |
| Պատասխանատու պահպանման ընդունված ապրանքանյութական արժեքներ | 020 | | |
| Վերամշակման ընդունված նյութեր | 030 | | |
| Տեղակայման ընդունված սարքավորումներ | 040 | | |
| Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրարով ընդունված ապրանքներ | 050 | | |
| Որպես գրավ պահվող ակտիվներ | 060 | | |
| Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող միջոցներ | 070 | | |
| Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրարով ստացված միջոցներ | 080 | | |
| Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած դեբիտորական պարտքեր և տրամադրված փոխառություններ | 090 | | |
| Հավատարմագրային կառավարման և կոմիսիայի ու կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցների գծով պարտավորություններ | 100 | | |
| Հիմնադրի (հաճախորդի) ֆինանսական արդյունք | 110 | | |
| Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած կրեդիտորական պարտքեր և ստացված փոխառություններ | 120 | | |
| Պայմանական պարտավորություններ | 130 | | |
| Պայմանական ակտիվներ | 140 | | |
| Հարկային հաշվառման նպատակներով դուրս գրված դեբիտորական պարտքեր | 150 | | |
| Հարկային հաշվառման նպատակներով դուրս գրված կրեդիտորական պարտքեր | 160 | | |
| Չհատուցված հարկային վնաս | 170 | | |
| Գրավադրված ակտիվներ | 180 | | |
| Խիստ հաշվառման բլանկներ | 190 | | |
| Պարբերական և մասնագիտական գրականություն | 200 | | |
| Շահագործման մեջ գտնվող փոքրարժեք հիմնական միջոցներ և արագամաշ առարկաներ | 210 | 15,745 | 15,673 |

**Ֆինանսական արդյունքների հաշվետվություն ծախսերի ըստ բնույթի դասակարգմամբ**

Աղյուսակ 18

| Ցուցանիշի անվանումը | տող | Նախորդ տարի (միջանկյալ ժամակնակաշրջան` աճողական) | Հաշվետու տարի (միջանկյալ ժամակնակա-շրջան` աժողական) | Նախորդ տարվա միջանկյալ ժամակնակա-շրջան | Հաշվետու տարվա միջանկյալ ժամակնակա-շրջան |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| Արտադրանքի ,ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ | 010 | 3,446,178 | 3,625,229 | 930,807 | 1,028,758 |
| Գործառնական այլ եկամուտներ | 020 | 4,947 | 763 | 4,533 | 447 |
| Պատրաստի և անավարտ արտադրության մնացորդի փոփոխություն | 030 | | | | |
| Այլ կապիտալացված ծախսումներ | 040 | | | | |
| Օգտագործված հումք և նյութեր | 050 | -51,866 | -85,872 | -23,103 | -50,925 |
| Անձնակազմի գծով ծախսումներ | 060 | -523,582 | -560,345 | -156,217 | -181,380 |
| Մաշվածության և ամորտիզացիայի գծով ծախսումներ | 070 | -382,202 | -402,789 | -94,298 | -119,849 |
| Գործառնական այլ ծախսումներ և ծախսեր | 080 | -222,088 | -181,451 | -58,400 | -51,406 |
| Գործառնական շահույթ (վնաս) | 090 | 2,271,387 | 2,395,535 | 603,322 | 625,645 |
| Ոչ գործառնական գործունեությունից շահույթ (վնաս) | 100 | -464,587 | -501,537 | -171,347 | -182,850 |
| Սովորական գործունեությունից շահույթ | 110 | 1,806,800 | 1,893,998 | 431,975 | 442,795 |
| Արտասովոր դեպքերից շահույթ (վնաս) | 120 | -6,191 | -6,241 | -1,602 | -1,552 |
| Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը | 130 | 1,800,609 | 1,887,757 | 430,373 | 441,243 |
| Շահութահարկի գծով ծախս | 140 | | | | |
| Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո | 150 | 1,800,609 | 1,887,757 | 430,373 | 441,243 |

**Գործառնական այլ գործունեությունից եկամուտ և ծախս**

| Ցուցանիշի անվանումը | տող | Նախորդ տարի | | | Հաշվետու տարի (ժամանակս | |
|---|---|---|---|---|---|---|
| | | եկամուտ | ծախս | արդյունք | եկամուտ | ծախս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| Այլ պաշարների վաճառքներից (օտարումներից) | 010 | 4,467 | | 4,467 | 133 | |
| Պաշարների արժեքների փոփոխությունից | 020 | | | 0 | | |
| Վաճառքների գծով դեբիտորական պարտքերի անհավաքագրելիությունից (արժեզրկումից) | 030 | | | 0 | | |
| Երաշխիքային սպասարկումից և վերանորոգումից | 040 | | | 0 | | |
| Գործառնական վարձակալության տրված հիմնական միջոցներից | 050 | | 3,691 | -3,691 | 383 | |
| Տույժերից, տուգանքներից | 060 | 291 | | 291 | | 965 |
| Արժեքների պակասորդներից և փչացումից և դրանց փոխհատուցումից | 070 | | | 0 | 225 | 1,692 |
| Արտադրական ծախսումների սովորական (նորմալ) մակարդակը գերազանցումից | 080 | | | 0 | | |
| Խոտանված արտադրանքից | 090 | | | 0 | | |
| Ժամանակավորապես շահագործումից հանված հիմնական միջոցների պահպանումից | 100 | | | 0 | | |
| Հիմնական միջոցների լուծարումից | 110 | | | 0 | | |
| Հետազոտությունից և մշակումից | 120 | | | 0 | | |
| Այլ գործառնական գործունեությունից | 130 | 189 | 11,020 | -10,831 | 22 | 6,881 |
| **Ընդամենը** | **140** | **4,947** | **14,711** | **-9,764** | **763** | **9,538** |

Աղյուսակ 19

| ...շրջան) |
| --- |
| արդյունք |
| 8 |
| 133 |
| 0 |
| 0 |
| 0 |
| 383 |
| -965 |
| -1,467 |
| 0 |
| 0 |
| 0 |
| 0 |
| 0 |
| -6,859 |
| **-8,775** |

## Այլ ոչ գործառնական գործունեությունից եկամուտ և ծախս

Աղյուսակ 20

| Ցուցանիշի անվանումը | տող | Նախորդ տարի | | | Հաշվետու տարի (ժամանակաշրջան) | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | եկամուտ | ծախս | արդյունք | եկամուտ | ծախս | արդյունք |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| Ոչ ընթացիկ ակտիվների վաճառքներից (օտարումներից) | 010 | 250 | 378 | -128 | | 16,892 | -16,892 |
| Ընթացիկ ֆինանսական ակտիվների վաճառքներից (օտարումներից) | 020 | | | 0 | | | 0 |
| Ընդհատվող գործառնությանը վերագրելի ակտիվների վաճառքներից (օտարումներից) և պարտավորությունների մարումից | 030 | | | 0 | | | 0 |
| Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից | 040 | | | 0 | | | 0 |
| Արտաժույթի փոխարժեքային տարբերություններից | 050 | 214,790 | 249,470 | -34,680 | 321,778 | 216,565 | 105,213 |
| Ոչ գործառնական ֆինանսական գործիքների վերաչափումից և արժեզրկումից (անհավաքագրելիությունից) | 060 | | | 0 | | | 0 |
| Ֆինանսական ներդրումներից | 070 | 89,992 | | 89,992 | 412 | | 412 |
| Վարկերի և փոխառությունների գծով | 080 | | 455,145 | -455,145 | | 538,515 | -538,515 |
| Ակտիվներին վերաբերվող շնորհներից | 090 | | | 0 | | | 0 |
| Անհատույց տրված ակտիվների գծով | 100 | | 64,626 | -64,626 | | 51,755 | -51,755 |
| Ոչ գործառնական այլ գործունեությունից | 110 | | | 0 | | | 0 |
| **Ընդամենը** | **120** | **305,032** | **769,619** | **-464,587** | **322,190** | **823,727** | **-501,537** |

## Արտասովոր դեպքերից շահույթ (վնաս)

Աղյուսակ 21

| Ցուցանիշի անվանումը | տող | Նախորդ տարի | | | Հաշվետու տարի (ժամանակաշրջան) | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | եկամուտ | ծախս | արդյունք | եկամուտ | ծախս | արդյունք |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| | 010 | | 6,191 | -6,191 | | 6,241 | -6,241 |
| | 020 | | | 0 | | | |
| | 030 | | | 0 | | | |
| **Ընդամենը** | **040** | **0** | **6,191** | **-6,191** | **0** | **6,241** | **-6,241** |

**Էական սխալից արդյունք**

Աղյուսակ 22

| Ցուցանիշի անվանումը | տող | ՁՆ N 2-ի տողի համարը | Նախորդ տարի | | | Հաշվետու տարի (ժամանակաշրջան) | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | եկամուտ | ծախս | արդյունք | եկամուտ | ծախս | արդյունք |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | 010 | | | | | | | |
| | 020 | | | | | | | |
| | 030 | | | | | | | |
| | 040 | | | | | | | |
| **Ընդամենը** | **050** | **0** | **0** | **0** | **0** | **0** | **0** | **0** |

**Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունից արդյունք**

Աղյուսակ 23

| Ցուցանիշի անվանումը | տող | ՁՆ N 2-ի տողի համարը | Նախորդ տարի | | | Հաշվետու տարի (ժամանակաշրջան) | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | եկամուտ | ծախս | արդյունք | եկամուտ | ծախս | արդյունք |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | 010 | | | | | | | |
| | 020 | | | | | | | |
| | 030 | | | | | | | |
| | 040 | | | | | | | |
| **Ընդամենը** | **050** | **0** | **0** | **0** | **0** | **0** | **0** | **0** |

# Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորական եզրակացություն

## «ԱՐՑԱԽ ՀԷԿ»ԲԲԸ

2017թ. դեկտեմբերի 31

# Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն……………………………………………………………………… 2

Ֆինանսական վիճակի մասինհաշվետվություն…………………………………………………………….. 4

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն………………………………………………………………………………………………... 5

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն…………………………………… 6

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն……………………………………………….. 7

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ…………………………………………. 8

## Տնօրենների  խորհրդի կազմ

| | |
|---|---|
| Սպարտակ Թևոսյան | Խորհրդի նախագահ |
| Վահրամ Բեգլարյան | «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ, գլխավոր տնօրեն |
| Հայկ Բոյաջյան | «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ |
| Րաֆֆի Բալյոզյան | |
| Արա Ղոնյան | |
| Կարեն Արաբյան | |
| Վլադիմիր Շեկոյան | |

## Ընկերության ղեկավար անձնակազմ

| | |
|---|---|
| Վահրամ Բեգլարյան | Գլխավոր տնօրեն |
| Արմեն Գասպարյան | Տեխնիկական տնօրեն |
| Ժան Հովհաննիսյան | Ֆինանսական տնօրեն |
| Արայիկ Դավթյան | Գլխավոր հաշվապահ |

Տնօրենների  խորհրդի կազմը և Ընկերության ղեկավար անձնակազմը ներկայացված է 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

## Անկախ աուդիտորական եզրակացություն

«Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերին և խորհրդին

### Կարծիք

Մեր կողմից իրականացվել է «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ (Ընկերություն) կից ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և այլ ծանոթագրությունները:

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի ֆինանսական վիճակը, և նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքները ու դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

### Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրեցինք աուդիտի միջազգային ստանդարտների (ԱՄՍ) համաձայն: Այդ ստանդարտներով սահմանված մեր պարտականությունները ներկայացված են «Աուդիտորի պարտականությունները ֆինանսական հաշվետվությունների աուդիտի վերաբերյալ» հատվածում: Հաշվապահների Վարքագծի Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՎՄՍԽ) կողմից հաստատված «Պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի» (ՊՀՎ կարգ) համաձայն մենք պահպանել ենք մեր անկախությունը Ընկերության նկատմամբ և պահպանել ենք էթիկայի այլ սկզբունքների նկատմամբ մեր պարտականությունները համաձայն այդ ստանդարտների և ՀՎՄՍԽ Վարքագրքի:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

### Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ) համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական

ASATRYANS LLC
Sakharov Business Center,
48/1 Nalbandyan street, 5th floor,
Yerevan 0010, Armenia
T. + 374 60 5323 23
+ 374 99 54 33 88
E-mail: general@asatryans.com
www.asatryans.com

ԱՍԱՏՐՅԱՆՍ ՍՊԸ
Սախարով Բիզնես-Կենտրոն,
Նալբանդյան փող. 48/1, 5-րդ հարկ,
ՀՀ, Երևան, 0010
Հ. + 374 60 53 23 23
+ 374 99 54 33 88
Էլ. հասցե՝ general@asatryans.com
www.asatryans.com

հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու ընթացքում ղեկավարությունը պարտավոր է գնահատել Ընկերության գործունեության անընդհատությունը, բացահայտելու գործունեության անընդհատության վերաբերյալ խնդիրները և առաջնորդվել հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքով, եթե ղեկավարությունը չի պատրաստվում լուծարել խումբը կամ դադարեցնել գործունեությունը կամ չունի այլընտրանք քան գործունեության դադարեցումն է:

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ընկերության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի վերահսկման համար:

**Աուդիտորի պատասխանատվություն**

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները ամբողջությամբ վերցրած, բոլոր էական առումներով զերծ են սխալներից՝ պայմանավորված խարդախություններով կամ բացթողումներով, և պատրաստել աուդիտորական եզրակացություն, որը ներառում է մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը ամենաբարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ համաձայն աուդիտը մշտապես կհայտնաբերի էական սխալները և բացթողումները երբ դրանք առկա են: Սխալները կարող են առաջանալ խարդախության կամ բացթողումների հետևանքով և համարվում են էական, եթե առանձին կամ միասին վերցրած կարող են ազդել օգտագործողների տնտեսական որոշումների վրա, որոնք կայացվում են հիմք ընդունելով ֆինանսական հաշվետվությունները:

Աուդիտի ընթացքում, որն իրականացվել է ԱՄՍ համաձայն, մենք առաջնորդվել ենք մասնագիտական դատողությամբ և պրոֆեսիոնալ կասկածամտությամբ: Մենք նաև.

- Հայտնաբերել և գնահատել ենք էական սխալների ռիսկերը ֆինանսական հաշվետվություններում՝ պայմանավորված խարդախություններով և բացթողումներով, նախագծել և իրականացրել ենք աուդիտորական ընթացակարգեր այս ռիսկերին պատասխանելու նպատակով և ձեռք ենք բերել բավարար և համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքը արտահայտելու համար: Խարդախության հետևանքով առաջացած սխալի չհայտնաբերման ռիսկը ավելի բարձր է քան բացթողնման հետևանքով առաջացածինը, քանի որ խարդախությունը կարող է ընդգրկել գաղտնի պայմանավորվածություններ, խարդախություն, նպատակային բացթողում, յուրացում կամ ներքին վերահսկողական նորմերի շրջանցում:

- Պատկերացում ենք կազմել ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ, որպեսզի նախագծենք աուդիտորական ընթացակարգերը տվյալ հանգամանքներին համապատասխան, բայց ոչ կարծիք արտահայտել Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ:

- Գնահատել ենք Ընկերության ղեկավարության կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանությունը և հաշվապահական ողջամիտ գնահատումները և կից բացահայտումները:

- Որոշել ենք ղեկավարության կողմից օգտագործված հաշվապահական հաշվառման գործունեության անընդհատության սկզբունքի օգտագործման համապատասխանությունը՝ ելնելով հավաքագրված աուդիտորական ապացույցներից, եղել են արդյոք էական

ASATRYANS | KRESTON INTERNATIONAL

անորոշություններ, որոնք կարող են առաջացնել կասկածներ, այն մասին, որ Ընկերությունը կարող է ունենալ խնդիրներ գործունեության անընդհատության հետ կապված: Եթե կան նման անորոշություններ, ապա մենք պարտավոր ենք մեր եզրակացությունում օգտագործողների ուշադրությունը հրավիրել այդ բացահայտումներին, իսկ եթե այդ բացահայտումները բավարար չեն ապա պարտավոր ենք ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են աուդիտորական ապացույցների վրա, որոնք ձեռք են բերվել մինչև մեր կողմից աուդիտորական եզրակացություն տալու ամսաթիվը: Սակայն հետագա դեպքերը և հանգամանքները կարող են հանգեցնել Ընկերության գործունեության անընդհատություն դադարեցմանը:

- Գնահատել ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր բնութագիրը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, և թե արդյոք ֆինանսական հաշվետվություններում ներկայացվում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այպես, որպեսզի համարվի ճշմարիտ ներկայացում:

Մենք ծանուցել ենք ղեկավարությանը աուդիտի շրջանակների, ժամանակացույցի և կարևոր բացահայտումների մասին՝ ներառյալ ներքին վերահսկողության համակարգում առկա թերությունների մասին, որոնք մենք հայտնաբերել ենք աուդիտի ընթացքում:

Մենք նաև ծանուցել ենք ղեկավարությանը, որ առաջնորդվել ենք էթիկայի դրույթներով, կապված անկախության հետ և բացահայտել ենք նրանց բոլոր փոխհարաբերությունները, որոնք կարելի է ողջամտորեն մտածել, որ կկրեն մեր հարաբերությունները և համպատասխան երաշխիքները, որտեղ որ կիրառելի է:

Այն բոլոր դիտարկումներից, որոնք քննարկվել են ղեկավարության հետ, ընտրվել են նրանք, որոնք առավել կարևոր են ընթացիկ ժամկանաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում և համարվում են, որպես հիմնական աուդիտորական հիմնահարցեր (ՀԱՀ): Մենք ներկայացրել ենք այդ խնդիրները աուդիտորական եզրակացությունում, եթե ՀՀ օրենսդրությամբ և սահմանված կարգերով չի արգելում հրապարակայնորեն բացահայտումը կամ, հազվադեպ դեպքերում, մենք որոշում ենք, որ նման բացահայտման դեպքում հասարակությանը հասցված վնասները ավելին կլինեն, քան նման բացահայտման օգուտները:

Աուդիտորական առաջադրանքի ղեկավարը Ալբերտ Ասատրյանն է, որի արդյունքը այս աուդիտորական եզրակացությունն է:

28 մարտի, 2018թ.

Սերգեյ Ասատրյան

Տնօրեն

ԱՍԱՏՐՅԱՆՍ ՍՊԸ

Ալբերտ Ասատրյան

Առաջադրանքի ղեկավար

# Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

| Հազար դրամ | Ծնթ. | 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|---|
| Ակտիվներ | | | |
| *Ոչ ընթացիկ ակտիվներ* | | | |
| Հիմնական միջոցներ | 4 | 18,817,265 | 16,504,343 |
| Ոչ նյութական ակտիվներ | | - | - |
| Հետաձգված հարկային ակտիվներ | 5 | 2,092 | 1,574 |
| Տրված կանխավճարներ | 6 | 290,367 | 39,000 |
| | | 19,109,724 | 16,544,917 |
| *Ընթացիկ ակտիվներ* | | | |
| Պաշարներ | 7 | 79,410 | 79,926 |
| Շահութահարկի կանխավճար | | - | - |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 8 | 1,107,372 | 1,041,407 |
| Տրված փոխառություններ | 9 | - | 733,940 |
| Դրամական միջոցներ և համարժեքներ | 10 | 1,446,773 | 72,454 |
| | | 2,633,555 | 1,927,727 |
| Ընդամենը ակտիվներ | | 21,743,279 | 18,472,644 |
| Սեփական կապիտալ և պարտավորություններ | | | |
| *Կապիտալ և պահուստներ* | 11 | | |
| Կանոնադրական կապիտալ | | 10,650,000 | 10,650,000 |
| Էմիսիոն եկամուտ | | 457,127 | 457,127 |
| Պահուստային կապիտալ | | 343,874 | 249,731 |
| Կուտակված շահույթ | | 2,957,077 | 2,509,460 |
| | | 14,408,078 | 13,866,318 |
| *Ոչ ընթացիկ պարտավորություններ* | | | |
| Վարկեր և փոխառություններ | 12 | 6,225,784 | 4,280,465 |
| | | 6,225,784 | 4,280,465 |
| *Ընթացիկ պարտավորություններ* | | | |
| Վարկեր և փոխառություններ | 12 | 178,463 | 82,840 |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 13 | 895,795 | 158,702 |
| Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն | 20 | 35,159 | 84,319 |
| | | 1,109,417 | 325,861 |
| Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ | | 21,743,279 | 18,472,644 |

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2018թ. մարտի 28-ին:

Վահրամ Բեգլարյան
Գլխավոր տնօրեն

Արայիկ Դավթյան
Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 8-ից մինչև 48-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

| Հազար դրամ | Ծնթ. | 2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|---|
| Հասույթ | 14 | 3,446,178 | 3,644,111 |
| Ինքնարժեք | 15 | (849,079) | (783,007) |
| Համախառն շահույթ | | 2,597,099 | 2,861,104 |
| Այլ եկամուտ | | 5,197 | 19,268 |
| Իրացման ծախսեր | | (3,538) | (2,679) |
| Վարչական ծախսեր | 16 | (312,358) | (288,699) |
| Այլ ծախսեր | 17 | (85,928) | (48,759) |
| Գործառնական գործունեությունից շահույթ | | 2,200,472 | 2,540,235 |
| Այլ ֆինանսական հոդվածներ | 18 | (34,680) | 7,962 |
| Ֆինանսական եկամուտ/(ծախս) զուտ | 19 | (365,154) | (451,130) |
| Շահույթ մինչև հարկերը | | 1,800,638 | 2,097,067 |
| Շահութահարկի գծով փոխհատուցում/(ծախս) | 20 | (193,878) | (214,199) |
| Տարվա շահույթ | | 1,606,760 | 1,882,868 |
| *Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ* | | | |
| Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո | | - | - |
| Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ | | 1,606,760 | 1,882,868 |

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 8-ից մինչև 48-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

| Հազար դրամ | Կանոնա-դրական կապիտալ | Էմիսիոն եկամուտ | Պահուստային կապիտալ | Կուտակված շահույթ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| 2016թ. հունվարի 1-ի դրությամբ | 10,650,000 | 457,127 | 208,069 | 1,520,254 | 12,835,450 |
| Տարվա շահույթ | - | - | | 1,882,868 | 1,882,868 |
| Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ | - | - | - | 1,882,868 | 1,882,868 |
| Վերագրվել է պահուստային կապիտալին | - | - | 41,662 | (41,662) | - |
| Շահաբաժիններ | - | - | - | (852,000) | (852,000) |
| 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 10,650,000 | 457,127 | 249,731 | 2,509,460 | 13,866,318 |
| Տարվա շահույթ | - | - | - | 1,606,760 | 1,606,760 |
| Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ | - | - | - | 1,606,760 | 1,606,760 |
| Վերագրվել է պահուստային կապիտալին | - | - | 94,143 | (94,143) | - |
| Շահաբաժիններ | - | - | - | (1,065,000) | (1,065,000) |
| 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 10,650,000 | 457,127 | 343,874 | 2,957,077 | 14,408,078 |

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 8-ից մինչև 48-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

| Հազար դրամ | 2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր | | |
| Տարվա շահույթ | 1,606,760 | 1,882,868 |
| *Ճշգրտումներ՝* | | |
| Մաշվածություն | 382,164 | 377,642 |
| Հիմնական միջոցների օտարումից վնաս | 386 | 639 |
| Շահութահարկի գծով ծախս | 193,878 | 214,199 |
| Տոկոսային ծախս | 365,154 | 457,281 |
| Փոխարժեքային տարբերությունից վնաս | 34,680 | (7,962) |
| *Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները* | 2,583,022 | 2,924,667 |
| Պաշարների փոփոխություն | 516 | 9,919 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն | (65,965) | 228,512 |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն | 737,093 | 12,894 |
| Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ | 3,254,666 | 3,175,992 |
| Վճարված տոկոսներ | (352,566) | (457,281) |
| Վճարված շահութահարկ | (243,556) | (123,921) |
| *Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ* | 2,658,544 | 2,594,790 |
| Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր | | |
| Հիմնական միջոցների ձեռքբերում | (2,695,472) | (719,627) |
| Կանխավճարների փոփոխություն | (251,367) | 128,000 |
| Փոխառության տրամադրում, զուտ | 730,412 | (750,820) |
| *Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ* | (2,216,427) | (1,342,447) |
| Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր | | |
| Վարկեր ստացում/մարում, զուտ | 1,959,836 | (876,888) |
| Շահաբաժնի վճարում | (1,065,000) | (852,000) |
| *Ֆինանսական գործունեությունից ստացված/ գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ* | 894,836 | (1,728,888) |
| Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ աճ | 1,336,953 | (476,545) |
| Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա | 37,366 | 13,693 |
| Մնացորդներ դրամարկղում և բանկերում տարվա սկզբում | 72,454 | 535,306 |
| Մնացորդներ դրամարկղում և բանկերում տարվա վերջում | 1,446,773 | 72,454 |

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 8-ից մինչև 48-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

## 1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է 2008թ. հունիսի9-ին: Ընկերությունը հանդիսանում է «Արցախ ՀԷԿ» ՓԲԸ-ի իրավահաջորդը:

Ընկերությունն իրականացնում է էլեկտրականէներգիայի արտադրություն և արտադրված էլեկտրաէներգիայի իրացում: Էլեկտրաէներգիայի արտադրությունն իրականացվում է ԼՂՀ տարածքում կառուցված վեց հիդրոէլեկտրակայանների միջոցով, որոնց ընդհանուր հզորությունը կազմում է 70.9 Մեգավատտ.

- Սարսանգ ՀԷԿ,
- Թրղե 1 ՀԷԿ,
- Թրղե 2 ՀԷԿ,
- Թրղե 3 ՀԷԿ,
- Մատաղիս 1 ՀԷԿ,
- Մատաղիս 2 ՀԷԿ:

Արտադրված էլեկտրաէներգիան իրացվում է ԼՂՀ տարածքում գործող միակ Էլեկտրական բաշխիչ ցանցերը տնօրինող կազմակերպությանը:
Յուրաքանչյուր ՀԷԿ-ի շահագործման համար Ընկերությանը շնորհված լիցենզիայի ժամկետը 15 տարի է: Ընկերության ղեկավարությունը կարծում է, որ լիցենզիաների ժամկետները պարբերաբար կերկարաձգվեն` առանց ընդհատման:
Ընկերությունը ստացել է էլեկտրական էներգիա արտադրելու լիցենզիաներ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հանրային Ծառայությունները և Տնտեսական Մրցակցությունը Կարգավորող Պետական Հանձնաժողովի կողմից.

-«Սարսանգ» ՀԷԿ-ում էլեկտրական էներգիա արտադրելու համար Ընկերությանը շնորհվել է լիցենզիա 28.07.2008թ.-ին` 15 տարի ժամկետով:
- «Թրղե 1» փոքր ՀԷԿ-ում էլեկտրական էներգիա արտադրելու համար Ընկերությանը շնորհվել է լիցենզիա 11.06.2010թ.-ին` 15 տարի ժամկետով:
- «Թրղե 2» փոքր ՀԷԿ-ում էլեկտրական էներգիա արտադրելու համար Ընկերությանը շնորհվել է լիցենզիա 26.12.2011թ.-ին` 15 տարի ժամկետով:
- «Թրղե 3» փոքր ՀԷԿ-ում էլեկտրական էներգիա արտադրելու համար Ընկերությանը շնորհվել է լիցենզիա 24.07.2015թ.-ին` 15 տարի ժամկետով:
- «Մատաղիս 1» ՀԷԿ և «Մատաղիս 2» ՀԷԿ էլեկտրական էներգիա արտադրելու համար Ընկերությանը շնորհվել է լիցենզիա 17.07.2012թ.-ին` 15 տարի ժամկետով, որոնք շահագործման են հանձնվել 2012թ. սեպտեմբերից:
- «Լև-1» փոքր ՀԷԿ-ում էլեկտրական էներգիա արտադրելու համար Ընկերությանը շնորհվել է լիցենզիա 20.11.2017թ.-ին` 16 տարի ժամկետով:

Ընկերության իրավաբանական հասցեն է` Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, ք. Ստեփանակերտ, Վ. Սարգսյանի 25ա:

2016թ. Ընկերության աշխատողների տարեկան միջին թիվը կազմել է 195մարդ (2015թ.` 190 մարդ):

## 2 Պատրաստման հիմքերը

### 2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից:

### 2.2 Ճանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների,որոնք ներկայացված են ապագա դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքով:

### 2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ ղեկավարության համոզմամբ այս արժույթն առավել օգտակար է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

### 2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ինհամապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 18-ում:

### 2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Ընկերություններնդունել է իր գործունեության համար կիրառելի և 2017թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և փոփոխված ստանդարտները (ՖՀՄՍ) և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

**Նոր և ընդունված ստանդարտներ և մեկնաբանություններ**

*ՖՀՄՍ-ների և նոր մեկնաբանությունների փոփոխությունները, որոնք ուժի մեջ են 2017թ. հունվարի 1-ին և դրանից հետո ընկած ժամանակահատվածից սկսած*

Ընթացիկ տարում Ընկերությունը կիրառել է մի շարք ՖՀՄՍ-ներ և մեկնաբանություններ, որոնք ընդունվել են *Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Կոմիտեի (ՀՀՄՍԿ)* կողմից և կիրառելի են 2016թ. հունվարի 1-ից հետո ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար:Ընկերությունը դեռևս չի կիրառել ստանդարտներ, մեկնաբանություններ կամ փոփոխություններ, որոնք եղել են ընդունված բայց դեռ ուժի մեջ չեն եղել:

Յուրաքանչյուր նոր ստանդարտի էությունը և ազդեցությունը, ինչպես նաև փոփոխությունները նկարագրված են ստորև: Չնայած նրան, որ այս նոր ստանդարտները և փոփոխությունները ընդունվել են առաջին անգամ 2017թ.-ին, նրանք էական ազդեցություն չունեն Ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունների վրա:

*ՀՀՄՍ 7 Փոփոխություններ. Բացահայտման Նախաձեռնություններ*

Փոփոխությունները պահանջում են կազմակերպություններից բացահայտելու պարտավորություններում փոփոխությունները, որոնք առաջացել են *Ֆինանսական գործունեությունից*, ներառյալ ինչպես դրամական միջոցների հոսքերից առաջացած, այնպես էլ ոչ-դրամական միջոցների հոսքերից առաջացած պարտավորությունները (ինչպես օրինակ՝ փոխարժեքային տարբերություններից օգուտը կամ վնասը): Ընկերությունը բացահայտել է վերոնշյալի գծով տեղեկատվությունը ինչպես ընթացիկ ժամանակաշրջանի համար, այնպես էլ համադրելի ժամանակաշրջնի համար ծնթ. 22-ում:

*ՀՀՄՍ 12 Փոփոխություններ. «Հետաձգված հարկային ակտիվների ճանաչում չկրած վնասների դեպքում»*

Փոփոխությունները անդրադառնում են հետևյալին՝

1. Իրական արժեքով չափվող հաստատուն տոկոսադրույքով պարտքային գործիքների հաշվեկշռային արժեքի նվազեումը ինքնարժեքից ցածր, որի համար հարկային հիմքը մնում է նույնը, առաջացնում է նվազեցվող ժամանակային տարբերություն, անկախ նրանից, թե ինչ է կանխատեսում գործիքը ունեցող անձը՝ ստանալ հաշվեկշռային արժեքը վաճառքի կամ շարունակական օգտագործման միջոցով կամ էլ կարծում է, էր թողարկողը կիրականացնի պայմանագրային պարտավորությունները:
2. Երբ Կազմակերպությունը գնահատում է արդյոք հարկային շահույթը հասանելի կլինի, որպեսզի հաշվանցի նվազեցվող ժամանակային տարբերությունները և հարկային օրենսդրությունը սահմանափակում է հաշվանցումը կոնկրետ տեսակի եկամուտների նկատմամբ «օր.՝ կապիտալ վնասները կարող են միայն հաշվանցվել կապիտալ օգուտների հետ», կազմակերպությունը գնահատում է նվազեցվող ժամանակային տարբերությունները այլ նմանատիպ նվազեցվող ժամանակային տարբերությունների հետ, սակայն առանձին այլ տիպի նվազեցվող ժամանակային տարբերություններից;
3. Ապագա հարկային շահույթը գնահատելիս Կազմակերպությունը կարող է ընդգրկել Կազմակերպության ակտիվների վերականգնումը իրենց հաշվեկշռային արժեքից բարձր արժեքով, եթե կա բավարար ապացույցներ, որ Կազմակերպությունը կկարողանա հասնել դրան,
4. Ապագա հարկային շահույթի բավարարությունը գնահատելիս, Կազմակերպությունը պետք է համադրի նվազեցվող ժամանակային

տարբերությունները ապագա հարկվող շահույթի հետ՝ բացառելով հարկային նվազեցումները, որոնք առաջանալու են նվազեցվող ժամանակային տարբերությունների հակադարձումից:

Փոփոխությունները կիրառելի են հետընթաց կերպով 2017թ. հունվարի 1-ից սկսած և թույլատրում են ավելի վաղ կիրառություն: Կազմակերպության ղեկավարությունը չի կանխատեսում էական ազդեցություն կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ընկերության ղեկավարությունը չի գտնում, որ նշված փոփոխությունները էական ազդեցություն կունենան Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ընկերությունը դեռ չի վերլուծել փոփոխությունների հնարավոր ազդեցությունն իր ֆինանսական վիճակի և գործունեության վրա:

*ՖՀՄՍ-ների տարեկան վերանայումներ 2014-2016 ժամանակաշրջան*

Ընկերությունը առաջին անգամ ՖՀՄՍ 12. *«Այլ կազմակերպություններում մասնակցության բացահայտում»* ստանդարտի 2014-2016 ժամանակաշրջանի տարեկան վերանայումներում ներառված փոփոխությունները կիրառել է ընթացիկ տարում: Այլ փոփոխությունները, որոնք ներառված են այս փաթեթում, դեռևս պարտադիր բնույթ չեն կրում և վաղաժամ չեն ընդունվել Ընկերության կողմից: ՖՀՄՍ 12-ը նշում է, որ կազմակերպությունը պարտավոր չէ ներկայացնել ամփոփ ֆինանսական տեղեկատվություն դուստր, ասոցիացված կազմակերպություններում կամ համատեղ ձեռնարկություններում մասնակցությունների վերաբերյալ, որոնք դասակարգվում են (կամ ներառվում են Ընկերության տիրապետության տակ գտնվող, որոնք դասակարգվում են) որպես վաճառքի համար մատչելի: Փոփոխությունները հստակեցնում են, որ սա ՖՀՄՍ 12-ի բացահայտումների պահանջների միակ զիջումն է նման մասնակցությունների գծով:

Ընկերությանղեկավարությունը չի գտնում, որ նշված փոփոխությունները էական ազդեցություն կունենան Ընկերությանֆինանսական հաշվետվությունների վրա:

Ընկերությունը դեռ չի վերլուծել փոփոխությունների հնարավոր ազդեցությունն իր ֆինանսական վիճակի և գործունեության վրա:

**Նոր և փոփոխված ՖՀՄՍ-եր, որոնք հաստատվել են, բայց դեռևս չեն կիրառվում Ընկերության կողմից**

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունում սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:Ընկերությանֆինանսական հաշվետվությունների համար կիրառելի

նոր ստանդարտների, փոփոխությունների և մեկնաբանությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ստորև: Որոշ այլ նոր ստանդարտներ և մեկնաբանություններ թողարկվել են, սակայն չի ակնկալվում, որ դրանք Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա էական ազդեցություն կունենան:

*Ընկերությունը չի կիրառել հետևյալ նոր և վերանայված ՖՀՄՍ-ները, որոնք թողարկվել են, սակայն դեռևս ուժի մեջ չեն՝*

| ՖՀՄՍ, ՀՀՄՍ և ՖՀՄՄԿ | Նկարագրություն | Նշված ամսաթվից կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար | Կիրառությունը |
|---|---|---|---|
| ՖՀՄՍ 9. Փոփոխություններ | Ֆինանսական գործիքներ | 1 Հունվարի, 2018թ. | Հետընթաց |
| ՖՀՄՍ 15 | Հաճախորդների հետ կնքված պայմանագրերից հասույթ | 1 Հունվարի, 2018թ. | Հետընթաց |
| ՖՀՄՍ 16 | Վարձակալություն | 1 Հունվարի, 2019թ. | Հետընթաց |
| ՖՀՄՍ 2. Փոփոխություններ | Բաժնետոմսերի վրա հիմնված վճարների դասակարգումը և չափումը | 1 Հունվարի, 2018թ. | Հետընթաց |
| ՖՀՄՍ 10 և ՀՀՄՍ 28. Փոփոխություններ | Ներդրողի և նրա հետ ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկման միջև ակտիվների վաճառք կամ հատկացում | Դեռևս որոշված չէ այս ստանդարտի համար կիրառման ժամանակա-ցույց, սակայն վաղ կիրառումը թույլատրելի է | |
| ՀՀՄՍ40. Փոփոխություններ | Ներդրումային գույքի փոխանցումներ | 1 Հունվարի, 2018թ. | Հետընթաց |
| ՖՀՄՍ-ների Փոփոխություններ | ՖՀՄՍ-ների տարեկան վերանայումներ 2014-2016 ժամանակաշրջան | 1 Հունվարի, 2018թ. | Հետընթաց |
| ՖՀՄՄԿ22. | Արտարժութային գործառնություններ և կանխավճարային հաշիվներ | 1 Հունվարի, 2018թ. | Հետընթաց |

ՖՀՄՍ 9. *«Ֆինանսական գործիքներ»*

2009թ. նոյեմբերին թողարկված և 2014թ. հոկտեմբերին փոփոխված այս ստանդարտը ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների դասակարգման և չափման, ինչպես նաև ապաճանաչման նոր պահանջներ է ներկայացնում: ՖՀՄՍ 9 պահանջում է, որ ՀՀՄՍ 39-ի՝ «*Ֆինանսական գործիքներ՝ ճանաչումը և չափումը*», համաձայն ճանաչված բոլոր ֆինանսական ակտիվները հետագայում չափվեն ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով: Մասնավորապես, պարտքային գործիքները, որոնք պահվում են այնպիսի բիզնես մոդելում, որի նպատակն է պայմանագրով նախատեսված դրամական հոսքեր հավաքագրելը, և որում պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը համարվում են միմիայն մայր գումարի և մայր գումարի մնացորդի վրա հաշվարկված տոկոսի վճարումներ, հիմնականում հաջորդող հաշվետու ժամանակաշրջանների վերջի դրությամբ չափվում են ամորտիզացված արժեքով: Բոլոր այլ պարտքային և բաժնային գործիքները հաջորդող հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ չափվում են իրենց իրական արժեքով:

ՖՀՄՍ 9-ի ազդեցությունը ֆինանսական պարտավորությունների դասակարգման և չափման վրա առավելապես վերաբերում է ֆինանսական պարտավորության իրական արժեքի փոփոխությունների հաշվառմանը (որպես չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով)՝ կապված այդ պարտավորության վարկային ռիսկի հետ: Մասնավորապես, համաձայն ՖՀՄՍ 9-ի, ֆինանսական պարտավորությունների համար, որոնք հաշվառվում են որպես չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, ֆինանսական պարտավորության իրական արժեքի փոփոխության գումարը, որը վերագրվում է այդ պարտավորության վարկային ռիսկի փոփոխությանը, ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում, քանի դեռ պարտավորության վարկային ռիսկի փոփոխության ազդեցության ճանաչումը այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում չի առաջացնում եկամտի կամ ծախսի հաշվառման անհամատեղում: Ֆինանսական պարտավորությանվարկային ռիսկին վերագրվող իրական արժեքի փոփոխությունները հետագայում չեն վերադասակարգվում եկամտի կամ ծախսի: Նախկինում, համաձայն ՀՀՄՍ 39-ի, ֆինանսական պարտավորության՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, փոփոխության ամբողջ գումարը ճանաչվում էր եկամտում կամ ծախսում:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման հետ կապված ՖՀՄՍ 9 պահանջում է կիրառել սպասվող պարտքային վնասի մոդելը, ի տարբերություն ՀՀՄՍ 39-ի կրած պարտքային վնասի մոդելի: Սպասվող պարտքային վնասի մոդելը պահանջում է հաշվառել պարտքային վնասները, ինչպես նաև դրանցում փոփոխությունները, յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ՝ փոփոխությունները պարտքային ռիսկում արտացոլելու նպատակով:

Հեջի նոր ընդհանուր հաշվառման պահանջները պահպանում են հեջի հաշվառման երեք մեխանիզմներ, որոնք այժմ առկա են ՀՀՄՍ 39-ում: Համաձայն ՖՀՄՍ 9-ի ավելի ճկուն են դարձել այն գործառնությունների տեսակները, որոնք ընդունելի են հեջի հաշվառման համար, մասնավորապես ընդլայնվել են այն գործիքների տեսակները, որոնք համապատասխանում են հեջի հաշվառմանը: Ավելին, արդյունավետության ստուգումը հանվել է և փոխարինվել *է տնտեսական հարաբերություն* սկզբունքով: Հեջի արդյունավետության հետընթաց գնահատում նույնպես այլևս չի պահանջվում:

ՖՀՄՍ 9-ը կիրառելի է 2018թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար՝ ավելի վաղ կիրառման հնարավորությամբ: Ղեկավարությունը կանխատեսում է, որ ՖՀՄՍ 9-ը կկիրառվի Ընկերությանֆինանսական հաշվետվություններում 2018թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, և որ այս նոր ստանդարտի կիրառումն էական ազդեցություն չի ունենա Ընկերությանֆինանսական ակտիվներին և ֆինանսական պարտավորություններին վերաբերող հաշվետվության մեջ ներկայացվող գումարների վրա:

ՖՀՄՍ 15. *«Հաճախորդների հետ կնքված պայմանագրերից հասույթ»*

Այս ստանդարտը առաջին անգամ քննարկման է դրվել 2008թ.-ին: Ստանդարտը վերանայվեց (փոփոխվեց) 2014թ.-ին, այնուհետև՝ 2015թ.-ին: Վերջնական տարբերակը թողարկվել է 2014թ. մայիսին:

ՖՀՄՍ 15. *«Հաճախորդների հետ կնքված պայմանագրերից հասույթ»* ստանդարտը, երբ կիրառության մեջ մտնի, պետք է փոխարինի ՀՀՄՍ 18. *«Հասույթ»* և ՀՀՄՍ 11. *«Կառուցման պայմանագրեր»* ստանդարտներով սահմանված հասույթի ճանաչման ուղեցույցներին և կից մեկնաբանություններին:

ՖՀՄՍ 15. *«Հաճախորդների հետ կնքված պայմանագրերից հասույթ»* ստանդարտի էական սկզբունքն այն է, որ [Ընկերությունը/ Հիմնադրամը] պետք է հասույթը ճանաչի այն գումարով, որով որ Ընկերությունըպատկերացնում կամ ակնկալում է, որ հաճախորդներին, ըստ պայմանագրի, տրված ապրանքների կամ մատուցված ծառայությունների գումարները կստացվեն կամ կհավաքագրվեն Ընկերության կողմից:

Ստանդարտը տալիս է պարզ, սկզբունքների վրա հիմնված հինգ քայլ պարունակող մոդել, որը կիրառվելու է հաճախորդների հետ բոլոր պայմանագրերի հաշվառման նպատակով:

ՖՀՄՍ 15. *«Հաճախորդների հետ կնքված պայմանագրերից հասույթ»* ստանդարտը կիրառելի է 2017թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար՝ ավելի վաղ կիրառման հնարավորությամբ:

ՖՀՄՍ 15-ը փոխարինելու է հետևյալ ստանդարտներին՝

- ՀՀՄՍ 11. «Կառուցման պայմանագրեր»,
- ՀՀՄՍ 18. «Հասույթ»,
- ՖՀՄՄԿ 13. «Հաճախորդի հավատարմության ծրագրեր»,
- ՖՀՄՄԿ 15. «Անշարժ գույքի կառուցման պայմանագրեր»,
- ՖՀՄՄԿ 18. «Ակտիվների փոխանցում հաճախորդների կողմից»,
- ՄՄԿ 31. «Հասույթ, գովազդային ծառայություններ ներառող բարտերային գործարքներ»:

Ստանդարտի հիմնական սկզբունքը ներկայացված է հինգ քայլ ներառող մոդելում՝

Քայլ 1. ճանաչել հաճախորդի հետ պայմանագիրը,
Քայլ 2. ճանաչել պայմանագրային պարտավորությունները,
Քայլ 3. սահմանել գործարքի գինը,
Քայլ 4. կիրառել գործարքի գինը պայմանագրային պարտավորությունների նկատմամբ,
Քայլ 5. ճանաչել հասույթը, երբ ընկերությունը ավարտում է պայմանգրային պարտավորությունները:

Ընկերությանտնօրինությունը գնահատում է, որ ապագայում ՖՀՄՍ 15. *«Հաճախորդների հետ կնքված պայմանագրերից հասույթ»* ստանդարտի կիրառումը կարող է էական ազդեցություն ունենալ ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների և ծանոթագրությունների վրա: Այնուամենայնիվ ՖՀՄՍ 15. *«Հաճախորդների հետ կնքված պայմանագրերից հասույթ»* ազդեցության վերաբերյալ արժանահավատ գնահատական տալը կիրառելի չէ, քանի դեռ Ընկերությունըմանրամասն վերանայում չի իրականացրել:

*ՖՀՄՍ 16. «Վարձակալություն»*

ՖՀՄՍ 16-ը ներկայացնում է բազմակողմանի մոդել վարձակալական պայմանագրերի բացահայտման և վարձատուի ու վարձակալի մոտ հաշվապահական գրանցմաան համար: ՖՀՄՍ 16-ի կիրառելի դառնալուն պես այն փոխարինելու է ՀՀՄՍ 17. «Վարձակալություն և առնթեր մեկնաբանություններին»:

ՖՀՄՍ 16-ը տարբերակում է վարձակալությունը և ծառայության պայմանագրերը՝ ելնելով նրանցից, թե հիմքում ընկած ակտիվը կառավարվում է արդյոք հաճախորդի կողմից: Վարձակալությունների տարանջատումը՝ որպես գործառնական և ֆինանսական, դուրս է եկել և փոխարինվել է մոդելով, որտեղ ակտիվի օգտագործման իրավունքը և

համապատասխան պարտավորությունը պետք է ճանաչի վարձակալը բոլոր տիպի վարձակալությունների համար, բացառությամբ կարճաժամկետ և ցածրարժեք վարձակալությունները:

Ակտիվի օգտագործման իրավունքը սկզբնապես չափվում է ինքնարժեքով, հետագա չափումը իրականացվում է ինքնարժեքով (պայմանավորված որոշակի բացառություններով) հանած կուտակված մաշվածության և արժեզրկման կորուստները, ճշտված վարձակալության պարտավորությունների՝ ցանկացած վերաչափումով: Վարձակալական պարտավորությունը սկզբնապես չափվում է չվճարված վարձակալական վճարների ներկա արժեքով: Հետագայում, վարձակալական պարտավորությունը ճշգրտվում է տոկոսադրույքի և վարձակալական վճարների չափով, ինչպես նաև վարձակալության փոփոխություններով: Այս ստանդարտը ազդեցություն կունենա նաև դրամական հոսքերի վրա, քանի որ ըստ ՀՀՄՍ 17-ի գործառնական վարձավճարները ընդգրկվում էին գործառնական դրամական հոսքերում, իսկ ՖՀՄՍ 16-ի համաձայն՝ տոկոսային և մայր գումարները տարանջատվելու են՝ որպես, համապատասխանաբար, ֆինանսական և գործառնական գործունեությունից դրամական հոսքեր: ՖՀՄՍ 16-ը մեծապես ընդգրկում է վարձատուի կողմից կիրառվող հաշվապահական պահանջները, ինչպես ՀՀՄՍ 17-ում և շարունակում է պահանջել վարձատուին դասակարգի վարձակալությունը՝ ֆինանսական կամ գործառնական:

Բացի այդ բավականաչափ շատ բացահայտումներ է պահանջում ՖՀՄՍ 16-ը:

31 դեկտեմբեր 2016թ.-ի դրությամբ Կազմակերպությունը [Խումբը] ունի չչեղարկվող գործառնական վարձակալություն: ՀՀՄՍ 17-ը չի պահանջում ճանաչել ակտիվի օգտագործման իրավունք կամ վարձակալական վճարների չափով պարտավորություն, փոխարենը՝ համապատասխան տեղեկատվությունը բացահայտվում է որպես գոծառնական վարձակալություն 48 ծանոթագրությունում: Նախնական գնահատումները նախանշում են, որ նման գործառնությունները կբավարարեն ՖՀՄՍ 16-ի վարձակալության սահմանմանը և հետևաբար Կազմակերպությունը [Խումբը] կճանաչի ակտիվի օգտագործման իրավունքը և պարտավորությունը, եթե միայն այս վարձակալությունները չեն համարվել կարճաժամկետ կամ ցածրարժեք համապատասխան ՖՀՄՍ 16-ի: Նոր պահանջների կիրառումը սպասվում է, որ կունենա էական ազդեցություն Կազմակերպության [Խմբի] ֆինանսական հաշվետվությունների վրա և ղեկավարությունը ներկայումս գնահատում է այդ ազդեցությունը: Հնարավոր չէ տալ խելամիտ ազդեցության չափ, քանի դեռ ղեկավարները չեն ավարտել գնահատումը:

Երբ Կազմակերպությունը [Խումբը], ֆինանսական վարձակալության գծով, հանդես է գալիս որպես վարձակալ, ապա ճանաչվում է ակտիվ և համապատասխան վարձակալական պարտավորություն և եթե Կազմակերպությունը [Խումբը] վարձատուն է՝ ֆինանսական և գործառնական վարձակալության դեպքում, Կազմակերպության ղեկավարները չեն կանխատեսում, որ ՖՀՄՍ-ի ընդունումը կունենա էական ազդեցություն Ընկերության հաշվետվությունների վրա:

*ՖՀՄՍ 2 Փոփոխություններ. «Բաժնետոմսերի վրա հիմնված վճարների դասակարգումը և չափումը»*

Փոփոխությունները անդրադառնում են հետևյալին՝

1. Երբ ուզում ենք գնահատել իրական արժեքը կանխիկով վճարվող բաժնետոմսերի համար՝ պետք է կիրառենք նույն սկզբունքը, ինչ իրավունք առաջացնող և չառաջացնող բաժնետոմսերի համար, որը կիրառում ենք սեփական կապիտալում մարվող բաժնետոմսերի համար:

2. Երբ որոշակի հարկային օրենքներ և կարգեր պահանջում են ունենալ համապատասխան քանակի բաժնետոմսեր հավասար աշխատողների հարկային պարտավորություններին, որպեսզի կատարեն աշխատողի հարկային պարտավորությունները, այսպիսի գործառնությունը պետք է դասակարգվի որպես սեփական կապիտալում մարվող, ընդունելով, որ բաժնետոմսերի վրա հիմնված վճարումը պետք է դասակարգվեր որպես սեփական կապիտալում մարվող, եթե չպարունակեր զուտ վճարման պայման:

3. Ձևափոխումը բաժնետոմսերի վրա հիմնված վճարների կանխիկ դրամով վճարվողից դեպի սեփական կապիտալում մարվողի պետք է հաշվառվի հետևյալ կերպ՝
   - Սկզբնական պարտավորությունը ապաճանաչվում է,
   - Սեփական կապիտալում մարվող բաժնետոմսերի վրա հիմնված վճարումը ճանաչվում է ձևափոխման օրվա դրությամբ իրական արժեքով, այն չափով, որքանով որ ծառայությունը մատուցվել է մինչ ձևափոխման օրը,
   - Ցանկացած տարբերություն, որը առաջանում է հաշվեկշռային արժեքի և ձևափոխված արժեքի միջև պետք է ճանաչվի շահույթ/ վնասի հաշվետվությունում:

Այս փոփոխությունները կիրառելի են 2018թ.-ի հունվարի 1-ից սկսած, սակայն ավելի վաղ կրառությունը թույլատրելի է: Հատուկ անցման դրույթները այդ դեպքում կիրառելի են:

Կազմակերպության ղեկավարությունը չի կանխատեսում էական ազդեցություն կազմակերպության [խմբի] ֆինանսական հաշվետվությունների վրա, քանի որ կազմակերպությունը չունի որևէ կանխիկով մարվող բաժնետոմսերի վրա հիմնված վճարներ և չունի հարկերի պահման պարտավորություն բաժնետոմսերի վրա հիմնված վճարների գծով:

*ՖՀՄՍ 10 և ՀՀՄՍ 28 Փոփոխություններ. «Ակտիվների վաճառք կամ ներդրում ներդրողի և ասոցացիայի կամ համատեղ ձեռնարկության միջև»*

ՖՀՄՍ 10 և ՀՀՄՍ 28 փոփոխությունները առնչվում են այն դեպքերի հետ, երբ տեղի է ունենում ակտիվների վաճառք կամ ներդրում ներդրողի և ասոցացիայի կամ համատեղ ձեռնարկության միջև: Փոփոխությունները բացատրում են, որ առաջացած օգուտը կամ վնասը մասնաճյուղի նկատմամբ վերահսկողության կորուստի, որը չի պարունակում բիզնես ասոցացիայի կամ համատեղ ձեռնարկության հետ, հաշվառվում է օգտագործելով կապիտալի սկզբունքը, անյն է՝ ճանաչվում է մայր ընկերության շահույթ/վնասի հաշվետվությունում միայն, այն չափով որքանով, որ չկապակցված ներդրողի ներդրումն է ասոցացիայում կամ համատեղ ձեռնարկությունում: Նմանապես նաև, նախկին մասնաճյուղում, որը դարձել է ասոցացիա կամ համատեղ ձեռնարկություն, ունեցած ներդրման իրական արժեքի վերաչափումից առաջացած շահույթը կամ վնասը ճանաչվում է նախկին մայր ընկերության շահույթ/վնասի հաշվետվությունում միայն այն չափով, որքանով չկապակցված ներդրողի ներդրումն է ասոցացիայում կամ համատեղ ձեռնարկությունում:

Դեռևս որոշված չէ այս ստանդարտի համար կիրառման ժամանակացույց, սակայն վաղ կիրառումը թույլատրելի է: Կազմակերպության ղեկավարությունը այս ստանդարտի կիրառության հետ կապված չի կանխատեսում էական ազդեցություն կազմակերպության [խմբի] ֆինանսական հաշվետվությունների վրա:

*ՀՀՄՍ 40 Փոփոխություններ. «Ներդրումային գույքի փոխանցումներ»*

Փոփոխությունները հստակեցնում են, որ ակտիվի ներդրումային գույքին փոխանցումները կամ ներդրումային գույքից փոխանցումները պետք է անպայման գնահատվեն՝ համոզվելու համար, թե արդյոք ակտիվը համապատասխանում է կամ դադարել է համապատասխանել ներդրումային գույք դասակարգվելու սահմանմանը՝ հիմնվելով այն ապացույցների վրա, որ տեղի է ունեցել ակտիվի օգտագործման նշանակության փոփոխություն: Փոփոխությունները լրացուցիչ հստակեցնում են, որ կան այնպիսի իրավիճակներ, երբ շինարարության ժամանակ շինությունները փոխում են իրենց օգտագործման նպատակային նշանակությունը, որոնք ՀՀՄՍ 40-ում նշված իրավիճակներից տարբերվում են (այսինքն՝ օգտագործման նպատակային նշանակության փոփոխությունը չի սահմանափակվում միայն ավարտված շինարարությամբ): Փոփոխությունները կիրառվում են 2018թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար՝ հետընթաց կիրառելու նախընտրությամբ (եթե դա հնարավոր է առանց խոչընդոտների): Տվյալ դեպքում կիրառվում են հատուկ անցումային դրույթներ:

Կազմակերպության ղեկավարությունը չի կանխատեսում, որ վերոնշյալը էական ազդեցություն կարող է ունենալ կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների վրա:

*ՖՀՄՍ-ների Փոփոխություններ. «ՖՀՄՍ-ների տարեկան վերանայումներ 2014-2016 ժամանակաշրջան»*

Տարեկան փոփոխությունները ներառում են ՖՀՄՍ 1-ում և ՀՀՄՍ 28-ում փոփոխությունները, որոնք դեռ պարտադիր չեն Ընկերությանհամար: Փաթեթը նաև ներառում է ՖՀՄՍ 12-ում փոփոխությունները, որը ընթացիկ տարում պարտադիր կիրառելի է Ընկերությանհամար:

ՀՀՄՍ 28-ում կատարված փոփոխությունները հստակեցնում են, որ ասոցիացված կազմակերպություններում եւ համատեղ ձեռնարկություններում ներդրումներ կատարելու համար վենչուրային կապիտալի կազմակերպման եւ այլ նմանատիպ կազմակերպությունների համար ԻԱՇ/Վ-ով (իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով հաշվառվող) հաշվառումն առանձին առանձին յուրաքանչյուր ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկության համար պարտադիր է, և այդ ընտրությունը պետք է կատարվի ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկություն սկզբնական ճանաչման պահին: Կազմակերպության համար ԻԱ-ի (իրական արժեք) ընտրության հնարավոր մեթոդ, որը չի համարվում ներդրումային օբյեկտ, որպեսզի պահպանվի իրական արժեքով հաշվառման մոտեցումը, կիրառվում է բաժնեմասնակցության մեթոդը: Փոփոխություններում կատարվում է համապատասխան բացատրությունը, որ այդ մեթոդի ընտրությունը հասանելի է բոլոր ներդրումային կազմակերպության (որտեղ այլ կազմակերպություններ մասնակցություն ունեն)

գործընկերներին: Փոփոխությունները կիրառելի է հետընթաց, եթե թույլատրվում է ավելի վաղ կիրառումը:

ՖՀՄՍ 1-ի և ՀՀՄՍ 28-ի փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2018թ. հունվարի 1-ից:

Կազմակերպության ղեկավարությունը չի կախատեսում, որ վերոնշյալը էական ազդեցություն կարող է ունենալկազմակերպության ֆինանսական հաշվետվությունների վրա:

*ՖՀՄՄԿ 22. «Արտարժութային գործառնություններ և կանխավճարային հաշիվներ»*

ՖՀՄՄԿ 22-ի մեկնաբանությունները դիտարկում է «Գործարքի ամսաթվի» որոշման դեպքերը, որի նպատակն է որոշել կիրառվող փոխարժեքը, ակտիվի, ծախսի կամ եկամտի սկզբնական ճանաչման պահին, երբ այդ հոդվածի հետ կապված վճարումները կատարվել են կամ ստացվել են, որպես կանխավճար այլ արժույթով, որը ոչ դրամային ակտիվի կամ ոչ դրամային պարտավորության ճանաչման արդյունք է (օրինակ՝ անվերադարձելի դեպոզիտ/ավանդ կամ հետաձգված եկամուտ):

Մեկնաբանությունները մատնանշում են, որ գործարքի ամսաթիվը դա այն ամսաթիվն է, երբ կազմակերպությունը առաջին անգամ ճանաչում է ոչ դրամային ակտիվը կամ ոչ դրամային պարտավորությունը՝ առաջացած փոխանցումից կամ կանխավճար ստանալուց: Եթե կատարվել են մի քանի վճարումներ կամ ստացվել են մի քանի կանխավճարներ, Մեկնաբանությունը պահանջում է, որ կազմակերպությունը առանձին որոշի յուրաքանչյուր վճարման կամ ստացված կանխավճարների ամսաթվերը:

Փոփոխությունները կիրառելի են հետընթաց կերպով 2018թ. հունվարի 1-ից սկսած և թույլատրում են ավելի վաղ կիրառություն: Կազմակերպության ղեկավարությունը չի կանխատեսում էական ազդեցություն կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների վրա:

Կազմակերպությանղեկավարությունը չի գտնում, որ նշված փոփոխությունները էական ազդեցություն կունենան Կազմակերպությանֆինանսական հաշվետվությունների վրա:

Ընկերությունըդեռ չի վերլուծել փոփոխությունների հնարավոր ազդեցությունն իր ֆինանսական վիճակի և գործունեության վրա:

# 3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

## 3.1 Արտարժույթ

*Արտարժույթով գործարքներ*

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը: Իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում: Ստորև ներկայացված են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքները.

| | 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|---|
| ԱՄՆ դոլար | 484.10 | 483.94 | 483.75 |
| Եվրո | 580.10 | 512.2 | 528.69 |

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում: Իրական արժեքով արտահայտված ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ներառվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում, բացառությամբ այն ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած տարբերությունների, որոնց վերաբերող շահույթը կամ վնասը ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում: Նման ոչ դրամային հոդվածների դեպքում շահույթի կամ վնասի ցանկացած փոխարժեքային բաղադրիչ նույնպես ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում:

## 3.2 Հիմնական միջոցներ

*Սկզբնական արժեքով հաշվառվող հիմնական միջոցներ*

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը,հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները, որոնք պահվում են վարձակալության տալու կամ վարչական, կամ դեռևս անորոշ նպատակով, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները, տեղանքի նախապատրաստման, տեղակայման ծախսումները, մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում՝ նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները՝ համաձայն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության: Վարձակալական գույք հանդիսացող շենքերը նույնպես ընդգրկվում են հիմնական միջոցներում, եթե դրանք ստացվել են ֆինանսական վարձակալությամբ: Նման ակտիվների մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի ակնկալվող օգտակար ծառայության ընթացքում (որը որոշվում է՝համեմատելով սեփական համանման ակտիվների հետ) կամ վարձակալության ժամկետի ընթացքում, եթե վերջինս ավելի կարճ է:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլհամապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցիօգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

| | |
|---|---|
| Շենքեր | - 20-60 տարի |
| Կառուցվածքներ | - 20-60 տարի |
| Փոխանցող հարմարանքներ | - 25-60 տարի |
| Մեքենաներ և սարքավորումներ | - 5-60 տարի |
| Տրանսպորտային միջոցներ | - 5 տարի |
| Արտադրական գույք, տնտեսական գույք, գործիքներ | - 5 տարի |
| Բազմամյա տնկիներ | - 5 տարի |
| Համակարգչային տեխնիկա | - 1 տարի |
| Այլ հիմնական միջոցներ | -5 տարի |

## 3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է՝

Հաշվապահական հաշվառմանհամակարգչային ծրագրեր 5 տարի:

## 3.4 Վարձակալված ակտիվներ

Համաձայն ՀՀՄՍ 17-ի՝ «*Վարձակալություն*»,վարձակալված ակտիվի սեփականության իրավունքը փոխանցվում է վարձակալին, երբ նրան են փոխանցվում սեփականության իրավունքի հետ կապված բոլոր ռիսկերը և օգուտները: Վարձակալված ակտիվը վարձակալության սկզբում ճանաչվում է վարձակալված գույքի իրական արժեքով կամ, ավելի ցածր լինելու դեպքում, նվազագույն վարձավճարների ներկա արժեքով՝ գումարած միանվագ վճարները, եթե այդպիսիք կան: Համապատասխան գումարը ճանաչվում է որպես ֆինանսական վարձակալության գծով պարտավորություն, անկախ նրանից, որ վարձակալական վճարների մի մասը կարող է վճարման ենթակա լինել մինչև վարձակալության սկիզբը:

Վարձակալված ակտիվների հետագա հաշվառումը, այսինքն՝ մաշվածության մեթոդի ընտրությունը և օգտակար ծառայության ժամկետների որոշումը, համապատասխանում են սեփականության իրավունքով Ընկերությանը պատկանող նմանատիպ ակտիվների հաշվառմանը: Ֆինանսական վարձակալության գծով պարտավորությունները նվազեցվում են վարձավճարների չափով՝ հանած ֆինանսական վճարը, որը ներառվում է ֆինանսական ծախսերում: Ֆինանսական վարձակալության տոկոսային մասն իրենից ներկայացնում է մնացորդային արժեքի հաստատուն մաս, որը վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ վարձակալության ժամկետի ընթացքում:

Մյուս բոլոր վարձակալությունները դիտվում են որպես գործառնական վարձակալություններ: Գործառնական վարձակալության գծով վճարները ճանաչվում են որպես ծախս՝ գծային հիմունքով: Վարձակալության հետ կապված ծախսերը, ինչպիսիք են պահպանման և ապահովագրության ծախսերը, ծախսագրվում են իրականացման պահին:

## 3.5 Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝օգտագործելով միջին կշռված մեթոդը, և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

## 3.6 Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորություններն ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների, որոնք սկզբնապես դասակարգվում են որպես ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ՝չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հետագա չափումը ներկայացված է ստորև:

*Ֆինանսական ակտիվներ*

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների, բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ,
- փոխառություններ և դեբիտորական պարտքեր:

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր կատեգորիաների՝ կախված գործիքի բնույթից և նպատակից: Ֆինանսական գործիքի կատեգորիան համապատասխանեցվում է այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը և այն հանգամանքին, թե արդյոք առաջացող եկամուտը և ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, թե ուղղակիորեն այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում: Ընկերության ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 19-ում:

Ընդհանուր առմամբ, Ընկերության բոլոր ֆինանսական ակտիվները ճանաչվում են՝ օգտագործելով վերջնահաշվարկի ամսաթվի հաշվառումը: Ֆինանսական ակտիվների հետ կապված բոլոր ծախսերը և եկամուտները որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, ներկայացվում են «Ֆինանսական ծախս», «Ֆինանսական եկամուտ» կամ «Այլ ֆինանսական արդյունքներ» հոդվածներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որը ներկայացվում է «Այլ ծախսեր» հոդվածում:

i. ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով

Ֆինանսական ակտիվները՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, ներառում են առևտրային նպատակով պահվող ֆինանսական ակտիվները կամ այն ֆինանսական ակտիվները, որոնքորպես չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով դասակարգվել են Ընկերության կողմից՝ սկզբնական ճանաչման ժամանակ: Բոլոր ածանցյալ ֆինանսական գործիքները, որոնք ենթակա չեն հեջավորման, դասակարգվում են այս կատեգորիայում:

Ածանցյալ ֆինանսական գործիքների գծով առաջացած ցանկացած օգուտ կամ վնաս հիմնված է իրական արժեքի փոփոխության վրա, որը որոշվում է՝ ուղղակիորեն վկայակոչելով գործող շուկայում գործարքները կամ գործող շուկայի բացակայության դեպքում՝ գնահատման մեթոդի միջոցով:

ii. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները չափվում են իրական արժեքով՝ իրական արժեքի փոփոխությունները ուղղակիորեն ճանաչելով այլ համապարփակ արդյունքներում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների կատեգորիայում դասակարգված ֆինանսական գործիքներից առաջացած օգուտը կամ վնասըճանաչվում է շահույթում կամ վնասում այն դեպքում, երբ նշված ակտիվները վաճառվում են կամ երբ ներդրումն արժեզրկվում է: Արժեզրկման դեպքում ցանկացած վնաս, որը նախկինում ճանաչվել էր այլ համապարփակ արդյունքներում, փոխանցվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն: Սեփական կապիտալի գործիքներից առաջացած և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված վնասները չեն հակադարձվում համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, այլ ճանաչվում են սեփական կապիտալում: Նախորդ ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասինհաշվետվությունում ճանաչված պարտքային արժեթղթերի արժեզրկումից առաջացած վնասները հակադարձվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, եթե հետագա աճը հիմնվում է այն դեպքի վրա, որը տեղի է ունեցել համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ արժեզրկումից վնասի ճանաչումից հետո:

iii. Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները ֆիքսված կամ որոշելի վճարումներով, ֆիքսված մարման ժամկետով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են և ներառում են առևտրային բանկերում ավանդները: Ներդրումները դասակարգվում են որպես մինչև մարման ժամկետը պահվող, եթե Ընկերության ղեկավարությունը մտադրված է պահել դրանք մինչև դրանց մարման ժամկետը:

iv. Փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Փոխառություններն ու դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնքչեն գնանշվում ակտիվ շուկայում և

ներառում են առևտրային և այլ դեբիտորական պարտքերը, ինչպես նաև մնացորդները դրամարկղում և բանկերում:

*Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր*

Ընթացիկ դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով` հանած արժեզրկման պահուստը: Առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ Ընկերությունը սկզբնապես սահմանված ժամկետներում չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները: Դեբիտորի զգալի ֆինանսական դժվարությունները, վճարման հետաձգումը նվճարումների ուշացումները ցուցանիշ են այն բանի, որ առևտրային դեբիտորական պարտքն արժեզրկված է: Պահուստի գումարը ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է:

Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում` ծախսի կամ եկամտի ճանաչման միջոցով: Հաճախորդի հաշվի մնացորդից դուրս գրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից: Բոլոր դեբիտորական պարտքերը, որոնց հավաքագրումը գնահատվում է անհավանական, դուրս են գրվում:

*Մնացորդներ դրամարկղում և բանկերում*

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները և դրամական միջոցները ճանապարհին:

*Ֆինանսական պարտավորություններ*

i. Վարկեր և փոխառություններ

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով` առանց գործարքային ծախսերի: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասինհաշվետվությունում` արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ` որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

ii. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

## 3.7 Արժեզրկում

*Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում*

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվներն արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

*Ֆինանսական ակտիվների արժեզրկում*

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների` չափվող իրական արժեքով` շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում են արժեզրկման հայտանիշի առկայության համար: Ֆինանսական ակտիվներն արժեզրկված են, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձություններ ազդել են ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստը հաշվառվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությամբ: Բոլոր ֆինանսական ակտիվների համար արժեզրկումից կորուստն ուղղակիորեն նվազեցվում է ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքից, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնց հաշվեկշռային արժեքը նվազեցվում է կասկածելի պարտքի պահուստի միջոցով:

Բացառությամբ վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի գործիքների, եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկման կորուստը նվազում է, և նվազումը օբյեկտիվորեն կարելի է վերագրել արժեքի իջեցումից հետո տեղի ունեցած դեպքերին, ապա նախկինում ճանաչված արժեզրկման կորուստը հակադարձվում է՝ ճանաչվելով համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն չափով, որ հակադարձումը չհանգեցնի ֆինանսական ակտիվի այնպիսի հաշվեկշռային արժեքի, որը գերազանցի այն ամորտիզացված արժեքը, որը կլիներ, եթե այդ ֆինանսական ակտիվի արժեքի իջեցման հակադարձման ամսաթվի դրությամբ արժեզրկում ճանաչված չլիներ:

Ինչ վերաբերում է վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի արժեթղթերին, արժեզրկումից հետո իրական արժեքի աճն ուղղակիորեն ճանաչվում է սեփական կապիտալում:

## 3.8 Աշխատակիցներին հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են, օրինակ, վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները) և պարգևավճարները:

Երբ աշխատակիցը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությանը մատուցել է ծառայություն, աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայության դիմաց, ճանաչվում է՝

ա) որպես պարտավորություն՝ արդեն վճարված գումարները հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Ընկերությունը այդ տարբերությունը ճանաչում է որպես ակտիվ՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,

բ) որպես ծախս, եթե այն չի ներառվում մեկ ուրիշ ակտիվի հաշվեկշռային արժեքի մեջ:

## 3.9 Սեփական կապիտալ

Ընկերությանկողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով: Տեղաբաշխված բաժնետոմսերի վաճառքի գնի և անվանական արժեքի տարբերությունը ներկայացվում է որպես էմիսիոն եկամուտ:

Սովորական բաժնետոմսերին անմիջականորեն վերագրվող ծախսերը ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում:

Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

Ընկերությունը ստեղծում է պահուստային կապիտալ՝ Ընկերության կորուստները ծածկելու, ինչպես նաև Ընկերության պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Ընկերության շահույթը և այլ միջոցները դրա համար չեն բավարարում:

Ընկերությունը մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթը հաշվարկում է տարվա զուտ շահույթը բաժանելով տարվա ընթացքում շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին թվին:

Տարվա ընթացքում շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին թիվը իրենից ներկայացնում է տարեսկզբում շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի թիվը՝ ճշգրտված այդ ժամանակաշրջանի ընթացքում հետ

գնված կամ թողարկված սովորական բաժնետոմսերի թվով՝ բազմապատկած ժամանակային կշռող գործակցով: Ժամանակային կշռող գործակիցը բաժնետոմսերի շրջանառության մեջ գտնվելու օրերի թիվն է՝ բաժանած հաշվետու ժամանակաշրջանի օրերի թվի վրա, կշռված միջինի խելամիտ մոտեցումը շատ դեպքերում տեղին է:

## 3.10 Պահուստներ

Պահուստըճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Ընկերությաննունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի զեղչման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

## 3.11 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գուդվիլի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ՝ հարկվող շահույթի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Ընկերությունը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ամսաթվի

դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

## 3.12 Սեգմենտային հաշվետվություններ

Ընկերությանգործունեությունը ներառում է էլեկտրաէներգիայի վաճառքի և հզորության իրացման մատուցվող ծառայությունները: Ընկերությունն ունի մեկ գործառնական սեգմենտ: Համաձայն ՖՀՄՍ 8-ի՝ Ընկերության կողմից կիրառվող սեգմենտային հաշվետվությունների համար չափման քաղաքականությունը նույնն է, ինչ որ ֆինանսական հաշվետվությունների համար կիրառվող քաղաքականությունը,որը ներառված չէ գործառնական սեգմենտների գործառնական շահույթի գումարը որոշելիս: Ի լրումն՝ Ընկերության այն ակտիվները, որոնք ուղղակիորեն չեն առնչվում գործառնական սեգմենտի բիզնես գործունեությանը, սեգմենտին չեն բաշխվում: Սեգմենտային տեղեկատվությունը ներկայացված է կից ծանոթագրություններում:

## 3.13 Հասույթի ճանաչում

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ հաշվի առնելով Ընկերության կողմից տրամադրված ցանկացած առևտրական զեղչերը և իջեցումների գումարները:

Ընկերության հասույթը ներկայացնում է էլեկտրաէներգիայի վաճառքից և հզորության իրացման ստացվելիք փոխհատուցումը:

Ընկերության կողմից հասույթը ճանաչվում է, երբ ծառայությունները մատուցվում են գնորդին, երբ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները և ծախսերը հնարավոր է արժանահավատորեն չափել և հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն:

## 4 Հիմնական միջոցներ

| Հազար դրամ | Շենքեր, շինություններ և հող | Կառուց-վածքներ, փոխանցող հարմարանքներ | Մեքենա սարքա-վորումներ, տրասպորտային միջոցներ | Արտադրական և տնտեսական գույք, | Անավարտ ոչ ընթացիկ ակտիվներ | Այլ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|
| *Սկզբնական արժեք* | | | | | | | |
| 2016թ. հունվարի 1-ի դրությամբ | 6,364,211 | 4,302,927 | 9,243,317 | 30,904 | 91,576 | 7,483 | 20,040,418 |
| Ավելացում | 38,648 | 91,086 | 20,472 | 1,103 | 567,630 | 688 | 719,627 |
| Օտարում | - | - | (1,789) | (1,034) | - | (107) | (2,930) |
| 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 6,402,859 | 4,394,013 | 9,262,000 | 30,973 | 659,206 | 8,064 | 20,757,115 |
| Կապիտալացում | 1,833 | 21,870 | 11,302 | - | 2,610,747 | - | 2,645,752 |
| Ավելացում | 14,334 | 2,839 | 7,909 | 8,045 | 15,572 | 1,021 | 49,720 |
| Վերադասակարգում | - | - | 66,855 | - | (66,855) | - | - |
| Օտարում | - | (896) | (1,538) | (1,858) | - | (226) | (4,518) |
| 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 6,419,026 | 4,417,826 | 9,346,528 | 37,160 | 3,218,670 | 8,859 | 23,448,069 |
| *Կուտակված մաշվածություն* | | | | | | | |
| 2016թ. հունվարի 1-ի դրությամբ | 1,539,971 | 288,008 | 2,019,806 | 22,953 | - | 6,701 | 3,877,439 |
| Տարվա ծախս | 107,064 | 93,141 | 174,027 | 2,296 | - | 1,096 | 377,624 |
| Օտարումից դուրս գրում | - | - | (1,263) | (921) | - | (107) | (2,291) |
| 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 1,647,035 | 381,149 | 2,192,570 | 24,328 | - | 7,690 | 4,252,772 |
| Տարվա ծախս | 108,170 | 103,186 | 168,066 | 1,898 | - | 844 | 382,164 |
| Օտարումից դուրս գրում | - | (896) | (1,458) | (1,557) | - | (221) | (4,132) |
| 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 1,755,205 | 483,439 | 2,359,178 | 24,669 | - | 8,313 | 4,630,804 |
| *Հաշվեկշռային արժեք* | | | | | | | |
| 2016թ. հունվարի 1-ի դրությամբ | 4,824,240 | 4,014,919 | 7,223,511 | 7,951 | 91,576 | 782 | 16,162,979 |
| 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 4,755,824 | 4,012,864 | 7,069,430 | 6,645 | 659,206 | 374 | 16,504,343 |
| 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 4,663,821 | 3,934,387 | 6,987,350 | 12,491 | 3,218,670 | 546 | 18,817,265 |

2017թ. դեկտեմբերի 31-ի և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը գրավադրված հիմնական միջոցներ չունի:

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ169,805հազ. դրամ (2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 161,746 հազ. դրամ) սկզբնական արժեքով հիմնական միջոցներ հաշվառվում են զրոյական հաշվեկշռային արժեքով:

2017թ. և 2016թ. մաշվածության ծախսը բաշխվել է հետևյալ կերպ՝

| Հազար դրամ | 2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Վաճառքի ինքնարժեք | 370,064 | 365,712 |
| Վարչական ծախսեր | 12,100 | 11,912 |
| | 382,164 | 377,624 |

2017թ.-ին հիմնական միջոցների ավելացումները բաղկացած են.

| | Հազար դրամ |
|---|---|
| Թրղե-4 ՓՀԷԿ շին մոնտաժային աշխատանքներ | 582,867 |
| Լև ՓՀԷԿ  շին մոնտաժային աշխատանքներ | 1,789,495 |
| Կապիտալացվող փոխառության և վարկի ծախսումներ | 238,390 |
| Այլ | 84,720 |
| | 2,695,472 |

2016թ.-ին հիմնական միջոցների ավելացումները բաղկացած են.

| | Հազար դրամ |
|---|---|
| Թրղե-4 ՓՀԷԿ  շին մոնտաժային աշխատանքներ | 30,666 |
| Լև ՓՀԷԿ  շին մոնտաժային աշխատանքներ | 548,067 |
| Թրղե-1 ՓՀԷԿ  ջրի ճնշման կար•ավորիչ կափույր | 66,854 |
| Կապիտալացվող փոխառության և վարկի ծախսումներ | 74,040 |
| | 719,627 |

## 5 Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկերի շարժը ներկայացված է ստորև.

| Հազար դրամ | 2017թ. | 2016թ. |
|---|---|---|
| Տարեսկզբի մնացորդ | 1,574 | 3,472 |
| Ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ճանաչված փոխհատուցում | 518 | (1,898) |
| Տարեվերջի մնացորդ | 2,092 | 1,574 |

2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

| Հազար դրամ | 2016թ. հունվարի 1 | Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն ում ճանաչված | 2016թ. դեկտեմբերի 31 |
|---|---|---|---|
| *Հետաձգված հարկային ակտիվներ* | | | |
| Արժակուրդի պահուստ | 1,574 | 518 | 2,092 |
| | 1,574 | 518 | 2,092 |
| *Հետաձգված հարկային պարտավորություններ* | | | |
| | | | |
| Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ | 1,574 | 518 | 2,092 |

2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

| Հազար դրամ | 2015թ. հունվարի 1 | Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն ում ճանաչված | 2015թ. դեկտեմբերի 31 |
|---|---|---|---|
| *Հետաձգված հարկային ակտիվներ* | | | |
| Արժակուրդի պահուստ | 3,472 | (1,898) | 1,574 |
| | 3,472 | (1,898) | 1,574 |
| *Հետաձգված հարկային պարտավորություններ* | - | | |
| | - | | |
| Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ | 3,472 | (1,898) | 1,574 |

| Ներառյալ՝ | 2017թ. | 2016թ. |
|---|---|---|
| Փոխհատուցման ենթակա 12 ամսվա ընթացքում | 2,092 | 1,574 |
| Փոխհատուցման ենթակա մեկ տարուց ավելի | - | - |

## 6 Տրված կանխավճարներ

Ընկերությունը հիմնական միջոցներ ձեռք բերելու համար 2017թ. փոխանցել է կանխավճար մատակարարներին՝ մասնավորապես, CINK Hydro - Energy k.s–ին 201,982 հազար դրամ տուրբին և գեներատոր ձեռք բերելու համար, «Խորդա» ՍՊԸ-ին 40,000 հազար դրամ գեներատորներ ձեռք բերելու համար:

## 7 Պաշարներ

| Հազար դրամ | 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Նյութեր | 11,356 | 12,859 |
| Վառելիք | 6,899 | 7,528 |
| Պահեստամասեր | 58,904 | 57,644 |
| Այլ նյութեր | 2,251 | 1,895 |
| | 79,410 | 79,926 |

2017թ. դեկտեմբերի 31-ի և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չունի գրավադրված պաշարներ:

## 8 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

| Հազար դրամ | 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Առևտրային դեբիտորական պարտքեր | 998,949 | 628,658 |
| Տրված կանխավճարներ | 1,747 | 250,035 |
| Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով | 105,652 | 159,670 |
| Այլ դեբիտորական պարտքեր | 1,024 | 3,044 |
| | 1,107,372 | 1,041,407 |

Առևտրային դեբիտորական պարտքի միջին տևողությունը կազմում է 106 օր (2016թ.՝63 օր): Առևտրային դեբիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում:Առևտրային դեբիտորական պարտքի հավաքագրելիությունը որոշելիս հաշվի է առնվում դեբիտորի պարտքի մարման ժամանակացույցի ցանկացած փոփոխություն՝ սկսած պարտքի առաջացման պահից մինչև հաշվետու ամսաթիվը:

Ղեկավարությունը հավատացած է, որ պետական բյուջեից դեբիտորական պարտքերն ամբողջովին ենթակա են վերականգնման:

## 9 Տրված փոխառություններ

Տարեսկզբի դրությամբ առկա տրված փոխառությունները 2017թ. ընթացքում ամբողջությամբ մարվել են:

## 10 Դրամական միջոցներ և համարժեքներ

| Հազար դրամ | 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Կանխիկ միջոցներ | 599 | 722 |
| Բանկային հաշիվներ արտահայտված ՀՀ դրամով | 167,059 | 71,688 |
| Բանկային հաշիվներ արտահայտված արտարժույթով | 53 | 44 |
| Ակրեդիտիվ(Ծանոթագրություն 12) | 1,279,062 | - |
| | 1,446,773 | 72,454 |

## 11 Կապիտալ և պահուստներ

### 11.1 Կանոնադրական կապիտալ

| | Սովորական բաժնետոմսեր 2017թ. | Սովորական բաժնետոմսեր 2016թ. |
|---|---|---|
| Սովորական բաժնետոմսեր քանակը (հատ) | 10,650,000 | 10,650,000 |
| Սովորական բաժնետոմսերի անվանական արժեքը | 1,000 | 1,000 |
| Ընդամենը (հազար դրամ) | 10,650,000 | 10,650,000 |

Ընկերությունն ունի սովորական բաժնետոմսերի մեկ դաս, որը հաստատուն եկամտի նկատմամբ իրավունք չունի:

31.12.2017թ. դրությամբ Ընկերության թողարկած բաժնետոմսերի քանակը կազմում է 10,650,000 հատ սովորական բաժնետոմս, չթողարկվածբաժնետոմսերըկազմում են 4,450,000 հատ:

Ընկերության բաժնետոմսերի սեփականատերերի թիվը կազմում է.

| | 31.12.2017 | | 31.12.2016 | |
|---|---|---|---|---|
| | հատ | % | հատ | % |
| «Մ.Էներգոինվեստ» ՓԲԸ (ԼՂՀ, Ստեփանակերտ) | 3,451,830 | 32.4 | 1,274,057 | 12 |
| «Մուլտիկոնտինենտալ դիստրիբյուշն» ՍՊԸ (Մեծ Բրիտանիա, Այլ Օֆ Մեն IM 2AP) | 1,781,348 | 16.7 | 868,270 | 8.2 |
| Ժոզեֆ Ուղուրլյան(ԱՄՆ, Նյու Յորք) | 1,262,901 | 11.9 | 1,262,901 | 11.9 |
| ԼՂՀ Կառավարություն | 1,100,000 | 10.3 | 5,100,000 | 47.9 |
| «Ռեսո Գարանտիա» ապահովագրական ՀԲԸ | 872,000 | 8.2 | - | - |
| «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ | 657,933 | 6.2 | 657,933 | 6.2 |
| Բարսեղ Բեգլարյան | 519,100 | 4.9 | - | - |
| Այլ (5%-ից ցածր) | 1,004,888 | 9.4 | 1,486,839 | 13.8 |
| | 10,650,000 | 100 | 10,650,000 | 100 |

### 11.2 Էմիսիոն եկամուտ

Էմիսիոն եկամուտը ներկայացնում է բաժնետոմսերի տեղաբաշխման գնի և անվանական արժեքի տարբերությունը:

| Հազար դրամ | 2017թ. | 2016թ. |
|---|---|---|
| Տարեսկզբի մնացորդ | 457,127 | 457,127 |
| Բաժնետոմսերի թողարկում՝ | | |
| *Բաժնետոմսերի թողարկման գումար* | - | - |
| *Կանոնադրական կապիտալ* | - | - |
| Բաժնետոմսերի տեղաբաշխման ուղղակի ծախսեր | - | - |
| Տարեվերջի մնացորդ | 457,127 | 457,127 |

## 11.3 Պահուստային կապիտալ

| Հազար դրամ | 2017թ. | 2016թ. |
|---|---|---|
| Տարեսկզբի մնացորդ | 249,731 | 208,069 |
| Մասհանումներ պահուստին | 94,143 | 41,662 |
| Տարեվերջի մնացորդ | 343,874 | 249,731 |

2017թ.-ին բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի որոշմամբ 2016թ.-ի զուտ շահույթի 5% չափով իրականացվել է մասհանում պահուստային կապիտալին` ընդամենը 94,143 հազար դրամ:

2016թ.-ին բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի որոշմամբ 2015թ.-ի զուտ շահույթի 5% չափով իրականացվել է մասհանում պահուստային կապիտալին` ընդամենը 41,662հազար դրամ:

## 11.4 Շահաբաժիններ

2017թ.-ին բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի որոշմամբ 2016թ. ֆինանսական արդյունքներով Ընկերության բաժնետերերին վճարվել է ընդամենը 1,065,000 հազար դրամ շահաբաժին` մեկ բաժնետոմսին 100 դրամ հաշվարկով:

2016թ.-ին բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի որոշմամբ 2015թ. ֆինանսական արդյունքներով Ընկերության բաժնետերերին վճարվել է ընդամենը 852,000 հազար դրամ շահաբաժին` մեկ բաժնետոմսին 80 դրամ հաշվարկով:

## 11.5 Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ

| | 2017թ. | 2016թ. |
|---|---|---|
| Տարվա զուտ շահույթ(հազ.դրամ) | 1,606,760 | 1,882,868 |
| Բաժնետոմսերի միջին կշռված քանակ (հատ) | 10,650,000 | 10,650,000 |
| Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ(դրամ) | 150.87 | 176,80 |

## 12 Վարկեր և փոխառություններ

| Հազար դրամ | Ընթացիկ | | Ոչ ընթացիկ | |
|---|---|---|---|---|
| | 2017թ. | 2016թ. | 2017թ. | 2016թ. |
| Բանկային վարկեր | 112,587 | 58,024 | 2,929,063 | 472,634 |
| Փոխառություններ | 42,000 | 463 | - | 512,200 |
| Պարտատոմսեր | 23,876 | 24,353 | 3,296,721 | 3,295,631 |
| | 178,463 | 82,840 | 6,225,784 | 4,280,465 |

Ընկերության վարկերը և փոխառությունները 31.12.2017թ. դրությամբ հետևյալն է.

| Վարկի աղբյուր | Տրման օր | Մարման օր | Արժ. | Մնացորդը առ 31.12.16 | | Գրավի առարկան | Գրավի արժեքը | Տոկոս |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Արժույթ | Հազ. դրամ | | | |
| «Արցախբանկ» ՓԲԸ V 1708519 | 29.06.17 | 29.06.22 | AMD | | 500,000 | Բյուջետային երաշխիք | 875,000 | 15.0% |
| «Արցախբանկ» ՓԲԸ V 1708521 | 29.06.17 | 29.06.22 | AMD | | 300,000 | Բյուջետային երաշխիք | 875,000 | 15.0% |
| «Արցախբանկ» ՓԲԸ V 1709947 | 24.07.17 | 24.07.22 | AMD | | 950,000 | Բյուջետային երաշխիք | 1,662,500 | 15.0% |
| «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ V17-030755-Ակրեդիտիվ | 11.08.17 | 11.08.23 | EUR | 2,204,900 | 1,279,062 | Բյուջետային երաշխիք | | 7.5% |
| Ֆ/Ա Բարսեղյան Յուրի | 03.07.17 | 03.07.18 | AMD | | 42,000 | | | 15.0% |
| Երկարաժամկետ պարտատոմսեր | 07.12.15 | 07.12.18 | USD | 6,810,000 | 3,296,721 | | | 11.0% |
| Ընդամենը | | | | | 6,367,783 | | | |

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չվճարված տոկոսների մնացորդը կազմում է 12,588հազար դրամ:

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չվճարված տոկոսների մնացորդը կազմում է 26,285 հազար դրամ:

**Վարկեր և փոխառություններ**

Վարկերը և փոխառությունները ապահովված են ԼՂՀ կառավարության կողմից տրամադրված երաշխիքներով, այսինքն ընկերությունը չունի որևէ գրավադրված ակտիվներ:

2017թ. տոկոսային ծախսը կազմել է 693,535 հազար դրամ, որից կապիտալացվել է 238,390հազար դրամ, իսկ ընթացիկ ծախսեր՝ 455,145հազար դրամ:

2016թ. տոկոսային ծախսը կազմել է 561,427 հազար դրամ, որից կապիտալացվել է 74,040 հազար դրամ, իսկ ընթացիկ ծախսեր՝ 487,387 հազար դրամ:

Ընկերությունը 11.08.2017թ. Հայբիզնեսբանկ ՓԲԸ-ի հետ կնքել է չվերականգնվող վարկային գծի պայմանագիր, որը իրենից ներկայացնում է "Ceskoslovenska obchodni banka a.s."բանկի միջոցով ակրեդիտիվի թողարկմամբ արտաքին առևտրի գործարքի հետֆինանսավորում: Գումարը կազմում է 2,204,900 եվրո, 7.5%տոկոսադրույքով՝վեց տարի մարման ժամկետով:

**Պարտատոմսեր**

Ընկերությունը համաձայն 2015թ. դեկտեմբերի 07-ի թիվ 6-2015/01 որոշման թողարկել է 80,000 (ութսուն հազար) հատ հասարակ անվանական ոչ փաստաթղթային պարտատոմսեր, 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար անվանական արժեքով, ընդհանուր 8,000,000 ԱՄՆ դոլար, որոնց համար տեղաբաշխման վերջնաժամկետ է սահմանվել մինչև 2015թ. դեկտեմբերի 30-ը: 2015թ. ընթացքում տեղաբաշխվել է 68,100 հատ հասարակ անվանական ոչ փաստաթղթային պարտատոմս 6,810,000 ԱՄՆ դոլար արժեքով:

Պարտատոմսերի եկամտաբերությունը սահմանված է 11% տարեկան, որոնք վճարվում են կիսամյակային պարբերականությամբ: Տեղաբաշխման ձևը` չերաշխավորված է:

Վարկերի և փոխառությունների միջին տարեկան տոկոսադրույքն ըստ արժույթների հաշվետու տարում հետևյալն են`

| | | 2017թ. | 2016թ. |
|---|---|---|---|
| Միջին տոկոս | ԱՄՆ դոլար | 11.5 % | 11.1 % |
| | Եվրո | 9% | 11.1% |
| | ՀՀ դրամ | 14.8 % | 16 % |
| | | 11.78 % | 11.2 % |

## 13 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

| Հազար դրամ | 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Առևտրային կրեդիտորական պարտքեր | 634,356 | 11,808 |
| Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով | 40,433 | 928 |
| Աշխատավարձի գծով պարտք | 30,041 | 27,029 |
| Արձակուրդի պահուստ | 20,922 | 15,742 |
| Կրեդիտորական պարտքեր բաժնետերերին | 169,686 | 102,849 |
| Այլ կրեդիտորներ | 357 | 346 |
| | 895,795 | 158,702 |

Ապրանքների ձեռքբերման գծով առաջացած պարտավորությունների մարման միջին տևողությունը կազմում է 273 օր (2016թ.` 5 օր): Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Ընկերությունն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություն, որն ապահովում է բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

## 14 Հասույթ

| Հազար դրամ | 2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Արտադրված էլեկտրաէներգիայի իրացումից | | |
| Սարսանգ ՀԷԿ | 1,934,221 | 1,981,958 |
| Թրղե -1 ՀԷԿ | 204,722 | 250,192 |
| Թրղե -2 ՀԷԿ | 363,823 | 440,529 |
| Թրղե -3 ՀԷԿ | 285,999 | 338,709 |
| Մատաղիս-1 ՀԷԿ | 415,657 | 397,972 |
| Մատաղիս-2 ՀԷԿ | 241,756 | 234,751 |
| | 3,446,178 | 3,644,111 |

Ընկերության ծառայությունների իրացման սակագները սահմանվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հանրային ծառայությունների և Տնտեսական մրցակցության կարգավորող պետական հանձնաժողովի կողմից: Բնական ջրահոսքի վրա կառուցված առաքվող էլեկտրաէներգիայի 1 կվտժ-ի սակագինը 2016թ. և 2017թ. համար բոլոր հիդրոէլեկտրակայանների գծով սահմանվել է 19.0 (առանց ԱԱՀ):

## 15 Վաճառքի ինքնարժեք

| Հազար դրամ | 2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Փոխհատուցում աշխատակիցներին և սոց. վճար | 324,880 | 294,421 |
| Մաշվածություն | 370,064 | 365,716 |
| Արտադրական օբյեկտների պահպանման ծախսեր | 56,850 | 56,850 |
| Նյութական ծախսեր | 33,476 | 22,170 |
| Նորոգման ծախսեր | 31,929 | 12,458 |
| Այլ ծախսեր | 31,880 | 31,392 |
| | 849,079 | 783,007 |

## 16 Վարչական ծախսեր

| Հազար դրամ | 2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Փոխհատուցում աշխատակիցներին և սոց. վճար | 193,522 | 194,228 |
| Մաշվածություն և ամորտիզացիա | 12,100 | 21,123 |
| Գործուղման և ներկայացուցչական ծախսեր | 5,084 | 4,133 |
| Վարձակալական ծախսեր | 14,040 | 14,040 |
| Հեռահաղորդակցության | 4,949 | 3,438 |
| Կոմունալ և գրասենյակային ծախսեր | 15,392 | 13,953 |
| Չփոխհատուցվող ծախսեր | 45,089 | 29,802 |
| Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր | 4,300 | 4,300 |
| Այլ ծախսեր | 17,882 | 3,682 |
| | 312,358 | 288,699 |

## 17 Այլ ծախսեր

| Հազար դրամ | 2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Բաժնետոմսերին առնչվող ծախսեր | 6,191 | 6,151 |
| Ֆիզիկական անձ բաժնետերերին փոխհատուցում | - | 414 |
| Արտարժույթի փոխանակման ծախսեր | 4,392 | 471 |
| Տույժ և տուգանքներ | 3,691 | 1,563 |
| Անհատույց տրված միջոցներ | 64,626 | 37,442 |
| Օտարված հիմնական միջոցների ծախսեր | 399 | 639 |
| Հետազոտության ծախսեր | - | 146 |
| Արձակուրդի գծով պահուստ | 5,180 | - |
| Այլ ծախսեր | 1,449 | 1,933 |
| | 85,928 | 48,759 |

## 18 Այլ ֆինանսական հոդվածներ

| Հազար դրամ | 2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| *Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը* | | |
| Դրամական միջոցներ | 37,366 | 13,693 |
| Փոխառության տրամադրում | (3,528) | (16,880) |
| Ստացված վարկեր | (68,518) | 11,149 |
| | (34,680) | 7,962 |

## 19 Ֆինանսական եկամուտ/(ծախս) զուտ

| Հազար դրամ | 2017թդեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Վարկերի և փոխառությունների տոկոսի ծախս | (86,896) | (127,149) |
| Պարտատոմսերի տոկոսի ծախս | (361,169) | (360,238) |
| Պարտատոմսերի տեղաբաշխման և վարկերի սպասարկման վճար | (7,080) | (1,000) |
| Բանկային գործարքներից ծախս/(եկամուտ) | 282 | 126 |
| Տրված փոխառություններից եկամուտ | 89,709 | 37,131 |
| Ֆինանսական ծախս, զուտ | (365,154) | (451,130) |

## 20 Շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում)

| Հազար դրամ | 2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Ընթացիկ հարկ | 194,396 | 212,301 |
| Հետաձգված հարկ (տես՝ ծանոթագրություն 5) | (518) | 1,898 |
| | 193,878 | 214,199 |

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

| Հազար դրամ | 2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | Արդյունա-վետ հարկային դրույքաչափ (%) | 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | Արդյունա-վետ հարկային դրույքաչափ (%) |
|---|---|---|---|---|
| Շահույթ մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ) | 1,800,638 | | 2,097,067 | |
| Շահութահարկ՝ 10% դրույք. (2016թ.՝10%) | 180,064 | 10.00 | 209,707 | 10.00 |
| Չնվազեցվող ծախսի ազդեցությունը | 13,814 | 0.77 | 4,492 | 0.21 |
| Շահութահարկի գծով փոխհատուցում | 193,878 | 10.77 | 214,199 | 10.21 |

## 21 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

### 21.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Ընկերությունն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները, որպես կանոն, չեն համապատասխանում իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

*Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները*

Ընկերության ղեկավարությունը գնահատել է հիմնական միջոցների օգտակարության ժամկետները 20-60 տարի շենքերի, շինությունների,25-50 տարի փոխանցող հարմարանքների, 5-60 տարի մեքենաների, սարքավորումների, 5 տարի այլ հիմնական միջոցների և 1 տարի համակարգչային տեխնիկայի համար: Ընկերության ղեկավարությունը հավատացած է, որ այդ ակտիվների գնահատված օգտակարության ժամկետները էականորեն չեն տարբերվում սպասվելիք տնտեսական ժամկետներից: Եթե այս գնահատումները փոխվեն ապա Ընկերության ֆինանսական հաշվետվությունները էականորեն կտարբերվեն:

*Հետաձգված հարկի գնահատում*

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 5-ում 1,574 հազար դրամի հետաձգված հարկեր են ճանաչվել: Հետաձգված հարկային ակտիվներն ավելանում են արձակուրդի պահուստից: Ընկերության ղեկավարությունը հավատացած է, որ Ընկերությունը ապագայում կունենա բավարար հարկվող շահույթ, որպեսզի փոխհատուցի հետաձգված հարկային ակտիվները: Եթե Ընկերությունը ապագայում չկարողանա ստանալ հարկվող շահույթ, ապա հետաձգված հարկային ակտիվները չեն փոխհատուցվի:

## 22 Ֆինանսական գործիքներ

### 22.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի, ֆինանսական պարտավորության և բաժնային գործիքի յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.6-ում:

### 22.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

*Ֆինանսական ակտիվներ*

| Հազար դրամ | 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| *Դեբիտորական պարտքեր* | | |
| Առևտրային դեբիտորական պարտքեր | 999,973 | 631,702 |
| Տրված փոխառություններ | - | 733,940 |
| Մնացորդներ դրամարկղում և բանկերում | 1,446,773 | 72,454 |
| | 2,446,746 | 1,438,096 |

*Ֆինանսական պարտավորություններ*

| Հազար դրամ | 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ | | |
| Վարկեր և փոխառություններ, պարտատոմսեր | 6,404,247 | 4,363,305 |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 855,362 | 157,744 |
| | 7,259,609 | 4,521,049 |

Տես` ծանոթագրություն 3.6 յուրաքանչյուր ֆինանսական գործիքի կատեգորիայի գծով հաշվապահական հաշվառման քաղաքականության նկարագրության համար:

## 23 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված` Ընկերությունը ենթարկվում է զանազան ռիսկերի:Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Ընկերությունը չի ներգրավված սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքուվաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Ընկերությունը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

### 23.1 Ֆինանսական ռիսկի գործոններ

*ա) Շուկայական ռիսկ*

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Ընկերությունը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես` արտարժութային ռիսկի և որոշակի այլ գնային ռիսկերի, որոնք բխում են ինչպես գործառնական, այնպես էլ ներդրումային գործունեությունից:

*բ) Արտարժութային ռիսկ*

Ընկերությունը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Ընկերության գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է

Ընկերության՝ արտերկրյա ձեռքբերումներից, որոնք, ի սկզբանե, արտահայտված են ԱՄՆ դոլարով և եվրոյով:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Ընկերությանը ենթարկում են արտարժույթային ռիսկի, նկարագրված են ստորև: Արտացոլված գումարները իրենցից ներկայացնում են հիմնական ղեկավար անձնակազմին տրամադրված տվյալները, որոնք արտահայտված են հայկական դրամով՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի ամսաթվի փոխարժեքով.

| Հոդված<br>2017թ. | Հայկական դրամ | ԱՄՆ դոլար | Եվրո |
|---|---|---|---|
| *Ֆինանսական ակտիվներ* | | | |
| Առևտրային դեբիտորական պարտքեր | 999,973 | - | - |
| Տրված փոխառություններ | - | - | - |
| Մնացորդներ դրամարկղում և բանկերում | 167,658 | 21 | 1,279,094 |
| | 1,167,631 | 21 | 1,279,094 |
| *Ֆինանսական պարտավորություններ* | | | |
| Վարկեր և փոխառություններ | 1,799,068 | 3,320,597 | 1,284,582 |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 855,362 | - | - |
| | 2,654,430 | 3,320,597 | 1,284,582 |
| Զուտ արդյունք | (1,486,799) | (3,320,576) | (5,488) |

| Հոդված<br>2016թ. | Հայկական դրամ | ԱՄՆ դոլար | Եվրո |
|---|---|---|---|
| *Ֆինանսական ակտիվներ* | | | |
| Առևտրային դեբիտորական պարտքեր | | | |
| Տրված փոխառություններ | 631,702 | - | - |
| Մնացորդներ դրամարկղում և բանկերում | 250,000 | 483,940 | - |
| | 72,410 | 21 | 23 |
| *Ֆինանսական պարտավորություններ* | 954,112 | 483,961 | 23 |
| Վարկեր և փոխառություններ | | | |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 126,285 | 3,668,265 | 568,755 |
| | 157,744 | - | - |
| Զուտ արդյունք | 284,029 | 3,668,265 | 568,755 |

Ընկերությունը հիմնականում ենթարկվում է ԱՄՆ դոլարի և եվրոի փոխարժեքի ազդեցությանը: Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Ընկերության զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի և եվրոի նկատմամբ դրամի 10% (2016թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2016թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2016թ.՝ 10%): Զգայունության վերլուծությունը ներառում է կապակցված և ոչ կապակցված կողմերից վարկերը և փոխառությունները: Բացասական ցուցանիշը նվազում է վկայում համապարփակ ֆինանսական արդյունքների մասին

հաշվետվությունում և սեփական կապիտալում, երբ դրամն արժեզրկվում է համապատասխան արժույթի նկատմամբ:

| Հազար դրամ | ԱՄՆ դոլարի ազդեցություն | | Եվրոյի ազդեցություն | |
|---|---|---|---|---|
| | 2017թ. | 2019թ. | 2017թ. | 2016թ. |
| Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն | (332,058) | (318,430) | (549) | (56,873) |

*գ) Տոկոսադրույքային ռիսկ*

Ընկերությունը ենթարկվում է տոկոսադրույքային ռիսկի, քանի որ ունի հաստատուն տոկոսադրույքներով փոխառու միջոցներ: Ընկերությունն այս ռիսկը կառավարում է՝ ապահովելով համապատասխան չափի հաստատուն տոկոսադրույքով փոխառու միջոցներ:

*դ) Պարտքային ռիսկ*

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը ֆինանսական կորուստներ կարող է կրել:

Հաշվետու ամսաթվի դրությամբ նշանակալի պարտքային ռիսկի կենտրոնացում առկա չէ: Առավելագույն պարտքային ռիսկը ներկայացված է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ յուրաքանչյուր ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքով:

*ե) Իրացվելիության ռիսկ*

Ընկերությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ պահելով բավարար դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, ինչպես նաև բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ ժամանակին գործառնական պարտավորությունները մարելու նպատակով:

## 24 Իրական արժեքի չափում

Ղեկավարության համոզմամբ՝ ֆինանսական հաշվետվություններում ամորտիզացված արժեքով ճանաչված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները գրեթե հավասար են դրանց իրական արժեքին:

## 25 Կապիտալի ռիսկի կառավարում

Ընկերություննիր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունն առավելագույնին հասցնելով բաժնետերերի եկամուտները՝ փոխառու և կապիտալ միջոցների օպտիմալ համապատասխանություն ապահովելու միջոցով:

Ընկերության կապիտալը կազմված է սեփական կապիտալից, որը ներառում է թողարկված կապիտալը, կուտակված շահույթը, ինչպես նաև փոխառու միջոցները, որոնք ներառում են փոխառությունները՝ բացահայտված ծանոթագրություն 11- ում:

Ընկերության ղեկավարությունը պարբերաբար վերանայում է կապիտալի կառուցվածքը, որպեսզի ապահովի փոխառու միջոցների և սեփական կապիտալի մնացորդների առավելագույն օպտիմալ համապատասխանություն, որը վերլուծվում է՝ հաշվառելով ընդհանուր կապիտալը բաժանած ընդհանուր ֆինանսավորման վրա: Հաշվարկը ներկայացվում է ստորև.

| Հազար դրամ | 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Ընդհանուր սեփական կապիտալ | 14,408,078 | 13,866,318 |
| Հանած՝ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | (1,446,773) | (72,454) |
| Կապիտալ | 12,961,305 | 13,793,864 |
| Ընդհանուր սեփական կապիտալ | 14,408,078 | 13,866,318 |
| Վարկեր և փոխառություններ | 6,404,247 | 4,363,305 |
| Ընդհանուր ֆինանսավորում | 20,812,325 | 18,229,623 |
| Կապիտալի և ընդհանուր ֆինանսավորման հարաբերակցություն | 0.62 | 0.76 |

## 26 Պարտավորվածություններ

### 26.1 Գործառնական վարձակալության գծով պարտավորվածություններ

*Ընկերությունը որպես վարձակալ*

Ընկերությունը վարձակալել է գործառնական վարձակալությամբ 342.67 քառ. մ տարածք (տեղակայված ԼՂՀ, Ստեփանակերտ, Վ. Արզումանի 25ա հասցեով գտնվող 2, 3 հարկերը և ձեղնահարկը), մեկ տարի վարձակալության ժամկետով, որը տրվել է ֆիզիկական անձի կողմից, 2013թ. հունվարի 1-ին կնքված վարձակալության պայմանագրի համաձայն: Սահմանված է ամսական վարձավճար 1,160 հազ. դրամ: 2015թ. հունվարին Ընկերությունը երկարաձգել է վարձակալության պայմանագիրը անժամկետ՝ վարձավճարը 1,170 հազ. դրամ:

## 27 Պայմանականություններ

### 27.1 Գործարար միջավայր

Հայաստանում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները շարունակական բնույթ են կրում: Որպես զարգացող շուկա՝ Հայաստանում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունումբացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացված գործարքներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ և կենտրոնացված տնտեսական հենքով, ինչպես նաև տարածաշրջանի տնտեսական ճգնաժամը: Ընկերության վրա այս գործոնների հնարավոր հետևանքները կարող են ներառել վարկատուների հանդեպ անվճարունակությունը, խաթարված հեղինակությունը, վաճառքների, ինչպես նաև ֆինանսական միջոցների ձեռքբերման հետ կապված

դժվարությունները և այլն: Բոլոր այս խնդիրները կարող են հանգեցնել Ընկերության իրացվելիության անկման և, հետևաբար, առաջացնել անընդհատության խնդիրներ: Բացի այդ, համաշխարհային տնտեսության աճի նվազման կանխատեսումներով պայմանավորված՝ Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հետ համագործակցող երկրների տնտեսությունների վիճակի վերաբերյալ դեռևս առկա են անորոշություններ, ինչը կարող է հանգեցնել արտերկրից դրամային փոխանցումների կրճատմանը, ինչպես նաև հանքահումքային ապրանքների միջազգային գների անկմանը, ինչից Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունների տնտեսությունները մեծ կախման մեջ են գտնվում: Շուկայական ավելի խիստ ճնշումը կարող է հանգեցնել Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունների տնտեսության, ինչպես նաև Ընկերության վիճակի վատթարացման: Այնուամենայնիվ, քանի դեռ այս անորոշություններում առկա տարակուսանքներն ու ենթադրությունները շատ են, Ղեկավարությունը չի կարող վստահաբար հաշվարկել, թե ինչ չափով դրանք կարող են ազդեցություն ունենալ Ընկերության ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վրա:

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում ճշգրտումների ազդեցությունը, եթե այդպիսիք կան, որոնք կարող էին անհրաժեշտ համարվել, եթե ներկա տարածաշրջանային ճգնաժամի ազդեցությունը Հայաստանում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություններում նկատելի և արժանահավատորեն գնահատելի լիներ:

## 27.2 Ապահովագրություն

Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություններում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Ընկերությունը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Ընկերության գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրինհասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորություններիապահովագրություն: Քանի դեռ Ընկերությունը համապատաս-խան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերությանգործունեության և ֆինանսական վիճակի վրա:

## 27.3 Հարկեր

Հայաստանիև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժերառաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

## 27.4 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Շրջակա միջավայրը, որտեղ Ընկերությունը գործում է, չի պահանջում, որպեսզի Ընկերությունը ներկայացնի շրջակա միջավայրի վրա իր ունեցած ազդեցության տարեկան հաշվետվություն կամ համանման զեկույց: Ղեկավարության համոզմամբ՝ Ընկերությունը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները և վստահ է, որ Ընկերությունը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխությունները ու օրենսդրության մեկնաբանությունները ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

## 28 Գործարքներ կապակցված կողմերի միջև

## 28.1 Վերահսկողություն

Ընկերությունը վերահսկվում է Ընկերության բաժնետերերի և տնօրենների խորհրդի կողմից:

## 28.2 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Ընկերության կապակցված կողմերն են.
ԼՂՀ ֆինանսների նախարարություն՝ Ընկերությունը տրամադրել է փոխառություններ. տես ծանոթագրություն 9:

«Արցախէներգո» ՓԲԸ-ն և ընկերությունը վերահսկվում է նույն բաժնետիրոջ կողմից (ԼՂՀ Կառավարություն)

Կազմակերպության գործարքներն կապակցված կողմերի հետ բացահայտված են ստորև.

| Հազար դրամ | Մնացորդ առ 2016թ. դեկտեմբերի 31 | Գործարքի արժեք 2017թ. | Մնացորդ առ 2017թ. դեկտեմբերի 31 |
|---|---|---|---|
| *Էլեկտրաէներգիայի վաճառք* | | | |
| «Արցախէներգո» ՓԲԸ | 628,658 | 4,135,414 | 998,949 |
| *Ձեռքբերումներ* | | | |
| «Արցախէներգո» ՓԲԸ | 4,129 | 32,587 | 3,759 |

| Հազար դրամ | Մնացորդ առ 2015թ. դեկտեմբերի 31 | Գործարքի արժեք 2016թ. | Մնացորդառ 2016թ. դեկտեմբերի 31 |
|---|---|---|---|
| *Էլեկտրաէներգիայի վաճառք* | | | |
| «Արցախէներգո» ՓԲԸ | 1,051,622 | 4,372,933 | 628,658 |
| *Ձեռքբերումներ* | | | |
| «Արցախէներգո» ՓԲԸ | 3,765 | 30,058 | 4,129 |

## 28.3 Գործարքներ ղեկավարության հետ

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը,

| Հազար դրամ | 2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Աշխատավարձ և պարգևատրումներ, ներառյալ սոցիալական ապահովագրության վճարներ | 42,621 | 35,172 |
| | 42,621 | 35,172 |

Ֆինանսական հաշվետվություններ և
Անկախ աուդիտորական եզրակացություն

«ԱՐՑԱԽ ՀԷԿ»ԲԲԸ

2016թ. դեկտեմբերի 31

# Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն………………………………………………………………………… 1

Ֆինանսական վիճակի մասինհաշվետվություն…………………………………………………………….. 3

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն…………………………………………………………………………………………………... 4

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն…………………………………… 5

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն………………………………………………….. 6

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ…………………………………………. 8

## Տնօրենների  խորհրդի կազմ

| | |
|---|---|
| Սպարտակ Թևոսյան | ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար- Խորհրդի նախագահ |
| Հայկ Բոյաջյան | «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ |
| Հայկ Բեգլարյան | |
| Րաֆֆի Բալյոզյան | |
| Արա  Ղոնյան | |
| Վահրամ Բեգլարյան | «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ, գլխավոր տնօրեն |
| Կարեն Արաբյան | «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ, գլխավոր տնօրենի տեղակալ |

## Ընկերության ղեկավար անձնակազմ

| | |
|---|---|
| Վահրամ Բեգլարյան | Գլխավոր տնօրեն |
| Կարեն Արաբյան | Գլխավոր տնօրենի տեղակալ |
| Արմեն Գասպարյան | Տեխնիկական տնօրեն |
| Ժան Հովհաննիսյան | Ֆինանսական  տնօրեն |
| Արայիկ Դավթյան | Գլխավոր հաշվապահ |

Տնօրենների  խորհրդի կազմը և Ընկերության ղեկավար անձնակազմը ներկայացված է 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

## Անկախ աուդիտորական եզրակացություն

«Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերին և խորհրդին

Մեր կողմից իրականացվել է «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ (Ընկերություն) կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

*Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար*

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է սույն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

*Աուդիտորի պատասխանատվություն*

Մեր պատասխանատվությունն է մեր կողմից անցկացված աուդիտի հիման վրա ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելը: Մենք աուդիտն անցկացրեցինք աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք համապատասխանենք վարքագծի պահանջներին և աուդիտը պլանավորենք և իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռքբերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Ընթացակարգերի ընտրությունը կախված է աուդիտորի դատողությունից, ներառյալ խարդախությամբ կամ սխալներով պայմանավորված էական խեղաթյուրումների ռիսկերի գնահատումը: Նշված ռիսկերը գնահատելիս, աուդիտորը դիտարկում է կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ կերպով ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողությունը՝ նպատակ ունենալով նախագծել տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր՝ բայց ոչ կարծիք արտահայտել կազմակերպության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև՝ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության,

ASATRYANS LLC
Sakharov Business Center,
48/1 Nalbandyan street, 5nd floor,
Yerevan 010, Armenia
T. + 374 60 53 23 23
+ 374 99 54 33 88
E-mail: general@asatryans.com
www.asatryans.com

ԱՍԱՏՐՅԱՆՍ ՍՊԸ
Սախարով Բիզնես-Կենտրոն,
Նալբանդյան փող. 48/1, 5-րդ հարկ,
ՀՀ, Երևան, 0010
Հ. + 374 60 53 23 23
+ 374 99 54 33 88
Էլ. հասցե՝ general@asatryans.com
www.asatryans.com

ASATRYANS

ղեկավարության կողմից կատարված հաշվապահական հաշվառման գնահատումների խելամտության, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

*Կարծիք*

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս են «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի՝ 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

*Հանգամանքների լուսաբանում*

Ցանկանում ենք ուշադրություն հրավիրել այն փաստին, որ ներկայացված համադրելի տվյալները, հիմնված են Ընկերության 31 դեկտեմբերի 2015թ.-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների տվյալների վրա, որոնց աուդիտն իրականացվել է այլ աուդիտորական կազմակերպության կողմից, որի 03 փետրվարի 2016թ. եզրակացությունում արտահայտվել է չձևափոխված կարծիք:

10 մարտի 2017թ.

Սերգեյ Ասատրյան

Տնօրեն

ԱՍԱՏՐՅԱՆՍ ՍՊԸ

Ալբերտ Ասատրյան

Առաջադրանքի ղեկավար

# Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

| Հազար դրամ | Ծնթ. | 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|---|
| Ակտիվներ | | | |
| *Ոչ ընթացիկ ակտիվներ* | | | |
| Հիմնական միջոցներ | 4 | 16,504,343 | 16,162,979 |
| Ոչ նյութական ակտիվներ | | - | 18 |
| Հետաձգված հարկային ակտիվներ | 5 | 1,574 | 3,472 |
| Տրված կանխավճարներ | 6 | 39,000 | 167,000 |
| | | 16,544,917 | 16,333,469 |
| *Ընթացիկ ակտիվներ* | | | |
| Պաշարներ | 7 | 79,926 | 89,845 |
| Շահութահարկի կանխավճար | | - | 4,061 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 8 | 1,041,407 | 1,269,919 |
| Տրված փոխառություններ | 9 | 733,940 | - |
| Դրամական միջոցներ և համարժեքներ | 10 | 72,454 | 535,306 |
| | | 1,927,727 | 1,899,131 |
| Ընդամենը ակտիվներ | | 18,472,644 | 18,232,600 |
| | | | |
| Սեփական կապիտալ և պարտավորություններ | | | |
| *Կապիտալ և պահուստներ* | 11 | | |
| Կանոնադրական կապիտալ | | 10,650,000 | 10,650,000 |
| Էմիսիոն եկամուտ | | 457,127 | 457,127 |
| Պահուստային կապիտալ | | 249,731 | 208,069 |
| Կուտակված շահույթ | | 2,509,460 | 1,520,254 |
| | | 13,866,318 | 12,835,450 |
| *Ոչ ընթացիկ պարտավորություններ* | | | |
| Վարկեր և փոխառություններ | 12 | 4,280,465 | 3,710,504 |
| | | 4,280,465 | 3,710,504 |
| | | | |
| *Ընթացիկ պարտավորություններ* | | | |
| Վարկեր և փոխառություններ | 12 | 82,840 | 1,540,838 |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 13 | 158,702 | 145,808 |
| Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն | 20 | 84,319 | - |
| | | 325,861 | 1,686,646 |
| Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ | | 18,472,644 | 18,232,600 |

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2017թ. մարտի 10-ին:

Վահրամ Բեգլարյան
Գլխավոր տնօրեն

Արայիկ Գավրյան
Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 8-ից մինչև 47-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

| Հազար դրամ | Ծնթ. | 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|---|
| Հասույթ | 14 | 3,644,111 | 2,612,997 |
| Ինքնարժեք | 15 | (783,007) | (766,954) |
| Համախառն շահույթ | | 2,861,104 | 1,846,043 |
| | | | |
| Այլ եկամուտ | | 19,268 | 6,450 |
| Իրացման ծախսեր | 16 | (2,679) | (2,407) |
| Վարչական ծախսեր | 17 | (288,699) | (273,464) |
| Այլ ծախսեր | | (48,759) | (75,955) |
| Գործառնական գործունեությունից շահույթ | | 2,540,235 | 1,500,667 |
| | | | |
| Այլ ֆինանսական հոդվածներ | 18 | 7,962 | (11,337) |
| Ֆինանսական եկամուտ/(ծախս) զուտ | 19 | (451,130) | (430,996) |
| Շահույթ մինչև հարկերը | | 2,097,067 | 1,058,334 |
| | | | |
| Շահութահարկի գծով փոխհատուցում/(ծախս) | 20 | (214,199) | (117,637) |
| Տարվա շահույթ | | 1,882,868 | 940,697 |
| | | | |
| *Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ* | | | |
| Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո | | - | - |
| Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ | | 1,882,868 | 940,697 |

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 8-ից մինչև 47-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

| Հազար դրամ | Կանոնա-դրական կապիտալ | Էմիսիոն եկամուտ | Պահուստային կապիտալ | Կուտակված շահույթ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| 2015թ. հունվարի 1-ի դրությամբ | 10,650,000 | 457,127 | 172,029 | 1,148,097 | 12,427,253 |
| Տարվա շահույթ | - | - | - | 940,697 | 940,697 |
| Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ | - | - | - | 940,697 | 940,697 |
| Վերագրվել է պահուստային կապիտալին | - | - | 36,040 | (36,040) | - |
| Շահաբաժիններ | - | - | - | (532,500) | (532,500) |
| 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 10,650,000 | 457,127 | 208,069 | 1,520,254 | 12,835,450 |
| Տարվա շահույթ | - | - | | 1,882,868 | 1,882,868 |
| Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ | - | - | - | 1,882,868 | 1,882,868 |
| Վերագրվել է պահուստային կապիտալին | - | - | 41,662 | (41,662) | - |
| Շահաբաժիններ | - | - | - | (852,000) | (852,000) |
| 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 10,650,000 | 457,127 | 249,731 | 2,509,460 | 13,866,318 |

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 8-ից մինչև 47-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

| Հազար դրամ | 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր | | |
| Տարվա շահույթ | 1,882,868 | 940,697 |
| *Ճշգրտումներ՝* | | |
| Մաշվածություն | 377,642 | 361,422 |
| Հիմնական միջոցների օտարումից վնաս | 639 | 58 |
| Շահութահարկի գծով ծախս | 214,199 | 117,637 |
| Տոկոսային ծախս | 457,281 | 430,996 |
| Փոխարժեքային տարբերությունից վնաս | (7,962) | 11,337 |
| *Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները* | 2,924,667 | 1,862,147 |
| Պաշարների փոփոխություն | 9,919 | 3,005 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն | 228,512 | (144,245) |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն | 12,894 | (152,446) |
| Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ | 3,175,992 | 1,568,461 |
| Վճարված տոկոսներ | (457,281) | (428,005) |
| Վճարված շահութահարկ | (123,921) | (205,774) |
| *Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ* | 2,594,790 | 934,682 |
| Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր | | |
| Հիմնական միջոցների ձեռքբերում | (719,627) | (446,554) |
| Կանխավճարների փոփոխություն | 128,000 | (150,431) |
| Փոխառության տրամադրում, զուտ | (750,820) | |
| *Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ* | (1,342,447) | (596,985) |
| Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր | | |
| Վարկեր ստացում/մարում, զուտ | (876,888) | 720,917 |
| Շահաբաժնի վճարում | (852,000) | (532,500) |
| *Ֆինանսական գործունեությունից ստացված/ գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ* | (1,728,888) | 188,417 |
| Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ աճ | (476,545) | 526,114 |
| Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա | 13,693 | (10,459) |
| Մնացորդներ դրամարկղում և բանկերում տարվա սկզբում | 535,306 | 19,651 |
| Մնացորդներ դրամարկղում և բանկերում տարվա վերջում | 72,454 | 535,306 |

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 8-ից մինչև 47-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

## 1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է 2008թ. հունիսի9-ին: Ընկերությունը հանդիսանում է «Արցախ ՀԷԿ» ՓԲԸ-ի իրավահաջորդը:

Ընկերության հիմնական բաժնետերն է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը` ԼՂՀ Կառավարությունը` հաշվետու ամսաթվի դրությամբ 47.9 տոկոս:

Ընկերությունն իրականացնում է էլեկտրականէներգիայի արտադրություն և արտադրված էլեկտրաէներգիայի իրացում: Էլեկտրաէներգիայի արտադրությունն իրականացվում է ԼՂՀ տարածքում կառուցված վեց հիդրոէլեկտրակայանների միջոցով, որոնց ընդհանուր հզորությունը կազմում է 70.9 Մեգավատտ.

- Սարսանգ ՀԷԿ,
- Թրղե 1 ՀԷԿ,
- Թրղե 2 ՀԷԿ,
- Թրղե 3 ՀԷԿ,
- Մատաղիս 1 ՀԷԿ,
- Մատաղիս 2 ՀԷԿ:

Արտադրված էլեկտրաէներգիան իրացվում է ԼՂՀ տարածքում գործող միակ Էլեկտրական բաշխիչ ցանցերը տնօրինող կազմակերպությանը:
Յուրաքանչյուր ՀԷԿ-ի շահագործման համար Ընկերությանը շնորհված լիցենզիայի ժամկետը 15 տարի է: Ընկերության ղեկավարությունը կարծում է, որ լիցենզիաների ժամկետները պարբերաբար կերկարաձգվեն` առանց ընդհատման:
Ընկերությունը ստացել է էլեկտրական էներգիա արտադրելու լիցենզիաներ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հանրային Ծառայությունները և Տնտեսական Մրցակցությունը Կարգավորող Պետական Հանձնաժողովի կողմից.

- «Սարսանգ» ՀԷԿ-ում էլեկտրական էներգիա արտադրելու համար Ընկերությանը շնորհվել է լիցենզիա 28.07.2008թ.-ին` 15 տարի ժամկետով:
- «Թրղե 1» փոքր ՀԷԿ-ում էլեկտրական էներգիա արտադրելու համար Ընկերությանը շնորհվել է լիցենզիա 11.06.2010թ.-ին` 15 տարի ժամկետով:
- «Թրղե 2» փոքր ՀԷԿ-ում էլեկտրական էներգիա արտադրելու համար Ընկերությանը շնորհվել է լիցենզիա 26.12.2011թ.-ին` 15 տարի ժամկետով:
- «Թրղե 3» փոքր ՀԷԿ-ում էլեկտրական էներգիա արտադրելու համար Ընկերությանը շնորհվել է լիցենզիա 24.07.2015թ.-ին` 15 տարի ժամկետով:
- «Մատաղիս 1» ՀԷԿ և «Մատաղիս 2» ՀԷԿ էլեկտրական էներգիա արտադրելու համար Ընկերությանը շնորհվել է լիցենզիա 17.07.2012թ.-ին` 15 տարի ժամկետով, որոնք շահագործման են հանձնվել 2012թ. սեպտեմբերից:

Ընկերության իրավաբանական հասցեն է` Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, ք. Ստեփանակերտ, Վ. Սարգսյանի25ա:

2016թ. Ընկերության աշխատողների տարեկան միջին թիվը կազմել է 195մարդ(2015թ.՝ 190 մարդ):

## 2 Պատրաստման հիմքերը

### 2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից:

### 2.2 Ճանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների,որոնք ներկայացված են ապագա դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքով:

### 2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ ղեկավարության համոզմամբ այս արժույթն առավել օգտակար է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

### 2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ինհամապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 18-ում:

### 2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Ընկերությունն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2016թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

**Նոր ընդունված ստանդարտներ, որոնք ազդում են ներկայացման և բացահայտման վրա**

*ՖՀՄՍ-ների և նոր մեկնաբանությունների փոփոխությունները, որոնք ուժի մեջ են 2015թ. հունվարի 1-ին և դրանից հետո ընկած ժամանակահատվածից սկսած*

Ընթացիկ տարում Ընկերությունը կիրառել է մի շարք ՖՀՄՍ-ներ և մեկնաբանություններ, որոնք ընդունվել են *Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Կոմիտեի (ՀՀՄՍԿ)* կողմից և կիրառելի են 2015թ. հունվարի 1-ից հետո ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար:

*ՖՀՄՍ-ների տարեկան վերանայումներ 2010-2012 ժամանակաշրջան*

*ՖՀՄՍ-ների տարեկան վերանայումներ 2010-2012 ժամանակաշրջանը* ներառում է ՖՀՄՍ-ներում մի շարք ճշգրտումներ, որոնք ամփոփված են ստորև.

ՖՀՄՍ 3. *«Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ»* ստանդարտի վերանայմամբ պարզաբանվել է, որ պայմանական հատուցումը, որը դասակարգվել է որպես ակտիվ կամ պարտավորություն պետք է չափվի իրական արժեքով յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ, առանց հաշվի առնելու, թե պայմանական հատուցումը ՖՀՄՍ 9 կամ ՀՀՄՍ 39 ստանդարտների համաձայն ֆինանսական գործիք է, թե ոչ, ֆինանսական ակտիվ կամ պարտավորություն: Իրական արժեքի փոփոխությունները պետք է ներառվեն շահույթում կամ վնասում: ՖՀՄՍ 3-ի վերանայումները կիրառելի են 2014թ. հուլիսի 1-ից հետո տեղի ունեցող ձեռնարկատիրական միավորումների ձեռքբերումների վրա:

ՖՀՄՍ 13. *«Իրական արժեքի չափումը»* ստանդարտի վերանայմամբ պարզաբանվել է, որ ՖՀՄՍ 13-ի վերանայումը և դրա արդյունքում ՀՀՄՍ 29-ի և ՖՀՄՍ 9-ի վերանայումները չեն վերացրել անտոկոս կարճաժամկետ դեբիտորական և կրեդիտորական պարտքերի ներկայացումը իրենց հաշվով ներկայացված գումարով` առանց զեղչման, եթե զեղչման ազդեցությունը էական չէ:

ՀՀՄՍ 24. *«Կապակցված կողմերի բացահայտումներ»* ստանդարտի վերանայմամբ պարզաբանվել է, որ կառավարող ընկերությունը, որը կառավարման ծառայություններ է մատուցում հաշվետու Ընկերությանը, հանդիսանում է նրա կապակցված կողմ: Հետևաբար հաշվետու ընկերությունը պետք է որպես կապակցված կողմ բացահայտի մատուցված կառավարման ծառայությունների դիմաց վճարման գումարները:
Ընկերության ղեկավարությունը գտնում է, որ վերոնշյալ վերանայումները էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

*ՖՀՄՍ-ների տարեկան վերանայումներ 2011-2013 ժամանակաշրջան*

*ՖՀՄՍ-ների տարեկան վերանայումներ 2011-2013 ժամանակաշրջանը*ներառում է ՖՀՄՍ-ներում մի շարք ճշգրտումներ, որոնք ամփոփված են ստորև.

ՖՀՄՍ 3. *«Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ»* ստանդարտի վերանայումը պարզաբանում է, որ ՖՀՄՍ 3-ը չի կիրառվում բոլոր տեսակի համատեղ պայմանավորվածությունների համար` տվյալ Համատեղ Պայմանավորվածության ֆինանսական հաշվետվություններում:

ՖՀՄՍ 13-ի վերանայումը պարզաբանում է պորտֆելի բացառման շրջանակները ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափման ժամանակ զուտ հիմունքով, ներառում է բոլոր այն պայմանագրերը, որոնք ներառվում են ՀՀՄՍ 39-ի և ՖՀՄՍ 9-ի շրջանակներում և հաշվառվում են վերջինիս համաձայն, անգամ

եթե տվյալ ակտիվները կամ պարտավորությունները չեն բավարարում ՀՀՄՍ 32-ի ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության սահմանմանը:

ՀՀՄՍ 40. *«Ներդրումային գույք»* ստանդարտի վերանայմամբ պարզաբանվել է, որ ՀՀՄՍ 40. *«Ներդրումային գույք»* ստանդարտը և ՖՀՄՍ 3. *«Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ»* ստանդարտը փոխադարձ փոխարինելի չեն և երկու ստանդարտների կիրառությունը կարող է պարտադիր լինել: Հետևաբար Ընկերությունը, որը ձեռք է բերում ներդրումային գույք պետք է սահմանի թե արդյոք.

ա) գույքը բավարարում է ներդրումային գույքի սահմանմանը համաձայն ՀՀՄՍ 40. *«Ներդրումային գույք»* ստանդարտի,
բ) գործարքը բավարարում է ՖՀՄՍ 3. *«Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ»* ստանդարտի սահմանմանը:

Ընկերության ղեկավարությունը գտնում է, որ վերոնշյալ վերանայումները էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

**Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք դեռևս չեն կիրառվում Ընկերության կողմից**

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմիցթողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունում սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից: Ընկերության ֆինանսական հաշվետվությունների համար կիրառելի նոր ստանդարտների, փոփոխությունների և մեկնաբանությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ստորև: Որոշ այլ նոր ստանդարտներ և մեկնաբանություններ թողարկվել են, սակայն չի ակնկալվում, որ դրանք Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրաէականազդեցությունկունենան:

*Ընկերությունը չի կիրառել հետևյալ նոր և վերանայված ՖՀՄՍ-ները, որոնք թողարկվել են, սակայն դեռևս ուժի մեջ չեն՝*

| **ՖՀՄՍ, ՀՀՄՍ և ՖՀՄՍԿ** | **Նկարագրություն** | **Նշված ամսաթվից կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջաննե րի համար** | **Կիրառությունը** |
|---|---|---|---|
| ՖՀՄՍ 1. Փոփոխություններ | Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում | 1 Հունվարի, 2016թ. | Հետընթաց |
| ՖՀՄՍ 9. Փոփոխություններ | Ֆինանսական գործիքներ | 1 Հունվարի, 2018թ. | Հետընթաց |
| ՖՀՄՍ 10 և ՀՀՄՍ 28. Փոփոխություններ | Ներդրողի և նրա հետ ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկման միջև ակտիվների վաճառք կամ հատկացում | 1 Հունվարի, 2016թ. | Հետընթաց |

| ՖՀՄՍ, ՀՀՄՍ և ՖՀՄՄԿ | Նկարագրություն | Նշված ամսաթվիցկամ դրանից հետոսկսվող տարեկան ժամանակաշրջաննե րի համար | Կիրառությունը |
|---|---|---|---|
| ՖՀՄՍ 11 Վերանայում | Համատեղ Պայմանավորվածությունում ներդրման ձեռքբերման հաշվառում | 1 Հունվարի 2016թ. | Հետընթաց |
| ՖՀՄՍ 14. | Կարգավորիչ հետաձգվող հաշիվներ | 1 Հունվարի 2016թ. | Հետընթաց |
| ՖՀՄՍ 15 | Հաճախորդների հետ կնքված պայմանագրերից հասույթ | 1 Հունվարի, 2017թ. | Հետընթաց |
| ՀՀՄՍ 16 և ՀՀՄՍ 38. Փոփոխություններ | Մաշվածության և ամորտիզացիայի ընդունելի մեթոդների պարզաբանում | 1 Հունվարի, 2016թ. | Հետընթաց |
| ՀՀՄՍ 19. Փոփոխություններ | Աշխատակիցների հատուցումներ | 1 Հուլիսի, 2014թ. | Հետընթաց |
| ՀՀՄՍ 27. Փոփոխություններ | Բաժնեմասնակցության մեթոդը առանձին ֆինանսական հաշվետվություններում | 1 Հունվարի 2016թ. | Հետընթաց |
| ՀՀՄՍ 16 և ՀՀՄՍ 41. Վերանայում | Գյուղատնտեսություն: Բերքատու բույս | 1 Հունվարի 2016թ | Հետընթաց |
| ՖՀՄՍ տարեկան վերանայումներ | 2014-2012 շրջան | 1 Հուլիսի 2014թ. | Հետընթաց |
| ՖՀՄՍ տարեկան վերանայումներ | 2015-2013 շրջան | 1 Հուլիսի 2014թ. | Հետընթաց |
| ՖՀՄՍ տարեկան վերանայումներ | 2012-2014 շրջան | 1 Հունվարի 2016թ. | Հետընթաց |

Ծանոթագրություն՝ ՖՀՄՍ 14 «*Կարգավորիչ հետաձգվող հաշիվներ*» ստանդարտը կիրառելի չէ Ընկերության համար, քանի որ Ընկերությունը ՖՀՄՍ-ների առաջին անգամ ընդունող չէ:

*ՀՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ստանդարտ. Բացահայտման նախաձեռնություն*

ՀՀՄՍ 1.*«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում»* ստանդարտի փոփոխությունները ուղղված են հաղթահարելու ֆինանսական հաշվետվությունների պատրաստողների կողմից իրենց դատողության կիրառման հետ կապված ընդունված խոչընդոտները՝ իրականացնելով հետևյալ փոփոխությունները՝

- պարզաբանվել է, որ տեղեկատվությունը չպետք է աղճատվի՝ այն համախմբելու կամ ոչ էական տեղեկատվություն տրամադրելու միջոցով: Էականության նկատառումները պետք է կիրառվեն ֆինանսական հաշվետվությունների բոլոր

բաժինների վրա: Անգամ եթե ստանդարտը պահանջում է հատուկ բացահայտում, էականությունը պետք է հաշվի առնվի,

- պարզաբանվել է, որ այս հաշվետվություններում էական հոդվածները կարող են խմբավորվել կամ տարանջատվել, եթե հարկն է և լրացուցիչ ուղեցույց պետք է տրվի ընդհանուր գումարի վերաբերյալ,
- լրացուցիչ օրինակները պարզաբանում են ծանոթագրությունների հերթականության հնարավոր ձևերը, և որ հասկանալիությունը և համեմատելիությունը պետք է հաշվի առնվի՝ ծանոթագրությունների հերթականությունը սահմանելիս, և որ այլևս պարտադիր չէ ծանոթագրությունների հերթականության պահպանումը ըստ նախկինում ՀՀՄՍ 1 պարագրաֆ 114-ում նշված հերթականության:

Սույն փոփոխությունը կիրառելի է 2016թ. հունվարի 1-ից հետո ընկած ժամանակաշրջանների համար: Ընկերությունը դեռևս չի գնահատել նշված փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

*ՀՀՄՍ 16. «Հիմնական միջոցներ» և ՀՀՄՍ 41. «Գյուղատնտեսություն». Բերքատու բույս*

ՀՀՄՍ 16-ի և ՀՀՄՍ 41-ի փոփոխությունները սահմանում են *«Բերքատու բույս»* հասկացությունը և պահանջում, որ գյուղատնտեսական ակտիվները, որոնք բավարարում են *«Բերքատու բույս»* սահմանմանը հաշվառվեն որպես հիմնական միջոց՝ համաձայն ՀՀՄՍ 16-ի՝ ՀՀՄՍ 41-ի փոխարեն:

Բերքատու բույսերի վրա աճեցվող բերքը շարունակվում է հաշվառվել ՀՀՄՍ 41. *«Գյուղատնտեսություն»* ստանդարտի համաձայն:

Ընկերության ղեկավարությունը չի գտնում, որ ՀՀՄՍ 16-ի և ՀՀՄՍ 41-ի փոփոխությունները էական ազդեցություն կունենան Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա, քանի որ ընկերությունը չի զբաղվում գյուղատնտեսությամբ:

*ՀՀՄՍ 16 «Հիմնական միջոցներ» և ՀՀՄՍ 38 «Ոչ նյութական ակտիվներ». Մաշվածության և ամորտիզացիայի ընդունելի մեթոդների պարզաբանում*

ՀՀՄՍ 16. «*Հիմնական միջոցներ*» և ՀՀՄՍ 38. «*Ոչ նյութական ակտիվներ*» ստանդարտների փոփոխությունները արգելում են, որԸնկերություններըմաշվածության և ամորտիզացիայի հաշվարկման համար օգտագործեն, կիրառեն կամ հիմնվեն *եկամտի վրա հիմնված* մեթոդի վրա: ՀՀՄՍ 16և ՀՀՄՍ 38 ստանդարտների փոփոխությամբ հերքվում են այն ենթադրությունները, որ հասույթը մաշվածության կամ ամորտիզացիայի հաշվարկի համապատասխան հիմք է: Այս ենթադրությունը կարող է հերքվել հետևյալ երկու սահմանափակ դեպքերում միայն.

ա) երբ ոչ նյութական ակտիվն արտահայտված է հասույթից չափման միջոցով,

բ) երբ հնարավոր է ցույց տալ, որ հասույթը և ոչ նյութական ակտիվից տնտեսական օգուտները մեծապես կախված են միմյանցից:

Փոփոխություններն ունեն հետադարձ կիրառություն և կիրառելի են 2016թ. հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Այժմ Ընկերությունը կիրառում է մաշվածքի և ամորտիզացիայի հաշվարկի գծային մեթոդը: Ղեկավարությունը գտնում է, որ գծային մեթոդը համապատասխան ակտիվներից տնտեսական օգուտների օգտագործման առավել համապատասխան մեթոդն է: Ընկերության ղեկավարությունը չի գտնում, որ ՀՀՄՍ 16 և ՀՀՄՍ 38 ստանդարտների փոփոխությունների կիրառումը էական ազդեցություն կունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՖՀՄՍ 11.*Համատեղ Պայմանավորվածություններում ներդրման հաշվառում*

ՖՀՄՍ 11. «*Համատեղ պայմանավորվածություններ*» ստանդարտի փոփոխությամբ տրվել է ուղեցույց, թե ինչպես պետք է հաշվառվի համատեղ գործունեության ձեռքբերումը, որը իրենից ներկայացնում է բիզնես, ինչպես սահմանված է ՖՀՄՍ 3. «*Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ*» ստանդարտով: Մասնավորապես փոփոխությամբ սահմանվել է, որ ՖՀՄՍ 3. «*Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ*» ստանդարտի և այլ ստանդարտների (օր.՝ ՀՀՄՍ 36. *«Ակտիվների արժեզրկում*» կապված ԴՄ ձեռքբերումից առաջացած գուդվիլի հետ) համապատասխան սկզբունքները պետք է կիրառվեն:

Փոփոխություններն ունեն հետադարձ կիրառություն և կիրառելի են 2016 հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Ընկերության ղեկավարությունը չի գտնում, որ ՖՀՄՍ 11. «*Համատեղ պայմանավորվածություններ*» ստանդարտի փոփոխությունների կիրառումը էական ազդեցություն կունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՖՀՄՍ 9. *«Ֆինանսական գործիքներ»*

2009թ. նոյեմբերին թողարկված և 2014թ. հոկտեմբերին փոփոխված այս ստանդարտը ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների դասակարգման և չափման, ինչպես նաև ապաճանաչման նոր պահանջներ է ներկայացնում: ՖՀՄՍ 9 պահանջում է, որ ՀՀՄՍ 39-ի՝ «*Ֆինանսական գործիքներ՝ ճանաչումը և չափումը»*, համաձայն ճանաչված բոլոր ֆինանսական ակտիվները հետագայում չափվեն ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով: Մասնավորապես, պարտքային գործիքները, որոնք պահվում են այնպիսի բիզնես մոդելում, որի նպատակն է պայմանագրով նախատեսված դրամական հոսքեր հավաքագրելը, և որում պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը համարվում են միմիայն մայր գումարի և մայր գումարի մնացորդի վրա հաշվարկված տոկոսի վճարումներ, հիմնականում հաջորդող հաշվետու ժամանակաշրջանների վերջի դրությամբ չափվում են ամորտիզացված արժեքով: Բոլոր այլ պարտքային և բաժնային գործիքները հաջորդող հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ չափվում են իրենց իրական արժեքով:

ՖՀՄՍ 9-ի ազդեցությունը ֆինանսական պարտավորությունների դասակարգման և չափման վրա առավելապես վերաբերում է ֆինանսական պարտավորության իրական արժեքի փոփոխությունների հաշվառմանը (որպես չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով)՝ կապված այդ պարտավորության վարկային ռիսկի հետ: Մասնավորապես, համաձայն ՖՀՄՍ 9-ի, ֆինանսական պարտավորությունների համար, որոնք հաշվառվում են որպես չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, ֆինանսական պարտավորության իրական արժեքի փոփոխության գումարը, որը վերագրվում է այդ պարտավորության վարկային ռիսկի փոփոխությանը, ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում, քանի դեռ պարտավորության վարկային ռիսկի փոփոխության ազդեցության ճանաչումը այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում չի առաջացնում եկամտի կամ ծախսի հաշվառման անհամատեղում: Ֆինանսական պարտավորությանվարկային ռիսկին վերագրվող իրական արժեքի փոփոխությունները հետագայում չեն վերադասակարգվում եկամտի կամ ծախսի: Նախկինում, համաձայն ՀՀՄՍ 39-ի, ֆինանսական պարտավորության՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, փոփոխության ամբողջ գումարը ճանաչվում էր եկամտում կամ ծախսում:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման հետ կապված ՖՀՄՍ 9-ը պահանջում է կիրառել սպասվող պարտքային վնասի մոդելը, ի տարբերություն ՀՀՄՍ 39-ի կրած պարտքային

վնասի մոդելի: Սպասվող պարտքային վնասի մոդելը պահանջում է հաշվառել պարտքային վնասները, ինչպես նաև դրանցում փոփոխությունները, յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ՝ փոփոխությունները պարտքային ռիսկում արտացոլելու նպատակով:

Հեջի նոր ընդհանուր հաշվառման պահանջները պահպանում են հեջի հաշվառման երեք մեխանիզմներ, որոնք այժմ առկա են ՀՀՄՍ 39-ում: Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ ավելի ճկուն են դարձել այն գործառնությունների տեսակները, որոնք ընդունելի են հեջի հաշվառման համար, մասնավորապես ընդլայնվել են այն գործիքների տեսակները, որոնք համապատասխանում են հեջի հաշվառմանը: Ավելին, արդյունավետության ստուգումը հանվել է և փոխարինվել *է տնտեսական հարաբերություն* սկզբունքով: Հեջի արդյունավետության հետընթաց գնահատում նույնպես այլևս չի պահանջվում:

ՖՀՄՍ 9-ը կիրառելի է 2018թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար՝ ավելի վաղ կիրառման հնարավորությամբ: Ղեկավարությունը կանխատեսում է, որ ՖՀՄՍ 9-ը կկիրառվի Ընկերությանֆինանսական հաշվետվություններում 2018թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, և որ այս նոր ստանդարտի կիրառումն էական ազդեցություն չի ունենա Ընկերությանֆինանսական ակտիվներին և ֆինանսական պարտավորություններին վերաբերող հաշվետվության մեջ ներկայացվող գումարների վրա:

*Համախմբման բացառության կիրառումը (փոփոխություններ ՖՀՄՍ 10, ՖՀՄՍ 12, ՀՀՄՍ 28 ստանդարտներում)*

2015թ.-ին ընդունված ՖՀՄՍ 10. *«Համախմբված ֆինանսական հաշվետվություններ»*, ՖՀՄՍ 12. *«Այլ ընկերություններում մասնակցության բացահայտում»*, *ՀՀՄՍ 28. «Ներդրումներ ասոցիացված ընկերություններում և համատեղ ձեռնարկումներում»* ստանդարտներում փոփոխությունները ուղղված են ճշտելու այն խնդիրները, որոնք առաջացել են ներդրումային ընկերություններում համախմբման բացառությունը կիրառելիս, պարզաբանելով՝

- համախմբում չիրականացնելու բացառությունը կիրառելի է այն մայր ընկերության համար, որն իր հերթին հանդիսանում է մեկ այլ ներդրումային ընկերության դուստր ձեռնարկություն՝ անգամ եթե ներդրումային ընկերությունը իր բոլոր դուստր ընկերությունները չափում է իրական արժեքով,
- դուստր ձեռնարկությունը, որը մատուցում է ծառայություններ կապված մայր ընկերության ներդրումային գործունեության հետ, չպետք է համախմբվի, եթե դուստր ընկերությունը, իր հերթին, հանդիսանում է ներդրումային ընկերություն,
- ասոցիացված ընկերության կամ համատեղ ձեռնարկության դեպքում բաժնեմասնակցության մեթոդը կիրառելիս ներդրումային ընկերությունում ոչ ներդրումային ընկերություն հանդիսացող ներդրողը կարող է, որպես ասոցիացված ընկերություն կամ համատեղ ձեռնարկություն, պահպանել դուստր ձեռնարկությունում իր ներդրման իրական արժեքով հաշվառումը,
- ներդրումային ընկերությունը, որը չափում է իր բոլոր դուստր ընկերությունները իրական արժեքով, ներկայացնում է ՖՀՄՍ 12-ով ներդրումային ընկերությունների համար պահանջվող բացահայտումները:

Վերոնշյալ փոփոխությունները կիրառելի են 2016թ. հունվարի 1-ից հետո ընկած ժամանակաշրջանների համար:

Փոփոխություններ *ՖՀՄՍ 10. և ՀՀՄՍ 28. Ակտիվների վաճառքը կամ նվիրատվությունը ներդրողի և ասոցիացված ընկերության կամ համատեղ ձեռնարկության միջև* ստանդարտներում

Փոփոխությունները վերաբերվում են այն իրավիճակներին, երբ տեղի է ունեցել ակտիվների վաճառք կամ նվիրատվություն ասոցիացված ընկերության և ներդրողի կամ համատեղ ձեռնարկության միջև: Մասնավորապես, փոփոխությունները նշվում են, որ բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող դուստր ընկերությունում վերահսկողության կորստից առաջացած վնասը, որն ասոցիացված ընկերության հետ գործարքի արդյունք չէ, մայր ընկերության շահույթում կամ վնասում ճանաչվում է միայն այդ ասոցիացիայում չկապակցված ներդրողների մասնակցության չափով:

Փոփոխությունները պետք է կիրառվեն հետադարձ սկզբունքով 2016թ. հունվարի 1-ից հետո ընկած ժամանակաշրջանների համար:

Ընկերության ղեկավարությունը չի գտնում, որ ՖՀՄՍ 10 և ՀՀՄՍ 28-ի փոփոխությունները էական ազդեցություն կունենան Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՖՀՄՍ 15. *«Հաճախորդների հետ կնքված պայմանագրերից հասույթ»*

Այս ստանդարտն առաջին անգամ քննարկման է դրվել 2008թ.-ին: Ստանդարտը վերանայվեց (փոփոխվեց) 2014թ.-ին, այնուհետև՝ 2015թ.-ին: Վերջնական տարբերակը թողարկվել է 2014թ. մայիսին:

ՖՀՄՍ 15. *«Հաճախորդների հետ կնքված պայմանագրերից հասույթ»* ստանդարտը, երբ կիրառության մեջ մտնի, պետք է փոխարինի ՀՀՄՍ 18. *«Հասույթ»* և ՀՀՄՍ 11. *«Կառուցման պայմանագրեր»* ստանդարտներով սահմանված հասույթի ճանաչման ուղեցույցներին և կից մեկնաբանություններին:

ՖՀՄՍ 15. *«Հաճախորդների հետ կնքված պայմանագրերից հասույթ»* ստանդարտի էական սկզբունքն այն է, որ Ընկերությունը պետք է հասույթը ճանաչի այն գումարով, որով որ Ընկերությունը պատկերացնում կամ ակնկալում է, որ հաճախորդներին, ըստ պայմանագրի, տրված ապրանքների կամ մատուցված ծառայություններիգումարները կստացվեն կամ կհավաքագրվեն Ընկերության կողմից:

Ստանդարտը տալիս է պարզ, սկզբունքների վրա հիմնված հինգ քայլ պարունակող մոդել, որը կիրառվելու է հաճախորդների հետ բոլոր պայմանագրերի հաշվառման նպատակով:

ՖՀՄՍ 15. *«Հաճախորդների հետ կնքված պայմանագրերից հասույթ»* ստանդարտը կիրառելի է 2017թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար՝ ավելի վաղ կիրառման հնարավորությամբ:

ՖՀՄՍ 15-ը փոխարինելու է հետևյալ ստանդարտներին՝

- ՀՀՄՍ 11. «Կառուցման պայմանագրեր»,
- ՀՀՄՍ 18. «Հասույթ»,
- ՖՀՄՄԿ 13. «Հաճախորդի հավատարմության ծրագրեր»,
- ՖՀՄՄԿ 15. «Անշարժ գույքի կառուցման պայմանագրեր»,
- ՖՀՄՄԿ 18. «Ակտիվների փոխանցում հաճախորդների կողմից»,
- ՍՄԿ 31. «Հասույթ, գովազդային ծառայություններ ներառող բարտերային գործարքներ»:

Ստանդարտի հիմնական սկզբունքը ներկայացված է հինգ քայլ ներառող մոդելում՝

Քայլ 1. ճանաչել հաճախորդի հետ պայմանագիրը,
Քայլ 2. ճանաչել պայմանագրային պարտավորությունները,

Քայլ 3. սահմանել գործարքի գինը,
Քայլ 4. կիրառել գործարքի գինը պայմանագրային պարտավորությունների նկատմամբ,
Քայլ 5. ճանաչել հասույթը, երբ ընկերությունը ավարտում է պայմանգրային պարտավորությունները:

Ընկերության տնօրինությունը գտնում է, որ ապագայում ՖՀՄՍ 15. *«Հաճախորդների հետ կնքված պայմանագրերից հասույթ»* ստանդարտի կիրառումը կարող է էական ազդեցություն ունենալ ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների և ծանոթագրությունների վրա: Այնուամենայնիվ ՖՀՄՍ 15. *«Հաճախորդների հետ կնքված պայմանագրերից հասույթ»* ազդեցության վերաբերյալ արժանահավատ գնահատական տալը կիրառելի չէ, քանի դեռ Ընկերությունը մանրամասն վերանայում չի իրականացրել:

*ՖՀՄՍ-ների տարեկան վերանայումներ 2012-2014 ժամանակաշրջան*

*2012-2014 ժամանակաշրջանի տարեկան փոփոխությունները* ներառում են մի շարք փոփոխություններ, որոնք խմբավորված են ստորև.

ՖՀՄՍ 5 փոփոխությունը ներկայացնում է հատուկ ուղեցույց ՖՀՄՍ 5-ում, այն դեպքում երբ Ընկերությունը վերադասակարգում է ակտիվը (կամ օտարվող խումբը) որպես վաճառքի ենթակա կամ սեփականատերերին տրամադրման ենթակա: Փոփոխությունները պարզաբանում են, որ այդպիսի փոփոխությունը պետք է դիտարկվեն որպես օտարման նախնական պլանի շարունակություն, և հետևաբար, ՖՀՄՍ 5-ի՝ վաճառքի պլանի փոփոխության հետ կապված պահանջները չեն կիրառվում:

ՖՀՄՍ 7-ի փոփոխությունները տալիս են լրացուցիչ ուղեցույց պարզաբանելու համար, թե արդյոք ծառայության մատուցման պայմանագիրը ունի շարունակական մասնակցություն փոխանցված ակտիվում՝ փոխանցված ակտիվների վերաբերյալ բացահայտման նպատակով:

ՀՀՄՍ 19-ի փոփոխությունները պարզաբանում են, որ հետաշխատանքային հատուցումների գծով պարտավորությունների զեղչման նպատակով կիրառվող տոկոսադրույքը պետք է սահմանվի՝ հաշվի առնելով հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ բարձրորակ կորպորատիվ պարտատոմսերի շուկայական շահութաբերությունը: Բարձրորակ կորպորատիվ պարտատոմսերի շուկայի ուսումնասիրության խորությունը պետք է լինի արտարժույթի մակարդակով (օրինակ՝ այն արտարժույթի, որով պարտավորությունը պետք է մարվի): Այն արտարժույթների դեպքում, որոնց գծով բարձրորակ կորպորատիվ պարտատոմսերի խորը շուկա չկա, պետք է կիրառվի պետական պարտատոմսերի շուկայական շահութաբերությունը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ՝ արտահայտված սահմանված արտարժույթով:

Ընկերության ղեկավարությունը չի գտնում, որ նշված փոփոխությունները էական ազդեցություն կունենան Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ընկերությունը դեռ չի վերլուծել փոփոխությունների հնարավոր ազդեցությունն իր ֆինանսական վիճակի և գործունեության վրա:

# 3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

## 3.1 Արտարժույթ

*Արտարժույթով գործարքներ*

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը: Իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում: Ստորև ներկայացված են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքները.

| | 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|---|
| ԱՄՆ դոլար | 483.94 | 483.75 | 474.97 |
| Եվրո | 512.2 | 528.69 | 577.47 |
| Բեծ Բրիտանիայի ֆունտ ստերլինգ | 595.54 | 717.69 | 737.68 |

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում: Իրական արժեքով արտահայտված ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ներառվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում, բացառությամբ այն ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած տարբերությունների, որոնց վերաբերող շահույթը կամ վնասը ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում: Նման ոչ դրամային հոդվածների դեպքում շահույթի կամ վնասի ցանկացած փոխարժեքային բաղադրիչ նույնպես ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում:

## 3.2 Հիմնական միջոցներ

*Սկզբնական արժեքով հաշվառվող հիմնական միջոցներ*

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը,հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները, որոնք պահվում են վարձակալության տալու կամ վարչական, կամ դեռևս անորոշ նպատակով, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները, տեղանքի նախապատրաստման, տեղակայման ծախսումները, մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում՝ նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները՝ համաձայն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության: Վարձակալական գույք հանդիսացող շենքերը նույնպես ընդգրկվում են հիմնական միջոցներում, եթե դրանք ստացվել են ֆինանսական վարձակալությամբ: Նման ակտիվների մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի ակնկալվող օգտակար ծառայության ընթացքում (որը որոշվում է՝համեմատելով սեփական համանման ակտիվների հետ) կամ վարձակալության ժամկետի ընթացքում, եթե վերջինս ավելի կարճ է:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլհամապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցիօգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

| | |
|---|---|
| Շենքեր | - 20-60 տարի, |
| Կառուցվածքներ | - 20-60 տարի, |
| Փոխանցող հարմարանքներ | - 25-60 տարի, |
| Մեքենաներ և սարքավորումներ | - 5-60 տարի, |
| Տրանսպորտային միջոցներ | - 5 տարի, |
| Արտադրական գույք, տնտեսական գույք, գործիքներ | - 5 տարի, |
| Բազմամյա տնկիներ | - 5 տարի, |
| Համակարգչային տեխնիկա | - 1 տարի, |
| Այլ հիմնական միջոցներ | -5 տարի: |

## 3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է՝

Հաշվապահական հաշվառմանհամակարգչային ծրագրեր 5 տարի:

## 3.4 Վարձակալված ակտիվներ

Համաձայն ՀՀՄՍ 17-ի՝ «*Վարձակալություն*»,վարձակալված ակտիվի սեփականության իրավունքը փոխանցվում է վարձակալին, երբ նրան են փոխանցվում սեփականության իրավունքի հետ կապված բոլոր ռիսկերը և օգուտները: Վարձակալված ակտիվը վարձակալության սկզբում ճանաչվում է վարձակալված գույքի իրական արժեքով կամ, ավելի ցածր լինելու դեպքում, նվազագույն վարձավճարների ներկա արժեքով՝ գումարած միանվագ վճարները, եթե այդպիսիք կան: Համապատասխան գումարը ճանաչվում է որպես ֆինանսական վարձակալության գծով պարտավորություն, անկախ նրանից, որ վարձակալական վճարների մի մասը կարող է վճարման ենթակա լինել մինչև վարձակալության սկիզբը:

Վարձակալված ակտիվների հետագա հաշվառումը, այսինքն՝ մաշվածության մեթոդի ընտրությունը և օգտակար ծառայության ժամկետների որոշումը, համապատասխանում են սեփականության իրավունքով Ընկերությանը պատկանող նմանատիպ ակտիվների հաշվառմանը: Ֆինանսական վարձակալության գծով պարտավորությունները նվազեցվում են վարձավճարների չափով՝ հանած ֆինանսական վճարը, որը ներառվում է ֆինանսական ծախսերում: Ֆինանսական վարձակալության տոկոսային մասն իրենից ներկայացնում է մնացորդային արժեքի հաստատուն մաս, որը վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ վարձակալության ժամկետի ընթացքում:

Մյուս բոլոր վարձակալությունները դիտվում են որպես գործառնական վարձակալություններ: Գործառնական վարձակալության գծով վճարները ճանաչվում են որպես ծախս՝ գծային հիմունքով: Վարձակալության հետ կապված ծախսերը, ինչպիսիք են պահպանման և ապահովագրության ծախսերը, ծախսագրվում են իրականացման պահին:

## 3.5 Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝օգտագործելով միջին կշռված մեթոդը, և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

## 3.6 Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորություններն ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների, որոնք սկզբնապես դասակարգվում են որպես ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ՝չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հետագա չափումը ներկայացված է ստորև:

*Ֆինանսական ակտիվներ*

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների, բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ,
- փոխառություններ և դեբիտորական պարտքեր:

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր կատեգորիաների՝ կախված գործիքի բնույթից և նպատակից: Ֆինանսական գործիքի կատեգորիան համապատասխանեցվում է այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը և այն հանգամանքին, թե արդյոք առաջացող եկամուտը և ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, թե ուղղակիորեն այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում: Ընկերության ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 19-ում:

Ընդհանուր առմամբ, Ընկերության բոլոր ֆինանսական ակտիվները ճանաչվում են՝ օգտագործելով վերջնահաշվարկի ամսաթվի հաշվառումը: Ֆինանսական ակտիվների հետ կապված բոլոր ծախսերը և եկամուտները որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, ներկայացվում են «Ֆինանսական ծախս», «Ֆինանսական եկամուտ» կամ «Այլ ֆինանսական արդյունքներ» հոդվածներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որը ներկայացվում է «Այլ ծախսեր» հոդվածում:

i. ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով

Ֆինանսական ակտիվները՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, ներառում են առևտրային նպատակով պահվող ֆինանսական ակտիվները կամ այն ֆինանսական ակտիվները, որոնքորպես չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով դասակարգվել են Ընկերության կողմից՝ սկզբնական ճանաչման ժամանակ: Բոլոր ածանցյալ ֆինանսական գործիքները, որոնք ենթակա չեն հեջավորման, դասակարգվում են այս կատեգորիայում:

Ածանցյալ ֆինանսական գործիքների գծով առաջացած ցանկացած օգուտ կամ վնաս հիմնված է իրական արժեքի փոփոխության վրա, որը որոշվում է՝ ուղղակիորեն վկայակոչելով գործող շուկայում գործարքները կամ գործող շուկայի բացակայության դեպքում՝ գնահատման մեթոդի միջոցով:

ii. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները չափվում են իրական արժեքով՝ իրական արժեքի փոփոխությունները ուղղակիորեն ճանաչելով այլ համապարփակ արդյունքներում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների կատեգորիայում դասակարգված ֆինանսական գործիքներից առաջացած օգուտը կամ վնասըճանաչվում է շահույթում կամ վնասում այն դեպքում, երբ նշված ակտիվները վաճառվում են կամ երբ ներդրումն արժեզրկվում է: Արժեզրկման դեպքում ցանկացած վնաս, որը նախկինում ճանաչվել էր այլ համապարփակ արդյունքներում, փոխանցվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն: Սեփական կապիտալի գործիքներից առաջացած և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված վնասները չեն հակադարձվում համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, այլ ճանաչվում են սեփական կապիտալում: Նախորդ ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասինհաշվետվությունում ճանաչված պարտքային արժեթղթերի արժեզրկումից առաջացած վնասները հակադարձվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, եթե հետագա աճը հիմնվում է այն դեպքի վրա, որը տեղի է ունեցել համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ արժեզրկումից վնասի ճանաչումից հետո:

iii. Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները ֆիքսված կամ որոշելի վճարումներով, ֆիքսված մարման ժամկետով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են և ներառում են առևտրային բանկերում ավանդները: Ներդրումները դասակարգվում են որպես մինչև մարման ժամկետը պահվող, եթե Ընկերության ղեկավարությունը մտադրված է պահել դրանք մինչև դրանց մարման ժամկետը:

iv. Փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Փոխառություններն ու դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնքչեն գնանշվում ակտիվ շուկայում և

ներառում են առևտրային և այլ դեբիտորական պարտքերը, ինչպես նաև մնացորդները դրամարկղում և բանկերում:

*Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր*

Ընթացիկ դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկման պահուստը: Առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ Ընկերությունը սկզբնապես սահմանված ժամկետներում չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները: Դեբիտորի զգալի ֆինանսական դժվարությունները, վճարման հետաձգումը նվճարումների ուշացումները ցուցանիշ են այն բանի, որ առևտրային դեբիտորական պարտքն արժեզրկված է: Պահուստի գումարը ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է:

Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ ծախսի կամ եկամտի ճանաչման միջոցով: Հաճախորդի հաշվի մնացորդից դուրս գրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից: Բոլոր դեբիտորական պարտքերը, որոնց հավաքագրումը գնահատվում է անհավանական, դուրս են գրվում:

*Մնացորդներ դրամարկղում և բանկերում*

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները և դրամական միջոցները ճանապարհին:

*Ֆինանսական պարտավորություններ*

i. Վարկեր և փոխառություններ

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասինհաշվետվությունում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

ii. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

## 3.7 Արժեզրկում

*Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում*

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվներն արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

*Ֆինանսական ակտիվների արժեզրկում*

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում են արժեզրկման հայտանիշի առկայության համար: Ֆինանսական ակտիվներն արժեզրկված են, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձություններ ազդել են ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստը հաշվառվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությամբ: Բոլոր ֆինանսական ակտիվների համար արժեզրկումից կորուստն ուղղակիորեն նվազեցվում է ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքից, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնց հաշվեկշռային արժեքը նվազեցվում է կասկածելի պարտքի պահուստի միջոցով:

Բացառությամբ վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի գործիքների, եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկման կորուստը նվազում է, և նվազումը օբյեկտիվորեն կարելի է վերագրել արժեքի իջեցումից հետո տեղի ունեցած դեպքերին, ապա նախկինում ճանաչված արժեզրկման կորուստը հակադարձվում է՝ ճանաչվելով համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն չափով, որ հակադարձումը չհանգեցնի ֆինանսական ակտիվի այնպիսի հաշվեկշռային արժեքի, որը գերազանցի այն ամորտիզացված արժեքը, որը կլիներ, եթե այդ ֆինանսական ակտիվի արժեքի իջեցման հակադարձման ամսաթվի դրությամբ արժեզրկում ճանաչված չլիներ:

Ինչ վերաբերում է վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի արժեթղթերին, արժեզրկումից հետո իրական արժեքի աճն ուղղակիորեն ճանաչվում է սեփական կապիտալում:

## 3.8 Աշխատակիցներին հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են, օրինակ, վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները) և պարգևավճարները:

Երբ աշխատակիցը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությանը մատուցել է ծառայություն, աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայության դիմաց, ճանաչվում է՝

ա) որպես պարտավորություն՝ արդեն վճարված գումարները հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Ընկերությունը այդ տարբերությունը ճանաչում է որպես ակտիվ՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,

բ) որպես ծախս, եթե այն չի ներառվում մեկ ուրիշ ակտիվի հաշվեկշռային արժեքի մեջ:

## 3.9 Սեփական կապիտալ

Ընկերությանկողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով: Տեղաբաշխված բաժնետոմսերի վաճառքի գնի և անվանական արժեքի տարբերությունը ներկայացվում է որպես էմիսիոն եկամուտ:

Սովորական բաժնետոմսերին անմիջականորեն վերագրվող ծախսերը ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում:

Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

Ընկերությունը ստեղծում է պահուստային կապիտալ՝ Ընկերության կորուստները ծածկելու, ինչպես նաև Ընկերության պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Ընկերության շահույթը և այլ միջոցները դրա համար չեն բավարարում:

Ընկերությունը մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթը հաշվարկում է տարվա զուտ շահույթը բաժանելով տարվա ընթացքում շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին թվին:

Տարվա ընթացքում շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին թիվը իրենից ներկայացնում է տարեսկզբում շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի թիվը՝ ճշգրտված այդ ժամանակաշրջանի ընթացքում հետ

գնված կամ թողարկված սովորական բաժնետոմսերի թվով՝ բազմապատկած ժամանակային կշռող գործակցով: Ժամանակային կշռող գործակիցը բաժնետոմսերի շրջանառության մեջ գտնվելու օրերի թիվն է՝ բաժանած հաշվետու ժամանակաշրջանի օրերի թվի վրա, կշռված միջինի խելամիտ մոտեցումը շատ դեպքերում տեղին է:

## 3.10 Պահուստներ

Պահուստըճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Ընկերությաննունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի զեղչման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

## 3.11 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գուդվիլի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ՝ հարկվող շահույթի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Ընկերությունը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ամսաթվի

դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

## 3.12 Սեգմենտային հաշվետվություններ

Ընկերությանգործունեությունը ներառում է էլեկտրաէներգիայի վաճառքի և հզորության իրացման մատուցվող ծառայությունները: Ընկերությունն ունի մեկ գործառնական սեգմենտ: Համաձայն ՖՀՄՍ 8-ի՝ Ընկերության կողմից կիրառվող սեգմենտային հաշվետվությունների համար չափման քաղաքականությունը նույնն է, ինչ որ ֆինանսական հաշվետվությունների համար կիրառվող քաղաքականությունը,որը ներառված չէ գործառնական սեգմենտների գործառնական շահույթի գումարը որոշելիս: Ի լրումն՝ Ընկերության այն ակտիվները, որոնք ուղղակիորեն չեն առնչվում գործառնական սեգմենտի բիզնես գործունեությանը, սեգմենտին չեն բաշխվում: Սեգմենտային տեղեկատվությունը ներկայացված է կից ծանոթագրություններում:

## 3.13 Հասույթի ճանաչում

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ հաշվի առնելով Ընկերության կողմից տրամադրված ցանկացած առևտրական զեղչերը և իջեցումների գումարները:

Ընկերության հասույթը ներկայացնում է էլեկտրաէներգիայի վաճառքից և հզորության իրացման ստացվելիք փոխհատուցումը:

Ընկերության կողմից հասույթը ճանաչվում է, երբ ծառայությունները մատուցվում են գնորդին, երբ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները և ծախսերը հնարավոր է արժանահավատորեն չափել և հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն:

## 4 Հիմնական միջոցներ

| Հազար դրամ | Շենքեր, շինություններ և հող | Կառուց-վածքներ, փոխանցող հարմարանքներ | Մեքենա սարքա-վորումներ, տրասպորտային միջոցներ | Արտադրական և տնտեսական գույք, | Անավարտ ոչ ընթացիկ ակտիվներ | Այլ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|
| *Սկզբնական արժեք* | | | | | | | |
| 2015թ. հունվարի 1-ի դրությամբ | 6,179,944 | 3,680,975 | 7,764,560 | 30,411 | 1,935,964 | 6,451 | 19,598,305 |
| Ավելացում | 3,688 | 266,890 | 110,653 | 870 | 63,222 | 1,231 | 446,554 |
| Օտարում | - | - | (3,865) | (377) | - | (185) | (4,427) |
| Վերադասակարգում | 180,579 | 355,062 | 1,371,969 | - | (1,907,610) | - | - |
| 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 6,364,211 | 4,302,927 | 9,243,317 | 30,904 | 91,576 | 7,497 | 20,040,432 |
| Ավելացում | 38,648 | 91,086 | 20,472 | 1,103 | 567,630 | 688 | 719,627 |
| Օտարում | - | - | (1,789) | (1,034) | - | (107) | (2,930) |
| 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 6,402,859 | 4,394,013 | 9,262,000 | 30,973 | 659,206 | 8,078 | 20,757,129 |
| *Կուտակված մաշվածություն* | | | | | | | |
| 2015թ. հունվարի 1-ի դրությամբ | 1,435,258 | 202,063 | 1,857,008 | 19,985 | - | 6,376 | 3,520,690 |
| Տարվա ծախս | 104,713 | 85,945 | 166,663 | 3,287 | - | 524 | 361,132 |
| Օտարումից դուրս գրում | - | - | (3,865) | (319) | - | (185) | (4,369) |
| 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 1,539,971 | 288,008 | 2,019,806 | 22,953 | - | 6,715 | 3,877,453 |
| Տարվա ծախս | 107,064 | 93,141 | 174,027 | 2,296 | | 1,096 | 377,624 |
| Օտարումից դուրս գրում | - | - | (1,263) | (921) | - | (107) | (2,291) |
| 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 1,647,035 | 381,149 | 2,192,570 | 24,328 | - | 7,704 | 4,252,786 |
| *Հաշվեկշռային արժեք* | | | | | | | |
| 2015թ. հունվարի 1-ի դրությամբ | 4,744,686 | 3,478,912 | 5,907,552 | 10,426 | 1,935,964 | 75 | 16,077,615 |
| 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 4,824,240 | 4,014,919 | 7,223,511 | 7,951 | 91,576 | 782 | 16,162,979 |
| 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 4,755,824 | 4,012,864 | 7,069,430 | 6,645 | 659,206 | 374 | 16,504,343 |

2016թ. դեկտեմբերի 31-ի և 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը գրավադրված հիմնական միջոցներ չունի:

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ161,746 հազ. դրամ (2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 114,822 հազ. դրամ) սկզբնական արժեքով հիմնական միջոցներ հաշվառվում են զրոյական հաշվեկշռային արժեքով:

2016թ. և 2015թ. մաշվածության ծախսը բաշխվել է հետևյալ կերպ`

| Հազար դրամ | 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Վաճառքի ինքնարժեք | 365,712 | 343,469 |
| Վարչական ծախսեր | 11,912 | 17,663 |
| | 377,624 | 361,132 |

2016թ.-ին հիմնական միջոցների ավելացումները բաղկացած են.

| | Հազար դրամ |
|---|---|
| Թրղե-4 ՓՀԷԿ շին մոնտաժային աշխատանքներ | 30,666 |
| Լև ՓՀԷԿ շին մոնտաժային աշխատանքներ | 548,067 |
| Թրղե-1 ՓՀԷԿ ջրի ճնշման կար•ավորիչ կափույր | 66,854 |
| Կապիտալացվող փոխառության և վարկի ծախսումներ | 74,040 |
| | 719,627 |

2015թ.-ին հիմնական միջոցների ավելացումները բաղկացած են.

| | Հազար դրամ |
|---|---|
| Թրղե ՓՀԷԿ-երի շին մոնտաժային աշխատանքներ | 255,791 |
| Սարքավորումների և այլ հիմնական միջոցների ձեռքբերում | 158,781 |
| Կապիտալացվող փոխառության և վարկի ծախսումներ | 31,982 |
| | 446,554 |

## 5 Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկերի շարժը ներկայացված է ստորև.

| Հազար դրամ | 2016թ. | 2015թ. |
|---|---|---|
| Տարեսկզբի մնացորդ | 3,472 | 3,133 |
| Ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ճանաչված փոխհատուցում | (1,898) | 339 |
| Տարեվերջի մնացորդ | 1,574 | 3,472 |

2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

| Հազար դրամ | 2016թ. հունվարի 1 | Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն ում ճանաչված | 2016թ. դեկտեմբերի 31 |
|---|---|---|---|
| *Հետաձգված հարկային ակտիվներ* | | | |
| Արձակուրդի պահուստ | 3,472 | (1,898) | 1,574 |
| | 3,472 | (1,898) | 1,574 |
| *Հետաձգված հարկային պարտավորություններ* | - | | |
| | - | | |
| Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ | 3,472 | (1,898) | 1,574 |

2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

| Հազար դրամ | 2015թ. հունվարի 1 | Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն ում ճանաչված | 2015թ. դեկտեմբերի 31 |
|---|---|---|---|
| *Հետաձգված հարկային ակտիվներ* | | | |
| Արձակուրդի պահուստ | 3,133 | 339 | 3,472 |
| | 3,133 | 339 | 3,472 |
| *Հետաձգված հարկային պարտավորություններ* | - | - | - |
| | - | - | - |
| Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ | 3,133 | 339 | 3,472 |

| Ներառյալ` | 2016թ. | 2015թ. |
|---|---|---|
| Փոխհատուցման ենթակա 12 ամսվա ընթացքում | 1,574 | 3,472 |
| Փոխհատուցման ենթակա մեկ տարուց ավելի | - | - |

## 6 Տրված կանխավճարներ

Ընկերությունը հիմնական միջոցներ ձեռք բերելու համար 2016թ. փոխանցել է կանխավճար մատակարարներին` մասնավորապես, «Խորդա» ՍՊԸ-ին 35,000 հազար դրամ գեներատորներ ձեռք բերելու համար:

Ընկերությունը հիմնական միջոցներ ձեռք բերելու համար 2016թ. փոխանցել էր կանխավճար մատակարարներին` մասնավորապես, « Ջի Ար Փի Սիսթեմս » ՍՊԸ -ին 150,000 հազար դրամ 5.8 կմ խողովակ ձեռք բերելու համար և «Խորդա» ՍՊԸ-ին 13,000 հազար դրամ գեներատորներ ձեռք բերելու համար:

## 7 Պաշարներ

| Հազար դրամ | 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Նյութեր | 12,859 | 20,226 |
| Վառելիք | 7,528 | 8,699 |
| Պահեստամասեր | 57,644 | 55,434 |
| Այլ նյութեր | 1,895 | 5,486 |
| | 79,926 | 89,845 |

2016թ. դեկտեմբերի 31-ի և 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չունի գրավադրված պաշարներ:

## 8 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

| Հազար դրամ | 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Առևտրային դեբիտորական պարտքեր | 628,658 | 1,051,622 |
| Տրված կանխավճարներ | 250,035 | 130,310 |
| Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով | 159,670 | 86.640 |
| Այլ դեբիտորական պարտքեր | 3,044 | 1,347 |
| | 1,041,407 | 1,269,919 |

Առևտրային դեբիտորական պարտքի միջին տևողությունը կազմում է 63 օր (2015թ.՝ 147օր): Առևտրային դեբիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում:Առևտրային դեբիտորական պարտքի հավաքագրելիությունը որոշելիս հաշվի է առնվում դեբիտորի պարտքի մարման ժամանակացույցի ցանկացած փոփոխություն՝ սկսած պարտքի առաջացման պահից մինչև հաշվետու ամսաթիվը:

Ղեկավարությունը հավատացած է, որ պետական բյուջեից դեբիտորական պարտքերն ամբողջովին ենթակա են վերականգնման:

## 9 Տրված փոխառություններ

Փոխառությունները տրվել են ԼՂՀ ֆինանսների նախարարությանը, որից 483,940 հազ. դրամ իրենից ներկայացնում է 2016թ. տրամադրված, տարեկան 12.5 տոկոս տոկոսադրույքով 1մլն ԱՄՆ դոլար կարժաժամկետ փոխառությունը, իսկ 250,000 հազ. դրամը իրենից ներկայացնում է 2016թ., տարեկան 13 տոկոս տոկոսադրույքով կարժաժամկետ փոխառությունը:

## 10 Դրամական միջոցներ և համարժեքներ

| Հազար դրամ | 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Կանխիկ միջոցներ | 722 | 1,150 |
| Բանկային հաշիվներ արտահայտված ՀՀ դրամով | 71,688 | 5,388 |
| Բանկային հաշիվներ արտահայտված արտարժույթով | 44 | 528,768 |
| | 72,454 | 535,306 |

## 11 Կապիտալ և պահուստներ

### 11.1 Կանոնադրական կապիտալ

| | Սովորական բաժնետոմսեր 2016թ. | Սովորական բաժնետոմսեր 2015թ. |
|---|---|---|
| Սովորական բաժնետոմսեր քանակը (հատ) | 10,650,000 | 10,650,000 |
| Սովորական բաժնետոմսերի անվանական արժեքը | 1,000 | 1,000 |
| Ընդամենը (հազար դրամ) | 10,650,000 | 10,650,000 |

Ընկերությունն ունի սովորական բաժնետոմսերի մեկ դաս, որը հաստատուն եկամտի նկատմամբ իրավունք չունի:

31.12.2016թ. դրությամբ Ընկերության թողարկած բաժնետոմսերի քանակը կազմում է 10,650,000 հատ սովորական բաժնետոմս:

Ընկերության բաժնետոմսերի սեփականատերերի թիվը կազմում է.

| | 31.12.2016 | | 31.12.2015 | |
|---|---|---|---|---|
| | հատ | % | հատ | % |
| ԼՂՀ Կառավարություն | 5,100,000 | 47.9 | 5,100,000 | 47.9 |
| Ժոզեֆ Ուղուրլյան(ԱՄՆ, Նյու Յորք) | 1,262,901 | 11.9 | 1,262,901 | 11.9 |
| «Մուլտիկոնտինենտալ դիստրիբյուշն» ՍՊԸ (Մեծ Բրիտանիա, Այլ Օֆ Մեն IM 2AP) | 868,270 | 8.2 | 868,270 | 8.2 |
| «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ | 657,933 | 6.2 | 657,933 | 6.2 |
| «Մ.Էներգոինվեստ» ՓԲԸ (ԼՂՀ, Ստեփանակերտ) | 1,274,057 | 12.0 | 1,274,057 | 12.0 |
| Այլ (5%-ից ցածր) | 1,486,839 | 13.8 | 1,486,839 | 13.8 |
| | 10,650,000 | 100 | 10,650,000 | 100 |

### 11.2 Էմիսիոն եկամուտ

Էմիսիոն եկամուտը ներկայացնում է բաժնետոմսերի տեղաբաշխման գնի և անվանական արժեքի տարբերությունը:

| Հազար դրամ | 2016թ. | 2015թ. |
|---|---|---|

| | | |
|---|---|---|
| Տարեսկզբի մնացորդ | 457,127 | 457,127 |
| Բաժնետոմսերի թողարկում` | | |
| *Բաժնետոմսերի թողարկման գումար* | - | - |
| *Կանոնադրական կապիտալ* | - | - |
| Բաժնետոմսերի տեղաբաշխման ուղղակի ծախսեր | - | - |
| Տարեվերջի մնացորդ | 457,127 | 457,127 |

## 11.3 Պահուստային կապիտալ

| Հազար դրամ | 2016թ. | 2015թ. |
|---|---|---|
| Տարեսկզբի մնացորդ | 208,069 | 172,029 |
| Մասհանումներ պահուստին | 41,662 | 36,040 |
| Տարեվերջի մնացորդ | 249,731 | 208,069 |

2016թ.-ին բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի որոշմամբ 2015թ.-ի զուտ շահույթի 5% չափով իրականացվել է մասհանում պահուստային կապիտալին` ընդամենը 41,662 հազար դրամ:

2015թ.-ին բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի որոշմամբ 2014թ.-ի զուտ շահույթի 5% չափով իրականացվել է մասհանում պահուստային կապիտալին` ընդամենը 36,040 հազար դրամ:

## 11.4 Շահաբաժիններ

2016թ.-ին բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի որոշմամբ 2015թ. ֆինանսական արդյունքներով Ընկերության բաժնետերերին վճարվել է ընդամենը 852,000 հազար դրամ շահաբաժին` մեկ բաժնետոմսին 80 դրամ հաշվարկով:

2015թ.-ին բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի որոշմամբ 2014թ. ֆինանսական արդյունքներով Ընկերության բաժնետերերին վճարվել է ընդամենը 532,500հազար դրամ շահաբաժին` մեկ բաժնետոմսին 50 դրամ հաշվարկով:

## 11.5 Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ

| | 2016թ. | 2015թ. |
|---|---|---|
| Տարվա զուտ շահույթ(հազ.դրամ) | 1,882,868 | 940,697 |
| Բաժնետոմսերի միջին կշռված քանակ (հատ) | 10,650,000 | 10,650,000 |
| Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ(դրամ) | 176,80 | 88.33 |

## 12 Վարկեր և փոխառություններ

| Հազար դրամ | Ընթացիկ | Ոչ ընթացիկ |
|---|---|---|

| | 2016թ. | 2015թ. | 2016թ. | 2015թ. |
|---|---|---|---|---|
| Բանկային վարկեր | 58,024 | 1,193,876 | 472,634 | - |
| Փոխառություններ | 463 | 112,523 | 512,200 | 416,167 |
| Պարտատոմսեր | 24,353 | 234,439 | 3,295,631 | 3,294,337 |
| | 82,840 | 1,540,838 | 4,280,465 | 3,710,504 |

Ընկերության վարկերը և փոխառությունները 31.12.2016թ. դրությամբ հետևյալն է.

| Վարկի աղբյուր | Տրման օր | Մարման օր | Արժ. | Մնացորդը առ 31.12.16 | | Գրավի առարկան | Գրավի ա արժեքը | Տոկոս |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Արժույթ | Հազ. դրամ | | | |
| ՃԲԸ Արմսվիսբանկ 12_0036-02 | 06.12.12 | 06.04.17 | EUR | 110,417 | 56,555 | Բյուջետային երաշխիք | 2 379 300 EUR | 12.0% |
| ՍՊԸԲԼԵՄՍ 044-11 | 16.05.11 | 15.05.18 | AMD | | 100,000 | Բյուջետային երաշխիք | 444 000 000 AMD | 16.0% |
| Ֆ/Ա Վ. Ավագյան | 28.12.15 | 28.12.18 | EUR | 1,000,000 | 512,200 | Բյուջետային երաշխիք | 2 660 000 EUR | 11.0% |
| ՃԲԸ Արմսվիսբանկ 16-0220 | 26.10.16 | 26.10`.22 | USD | 770,000 | 372,634 | 1 200 000 բաժնետոմս | 1 200 000 000 AMD | 12.0% |
| Ընդամենը | | | | | 1,041,389 | | | |
| Երկարաժամկետ պարտատոմսեր | 07.12.15 | 07.12.18 | USD | 6,810,000 | 3,295,631 | | | 11.0% |
| | | | | | 4,337,021 | | | |

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չվճարված տոկոսների մնացորդը կազմում է 26,285հազար դրամ:

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չվճարված տոկոսների մնացորդը կազմում է 24,827հազար դրամ:

## Վարկեր և փոխառություններ

Վարկերը և փոխառությունները ապահովված են ԼՂՀ կառավարության կողմից տրամադրված երաշխիքներով, այսինքն ընկերությունը չունի որևէ գրավադրված ակտիվներ:

2016թ. տոկոսային ծախսը կազմել է 561,427հազար դրամ, որից կապիտալացվել է 74,040 հազար դրամ, իսկ ընթացիկ ծախսեր՝ 487,387 հազար դրամ:

2015թ.տոկոսային ծախսը կազմել է 462,978հազար դրամ, որից կապիտալացվել է 31,982հազար դրամ, իսկ ընթացիկ ծախսեր՝ 430,996 հազար դրամ:

## Պարտատոմսեր

Ընկերությունը 2012թ. դեկտեմբերի 5-ին թողարկել է 600 (վեց հարյուր) հատ հասարակ անվանական ոչ փաստաթղթային պարտատոմսեր, 10,000 (տաս հազար) ԱՄՆ դոլար անվանական արժեքով, ընդհանուր 6,000,000 ԱՄՆ դոլար: 2012թ. ընթացքում տեղաբաշխվել է 3,510,000 ԱՄՆ դոլարը, իսկ մնացած 2,490,000 ԱՄՆ դոլարը 2013թ. հունվար ամսին: Պարտատոմսերն ամբողջությամբ տեղաբաշխվել է կապակցված կողմերին:

Պարտատոմսերի եկամտաբերությունը սահմանված է 10% տարեկան, որոնք վճարվում են կիսամյակային պարբերականությամբ: Տեղաբաշխման ձևը՝ չերաշխավորված է:

Ընկերությունը համաձայն 2015թ. դեկտեմբերի 07-ի թիվ 6-2015/01 որոշման թողարկել է 80,000 (ութսուն հազար) հատ հասարակ անվանական ոչ փաստաթղթային պարտատոմսեր, 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար անվանական արժեքով, ընդհանուր 8,000,000 ԱՄՆ դոլար, որոնց համար տեղաբաշխման վերջնաժամկետ է սահմանվել մինչև 2015թ. դեկտեմբերի 30-ը: 2015թ. ընթացքում տեղաբաշխվել է 68,100 հատ հասարակ անվանական ոչ փաստաթղթային պարտատոմս 6,810,000 ԱՄՆ դոլար արժեքով:

Պարտատոմսերի եկամտաբերությունը սահմանված է 11% տարեկան, որոնք վճարվում են կիսամյակային պարբերականությամբ: Տեղաբաշխման ձևը՝ չերաշխավորված է:

Վարկերի և փոխառությունների միջին տարեկան տոկոսադրույքն ըստ արժույթների հաշվետու տարում հետևյալն են՝

| | | 2016թ. | 2015թ. |
|---|---|---|---|
| Միջին տոկոս | ԱՄՆ դոլար | 11.1 % | 10.5 % |
| | Եվրո | 11.1% | 12.00% |
| | ՀՀ դրամ | 16 % | 16.5 % |
| | | 11.2 % | 13.0% |

## 13 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

| Հազար դրամ | 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Առևտրային կրեդիտորական պարտքեր | 11,808 | 18,061 |
| Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով | 928 | 760 |
| Աշխատավարձի գծով պարտք | 27,029 | 26,039 |
| Արձակուրդի պահուստ | 15,742 | 34,719 |
| Կրեդիտորական պարտքեր բաժնետերերին | 102,849 | 65,474 |
| Այլ կրեդիտորներ | 346 | 755 |
| | 158,702 | 145,808 |

Ապրանքների ձեռքբերման գծով առաջացած պարտավորությունների մարման միջին տևողությունը կազմում է 5 օր (2015թ.՝ 8 օր): Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Ընկերությունն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություն, որն ապահովում է բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

## 14 Հասույթ

| Հազար դրամ | 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված | 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված |
|---|---|---|

| | տարի | տարի |
|---|---|---|
| Արտադրված էլեկտրաէներգիայի իրացումից | | |
| Սարսանգ ՀԷԿ | 1,981,958 | 1,522,669 |
| Թրղե -1 ՀԷԿ | 250,192 | 173,214 |
| Թրղե -2 ՀԷԿ | 440,529 | 297,788 |
| Թրղե -3 ՀԷԿ | 338,709 | 59,589 |
| Մատաղիս-1 ՀԷԿ | 397,972 | 355,100 |
| Մատաղիս-2 ՀԷԿ | 234,751 | 204,637 |
| | 3,644,111 | 2,612,997 |

Ընկերության ծառայությունների իրացման սակագները սահմանվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հանրային ծառայությունների և Տնտեսական մրցակցության կարգավորող պետական հանձնաժողովի կողմից: Բնական ջրահոսքի վրա կառուցված առաքվող էլեկտրաէներգիայի 1 կվտժ-ի սակագինը 2015թ. և 2016թ. համար բոլոր հիդրոէլեկտրակայանների գծով սահմանվել է 19.0 (առանց ԱԱՀ):

## 15 Վաճառքի ինքնարժեք

| Հազար դրամ | 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Փոխհատուցում աշխատակիցներին և սոց. վճար | 294,421 | 291,859 |
| Մաշվածություն | 365,716 | 343,750 |
| Արտադրական օբյեկտների պահպանման ծախսեր | 56,850 | 57,852 |
| Նյութական ծախսեր | 22,170 | 30,401 |
| Նորոգման ծախսեր | 12,458 | 15,674 |
| Այլ ծախսեր | 31,392 | 27,418 |
| | 783,007 | 766,954 |

## 16 Վարչական ծախսեր

| Հազար դրամ | 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Փոխհատուցում աշխատակիցներին և սոց. վճար | 194,228 | 172,144 |
| Մաշվածություն և ամորտիզացիա | 21,123 | 26,208 |
| Գործուղման և ներկայացուցչական ծախսեր | 4,133 | 4,327 |
| Վարձակալական ծախսեր | 14,040 | 17,040 |
| Հեռահաղորդակցության | 3,438 | 2,899 |
| Կոմունալ և գրասենյակային ծախսեր | 13,953 | 15,319 |
| Չփոխհատուցվող ծախսեր | 29,802 | 28,507 |
| Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր | 4,300 | 4,514 |
| Այլ ծախսեր | 3,682 | 2,506 |
| | 288,699 | 273,464 |

## 17 Այլ ծախսեր

| Հազար դրամ | 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված | 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված |
|---|---|---|

| | տարի | տարի |
|---|---|---|
| Բաժնետոմսերին առնչվող ծախսեր | 6,151 | 7,362 |
| Ֆիզիկական անձ բաժնետերերին փոխհատուցում | 414 | 10,669 |
| Արտարժույթի փոխանակման ծախսեր | 471 | 3,494 |
| Տույժ և տուգանքներ | 1,563 | 4,766 |
| Անհատույց տրված միջոցներ | 37,442 | 44,792 |
| Օտարված հիմնական միջոցների ծախսեր | 639 | 58 |
| Հետազոտության ծախսեր | 146 | 35 |
| Այլ ծախսեր | 1,933 | 4,779 |
| | 48,759 | 75,955 |

## 18 Այլ ֆինանսական հոդվածներ

| Հազար դրամ | 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| *Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը* | | |
| Դրամական միջոցներ | 13,693 | (10,459) |
| Փոխառության տրամադրում | (16,880) | - |
| Ստացված վարկեր | 11,149 | (878) |
| | 7,962 | (11,337) |

## 19 Ֆինանսական եկամուտ/(ծախս) զուտ

| Հազար դրամ | 2016թդեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Վարկերի և փոխառությունների տոկոսի ծախս | (127,149) | (145,903) |
| Պարտատոմսերի տոկոսի ծախս | (360,238) | (285,093) |
| Պարտատոմսերի տեղաբաշխման և վարկերի սպասարկման վճար | (1,000) | - |
| Բանկային գործարքներից ծախս/(եկամուտ) | 126 | - |
| Տրված փոխառություններից եկամուտ | 37,131 | - |
| Ֆինանսական ծախս, զուտ | (451,130) | (430,996) |

## 20 Շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում)

| Հազար դրամ | 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Ընթացիկ հարկ | 212,301 | 117,976 |
| Հետաձգված հարկ (տես` ծանոթագրություն 5) | 1,898 | (339) |
| | 214,199 | 117,637 |

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

| Հազար դրամ | 2016թ. դեկտեմբերի | Արդյունա-վետ | 2015թ. դեկտեմբերի | Արդյունա-վետ |
|---|---|---|---|---|

| | 31-ին ավարտված տարի | հարկային դրույքաչափ (%) | 31-ին ավարտված տարի | հարկային դրույքաչափ (%) |
|---|---|---|---|---|
| Շահույթ մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ) | 2,097,067 | | 1,058,334 | |
| Շահութահարկ՝ 10% դրույք. (2015թ.՝10%) | 209,707 | 10.00 | 105,833 | 10.00 |
| Չնվազեցվող ծախսի ազդեցությունը | 4,492 | 0.21 | 11,804 | 1.12 |
| Շահութահարկի գծով փոխհատուցում | 214,199 | 10.21 | 117,637 | 11.12 |

## 21 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

### 21.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Ընկերությունն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները, որպես կանոն, չեն համապատասխանում իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

*Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները*

Ընկերության ղեկավարությունը գնահատել է հիմնական միջոցների օգտակարության ժամկետները 20-60 տարի շենքերի, շինությունների,25-50 տարի փոխանցող հարմարանքների, 5-60 տարի մեքենաների, սարքավորումների, 5 տարի այլ հիմնական միջոցների և 1 տարի համակարգչային տեխնիկայի համար: Ընկերության ղեկավարությունը հավատացած է, որ այդ ակտիվների գնահատված օգտակարության ժամկետները էականորեն չեն տարբերվում սպասվելիք տնտեսական ժամկետներից: Եթե այս գնահատումները փոխվեն ապա Ընկերության ֆինանսական հաշվետվությունները էականորեն կտարբերվեն:

*Հետաձգված հարկի գնահատում*

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 5-ում 1,574 հազար դրամի հետաձգված հարկեր են ճանաչվել: Հետաձգված հարկային ակտիվներն ավելանում են արձակուրդի պահուստից: Ընկերության ղեկավարությունը հավատացած է, որ Ընկերությունը ապագայում կունենա բավարար հարկվող շահույթ, որպեսզի փոխհատուցի հետաձգված հարկային ակտիվները: Եթե Ընկերությունը ապագայում չկարողանա ստանալ հարկվող շահույթ, ապա հետաձգված հարկային ակտիվները չեն փոխհատուցվի:

## 22 Ֆինանսական գործիքներ

### 22.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի, ֆինանսական պարտավորության և բաժնային գործիքի յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.6-ում:

## 22.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

*Ֆինանսական ակտիվներ*

| Հազար դրամ | 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| *Դեբիտորական պարտքեր* | | |
| Առևտրային դեբիտորական պարտքեր | 631,702 | 1,052,968 |
| Տրված փոխառություններ | 733,940 | - |
| Մնացորդներ դրամարկղում և բանկերում | 72,454 | 535,306 |
| | 1,438,096 | 1,588,274 |

*Ֆինանսական պարտավորություններ*

| Հազար դրամ | 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ | | |
| Վարկեր և փոխառություններ, պարտատոմսեր | 4,363,305 | 5,251,342 |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 157,744 | 145,047 |
| | 4,521,049 | 5,396,389 |

Տես՝ ծանոթագրություն 3.6 յուրաքանչյուր ֆինանսական գործիքի կատեգորիայի գծով հաշվապահական հաշվառման քաղաքականության նկարագրության համար:

## 23 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Ընկերությունը ենթարկվում է զանազան ռիսկերի:Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Ընկերությունը չի ներգրավված սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքուվաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Ընկերությունը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

### 23.1 Ֆինանսական ռիսկի գործոններ

*ա) Շուկայական ռիսկ*

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Ընկերությունը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի և որոշակի այլ գնային ռիսկերի, որոնք բխում են ինչպես գործառնական, այնպես էլ ներդրումային գործունեությունից:

*բ) Արտարժութային ռիսկ*

Ընկերությունը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Ընկերության գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Ընկերության՝ արտերկրյա ձեռքբերումներից, որոնք, ի սկզբանե, արտահայտված են ԱՄՆ դոլարով և եվրոյով:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Ընկերությանը ենթարկում են արտարժութային ռիսկի, նկարագրված են ստորև: Արտացոլված գումարները իրենցից ներկայացնում են հիմնական ղեկավար անձնակազմին տրամադրված տվյալները, որոնք արտահայտված են հայկական դրամով՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի ամսաթվի փոխարժեքով.

| Հոդված<br>2016թ. | Հայկական դրամ | ԱՄՆ դոլար | Եվրո |
|---|---|---|---|
| *Ֆինանսական ակտիվներ* | | | |
| Առևտրային դեբիտորական պարտքեր | 631,702 | - | - |
| Տրված փոխառություններ | 250,000 | 483,940 | - |
| Մնացորդներ դրամարկղում և բանկերում | 72,410 | 21 | 23 |
| | 954,112 | 483,961 | 23 |
| *Ֆինանսական պարտավորություններ* | | | |
| Վարկեր և փոխառություններ | 126,285 | 3,668,265 | 568,755 |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 157,744 | - | - |
| | 284,029 | 3,668,265 | 568,755 |
| Զուտ արդյունք | 670,083 | (3,184,304) | (568,732) |

| Հոդված<br>2015թ. | Հայկական դրամ | ԱՄՆ դոլար | Եվրո |
|---|---|---|---|
| *Ֆինանսական ակտիվներ* | | | |
| Առևտրային դեբիտորական պարտքեր | 1,052,968 | - | - |
| Տրված փոխառություններ | - | - | - |
| Մնացորդներ դրամարկղում և բանկերում | 6,538 | 55 | 528,713 |
| | 1,059,506 | 55 | 528,713 |
| *Ֆինանսական պարտավորություններ* | | | |
| Վարկեր և փոխառություններ | 1,204,826 | 3,294,338 | 752,178 |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 145,047 | - | - |
| | 1,349,873 | 3,294,338 | 752,178 |
| Զուտ արդյունք | (290,367) | (3,294,283) | (223,465) |

Ընկերությունը հիմնականում ենթարկվում է ԱՄՆ դոլարի և եվրոի փոխարժեքի ազդեցությանը: Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Ընկերության զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի և եվրոի նկատմամբ դրամի 10% (2015թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2015թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2015թ.՝ 10%): Զգայունության վերլուծությունը ներառում է կապակցված և ոչ կապակցված կողմերից վարկերը և փոխառությունները: Բացասական ցուցանիշը նվազում է վկայում համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում և սեփական կապիտալում, երբ դրամն արժեզրկվում է համապատասխան արժույթի նկատմամբ:

| Հազար դրամ | ԱՄՆ դոլարի ազդեցություն | | Եվրոյի ազդեցություն | |
|---|---|---|---|---|
| | 2016թ. | 2015թ. | 2016թ. | 2015թ. |
| Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն | (318,430) | (329,428) | (56,873) | (22,347) |

*գ) Տոկոսադրույքային ռիսկ*

Ընկերությունը ենթարկվում է տոկոսադրույքային ռիսկի, քանի որ ունի հաստատուն տոկոսադրույքներով փոխառու միջոցներ: Ընկերությունն այս ռիսկը կառավարում է՝ ապահովելով համապատասխան չափի հաստատուն տոկոսադրույքով փոխառու միջոցներ:

*դ) Պարտքային ռիսկ*

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը ֆինանսական կորուստներ կարող է կրել:

Հաշվետու ամսաթվի դրությամբ նշանակալի պարտքային ռիսկի կենտրոնացում առկա չէ: Առավելագույն պարտքային ռիսկը ներկայացված է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ յուրաքանչյուր ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքով:

*ե) Իրացվելիության ռիսկ*

Ընկերությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ պահելով բավարար դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, ինչպես նաև բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ ժամանակին գործառնական պարտավորությունները մարելու նպատակով:

## 24 Իրական արժեքի չափում

Ղեկավարության համոզմամբ՝ ֆինանսական հաշվետվություններում ամորտիզացված արժեքով ճանաչված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները գրեթե հավասար են դրանց իրական արժեքին:

## 25 Կապիտալի ռիսկի կառավարում

Ընկերություննիր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունն առավելագույնին հասցնելով բաժնետերերի եկամուտները՝ փոխառու և կապիտալ միջոցների օպտիմալ համապատասխանություն ապահովելու միջոցով:

Ընկերության կապիտալը կազմված է սեփական կապիտալից, որը ներառում է թողարկված կապիտալը, կուտակված շահույթը, ինչպես նաև փոխառու միջոցները, որոնք ներառում են փոխառությունները՝ բացահայտված ծանոթագրություն 11- ում:

Ընկերության ղեկավարությունը պարբերաբար վերանայում է կապիտալի կառուցվածքը, որպեսզի ապահովի փոխառու միջոցների և սեփական կապիտալի մնացորդների առավելագույն օպտիմալ համապատասխանություն, որը վերլուծվում է՝ հաշվառելով ընդհանուր կապիտալը բաժանած ընդհանուր ֆինանսավորման վրա: Հաշվարկը ներկայացվում է ստորև.

| Հազար դրամ | 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Ընդհանուր սեփական կապիտալ | 13,866,318 | 12,835,450 |
| Հանած՝ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | (72,454) | (535,306) |
| Կապիտալ | 13,793,864 | 12,300,144 |
| Ընդհանուր սեփական կապիտալ | 13,866,318 | 12,835,450 |
| Վարկեր և փոխառություններ | 4,363,305 | 5,251,342 |
| Ընդհանուր ֆինանսավորում | 18,229,623 | 18,086,792 |
| Կապիտալի և ընդհանուր ֆինանսավորման հարաբերակցություն | 0.76 | 0.68 |

## *Ստորև ներկայացվում է հիմնական գործակիցների համեմատականը*

| | | 2016 | 2015 | 2016 | 2015 | |
|---|---|---|---|---|---|---|
| *Կարճաժամկետ իրացվելիություն* | | | | | | |
| Ընթացիկ իրացվելիության գործակից | Ընթացիկ ակտիվներ | 1,899,131 | 1,238,175 | | | |
| | Ընթացիկ պարտավորություններ | 1,686,646 | 1,619,296 | 1.13 | 0.76 | 32.1% |
| Արագ իրացվելիության գործակից | (Ընթացիկ ակտիվներ - պաշարներ) | 1,809,286 | 1,145,325 | | | |
| | Ընթացիկ պարտավորություններ | 1,686,646 | 1,619,296 | 1.07 | 0.71 | 34.1% |
| Դեբիտորական պարտքերի մարման միջին տևողություն | Դեբիտորական պարտքեր | 1,269,919 | 1,125,674 | | | |
| | (Կրեդիտով վաճառքներ/365 օր) | 7,159 | 7,659 | 177.39 | 146.98 | 17.1% |
| Պաշարների շրջանառելիության գործակից | Վաճառքի ինքնարժեք | (766,954) | (698,303) | | | |
| | Պաշարներ | 89,845 | 92,850 | -8.54 | -7.52 | 11.9% |
| *Ընթացիկ ակտիվների շարժը* | | | | | | |
| Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից | Կրեդիտով վաճառքներ | 2,612,997 | 2,795,361 | | | |
| | Դեբիտորական պարտքերի միջին տարեկան արժեք | 1,197,797 | 987,310 | 2.18 | 2.83 | -29.8% |
| Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողություն | 366 օր | 366 | 365 | | | |
| | Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից | 2.18 | 2.83 | 167.77 | 128.92 | 23.2% |
| Պաշարների շրջապտույտի միջին ժամկետ | 366 օր | 366 | 365 | | | |
| | Պաշարների շրջանառելիության գործակից | (8.54) | (7.52) | -42.88 | -48.53 | -13.2% |
| *Երկարաժամկետ վճարունակություն* | | | | | | |
| Ընդհանուր պարտավորությունների՝ սեփական կապիտալով ապահովվածության գործակից | Ընդհանուր պարտավորություններ | 5,397,150 | 4,908,547 | | | |
| | Սեփական կապիտալ | 12,835,450 | 12,427,253 | 0.42 | 0.39 | 6.1% |
| Երկարաժամկետ պարտավորությունների՝ սեփական կապիտալով ապահովվածության գործակից | Երկարաժամկետ պարտավորություններ | 3,710,504 | 3,289,251 | | | |
| | Սեփական կապիտալ | 12,835,450 | 12,427,253 | 0.29 | 0.26 | 8.4% |
| Հիմնական միջոցների՝ սեփական կապիտալով ապահովվածության գործակից | (Հիմնական միջոցներ - Կուտակված մաշվածություն) | 12,285,526 | 12,556,925 | | | |
| | Սեփական կապիտալ | 12,835,450 | 12,427,253 | 0.96 | 1.01 | -5.6% |
| Ծախսածածկման գործակից | Հասույթ նախքան հարկումը | 1,489,330 | 1,293,743 | | | |
| | Տոկոսային ծախս | (430,996) | (430,364) | -3.46 | -3.01 | 13.0% |
| Ընդհանուր պարտավորությունները հարաբերած ընդհանուր ակտիվներին | Ընդհանուր պարտավորություններ | 5,397,150 | 4,908,547 | | | |
| | Ընդհանուր ակտիվներ | 18,232,600 | 17,335,800 | 0.30 | 0.28 | 4.3% |
| *Կապիտալի շահութաբերություն* | | | | | | |
| Ընդհանուր ակտիվների շահութաբերության գործակից | (Զուտ շահույթ + տոկոսային ծախս) x (1- Հարկման դրույքաչափ) | 917,462 | 232,342 | | | |
| | Ընդհանուր ակտիվների միջին տարեկան արժեք | 17,784,200 | 16,933,878 | 0.05 | 0.01 | 73.4% |
| Սեփական կապիտալի | Զուտ շահույթ | 940,697 | 720,792 | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| շահութաբերության գործակից | Սեփական կապիտալի միջին տարեկան արժեք | 12,631,352 | 12,066,858 | 0.07 | 0.06 | 19.8% |
| *Գործառնական գործունեություն* | | | | | | |
| Համախառն մարժա | Համախառն շահույթ | 1,846,043 | 2,097,058 | | | |
| | Հասույթ | 2,612,997 | 2,795,361 | 0.71 | 0.75 | -6.2% |
| Գործառնական գործունեությունից հասույթը հարաբերած հասույթին | Գործառնական գործունեությունից հասույթ | 1,500,667 | 1,798,948 | | | |
| | Հասույթ | 2,612,997 | 2,795,361 | 0.57 | 0.64 | - 12.1% |
| Շահույթը նախքան հարկելը հարաբերած հասույթին | Շահույթ նախքան հարկելը | 1,058,334 | 863,379 | | | |
| | Հասույթ | 2,612,997 | 2,795,361 | 0.41 | 0.31 | 23.7% |
| Զուտ շահույթը հարաբերած հասույթին | Զուտ շահույթ | 940,697 | 720,792 | | | |
| | Հասույթ | 2,612,997 | 2,795,361 | 0.36 | 0.26 | 28.4% |

Ընկերության ղեկավարությունը պարբերաբար վերանայում է կապիտալի կառուցվածքը, որպեսզի ապահովի փոխառու միջոցների և սեփական կապիտալի մնացորդների առավելագույն օպտիմալ համապատասխանություն, որը վերլուծվում է՝ հաշվառելովֆինանսական լծակը (զուտ պարտավորությունը բաժանած ընդհանուր կապիտալի վրա) հետևյալ կերպ.

## 26 Պարտավորվածություններ

### 26.1 Գործառնական վարձակալության գծով պարտավորվածություններ

*Ընկերությունը որպես վարձակալ*

Ընկերությունը վարձակալել է գործառնական վարձակալությամբ 342.67 քառ. մ տարածք (տեղակայված ԼՂՀ, Ստեփանակերտ, Վ. Արզայանի 25ա հասցեով գտնվող 2, 3 հարկերը և ձեղնահարկը), մեկ տարի վարձակալության ժամկետով, որը տրվել է ֆիզիկական անձի կողմից, 2013թ. հունվարի 1-ին կնքված վարձակալության պայմանագրի համաձայն: Սահմանված է ամսական վարձավճար 1,160 հազ. դրամ: 2014թ. հունվարին Ընկերությունը երկարաձգել է վարձակալության պայմանագիրը մեկ տարի ժամկետով՝ վարձավճարը 1,170 հազ. դրամ:

## 27 Պայմանականություններ

### 27.1 Գործարար միջավայր

Հայաստանում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները շարունակական բնույթ են կրում: Որպես զարգացող շուկա՝ Հայաստանում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունումբացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացված գործարքներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ և կենտրոնացված տնտեսական հենքով, ինչպես նաև տարածաշրջանի տնտեսական ճգնաժամը:

Ընկերության վրա այս գործոնների հնարավոր հետևանքները կարող են ներառել վարկատուների հանդեպ անվճարունակությունը, խաթարված հեղինակությունը, վաճառքների, ինչպես նաև ֆինանսական միջոցների ձեռքբերման հետ կապված դժվարությունները և այլն: Բոլոր այս խնդիրները կարող են հանգեցնել Ընկերության իրացվելիության անկման և, հետևաբար, առաջացնել անընդհատության խնդիրներ: Բացի այդ, համաշխարհային տնտեսության աճի նվազման կանխատեսումներով պայմանավորված՝ Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հետ համագործակցող երկրների տնտեսությունների վիճակի վերաբերյալ դեռևս առկա են անորոշություններ, ինչը կարող է հանգեցնել արտերկրից դրամային փոխանցումների կրճատմանը, ինչպես նաև հանքահումքային ապրանքների միջազգային գների անկմանը, ինչից Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունների տնտեսությունները մեծ կախման մեջ են գտնվում: Շուկայական ավելի խիստ ճնշումը կարող է հանգեցնել Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունների տնտեսության, ինչպես նաև Ընկերության վիճակի վատթարացման: Այնուամենայնիվ, քանի դեռ այս անորոշություններում առկա տարակուսանքներն ու ենթադրությունները շատ են, Ղեկավարությունը չի կարող վստահաբար հաշվարկել, թե ինչ չափով դրանք կարող են ազդեցություն ունենալ Ընկերության ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վրա:

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում ճշգրտումների ազդեցությունը, եթե այդպիսիք կան, որոնք կարող էին անհրաժեշտ համարվել, եթե ներկա տարածաշրջանային ճգնաժամի ազդեցությունը Հայաստանում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություններում նկատելի և արժանահավատորեն գնահատելի լիներ:

## 27.2 Ապահովագրություն

Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություններում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Ընկերությունը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Ընկերության գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրինհասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորություններիապահովագրություն: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերությանգործունեության և ֆինանսական վիճակի վրա:

## 27.3 Հարկեր

Հայաստանիև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժերառաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային

օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

## 27.4 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Շրջակա միջավայրը, որտեղ Ընկերությունը գործում է, չի պահանջում, որպեսզի Ընկերությունը ներկայացնի շրջակա միջավայրի վրա իր ունեցած ազդեցության տարեկան հաշվետվություն կամ համանման զեկույց: Ղեկավարության համոզմամբ՝ Ընկերությունը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները և վստահ է, որ Ընկերությունը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխությունները ու օրենսդրության մեկնաբանությունները ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

## 28 Գործարքներ կապակցված կողմերի միջև

## 28.1 Վերահսկողություն

Ընկերությունը վերահսկվում է Ընկերության բաժնետերերի և տնօրենների խորհրդի կողմից:

## 28.2 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Ընկերության կապակցված կողմերն են.
ԼՂՀ ֆինանսների նախարարություն՝ Ընկերությունը տրամադրել է փոխառություններ. տես ծանոթագրություն 9:

«Արցախէներգո» ՓԲԸ-ն և ընկերությունը վերահսկվում է նույն բաժնետիրոջ կողմից (ԼՂՀ Կառավարություն)

Կազմակերպության գործարքներն կապակցված կողմերի հետ բացահայտված են ստորև.

| Հազար դրամ | Մնացորդ առ 2015թ. դեկտեմբերի 31 | Գործարքի արժեք 2016թ. | Մնացորդ առ 2016թ. դեկտեմբերի 31 |
|---|---|---|---|
| *Էլեկտրաէներգիայի վաճառք* | | | |
| «Արցախէներգո» ՓԲԸ | 1,051,622 | 4,372,933 | 628,658 |
| *Ձեռքբերումներ* | | | |
| «Արցախէներգո» ՓԲԸ | 3,765 | 30,058 | 4,129 |

| Հազար դրամ | Մնացորդ առ 2014թ. դեկտեմբերի 31 | Գործարքի արժեք 2015թ. | Մնացորդդառ 2015թ. դեկտեմբերի 31 |
|---|---|---|---|
| *Էլեկտրաէներգիայի վաճառք* | | | |
| «Արցախէներգո» ՓԲԸ | 1,101,114 | 3,135,596 | 1,051,622 |
| *Ձեռքբերումներ* | | | |
| «Արցախէներգո» ՓԲԸ | 9,274 | 25,773 | 3,765 |

## 28.3 Գործարքներ ղեկավարության հետ

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը,

| Հազար դրամ | 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Աշխատավարձ և պարգևատրումներ, ներառյալ սոցիալական ապահովագրության վճարներ | 35,172 | 34,288 |
| | 35,172 | 34,288 |

ASATRYANS
www.asatryans.com

Fintechaudit

# Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորական եզրակացություն

## «ԱՐՑԱԽ ՀԷԿ»

## Բաց Բաժնետիրական Ընկերություն

31 դեկտեմբերի 2015թ.

# Բովանդակություն

| | |
|---|---|
| | էջ |
| Տնօրենների խորհրդի կազմ և Ընկերության ղեկավար անձնակազմ | 3 |
| Անկախ աուդիտորական եզրակացություն | 4 |
| Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն | 6 |
| Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն | 7 |
| Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն | 8 |
| Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն | 9 |
| Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ | 10 |

## Տնօրենների խորհրդի կազմ

| | |
|---|---|
| Սպարտակ Թևոսյան | ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար- Խորհրդի նախագահ |
| Հայկ Բոյաջյան | «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ |
| Հայկ Բեգլարյան | |
| Րաֆֆի Բալյոզյան | |
| Արա Ղոնյան | |
| Վահրամ Բեգլարյան | «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ, գլխավոր տնօրեն |
| Կարեն Արաքյան | «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ, գլխավոր տնօրենի տեղակալ |

## Ընկերության ղեկավար անձնակազմ

| | |
|---|---|
| Վահրամ Բեգլարյան | Գլխավոր տնօրեն |
| Կարեն Արաքյան | Գլխավոր տնօրենի տեղակալ |
| Արմեն Գասպարյան | Տեխնիկական տնօրեն |
| Ժան Հովհաննիսյան | Ֆինանսական տնօրեն |
| Արայիկ Դավթյան | Գլխավոր հաշվապահ |

Տնօրենների խորհրդի կազմը և Ընկերության ղեկավար անձնակազմը ներկայացված է 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Fintechaudit

«ՖԻՆՏԵԽ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ

Պռոշյան 2/1, Երևան 0019, Հայաստանի Հանրապետություն
իրավ. հասցե՝ Գր. Արծրունու 78/3 շ, բն. 47
2/1 Proshyan str., Yerevan 0019, Republic of Armenia
Legal address: 47 apt. Gr. Artsruni str., 78/3

Լիցենզիա/License N ԱԾ/ATS 072
Հեռ/Tel: (374 10) 229 238
Ֆաքս/Fax: (374 10) 229278
www.fintechaudit.am / info@fintechaudit.am

# Անկախ աուդիտորական եզրակացություն

## «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ -ի բաժնետերերին,

Մեր կողմից իրականացվել է «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ (Ընկերություն) կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

### *Ֆինանսական հաշվետվությունների համար տնօրինության պատասխանատվություն*

Ընկերության տնօրինությունը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունները Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան կազմելու և ճշմարիտ ներկայացնելու համար: Այս պատասխանատվությունը ներառում է՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգի սահմանում, կիրառում և պահպանում, հաշվապահական հաշվառման համապատասխան քաղաքականության ընտրություն և կիրառում, ինչպես նաև տվյալ հանգամանքներում ողջամիտ հաշվապահական գնահատումների կատարում:

### *Աուդիտորի պատասխանատվություն*

Մենք պատասխանատու ենք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք պահպանենք մասնագիտական վարքագծի կանոնները, աուդիտը պլանավորենք ու իրականացնենք այնպես, որպեսզի ձեռք բերենք ողջամիտ երաշխիքներ՝ ֆինանսական հաշվետվությունների՝ էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցներ ձեռք բերելու նպատակով ընթացակարգերի իրականացում:

Ընթացակարգերի ընտրությունը հիմնված է աուդիտորի դատողության վրա, ներառյալ խաբեության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի գնահատումը: Այս ռիսկերը գնահատելիս աուդիտորն ուսումնասիրում է Ընկերության ֆինանսական հաշվետվությունները կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգը՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր ընտրելու, բայց ոչ Ընկերության ներքին

Fintechaudit

«ՖԻՆՏԵԽ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ

Պռոշյան 2/1, Երևան 0019, Հայաստանի Հանրապետություն
իրավ. հասցե՝ Գր. Արծրունու 78/3 շ, բն. 47
2/1 Proshyan str., Yerevan 0019, Republic of Armenia
Legal address: 47 apt. Gr. Artsruni str., 78/3

Լիցենզիա/License N ԱԾ/ATS 072
Հեռ/Tel: (374 10) 229 238
Ֆաքս/Fax: (374 10) 229 278
www.fintechaudit.am / info@fintechaudit.am

վերահսկողության համակարգի արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտը ներառում է կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության, տնօրինության կողմից կատարած հաշվապահական գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատում:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

### *Կարծիք*

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս են «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի՝ 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

03 փետրվարի 2016թ.

Անիկ Մարտիրոսյան

Տնօրեն/Բաժնետեր -Աուդիտի ղեկավար

# Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

| Հազար դրամ | Ծանոթ. | 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|---|
| **Ակտիվներ** | | | |
| *Ոչ ընթացիկ ակտիվներ* | | | |
| Հիմնական միջոցներ | 4 | 16,162,979 | 16,077,615 |
| Ոչ նյութական ակտիվներ | | 18 | 308 |
| Հետաձգված հարկեր | 5 | 3,472 | 3,133 |
| Տրված կանխավճարներ | 6 | 167,000 | 16,569 |
| | | 16,333,469 | 16,097,625 |
| *Ընթացիկ ակտիվներ* | | | |
| Պաշարներ | 7 | 89,845 | 92,850 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 8 | 1,269,919 | 1,125,674 |
| Շահութահարկի գծով գերավճար | | 4,061 | - |
| Դրամական միջոցներ | 9 | 535,306 | 19,651 |
| | | 1,899,131 | 1,238,175 |
| Ընդամենը ակտիվներ | | 18,232,600 | 17,335,800 |
| **Սեփական կապիտալ և պարտավորություններ** | | | |
| *Կապիտալ և պահուստներ* | | | |
| Կանոնադրական կապիտալ | 10 | 10,650,000 | 10,650,000 |
| Էմիսիոն եկամուտ | 10 | 457,127 | 457,127 |
| Պահուստային կապիտալ | 10 | 208,069 | 172,029 |
| Կուտակված շահույթ | | 1,520,254 | 1,148,097 |
| | | 12,835,450 | 12,427,253 |
| *Ոչ ընթացիկ պարտավորություններ* | | | |
| Վարկեր և փոխառություններ | 11 | 3,710,504 | 3,289,251 |
| | | 3,710,504 | 3,289,251 |
| *Ընթացիկ պարտավորություններ* | | | |
| Վարկեր և փոխառություններ | 11 | 1,540,838 | 1,237,305 |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 12 | 145,808 | 298,254 |
| Շահութահարկի պարտավորություն | | | 83,737 |
| | | 1,686,646 | 1,619,296 |
| Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ | | 18,232,600 | 17,335,800 |

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2016թ. փետրվարի 03-ին՝

Վահրամ Բեգլարյան — Արային Դավթյան

Գլխավոր տնօրեն — Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 34-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ

| | Ծանոթ. | 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|---|
| Իրացումից հասույթ | 13 | 2,612,997 | 2,795,361 |
| Վաճառքի ինքնարժեք | 14 | (766,954) | (698,303) |
| Համախառն շահույթ | | 1,846,043 | 2,097,058 |
| Այլ եկամուտներ | | 6,450 | 1,937 |
| Իրացման ծախսեր | | (2,407) | (2,555) |
| Վարչական ծախսեր | 15 | (273,464) | ( 255,827) |
| Այլ ծախսեր | 16 | (75,955) | (41,665) |
| Գործառնական գործունեությունից շահույթ | | 1,500,667 | 1,798,948 |
| Ֆինանսական ծախսեր | 17 | (430,996) | (430,364) |
| Այլ ֆինանսական հոդվածներ | 18 | (11,337) | (505,205) |
| Շահույթը մինչև հարկերը | | 1,058,334 | 863,379 |
| Շահութահարկի գծով ծախս | 19 | (117,637) | (142,587) |
| Զուտ շահույթ | | 940,697 | 720,792 |
| Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ | | | |
| *Հոդվածներ, որոնք հետագայում չեն վերադասակարգվի շահույթին կամ վնասին* | | - | - |
| *Հոդվածներ, որոնք հետագայում կվերադասակարգվեն շահույթին կամ վնասին* | | - | - |
| Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո | | - | - |
| Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ | | 940,697 | 720,792 |
| Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ | 10 | 88.33 դրամ | 67.68 դրամ |

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 34-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

| Հազար դրամ | Կանոնադրական կապիտալ | Էմիսիոն եկամուտ | Պահուստային կապիտալ | Կուտակված շահույթ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| 2014թ. հունվարի 1-դրությամբ | 10,650,000 | 457,127 | 140,874 | 458,460 | 11,706,461 |
| Տարվա շահույթ | - | - | - | 720,792 | 720,792 |
| Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ | - | - | - | 720,792 | 720,792 |
| Վերագրվել է պահուստային կապիտալին | - | - | 31,155 | (31,155) | - |
| 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 10,650,000 | 457,127 | 172,029 | 1,148,097 | 12,427,253 |
| Տարվա շահույթ | - | - | | 940,697 | 940,697 |
| Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ | - | - | - | 940,697 | 940,697 |
| Վերագրվել է պահուստային կապիտալին | - | - | 36,040 | (36,040) | - |
| Շահաբաժիններ | - | - | - | (532,500) | (532,500) |
| 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 10,650,000 | 457,127 | 208,069 | 1,520,254 | 12,835,450 |

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 34-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

| Հազար դրամ | 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր | | |
| Տարվա շահույթ | 940,697 | 720,792 |
| *Ճշգրտումներ՝* | | |
| Մաշվածություն | 361,422 | 333,053 |
| Հիմնական միջոցների օտարումից վնաս | 58 | 987 |
| Շահութահարկի գծով ծախս | 117,637 | 142,587 |
| Տոկոսային ծախս | 430,996 | 430,364 |
| Փոխարժեքային տարբերությունից վնաս | 11,337 | 505,205 |
| *Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները* | 1,862,147 | 2,132,988 |
| Պաշարների փոփոխություն | 3,005 | (27,677) |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն | (144,245) | (276,729) |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն | (152,446) | 218,260 |
| Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ | 1,568,461 | 2,046,842 |
| Վճարված տոկոսներ | (428,005) | (430,500) |
| Վճարված շահութահարկ | (205,774) | (98,695) |
| *Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ* | 934,682 | 1,517,647 |
| Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր | | |
| Հիմնական միջոցների ձեռքբերում | (446,554) | (942,850) |
| Կանխավճարների փոփոխություն | (150,431) | 115,955 |
| Փոխառության տրամադրում, զուտ | - | 2,000 |
| *Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ* | (596,985) | (824,895) |
| Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր | | |
| Վարկեր ստացում/մարում, զուտ | 720,917 | (683,893) |
| Շահաբաժնի վճարում | (532,500) | - |
| *Ֆինանսական գործունեությունից ստացված/ գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ* | 188,417 | (683,893) |
| Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ աճ | 526,114 | 8,859 |
| Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա | (10,459) | (1,645) |
| Մնացորդներ դրամարկղում և բանկերում տարվա սկզբում | 19,651 | 12,437 |
| Մնացորդներ դրամարկղում և բանկերում տարվա վերջում | 535,306 | 19,651 |

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 34-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

## 1 Գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է 2008թ. հունիսի 9-ին: Ընկերությունը հանդիսանում է «Արցախ ՀԷԿ» ՓԲԸ-ի իրավահաջորդը:

Ընկերության հիմնական բաժնետերն է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը՝ ԼՂՀ Կառավարությունը՝ հաշվետու ամսաթվի դրությամբ 47.9 տոկոս:

Ընկերությունն իրականացնում է էլեկտրական էներգիայի արտադրություն և արտադրված էլեկտրաէներգիայի իրացում: Էլեկտրաէներգիայի արտադրությունն իրականացվում է ԼՂՀ տարածքում կառուցված վեց հիդրոէլեկտրակայանների միջոցով, որոնց ընդհանուր հզորությունը կազմում է 70.9 Մեգավատտ.

- Սարսանգ ՀԷԿ,

- Թրղե 1 ՀԷԿ,
- Թրղե 2 ՀԷԿ,
- Թրղե 3 ՀԷԿ

- Մատաղիս 1 ՀԷԿ,
- Մատաղիս 2 ՀԷԿ:

Արտադրված էլեկտրաէներգիան իրացվում է ԼՂՀ տարածքում գործող միակ էլեկտրական բաշխիչ ցանցերը տնօրինող կազմակերպությանը:
Յուրաքանչյուր ՀԷԿ-ի շահագործման համար Ընկերությանը շնորհված լիցենզիայի ժամկետը 15 տարի է: Ընկերության ղեկավարությունը կարծում է, որ լիցենզիաների ժամկետները պարբերաբար կերկարաձգվեն՝ առանց ընդհատման:
Ընկերությունը ստացել է էլեկտրական էներգիա արտադրելու լիցենզիաներ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հանրային Ծառայությունները և Տնտեսական Մրցակցությունը Կարգավորող Պետական Հանձնաժողովի կողմից.

- «Սարսանգ» ՀԷԿ-ում էլեկտրական էներգիա արտադրելու համար Ընկերությանը շնորհվել է լիցենզիա 28.07.2008թ.-ին՝ 15 տարի ժամկետով:
- «Թրղե 1» փոքր ՀԷԿ-ում էլեկտրական էներգիա արտադրելու համար Ընկերությանը շնորհվել է լիցենզիա 11.06.2010թ.-ին՝ 15 տարի ժամկետով:
- «Թրղե 2» փոքր ՀԷԿ-ում էլեկտրական էներգիա արտադրելու համար Ընկերությանը շնորհվել է լիցենզիա 26.12.2011թ.-ին՝ 15 տարի ժամկետով:
- «Թրղե 3» փոքր ՀԷԿ-ում էլեկտրական էներգիա արտադրելու համար Ընկերությանը շնորհվել է լիցենզիա 24.07.2015թ.-ին՝ 15 տարի ժամկետով:
- «Մատաղիս 1» ՀԷԿ և «Մատաղիս 2» ՀԷԿ էլեկտրական էներգիա արտադրելու համար Ընկերությանը շնորհվել է լիցենզիա 17.07.2012թ.-ին՝ 15 տարի ժամկետով, որոնք շահագործման են հանձնվել 2012թ. սեպտեմբերից:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, ք. Ստեփանակերտ, Վ. Սարգսյանի 25ա:

2015թ. Ընկերության աշխատողների տարեկան միջին թիվը կազմել է 190 մարդ (2014թ.՝ 179 մարդ):

## 2 Պատրաստման հիմքերը

### 2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից:

### 2.2 Ճանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացվել են իրական արժեքով:

### 2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ ղեկավարության համոզմամբ այս արժույթն առավել օգտակար է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

### 2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ի համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 20-ում:

### 2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Ընկերությունն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2015թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

#### Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունում սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից: Ընկերության ֆինանսական հաշվետվությունների համար կիրառելի նոր ստանդարտների, փոփոխությունների և մեկնաբանությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ստորև: Որոշ այլ նոր

ստանդարտներ և մեկնաբանություններ թողարկվել են, սակայն չի ակնկալվում, որ դրանք Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա էական ազդեցություն կունենան:

### ՖՀՄՍ 9. «Ֆինանսական գործիքներ»

ՀՀՄՍԽ-ը վերջերս թողարկել է ՖՀՄՍ 9-ը *«Ֆինանսական գործիքներ»* (2014թ.)՝ ներկայացնելով իր ծրագրի ավարտը, ինչը պետք է փոխարինի ՀՀՄՍ 39-ին *«Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը»*: Նոր ստանդարտն ընդարձակ փոփոխություններ է ներկայացնում ՀՀՄՍ 39-ի ուղեցույցում ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման վերաբերյալ և ներկայացնում է ֆինանսական ակտիվների արժեզրկման նոր «կանխատեսվող վարկային կորուստներ» մոդելը: ՖՀՄՍ 9-ը նաև ապահովում է նոր ուղեցույց՝ հեջի հաշվառման կիրառման վերաբերյալ:

Ընկերության ղեկավարությունը դեռ պետք է գնահատի այս նոր ստանդարտի ազդեցությունը Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա: Նոր ստանդարտը պետք է կիրառվի 2018թ. հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

## 3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

### 3.1 Արտարժույթ

*Արտարժույթով գործարքներ*

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբերվող այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի («ՀՀ ԿԲ») կողմից հրապարակված՝ արտարժութային շուկաներում արտարժույթի նկատմամբ հայկական դրամի միջին փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվեփակման ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվեփակման ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքը: 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում է 483.75 դրամ (2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում է 474.97 ՀՀ դրամ), 1 եվրոն կազմում է 528.69 դրամ (2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 եվրոն կազմում է 577.47 ՀՀ դրամ): Իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն գործարքի օրվա դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքով: Այն ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են այլ համապարփակ եկամուտներում: Իրական արժեքով արտահայտված ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ներառվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

### 3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները: Այս ակտիվների մաշվածությունը հաշվարկվում է այնպես,

ինչպես որ նմանատիպ հիմնական միջոցների մաշվածությունը, երբ դրանք դառնում են պատրաստ իրենց նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրս գրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի ու ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Հիմնական միջոցի առանձին հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները, որոնք հաշվառվում են որպես առանձին ակտիվ, կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցիչի հաշվեկշռային արժեքի հետ միասին: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում` կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում` կիրառելով գծային մեթոդը, հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

| | |
|---|---|
| Շենքեր | 20-60 տարի, |
| Կառուցվածքներ | 20-60 տարի, |
| Փոխանցող հարմարանքներ | 25-60 տարի, |
| Մեքենաներ և սարքավորումներ | 5-60 տարի, |
| Տրանսպորտային միջոցներ | 5 տարի, |
| Արտադրական գույք, տնտեսական գույք, գործիքներ | 5 տարի, |
| Բազմամյա տնկիներ | 5 տարի, |
| Համակարգչային տեխնիկա | 1 տարի, |
| Այլ հիմնական միջոցներ | 5 տարի: |

### 3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով` հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում` կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է`

Հաշվապահական հաշվառման համակարգչային ծրագրեր - 5 տարի:

### 3.4 Վարձակալված ակտիվներ

Համաձայն ՖՀՄՍ 17 *«Վարձակալություն»* ստանդարտի, վարձակալությունը պայմանավորվածություն է, ըստ որի վարձատուն վարձակալին է փոխանցում ակտիվի օգտագործման իրավունքը նախապես պայմանավորված ժամկետի ընթացքում` վճարի, կամ մի շարք վճարումների դիմաց: Վարձակալությունը դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն, եթե այն չի հանդիսանում ֆինանսական վարձակալություն: Վարձակալությունը հանդիսանում է ֆինանսական, եթե Ընկերությանն են փոխանցվում ակտիվի սեփականության իրավունքի հետ կապված գրեթե բոլոր ռիսկերը և օգուտները: Ընկերության վարձակալությունները

չեն բավարարում ֆինանսական վարձակալության սահմանմանը, ուստի  դիտվում են որպես գործառնական վարձակալություններ: Գործառնական վարձակալության գծով վճարները գծային հիմունքով ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կամ ներառվում են այլ ակտիվի ինքնարժեքում: Վարձակալության հետ կապված ծախսերը, ինչպիսիք են պահպանման և ապահովագրության ծախսերը, ճանաչվում են իրականացման պահին:

## 3.5 Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝օգտագործելով միջին կշռված մեթոդը, և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

## 3.6 Ֆինանսական գործիքներ

### *Ճանաչում, սկզբնական չափում և ապաճանաչում*

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ երբ փոխանցվում են ֆինանսական ակտիվները, բոլոր նշանակալից ռիսկերն ու հատուցումները:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների, որոնք սկզբնապես դասակարգվում են որպես ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հետագա չափումը ներկայացված է ստորև:

### *Ֆինանսական ակտիվների դասակարգումը  և հետագա չափումը*

Հետագա չափումն իրականացնելու համար ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների, բաժանվում են հետևյալ կատեգորիաների՝

- դեբիտորական պարտքեր,
- ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ:

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր կատեգորիաների՝ կախված գործիքի բնույթից և նպատակից: Ֆինանսական գործիքի կատեգորիան համապատասխանում է այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը և որը ցույց է տալիս, թե իրական արժեքի փոփոխության արդյունքում ստացվող օգուտներն ու վնասները պետք է ճանաչվեն համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, թե ուղղակիորեն սեփական կապիտալում: Ընկերության ֆինանսական ակտիվներն ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 21.2-ում:

Ընկերության բոլոր ֆինանսական ակտիվները ճանաչվում են՝ օգտագործելով մարման ամսաթվի հաշվառումը: Ֆինանսական ակտիվի արժեզրկման գնահատումն իրականացվում է առնվազն

յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ: Ֆինանսական ակտիվների հետ կապված բոլոր ծախսերը և եկամուտները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ համապատասխանաբար «ֆինանսական ծախս» և «ֆինանսական եկամուտ» հոդվածներում:

I. Դեբիտորական պարտքեր

Դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնք գնանշվող չեն ակտիվ շուկայում:

Ընթացիկ դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկման պահուստը:

Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ ծախսի կամ եկամտի ճանաչման միջոցով: Հաճախորդի հաշվի մնացորդից դուրս գրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից: Բոլոր դեբիտորական պարտքերը, որոնց հավաքագրումը գնահատվում է անհավանական, դուրս են գրվում:

II. Դրամական միջոցներ

Դրամական միջոցները ներառում են կանխիկ միջոցներ, բանկային հաշիվների մնացորդներ և դրամական միջոցներ ճանապարհին, որոնք ներկայացված են ֆինանսական ակտիվների «վարկեր և դեբիտորական պարտքեր» կատեգորիայում:

*Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և հետագա չափումը*

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են փոխառությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը՝ ներառյալ ֆինանսական վարձակալության գծով պարտավորությունները, որոնք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ընկերության ֆինանսական պարտավորություններն ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 21.2-ում:

I. Վարկեր և փոխառություններ

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

II. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

## 3.7 Արժեզրկում

*Հիմնական միջոցների արժեզրկում*

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվները վերանայվում են արժեզրկման համար, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները

վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը իրացման զուտ արժեքից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է դրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև դրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

*Ֆինանսական ակտիվների արժեզրկում*

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում են արժեզրկման հայտանիշի առկայության համար: Ֆինանսական ակտիվներն արժեզրկված են, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձություններ ազդել են ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստը հաշվառվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությամբ: Բոլոր ֆինանսական ակտիվների համար արժեզրկումից կորուստն ուղղակիորեն նվազեցվում է ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքից, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնց հաշվեկշռային արժեքը նվազեցվում է կասկածելի պարտքի պահուստի միջոցով:

Բացառությամբ վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի գործիքների, եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկման կորուստը նվազում է և նվազումը օբյեկտիվորեն կարելի է վերագրել արժեքի իջեցումից հետո տեղի ունեցած դեպքերին, ապա նախկինում ճանաչված արժեզրկման կորուստը հակադարձվում է՝ ճանաչվելով համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն չափով, որ հակադարձումը չհանգեցնի ֆինանսական ակտիվի այնպիսի հաշվեկշռային արժեքի, որը գերազանցի այն ամորտիզացված արժեքը, որը կլիներ, եթե այդ ֆինանսական ակտիվի արժեքի իջեցման հակադարձման ամսաթվի դրությամբ արժեզրկում ճանաչված չլիներ:

## 3.8 Աշխատակիցների հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են, օրինակ, վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները) և պարգևավճարները:

Երբ աշխատակիցը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությանը մատուցել է ծառայություն, աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայության դիմաց, ճանաչվում է՝

ա) որպես պարտավորություն՝ արդեն վճարված գումարները հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Ընկերությունը այդ տարբերությունը ճանաչում է որպես ակտիվ՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,

բ) որպես ծախս, եթե այն չի ներառվում մեկ ուրիշ ակտիվի հաշվեկշռային արժեքի մեջ:

## 3.9 Սեփական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով: Տեղաբաշխված բաժնետոմսերի վաճառքի գնի և անվանական արժեքի տարբերությունը ներկայացվում է որպես էմիսիոն եկամուտ:

Սովորական բաժնետոմսերին անմիջականորեն վերագրվող ծախսերը ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում:

Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

Ընկերությունը ստեղծում է պահուստային կապիտալ՝ Ընկերության կորուստները ծածկելու, ինչպես նաև Ընկերության պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Ընկերության շահույթը և այլ միջոցները դրա համար չեն բավարարում:

Ընկերությունը մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթը հաշվարկում է տարվա զուտ շահույթը բաժանելով տարվա ընթացքում շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին թվին:

Տարվա ընթացքում շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին թիվը իրենից ներկայացնում է տարեսկզբում շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի թիվը՝ ճշգրտված այդ ժամանակաշրջանի ընթացքում հետ գնված կամ թողարկված սովորական բաժնետոմսերի թվով՝ բազմապատկած ժամանակային կշռող գործակցով: Ժամանակային կշռող գործակիցը բաժնետոմսերի շրջանառության մեջ գտնվելու օրերի թիվն է՝ բաժանած հաշվետու ժամանակաշրջանի օրերի թվի վրա, կշռված միջինի խելամիտ մոտեցումը շատ դեպքերում տեղին է:

## 3.10 Պահուստներ

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Ընկերությունն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի զեղչման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

## 3.11 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ, ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում,

որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գուդվիլի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ` հարկվող շահույթի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Ընկերությունը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

## 3.12 Սեգմենտային հաշվետվություններ

Ընկերության գործունեությունը ներառում է էլեկտրաէներգիայի վաճառքի և հզորության իրացման մատուցվող ծառայությունները: Ընկերությունն ունի մեկ գործառնական սեգմենտ: Համաձայն ՖՀՄՍ 8-ի` Ընկերության կողմից կիրառվող սեգմենտային հաշվետվությունների համար չափման քաղաքականությունը նույնն է, ինչ որ ֆինանսական հաշվետվությունների համար կիրառվող քաղաքականությունը, որը ներառված չէ գործառնական սեգմենտների գործառնական շահույթի գումարը որոշելիս: Ի լրումն` Ընկերության այն ակտիվները, որոնք ուղղակիորեն չեն առնչվում գործառնական սեգմենտի բիզնես գործունեությանը, սեգմենտին չեն բաշխվում: Սեգմենտային տեղեկատվությունը ներկայացված է կից ծանոթագրություններում:

## 3.13 Հասույթի ճանաչում

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով` հաշվի առնելով Ընկերության կողմից տրամադրված ցանկացած առևտրական զեղչերը և իջեցումների գումարները:

Ընկերության հասույթը ներկայացնում է էլեկտրաէներգիայի վաճառքից և հզորության իրացման ստացվելիք փոխհատուցումը:

Ընկերության կողմից հասույթը ճանաչվում է, երբ ծառայությունները մատուցվում են գնորդին, երբ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները և ծախսերը հնարավոր է արժանահավատորեն չափել և հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն:

## 4 Հիմնական միջոցներ

| | Շենքեր / շինություններ և հող | Կառուց-վածքներ, փոխանցող հարմարանքներ | Մեքենա սարքա-վորումներ, տրասպոր տային միջոցներ | Արտադրական և տնտե սական գույք, | Անավարտ ոչ ընթացիկ ակտիվներ | Այլ ՀՄ-ներ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|
| *Սկզբնական արժեք* | | | | | | | |
| 2014. հունվարի 1-ի դրությամբ | 6,176,318 | 3,648,525 | 7,684,060 | 28,838 | 1,114,114 | 6,542 | 18,658,397 |
| Ավելացում | 3,626 | 32,450 | 81,968 | 2,353 | 821,850 | 295 | 942,542 |
| Օտարում | - | - | (1,468) | (780) | - | (386) | (2,634) |
| 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 6,179,944 | 3,680,975 | 7,764,560 | 30,411 | 1,935,964 | 6,451 | 19,598,305 |
| Ավելացում | 3,688 | 266,890 | 110,653 | 870 | 63,222 | 1,231 | 446,554 |
| Օտարում | - | - | (3,865) | (377) | - | (185) | (4,427) |
| Վերադասակարգում | 180,579 | 355,062 | 1,371,969 | - | (1,907,610) | - | - |
| 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 6,364,211 | 4,302,927 | 9,243,317 | 30,904 | 91,576 | 7,497 | 20,040,432 |
| *Կուտակված մաշվածություն* | | | | | | | |
| 2014թ. հունվարի 1-ի դրությամբ | 1,334,332 | 123,028 | 1,708,435 | 17,032 | - | 6,457 | 3,189,284 |
| Տարվա ծախս | 100,926 | 79,035 | 149,326 | 3,510 | - | 256 | 333,053 |
| Օտարումից դուրս գրում | - | - | (753) | (557) | - | (337) | (1,647) |
| 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 1,435,258 | 202,063 | 1,857,008 | 19,985 | - | 6,376 | 3,520,690 |
| Տարվա ծախս | 104,713 | 85,945 | 166,663 | 3,287 | - | 524 | 361,132 |
| Օտարումից դուրս գրում | - | - | (3,865) | (319) | - | (185) | (4,369) |
| 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 1,539,971 | 288,008 | 2,019,806 | 22,953 | - | 6,715 | 3,877,453 |
| *Հաշվեկշռային արժեք* | | | | | | | |
| 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 4,744,686 | 3,478,912 | 5,907,552 | 10,426 | 1,935,964 | 75 | 16,077,615 |
| 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 4,824,240 | 4,014,919 | 7,223,511 | 7,951 | 91,576 | 782 | 16,162,979 |

2015թ. դեկտեմբերի 31-ի և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը գրավադրված հիմնական միջոցներ չունի:

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 114,822 հազ. դրամ (2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 78,054 հազ. դրամ) սկզբնական արժեքով հիմնական միջոցներ հաշվառվում են զրոյական հաշվեկշռային արժեքով:

2015թ. և 2014թ. մաշվածության ծախսը բաշխվել է հետևյալ կերպ`

| Հազար դրամ | 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Վաճառքի ինքնարժեք | 343,469 | 314,533 |
| Վարչական ծախսեր | 17,663 | 18,520 |
| | 361,132 | 333,053 |

2015թ.-ին հիմնական միջոցների ավելացումները բաղկացած են.

| Ավելացման բնույթը | Գումար հազ.դրամ |
|---|---|
| 1. Թրղե ՓՀԷԿ-երի շին մոնտաժային աշխատանքներ | 255,791 |
| 2. Սարքավորումների և այլ հիմնական միջոցների ձեռքբերում | 158,781 |
| 3. Կապիտալացվող փոխառության և վարկի ծախսումներ | 31,982 |
| **Ընդամենը** | 446,554 |

2014թ.-ին հիմնական միջոցների ավելացումները բաղկացած են.

| Ավելացման բնույթը | Գումար հազ.դրամ |
|---|---|
| 1. Թրղե-3 ՓՀԷԿ շին մոնտաժային աշխատանքներ | 376,303 |
| 2. Սարքավորումների և այլ հիմնական միջոցների ձեռքբերում | 481,028 |
| 3. Կապիտալացվող փոխառության և վարկի ծախսումներ | 85,211 |
| **Ընդամենը** | 942,542 |

## 5 Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկերի շարժը ներկայացված է ստորև.

| Հազար դրամ | 2015թ. | 2014թ. |
|---|---|---|
| Տարեսկզբի մնացորդ | 3,133 | 1,763 |
| Ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ճանաչված փոխհատուցում | 339 | 1,370 |
| Տարեվերջի մնացորդ | 3,472 | 3,133 |

2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

| Հազար դրամ | 2015թ. հունվարի 1 | Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված | 2015թ. դեկտեմբերի 31 |
|---|---|---|---|
| *Հետաձգված հարկային ակտիվներ* | | | |
| Արժանկուրդի պահուստ | 3,133 | 339 | 3,472 |
| | 3,133 | 339 | 3,472 |
| *Հետաձգված հարկային պարտավորություններ* | - | - | - |
| | - | - | - |
| Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ | 3,133 | 339 | 3,472 |

2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

| Հազար դրամ | 2014թ. հունվարի 1 | Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված | 2014թ. դեկտեմբերի 31 |
|---|---|---|---|
| *Հետաձգված հարկային ակտիվներ* | | | |
| Արժանկուրդի պահուստ | 1,763 | 1,370 | 3,133 |
| | 1,763 | 1,370 | 3,133 |
| *Հետաձգված հարկային պարտավորություններ* | | | |
| | - | - | - |
| Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ | 1,763 | 1,370 | 3,133 |

| Ներառյալ՝ | 2015թ. | 2014թ. |
|---|---|---|
| Փոխհատուցման ենթակա 12 ամսվա ընթացքում | 3,472 | 3,133 |
| Փոխհատուցման ենթակա մեկ տարուց ավելի | - | - |

## 6 Տրված կանխավճարներ

Ընկերությունը հիմնական միջոցներ ձեռք բերելու համար 2015թ. փոխանցել էր կանխավճար մատակարարներին՝ մասնավորապես, « Ջի Ար Փի Սիսթեմս » ՍՊԸ -ին 150,000 հազար դրամ 5.8 կմ խողովակ ձեռք բերելու համար և «Խորդա» ՍՊԸ-ին 13,000 հազար դրամ գեներատորներ ձեռք բերելու համար:

Ընկերությունը հիմնական միջոցներ ձեռք բերելու համար 2014թ. փոխանցել է կանխավճար մատակարարներին՝ մասնավորապես, «Ինտերարմ» ՓԲԸ-ին 8,104 հազար դրամ և «Պեգաս Լոջիք» ՍՊԸ-ին 4,465 հազար դրամ՝ սարքավորումներ ձեռք բերելու նպատակով: Վերընշված գործընկերներին տրված կանխավճարները 2015թ. մարվել են:

## 7 Պաշարներ

| Հազար դրամ | 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Նյութեր | 20,226 | 13,660 |
| Վառելիք | 8,699 | 15,462 |
| Պահեստամասեր | 55,434 | 61,221 |
| Այլ նյութեր | 5,486 | 2,507 |
| | 89,845 | 92,850 |

2015թ. դեկտեմբերի 31-ի և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չունի գրավադրված պաշարներ:

Տարվա ընթացքում ծախս ճանաչված պաշարների գումարը կազմում է 62,932 հազար դրամ (2014թ.՝ 62,893 հազար դրամ):

## 8 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

| Հազար դրամ | 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Առևտրային դեբիտորական պարտքեր | 1,051,622 | 1,101,114 |
| Տրված կանխավճարներ | 130,310 | 211 |
| Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով | 86.640 | 22,134 |
| Այլ դեբիտորական պարտքեր | 1,347 | 2,215 |
| | 1,269,919 | 1,125,674 |

Առևտրային դեբիտորական պարտքի միջին տևողությունը կազմում է 177 օր (2014թ.՝ 144օր): Առևտրային դեբիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Առևտրային դեբիտորական պարտքի հավաքագրելիությունը որոշելիս հաշվի է առնվում դեբիտորի պարտքի մարման ժամանակացույցի ցանկացած փոփոխություն՝ սկսած պարտքի առաջացման պահից մինչև հաշվետու ամսաթիվը:

Պետական բյուջեին դեբիտորական պարտքը ներառում է հաշվանցման ենթակա ԱԱՀ-ն՝7,368 հազ. դրամ գումարով (2014թ.՝ 9,622 հազ. դրամ), որը կհաշվանցվի իրացման ԱԱՀ-ի հետ, երբ Ընկերությունը վճարի համապատասխան հաշիվ-ապրանքագրերը:
Ղեկավարությունը համատացած է, որ պետական բյուջեից դեբիտորական պարտքերն ամբողջովին ենթակա են վերականգնման:

## 9 Դրամական միջոցներ

| Հազար դրամ | 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Դրամարկղ | 1,150 | 1,160 |
| Մնացորդներ բանկերում ՀՀ դրամով | 5,388 | 18,394 |
| Մնացորդներ բանկերում արտարժույթով | 528,768 | 97 |
| | 535,306 | 19,651 |

## 10 Սեփական կապիտալ

### 10.1 Կանոնադրական կապիտալ

| | Սովորական բաժնետոմսեր 2015թ. | Սովորական բաժնետոմսեր 2014թ. |
|---|---|---|
| Սովորական բաժնետոմսեր քանակը (հատ) | 10,650,000 | 10,650,000 |
| Սովորական բաժնետոմսերի անվանական արժեքը | 1,000 | 1,000 |
| Ընդամենը (հազար դրամ) | 10,650,000 | 10,650,000 |

Ընկերությունն ունի սովորական բաժնետոմսերի մեկ դաս, որը հաստատուն եկամտի նկատմամբ իրավունք չունի:
31.12.2015թ. դրությամբ Ընկերության թողարկած բաժնետոմսերի քանակը կազմում է 10,650,000 հատ սովորական բաժնետոմս, իսկ հայտարարված (դեռևս չթողարկված) բաժնետոմսերի թիվը՝ 4,450,000 հատ հասարակ բաժնետոմս:

Ընկերության բաժնետոմսերի սեփականատերերի թիվը կազմում է.

| | 31.12.2015 | | 31.12.2014 | |
|---|---|---|---|---|
| | հատ | % | հատ | % |
| ԼՂՀ Կառավարություն | 5,100,000 | 47.9 | 5,100,000 | 47.9 |
| Ժոզեֆ Ուղուրլյան (ԱՄՆ, Նյու Յորք) | 1,262,901 | 11.9 | 1,262,901 | 11.9 |
| «Մուլտիկոնտինենտալ դիստրիբյուշն» ՍՊԸ (Մեծ Բրիտանիա, Այլ Օֆ Մեն IM 2AP) | 868,270 | 8.2 | 1,193,692 | 11.2 |
| «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ | 657,933 | 6.2 | 657,933 | 6.2 |
| «Վ.Պ.Բ.Փ,» ՓԲԸ (ԼՂՀ, Ստեփանակերտ) | | | 630,270 | 5.9 |
| «Մ.Էներգոինվեստ» ՓԲԸ (ԼՂՀ, Ստեփանակերտ) | 1,274,057 | 12.0 | | |
| Այլ (5%-ից ցածր) | 1,486,839 | 13.8 | 1,805,204 | 13.4 |
| | 10,650,000 | 100 | 10,650,000 | 100 |

### 10.2 Էմիսիոն եկամուտ

Էմիսիոն եկամուտը ներկայացնում է բաժնետոմսերի տեղաբաշխման գնի և անվանական արժեքի տարբերությունը:

Հազար դրամ

| | 2015թ. | 2014թ. |
|---|---|---|
| Տարեսկզբի մնացորդ | 457,127 | 457,127 |
| Բաժնետոմսերի թողարկում՝ | | |
| *Բաժնետոմսերի թողարկման գումար* | - | - |
| *Կանոնադրական կապիտալ* | - | - |
| Բաժնետոմսերի տեղաբաշխման ուղղակի ծախսեր | - | - |
| Տարեվերջի մնացորդ | 457,127 | 457,127 |

### 10.3 Պահուստային կապիտալ

Հազար դրամ

| | 2015թ. | 2014թ. |
|---|---|---|
| Տարեսկզբի մնացորդ | 172,029 | 140,874 |
| Մասհանումներ պահուստին | 36,040 | 31,155 |
| Տարեվերջի մնացորդ | 208,069 | 172,029 |

2015թ.-ին բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի որոշմամբ 2014թ.-ի զուտ շահույթի 5 տոկոսի չափով իրականացվել է մասհանում պահուստային կապիտալին՝ ընդամենը 36,040 հազար դրամ:

2014թ.-ին բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի որոշմամբ 2013թ.-ի զուտ շահույթի 5 տոկոսի չափով իրականացվել է մասհանում պահուստային կապիտալին՝ ընդամենը 31,155 հազար դրամ:

## 10.4 Շահաբաժիններ

2015թ.-ին բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի որոշմամբ 2014թ. ֆինանսական արդյունքներով Ընկերության բաժնետերերին վճարվել է ընդամենը 532,500 հազար դրամ շահաբաժին՝ մեկ բաժնետոմսին 50 դրամ հաշվարկով:

2014թ.-ին բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի որոշմամբ 2013թ. ֆինանսական արդյունքներով Ընկերության բաժնետերերին վճարվել է ընդամենը 170,400 հազար դրամ միջանկյալ շահաբաժին՝ մեկ բաժնետոմսին 16 դրամ հաշվարկով, որը «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի տնօրենների խորհրդի 2013թ. հունիսի 17-ի թիվ 4-2013/03 որոշման համաձայն բաժնետերերին վճարվել է 2013թ.:

## 10.5 Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ

Հազար դրամ

| | 2015թ. | 2014թ. |
|---|---|---|
| Տարվա զուտ շահույթ (հազ.դրամ) | 940,697 | 720,792 |
| Բաժնետոմսերի միջին կշռված քանակ (հատ) | 10,650,000 | 10,650,000 |
| Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ (դրամ) | 88.33 | 67.68 |

## 11 Վարկեր և փոխառություններ

Հազար դրամ

| | Ընթացիկ | | Ոչ ընթացիկ | |
|---|---|---|---|---|
| | 2015թ. | 2014թ. | 2015թ. | 2014թ. |
| Բանկային վարկեր | 1,193,876 | 900,070 | - | 655,592 |
| Փոխառություններ | 112,523 | 31,563 | 416,167 | 68,821 |
| Պարտատոմսեր | 234,439 | 305,672 | 3,294,337 | 2,564,838 |
| | 1,540,838 | 1,237,305 | 3,710,504 | 3,289,251 |

Ընկերության վարկերը և փոխառությունները 31.12.2015թ. դրությամբ հետևյալն է.

| Վարկի աղբյուր | Տրման օր | Մարման օր | | Մնացորդը առ.31.12.15 | | % |
|---|---|---|---|---|---|---|
| | | | Արժ | Արժույթ | Հազ. Դրամ | |
| ՓԲԸ«Արմսվիսբանկ» 12_0036-02 | 06/12/12 | 06/04/17 | EUR | 422,720 | 223,488 | 13.0% |
| ՈՒՎԿ.«ԲԼԵՍՍ» 159 - 10/3 | 24/05/10 | 25/05/15 | AMD | - | 80,000 | 17.5% |
| ՈՒՎԿ «ԲԼԵՍՍ» 044-11 | 16/05/11 | 15/05/18 | AMD | - | 100,000 | 16.0% |
| Արցախբանկ | 30/12/15 | 26/01/16 | AMD | - | 1,000,000 | 17.0% |
| Ավագյան Վլադիմիր Գ. | 28/12/15 | 28/12/18 | EUR | 212,833 | 112,523 | 11.0% |
| Պարտատոմսեր | | | AMD | | 24,827 | |
| **Ընդամենը** | | | | | **1,540,838** | |
| Երկարաժամկետ պարտատոմսեր | 07/12/15 | 07/12/18 | USD | 6,810,000 | 3,294,337 | 11.0% |
| Ավագյան Վլադիմիր Գ. | 28/12/15 | 28/12/18 | EUR | 787,167 | 416,167 | 11.0% |
| **Ընդամենը** | | | | | **3,710,504** | |

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չվճարված տոկոսների մնացորդը կազմում է 24,827 հազար դրամ:

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չվճարված տոկոսների մնացորդը կազմում է 27,818 հազար դրամ:

**Վարկեր և փոխառություններ**

Վարկերը և փոխառությունները ապահովված են ԼՂՀ կառավարության կողմից տրամադրված երաշխիքներով, այսինքն ընկերությունը չունի որևէ գրավադրված ակտիվներ:

2015թ. տոկոսային ծախսը կազմել է 462,978 հազ. դրամ, որից կապիտալացվել է 31,982 հազ. դրամ, իսկ ընթացիկ ծախսեր՝ 430,996 հազ. դրամ:

2014թ. տոկոսային ծախսը կազմել է 515,575 հազ. դրամ, որից կապիտալացվել է 85,211 հազ. դրամ, իսկ ընթացիկ ծախսեր՝ 430,364 հազ. դրամ:

**Պարտատոմսեր**

Ընկերությունը 2012թ. դեկտեմբերի 5-ին թողարկել է 600 (վեց հարյուր) հատ հասարակ անվանական ոչ փաստաթղթային պարտատոմսեր, 10,000 (տաս հազար) ԱՄՆ դոլար անվանական արժեքով, ընդհանուր 6,000,000 ԱՄՆ դոլար: 2012թ. ընթացքում տեղաբաշխվել է 3,510,000 ԱՄՆ դոլարը, իսկ մնացած 2,490,000 ԱՄՆ դոլարը 2013թ. հունվար ամսին: Պարտատոմսերն ամբողջությամբ տեղաբաշխվել է կապակցված կողմերին:

Պարտատոմսերի եկամտաբերությունը սահմանված է 10% տարեկան, որոնք վճարվում են կիսամյակային պարբերականությամբ: Տեղաբաշխման ձևը՝ չերաշխավորված է:

Ընկերությունը համաձայն 2015թ. դեկտեմբերի 07-ի թիվ 6-2015/01 որոշման թողարկել է 80,000 (ութսուն հազար) հատ հասարակ անվանական ոչ փաստաթղթային պարտատոմսեր, 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար անվանական արժեքով, ընդհանուր 8,000,000 ԱՄՆ դոլար, որոնց համար տեղաբաշխման վերջնաժամկետ է սահմանվել մինչև 2015թ. դեկտեմբերի 30-ը: 2015թ. ընթացքում տեղաբաշխվել է 68,100 հատ հասարակ անվանական ոչ փաստաթղթային պարտատոմս 6,810,000 ԱՄՆ դոլար արժեքով:

Պարտատոմսերի եկամտաբերությունը սահմանված է 11% տարեկան, որոնք վճարվում են կիսամյակային պարբերականությամբ: Տեղաբաշխման ձևը՝ չերաշխավորված է:

Վարկերի և փոխառությունների միջին տարեկան տոկոսադրույքն ըստ արժույթների հաշվետու տարում հետևյալն են՝

| | | 2015թ. | 2014թ. |
|---|---|---|---|
| Միջին տոկոս | ԱՄՆ դոլար | 10.5 % | 10.14% |
| | Եվրո | 12.00% | 12.00% |
| | ՀՀ դրամ | 16.5 % | 15.65% |
| | | 13.0% | 12,6 % |

## 12 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

| Հազար դրամ | 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Առևտրային կրեդիտորական պարտքեր | 18,061 | 201,068 |
| Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով | 760 | 24,886 |
| Աշխատավարձի գծով պարտք | 26,039 | 25,162 |
| Արձակուրդի պահուստ | 34,719 | 31,332 |
| Կրեդիտորական պարտքեր բաժնետերերին | 65,474 | 15,582 |
| Այլ կրեդիտորներ | 755 | 224 |
| | 145,808 | 298,254 |

Ապրանքների ձեռքբերման գծով առաջացած պարտավորությունների մարման միջին տևողությունը կազմում է 69 օր (2014թ.՝ 105 օր): Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով

տոկոսներ չեն հաշվարկվում: Ընկերությունն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություն, որն ապահովում է բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

## 13 Հասույթ

| Հազար դրամ | 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Արտադրված էլեկտրաէներգիայի իրացումից | | |
| Սարսանգ ՀԷԿ | 1,522,669 | 1,744,532 |
| Թրղե -1 ՀԷԿ | 173,214 | 162,021 |
| Թրղե -2 ՀԷԿ | 297,788 | 284,614 |
| Թրղե -3 ՀԷԿ | 59,589 | - |
| Մատաղիս-1 ՀԷԿ | 355,100 | 389,180 |
| Մատաղիս-2 ՀԷԿ | 204,637 | 215,014 |
| | **2,612,997** | 2,795,361 |

Ընկերության ծառայությունների իրացման սակագները սահմանվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հանրային ծառայությունների և Տնտեսական մրցակցության կարգավորող պետական հանձնաժողովի կողմից:

**2015թ**
Բնական ջրահոսքի վրա կառուցված առաքվող էլեկտրաէներգիայի 1 կվտժ-ի սակագինը 2015թ. համար բոլոր հիդրոէլեկտրակայանների գծով սահմանվել է 19.0 (առանց ԱԱՀ):

**2014թ.**

Բնական ջրահոսքի վրա կառուցված առաքվող էլեկտրաէներգիայի 1 կվտժ-ի սակագինը 2014թ. հունվար-հունիս ամիսների համար բոլոր հիդրոէլեկտրակայանների գծով սահմանվել է 16.375 (առանց ԱԱՀ):

Բնական ջրահոսքի վրա կառուցված առաքվող էլեկտրաէներգիայի 1 կվտժ-ի սակագինը 2014թ. հուլիս-դեկտեմբեր ամիսների համար բոլոր հիդրոէլեկտրակայանների գծով սահմանվել է 17.5դրամ (առանց ԱԱՀ):

## 14 Վաճառքի ինքնարժեք

| Հազար դրամ | 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Փոխհատուցում աշխատակիցներին և սոց. վճար | 291,859 | 258,460 |
| Մաշվածություն | 343,750 | 314,533 |
| Արտադրական օբյեկտների պահպանման ծախսեր | 57,852 | 52,845 |
| Նյութական ծախսեր | 30,401 | 23,596 |
| Նորոգման ծախսեր | 15,674 | 25,459 |
| Այլ ծախսեր | 27,418 | 23,410 |
| | 766,954 | 698,303 |

## 15 Վարչական ծախսեր

| Հազար դրամ | 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Փոխհատուցում աշխատակիցներին և սոց. վճար | 172,144 | 156,622 |
| Մաշվածություն և ամորտիզացիա | 26,208 | 18,520 |
| Գործուղման և ներկայացուցչական ծախսեր | 4,327 | 4,370 |
| Վարձակալական ծախսեր | 17,040 | 15,087 |
| Հեռահաղորդակցության | 2,899 | 3,353 |
| Կոմունալ և գրասենյակային ծախսեր | 15,319 | 14,428 |
| Չփոխհատուցվող ծախսեր | 28,507 | 24,645 |
| Աուդիտորական և խորհդատվական ծախսեր | 4,514 | 5,333 |
| Այլ ծախսեր | 2,506 | 13,469 |
| | 273,464 | 255,827 |

## 16 Այլ ծախսեր

| Հազար դրամ | 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Բաժնետոմսերին առնչվող ծախսեր | 7,362 | 7,380 |
| Ֆիզիկական անձ բաժնետերերին փոխհատուցում | 10,669 | 11,050 |
| Արտարժույթի փոխանակման ծախսեր | 3,494 | 373 |
| Տույժ և տուգանքներ | 4,766 | 5,690 |
| Անհատույց տրված միջոցներ | 44,792 | 13,680 |
| Օտարված հիմնական միջոցների ծախսեր | 58 | 987 |
| Հետազոտության ծախսեր | 35 | 1,400 |
| Այլ ծախսեր | 4,779 | 1,105 |
| | 75,955 | 41,665 |

## 17 Ֆինանսական ծախսեր, զուտ

| Հազար դրամ | 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Վարկերի և փոխառությունների տոկոսի ծախս | 145,903 | 179,731 |
| Պարտատոմսերի տոկոսի ծախս | 285,093 | 250,633 |
| Ֆինանսական ծախս, զուտ | 430,996 | 430,364 |

## 18 Այլ ֆինանսական հոդվածներ

| Հազար դրամ | 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| *Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը* | | |
| Դրամական միջոցներ | (10,459) | (1,645) |
| Կրեդիտորական պարտքեր | - | 334 |
| Ստացված վարկեր | (878) | (503,894) |
| | (11,337) | (505,205) |

## 19 Շահութահարկի գծով ծախս

| Հազար դրամ | 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Ընթացիկ հարկ | 117,976 | 143,957 |
| Հետաձգված հարկ (տես՝ ծանոթագրություն 5) | (339) | (1,370) |
| | 117,637 | 142,587 |

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

| Հազար դրամ | 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | Արդյունավետ հարկային դրույքաչափ (%) | 2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | Արդյունավետ հարկային դրույքաչափ (%) |
|---|---|---|---|---|
| Շահույթ մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ) | 1,058,334 | | 863,379 | |
| Շահութահարկ՝ 10% դրույքաչափով (2014թ.՝10%) | 105,833 | 10.00 | 86,338 | 10.00 |
| Չնվազեցվող ծախսի ազդեցությունը | 11,804 | 1.12 | 56,249 | 6.52 |
| Շահութահարկի գծով փոխհատուցում | 117,637 | 11.12 | 142,587 | 16.52 |

## 20 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի և այլ ցուցանիշների վրա, ներառյալ՝ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք համարվում են ընդունելի տվյալ հանգամանքներում:

### 20.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Ընկերությունն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները, որպես կանոն, չեն համապատասխանում իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

*Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները*

Ընկերության ղեկավարությունը գնահատել է հիմնական միջոցների օգտակարության ժամկետները 20-60 տարի շենքերի, շինությունների, 25-50 տարի փոխանցող հարմարանքների, 5-60 տարի մեքենաների, սարքավորումների, 5 տարի այլ հիմնական միջոցների և 1 տարի համակարգչային տեխնիկայի համար: Ընկերության ղեկավարությունը համոզված է, որ այդ ակտիվների գնահատված օգտակարության ժամկետները էականորեն չեն տարբերվում սպասվելիք տնտեսական ժամկետներից: Եթե այս գնահատումները փոխվեն ապա Ընկերության ֆինանսական հաշվետվությունները էականորեն կտարբերվեն:

*Հետաձգված հարկի գնահատում*

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 5-ում 3,472 հազար դրամի հետաձգված հարկեր են ճանաչվել: Հետաձգված հարկային ակտիվներն ավելանում են արձակուրդի պահուստից: Ընկերության ղեկավարությունը համոզված է, որ Ընկերությունը ապագայում կունենա բավարար հարկվող շահույթ, որպեսզի փոխհատուցի հետաձգված հարկային ակտիվները: Եթե Ընկերությունը ապագայում չկարողանա ստանալ հարկվող շահույթ, ապա հետաձգված հարկային ակտիվները չեն փոխհատուցվի:

# 21 Ֆինանսական գործիքներ

## 21.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի, ֆինանսական պարտավորության, և բաժնային գործիքի յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.6-ում:

## 21.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

*Ֆինանսական ակտիվներ*

| Հազար դրամ | 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| *Դեբիտորական պարտքեր* | | |
| Առևտրային դեբիտորական պարտքեր | 1,052,968 | 1,103,329 |
| Մնացորդներ դրամարկղում և բանկերում | 535,306 | 19,651 |
| | 1,588,274 | 1,122,980 |

*Ֆինանսական պարտավորություններ*

| Հազար դրամ | 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ | | |
| Վարկեր և փոխառություններ, պարտատոմսեր | 5,251,342 | 4,526,556 |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 145,047 | 273,368 |
| | 5,396,389 | 4,799,924 |

Տես՝ ծանոթագրություն 3.6 յուրաքանչյուր ֆինանսական գործիքի կատեգորիայի գծով հաշվապահական հաշվառման քաղաքականության նկարագրության համար:

# 22 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Ընկերությունը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Ընկերությունը չի ներգրավված սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքուվաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Ընկերությունը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

## 22.1 Ֆինանսական ռիսկի գործոններ

*ա) Շուկայական ռիսկ*

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Ընկերությունը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի, տոկոսադրույքային ռիսկի և որոշակի այլ գնային ռիսկերի, որոնք բխում են ինչպես գործառնական, այնպես էլ ներդրումային գործունեությունից:

*բ) Արտարժութային ռիսկ*

Ընկերությունը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Ընկերության գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Ընկերության՝ արտերկրյա ձեռքբերումներից և վարկային գործարքներից:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Ընկերությանը ենթարկում են արտարժութային ռիսկի, նկարագրված են ստորև:

Հոդված

| 2015թ. | Հայկական դրամ | ԱՄՆ դոլար | Եվրո |
|---|---|---|---|
| *Ֆինանսական ակտիվներ* | | | |
| Առևտրային դեբիտորական պարտքեր | 1,052,968 | - | - |
| Տրված փոխառություններ | - | - | - |
| Մնացորդներ դրամարկղում և բանկերում | 6,538 | 55 | 528,713 |
| | 1,059,506 | 55 | 528,713 |
| *Ֆինանսական պարտավորություններ* | | | |
| Վարկեր և փոխառություններ | 1,204,826 | 3,294,338 | 752,178 |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 145,047 | - | - |
| | 1,349,873 | 3,294,338 | 752,178 |
| Զուտ արդյունք | (290,367) | (3,294,283) | (223,465) |

Հոդված

| 2014թ. | Հայկական դրամ | ԱՄՆ դոլար | Եվրո |
|---|---|---|---|
| *Ֆինանսական ակտիվներ* | | | |
| Առևտրային դեբիտորական պարտքեր | 1,103,329 | - | - |
| Տրված փոխառություններ | - | - | - |
| Մնացորդներ դրամարկղում և բանկերում | 19,554 | 71 | 26 |
| | 1,122,883 | 71 | 26 |
| *Ֆինանսական պարտավորություններ* | | | |
| Վարկեր և փոխառություններ | 654,293 | 3,255,750 | 616,513 |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 273,368 | - | - |
| | 927,661 | 3,255,750 | 616,513 |
| Զուտ արդյունք | 195,222 | (3,255,679) | (616,487) |

Ընկերությունը հիմնականում ենթարկվում է ԱՄՆ դոլարի և եվրոի փոխարժեքի ազդեցությանը: Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Ընկերության զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի և եվրոի նկատմամբ դրամի 10% (2014թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2014թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2014թ.՝ 10%): Զգայունության վերլուծությունը ներառում է կապակցված և ոչ կապակցված կողմերից վարկերը և փոխառությունները: Բացասական ցուցանիշը նվազում է վկայում համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում և սեփական կապիտալում, երբ դրամն արժեզրկվում է համապատասխան արժույթի նկատմամբ:

| Հազար դրամ | ԱՄՆ դոլարի ազդեցություն | | Եվրոյի ազդեցություն | |
|---|---|---|---|---|
| | 2015թ. | 2014թ. | 2015թ. | 2014թ. |
| Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն | (329,428) | (325,568) | (22,346) | (61,649) |

*գ) Տոկոսադրույքային ռիսկ*

Ընկերությունը ենթարկվում է տոկոսադրույքային ռիսկի, քանի որ ունի հաստատուն տոկոսադրույքներով փոխառու միջոցներ: Ընկերությունն այս ռիսկը կառավարում է՝ ապահովելով համապատասխան չափի հաստատուն տոկոսադրույքով փոխառու միջոցներ:

Ստորև ներկայացված զգայունության վերլուծությունն իրականացվել է տոկոսադրույքի 3%-ի փոփոխության համար: 3%-ը ղեկավարության կողմից գնահատված տոկոսադրույքի հավանական փոփոխությունն է:

Եթե տոկոսադրույքը լիներ 3% բարձր/ցածր, իսկ մյուս փոփոխականները մնային հաստատուն, ապա Ընկերության, ապա 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա շահույթը կնվազեր/կաճեր 99,461 հազար դրամով (2014թ.՝ կնվազեր/կաճեր 107,591 հազ. դրամով):

*դ) Պարտքային ռիսկ*

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը ֆինանսական կորուստներ կարող է կրել:

Հաշվետու ամսաթվի դրությամբ նշանակալի պարտքային ռիսկի կենտրոնացում առկա չէ: Առավելագույն պարտքային ռիսկը ներկայացված է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ յուրաքանչյուր ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքով:

*ե) Իրացվելիության ռիսկ*

Ընկերությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ պահելով բավարար դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, ինչպես նաև բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ ժամանակին գործառնական պարտավորությունները մարելու նպատակով:

## 23 Իրական արժեքի չափում

Ղեկավարության համոզմամբ՝ ֆինանսական հաշվետվություններում ամորտիզացված արժեքով ճանաչված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները գրեթե հավասար են դրանց իրական արժեքին:

## 24 Կապիտալի ռիսկի կառավարում

Ընկերությունն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունն առավելագույնին հասցնելով բաժնետերերի եկամուտները՝ փոխառու և կապիտալ միջոցների օպտիմալ համապատասխանություն ապահովելու միջոցով:

Ընկերության կապիտալը կազմված է սեփական կապիտալից, որը ներառում է թողարկված կապիտալը, կուտակված շահույթը, ինչպես նաև փոխառու միջոցները, որոնք ներառում են փոխառությունները՝ բացահայտված ծանոթագրություն 11- ում:

Ընկերության ղեկավարությունը պարբերաբար վերանայում է կապիտալի կառուցվածքը, որպեսզի ապահովի փոխառու միջոցների և սեփական կապիտալի մնացորդների առավելագույն օպտիմալ համապատասխանություն, որը վերլուծվում է՝ հաշվառելով ընդհանուր կապիտալը բաժանած ընդհանուր ֆինանսավորման վրա: Հաշվարկը ներկայացվում է ստորև.

| Հազար դրամ | 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Ընդհանուր սեփական կապիտալ | 12,835,450 | 12,427,253 |
| Հանած՝ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | (535,306) | (19,651) |
| Կապիտալ | 12,300,144 | 12,407,602 |
| Ընդհանուր սեփական կապիտալ | 12,835,450 | 12,427,253 |
| Վարկեր և փոխառություններ | 5,251,342 | 4,526,556 |
| Ընդհանուր ֆինանսավորում | 18,086,792 | 16,953,809 |
| Կապիտալի և ընդհանուր ֆինանսավորման հարաբերակցություն | 0.68 | 0.73 |

## *Ստորև ներկայացվում է հիմնական գործակիցների համեմատականը*

| | | 2015 | 2014 | 2015 | 2014 | |
|---|---|---|---|---|---|---|
| ***Կարճաժամկետ իրացվելիություն*** | | | | | | |
| Ընթացիկ իրացվելիության գործակից | Ընթացիկ ակտիվներ | 1,899,131 | 1,238,175 | | | |
| | Ընթացիկ պարտավորություններ | 1,686,646 | 1,619,296 | 1.13 | 0.76 | 32.1% |
| Արագ իրացվելիության գործակից | (Ընթացիկ ակտիվներ - պաշարներ) | 1,809,286 | 1,145,325 | | | |
| | Ընթացիկ պարտավորություններ | 1,686,646 | 1,619,296 | 1.07 | 0.71 | 34.1% |
| Դեբիտորական պարտքերի մարման միջին տևողություն | Դեբիտորական պարտքեր | 1,269,919 | 1,125,674 | | | |
| | (Կրեդիտով վաճառքներ/365 օր) | 7,159 | 7,659 | 177.39 | 146.98 | 17.1% |
| Պաշարների շրջանառելիության գործակից | Վաճառքի ինքնարժեք | (766,954) | (698,303) | | | |
| | Պաշարներ | 89,845 | 92,850 | -8.54 | -7.52 | 11.9% |
| ***Ընթացիկ ակտիվների շարժը*** | | | | | | |
| Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից | Կրեդիտով վաճառքներ | 2,612,997 | 2,795,361 | | | |
| | Դեբիտորական պարտքերի միջին տարեկան արժեք | 1,197,797 | 987,310 | 2.18 | 2.83 | -29.8% |
| Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողություն | 366 օր | 366 | 365 | | | |
| | Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից | 2.18 | 2.83 | 167.77 | 128.92 | 23.2% |
| Պաշարների շրջապտույտի միջին ժամկետ | 366 օր | 366 | 365 | | | |
| | Պաշարների շրջանառելիության գործակից | (8.54) | (7.52) | -42.88 | -48.53 | -13.2% |
| ***Երկարաժամկետ վճարունակություն*** | | | | | | |
| Ընդհանուր պարտավորությունների՝ սեփական կապիտալով ապահովվածության գործակից | Ընդհանուր պարտավորություններ | 5,397,150 | 4,908,547 | | | |
| | Սեփական կապիտալ | 12,835,450 | 12,427,253 | 0.42 | 0.39 | 6.1% |
| Երկարաժամկետ պարտավորությունների՝ սեփական կապիտալով ապահովվածության գործակից | Երկարաժամկետ պարտավորություններ | 3,710,504 | 3,289,251 | | | |
| | Սեփական կապիտալ | 12,835,450 | 12,427,253 | 0.29 | 0.26 | 8.4% |
| Հիմնական միջոցների՝ սեփական կապիտալով ապահովվածության գործակից | (Հիմնական միջոցներ - Կուտակված մաշվածություն) | 12,285,526 | 12,556,925 | | | |
| | Սեփական կապիտալ | 12,835,450 | 12,427,253 | 0.96 | 1.01 | -5.6% |
| Ծախսածածկման գործակից | Հասույթ նախքան հարկումը | 1,489,330 | 1,293,743 | | | |
| | Տոկոսային ծախս | (430,996) | (430,364) | -3.46 | -3.01 | 13.0% |
| Ընդհանուր պարտավորությունները հարաբերած ընդհանուր ակտիվներին | Ընդհանուր պարտավորություններ | 5,397,150 | 4,908,547 | | | |
| | Ընդհանուր ակտիվներ | 18,232,600 | 17,335,800 | 0.30 | 0.28 | 4.3% |
| ***Կապիտալի շահութաբերություն*** | | | | | | |
| Ընդհանուր ակտիվների շահութաբերության գործակից | (Զուտ շահույթ + տոկոսային ծախս) x (1- Հարկման դրույքաչափ) | 917,462 | 232,342 | | | |
| | Ընդհանուր ակտիվների միջին տարեկան արժեք | 17,784,200 | 16,933,878 | 0.05 | 0.01 | 73.4% |
| Սեփական կապիտալի շահութաբերության գործակից | Զուտ շահույթ | 940,697 | 720,792 | | | |
| | Սեփական կապիտալի միջին տարեկան արժեք | 12,631,352 | 12,066,858 | 0.07 | 0.06 | 19.8% |
| ***Գործառնական գործունեություն*** | | | | | | |
| Համախառն մարժա | Համախառն շահույթ | 1,846,043 | 2,097,058 | | | |
| | Հասույթ | 2,612,997 | 2,795,361 | 0.71 | 0.75 | -6.2% |
| Գործառնական գործունեությունից հասույթը հարաբերած հասույթին | Գործառնական գործունեությունից հասույթ | 1,500,667 | 1,798,948 | | | |
| | Հասույթ | 2,612,997 | 2,795,361 | 0.57 | 0.64 | -12.1% |
| Շահույթը նախքան հարկելը հարաբերած հասույթին | Շահույթ նախքան հարկելը | 1,058,334 | 863,379 | | | |
| | Հասույթ | 2,612,997 | 2,795,361 | 0.41 | 0.31 | 23.7% |
| Զուտ շահույթը հարաբերած հասույթին | Զուտ շահույթ | 940,697 | 720,792 | | | |
| | Հասույթ | 2,612,997 | 2,795,361 | 0.36 | 0.26 | 28.4% |

# 25 Պարտավորվածություններ

## 25.1 Գործառնական վարձակալության գծով պարտավորվածություններ

*Ընկերությունը որպես վարձակալ*

Ընկերությունը վարձակալել է գործառնական վարձակալությամբ 342.67 քառ. մ տարածք (տեղակայված ԼՂՀ, Ստեփանակերտ, Վ. Սարգսյանի 25ա հասցեով գտնվող 2, 3 հարկերը և ձեղնահարկը ), մեկ տարի վարձակալության ժամկետով, որը տրվել է ֆիզիկական անձի կողմից, 2013թ. հունվարի 1-ին կնքված վարձակալության պայմանագրի համաձայն: Սահմանված է ամսական վարձավճար 1,160 հազ. դրամ: 2014թ. հունվարին Ընկերությունը երկարաձգել է վարձակալության պայմանագիրը մեկ տարի ժամկետով՝ վարձավճարը 1,170 հազ. դրամ:

# 26 Պայմանականություններ

## 26.1 Գործարար միջավայր

Հայաստանում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները շարունակական բնույթ են կրում: Որպես զարգացող շուկա՝ Հայաստանում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացված գործարքներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ և կենտրոնացված տնտեսական հենքով և միջազգային տնտեսական ճգնաժամը:

Ընկերության վրա այս գործոնները հնարավոր հետևանքները կարող են ներառել վարկատուների հանդեպ անվճարունակությունը, խաթարված հեղինակությունը, ապրանքների և ծառայությունների վաճառքի, ինչպես նաև ֆինանսական միջոցների ձեռքբերման հետ կապված դժվարությունները և այլն: Բոլոր այս խնդիրները կարող են հանգեցնել Ընկերության իրացվելիության անկման և, հետևաբար, առաջացնել անընդհատության խնդիրներ:

## 26.2 Ապահովագրություն

Հայաստանում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է: Ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում դեռ չեն կիրառվում: Ընկերությունը՝ իր ակտիվների, գործունեության ընդհատման կամ երրորդ կողմերի պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին Ընկերության գույքի կամ գործառնությունների պատահարներից հասցված վնասի ապահովագրություն չունի: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական դրության վրա:

## 26.3 Հարկեր

Հայաստանում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և

ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են առաջադրել տուգանքներ և տույժեր:

Վերոհիշյալ հանգամանքները կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ՝ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել:

# 27 Գործարքներ կապակցված կողմերի միջև

## 27.1 Վերահսկողություն

Ընկերությունը վերահսկվում է Ընկերության բաժնետերերի և տնօրենների խորհրդի կողմից:

## 27.2 Կապակցված կողմեր

Ընկերության կապակցված կողմերն են.
«Արցախէներգո» ՓԲԸ-ն և ընկերությունը վերահսկվում է նույն բաժնետիրոջ կողմից (ԼՂՀ Կառավարություն)

Կազմակերպության գործարքները կապակցված կողմերի հետ բացահայտված են ստորև.

| Հազար դրամ | Մնացորդ առ 2014թ. դեկտեմբերի 31 | Գործարքի արժեք 2015թ. | Մնացորդ առ 2015թ. դեկտեմբերի 31 |
|---|---|---|---|
| *Էլեկտրաէներգիայի վաճառք* | | | |
| «Արցախէներգո» ՓԲԸ | 1,101,114 | 3,135,596 | 1,051,622 |
| *Ձեռքբերումներ* | | | |
| «Արցախէներգո» ՓԲԸ | 9,274 | 25,773 | 3,765 |

## 27.3 Գործարքներ ղեկավարության հետ

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը,

| Հազար դրամ | 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Աշխատավարձ և պարգևատրումներ, ներառյալ սոցիալական ապահովագրության վճարներ | 34,288 | 35,177 |
| | 34,288 | 35,177 |

Fintechaudit
www.fintechaudit.am